


ԷԶՄԻԱԾԻՆ



Զ

2004



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ



Յ « - Ն Ի »
2004

ԱՔԸ - 146
2004, ռ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ֆինլանդիա	3
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	11

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիրոսյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին	27
ԳՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գառնիկ և Ամժելա Հովսեփյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	29
Հայրապետական գնահատություն	31
Հաղորդագրություն	32
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի դասնամյակի առիթով	33
Կշարունակեն ծառայությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	34
Մասնակցություն Բանտերի հոգևոր սպասավորների միջազգային ասոցիացիայի աշխատանքներին	34

ՔԱՐՈՋԻՈՍԱԿԱՆ

Տ. Առն արեղա ճեպեճյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	35
Տ. Զավեն արեղա Հակոբյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում	37
Տ. Շնորհք արեղա Սարգսյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում	40
Տ. Տաճար ավագ քահանա Դավիդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	43

Եկեղեցական-ճանաչողական

ՎԻԳԵՆ ԵՊԻՄԿՐՈՒՍ ԱՅՔԱԶՅԱՆ - Հայ Եկեղեցու

ավանդության պարմական նշանակությունը 45

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՒՄ ՍԱՐԳՍՅԱՆ - Հայերեն լեզվով

հիերոգլիֆիկ արձանագրություններ ուրարտական դարաշրջանում 47

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Կրոնական հավաքալիքների և

նախապաշարումների հետ կապված

ածականական հոմանիշները հայերենի բարբառներում 52

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գրիգոր Մազիսպրոսը Հայ Եկեղեցու և

հայոց դավանանքի ջախջախում 60

ՆԵՐՈՒՄՅԱՆ ՈՐԱԿԱՆՅԱՆ - Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»

պոեմի կրոնական հենքը 71

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՅԱՆ - Վասպուրականի կազմարվեստի

պարմությունից 80

Նվիրվում է հայոց գրերի գյուտի 1600-ամյակին

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ - Հայկական տառանդանների

դարձվածակազմիչ արմերը 89

Նվիրվում է Գևորգյան Հոգևոր ճեմարանի հիմնադրման 130-ամյակին

ԽԱԶԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ - Գևորգյան ճեմարանի երախտավորները

(Գարեգին Լևոնյան) 97

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ - Յ. Կենխար-Կերպարի («Ոլունքախաղ») ճգրտյալին

խնդիրները և նրանց հետ կապված առանձնահատկությունները 106

Հրապարակում

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ - «Վասն աուրե կիրակլի» ճառի

հայերեն և վրացերեն թարգմանությունների առնչակցության խնդիրը . . . 118

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Օծվեց Չբնաղ գյուղի Ս. Ստեփաննոս նորակառույց եկեղեցին 125

Ընդունելություն՝ ի պատիւ Տ. Արմաշ վրդ. Նալպանդեանի

Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ ընտրութեան 127

Կանադայի հայոց թեմում

Թորոնթոյի Ս. Խաչ ամենօրեայ դպրոցը

Կանադահայոց թեմի հովանու ներքոյ 128

ԱՄՆ Արևմտեան թեմէն ներս

Նուիրապատուիւններ Արեւմտեան թեմի Առաջնորդարանին 130

Տէր եւ Տիկին Կրէկորի Զրբոյեան 15.000 տոլար

կը նուիրեն Առաջնորդարանին 130

Նուիրապատուիւններ կատարուած Սան Ֆրանսիսկոյի

Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցւոյ կողմէ 131

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

Ս. Ներսէս Ընծայարանի «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական-Կեդրոն»ի

հոգը օրհնուեցաւ եւ Ս. Յակոբ Մատուռի հիմնաքարերը օծուեցան 132

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ**ՀՈՎԱԿԻՄ ԱՔԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ** - Էկումենիկ պաշտոնյաների

հանդիպում ժննդում 137

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Խորհրդակցություն

եկեղեցաբանության վերաբերյալ 140

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պատգամավորական

բարեկամության հայկական վեհաժողովի մասնակիցներին 142

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

«Այաս» ծովային հեղափոխությունների ակումբի անդամներին 142

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Գրողների համահայկական

երկրորդ համաժողովի մասնակիցներին 143

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Եկեղեցական վավերագրերի

անխոնջ հեղափոխողը 144

Եկեղեցական բնմ. լուրեր 146

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 147

“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 150

“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine 153

ՆՐԱՍԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԸ ՖԻՆԱՆՍԻԱ

(2-6 հունիսի 2004 թ.)

Սույն թվականի հունիսի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի հրավերով պարտասխան այցով մեկնեց Ֆինլանդիա: Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը, գլխավորությամբ Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի, Նորին Սրբության հյուրն էր երկու փարի առաջ:

Վեհափառ Հայրապետին ողնկցող շքախմբի անդամներն էին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջնակեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Հոլշտեդտի Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը՝ որպես զավազանակիր:

Հելսինկիի Վանքուա օդանավակայանում Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությանը դիմավորելու էին եկել Հայաստանում Ֆինլանդիայի արտակարգ և լիազոր դեսպան Տիմո Լահելման, Ֆինլանդիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը, Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Միջազգային կապերի փնթրեն Հայր Դր. Ռիստո Կանտելը, Արքեպիսկոպոսի քարտուղար Հելկկի Յասկելայնենը և այլոր:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը և իր շքախմբի անդամներն ուղևորվեցին հյուրանոց: Երեկոյան ժամը 20.00-ին ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փրվեց բարիգալստյան ընթրիք, որին ներկա էին Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարման, Հելսինկիի Մետրոպոլիսի Ամրոտսիտսը, Ֆինլանդիայի Եկոմենիկ Խորհրդի գլխավոր քարտուղար Հայր Յան Հոստրոմը, Միջազգային կապերի փնթրեն Հայր Ռիստո Կանտելը, դեսպաններ Տիմո Լահելման և Հելկկի Տալվիտին, Հայր Վեիկո Պուրմոնենը և այլոր:

Հունիսի 3-ի առավոտյան Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Ֆինլանդիայի Աստվածաշնչական Ընկերություն, ուր հանդիպում ունեցավ Ֆինլանդիայի Աստվածաշնչական Ընկերության նախագահ Բյկա եպիսկոպոս Կանտելայի, գլխավոր քարտուղար Դոկլոր Մադկու Կոպիլայի և աշխատակիցների հետ:

Հեյմիջերեն Ամենայն Հայոց Կաթողիկոսն սպեկեց Ուղղափառության և Արևելյան Եվրոպայի երկրների Եկեղեցիների ուսումնասիրությունների կենտրոն: Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ նաև Հելսինկիի և Յոենսուի համալսարանների աստվածաբանական ֆակուլտետների ուղղափառ և լութերական դասախոսների և ուսանողության հետ, ծանոթացավ ֆակուլտետի գիտական կենտրոններում փաթվող աշխատանքներին:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պարվիրակությունը երեկոյան ծանոթացավ մայրաքաղաքի տեսարժան վայրերին, այցելեց փարբեր եկեղեցիներ՝ Լուսբերական Տաճար, Վիմափոր եկեղեցի, Օրանիեմի մատուռ, Տապիոլայի եկեղեցի, եղավ նաև Այասկայի՝ Հերմանի եկեղեցում:

Հունիսի 4-ին, ժամը 9.00-ին, փեղի ունեցավ աստվուրյան եամարեղ ժամերգություն, որին հաջորդեց մամլո ասուլիսը: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հակիրճ ներկայացրեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պարմությունը և այսօրվա առաքելությունը, ապա պարասխանեց լրագրողների հարցերին:

Ժամը 11.00-ին ճաշ փրվեց Ֆինլանդիայի Խորհրդարանի շենքում՝ հյուրընկալությամբ Խորհրդարանի փոխխոսնակ պրն Մարկո Կոսկիի: Այնուհետև Խորհրդարանի նախագահ պրն Սեպո Տիտինեն ներկայացրեց Ֆինլանդիայի Խորհրդարանի գործունեությունը:

Հեղինակներն Նորին Սրբությանը ընդունեց նաև Ֆինլանդիայի վարչապետ պրն Մարի Վանհանենը: Գարեգին Բ Կաթողիկոսն անդրադարձավ դարասկզբին հայ՝ մոլոմրդի ապրած մեծ ողբերգությանը և իր ավաստանքը հայտնեց, որ բոլոր երկրները չէ, որ պաշտոնապես դադարապարել են Հայոց ցեղասպանությունը, որը մարդկության դեմ գործված մեծագույն ոճրագործություններից մեկն է:

Այնուհետև Հայոց Հայրապետին և նրան ուղեկցող պարվիրակությանը հյուրընկալեցին նաև Ֆիննական Լուսբերական և Ուղղափառ Եկեղեցիների քարեսիրական կազմակերպությունները:

Նույն օրը, ժամը 18.00-ին, Հելսինկիի Ոսպենյան Տաճարում փեղի ունեցավ երեկոյան ժամերգություն:

Վեհափառ Հայրապետին դիմավորեց և ողջույնի խոսք ասաց Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեոն: Պարասխան խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՈՒՍՊԵՆՅԱՆ ՏԱԾԱՐՈՒՄ

*«Այդպես և մենք, թվով շատ, մի մաքմին ենք Զրիստոսով,
քայց յուրաքանչյուրս միմյանց տնդում ենք»:
(Հոռմ. ԺԲ 5)*

Այս հավատով ու մխիթարությամբ, սիրելի եղբայրներ ու քույրեր, Մենք այսօր ողջունում ենք բոլորիդ և որպես Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ քերում ձեզ օրհնություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Մթոռ Ս. Էջմիածնից: Մենք փառաբանում ենք Աստծուն, որ ջնդրեց Մեզ ուրախությունը Մեր հոգևոր եղբայր Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Գևրգիսյանի Լեո Արքեպիսկոպոսի և իր հավատացյալ հոգի հետ այս պատրմական տոնաւարում միասնաբար աղոթք բարձրացնելու երկինք՝ հայցելով

Տիրոջը ամուր և անասանս պահել Իր Սուրբ Եկեղեցին և շնորհիւ լաշխարհին խաղաղություն և մարդկանց մեջ՝ հաճություն:

Եղբայրական սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիներին, կրոնական կազմակերպություններին և երկրպագուցիչներին և Ֆիկանդիայի կառավարության անդամներին: Ձեր և երկրպագության այսպիսի վկայություն է Հայ Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի և Ֆիկանդիայում ապրող հայերի նկատմամբ Ձեր ունեցած հարգանքի ու գնահատության:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հայ համայնքի անդամներին, ովքեր Ֆիկանդիայի ազնիվ քաղաքացիներն են և նվիրվածությամբ ու հավատարմությամբ ծառայում են այս օրհնյալ երկրի առաջընթացին:

Ի Զրիարոս եղբայրներ և քույրեր, այս օրերին քրիստոնյաներս ապրում ենք հոգևայտության խորհրդով. Զրիարոսի Եկեղեցու միասնության խորհրդով: Մի քանի օրից Հայ Առաքելական Եկեղեցին պետք է տոնի հայրց Մայր Տաճարի՝ Ս. Էջմիածնի տոնը, երբ մենք ոգևորվում ենք քրիստոնեությունը Հայաստանում 301 թ. պետական կրոն հռչակման հիշատակները: Մեզ համար ուրախակի է հիշել, որ երբ տոնախմբում էինք մեր ժողովրդի և մարդկության պատմության այս նշանակալի իրադարձության 1700-ամյա հոբելյանը, ավելի քան 35 քույր Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների առաջնորդներ այցելեցին Ս. Էջմիածին և մասնակցեցին հոբելյանական տոնակատարություններին: Արդարև՝ «Այդպես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Զրիարոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»:

Փորձություններով լցուն իր պատմության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին ապրել է այս ըմբռնումով ու այս հավատով: Այսօր Հայ Եկեղեցին վերագաթների հուսադրությամբ օրեր է ապրում՝ ցանալով վերականգնել և կեղծացական կյանքում ժամանակի գործած ավերները: Հարյուրամյակներ շարունակ Հայաստանը բազմիցս ասպարակվել ու ավերվել է և հայ ժողովուրդը կրել է օտար տիրապետությունների ամենամուսեր բռնությունը, երբ ամեն հարածների հեղ պատրաստվում էր նաև հավատափոխությունը:

Հավատի բազում մարտեր է մղել մեր ժողովուրդը, նահապետակվել, բայց չի ուրացել Զրիարոսին: Ամենամեծ ողբերգությունը, որ ապրեց մեր ժողովուրդը 20-րդ դարասկզբին, Օսմանյան Թուրքիայում կազմակերպված հայկական ցեղասպանությունն էր, երբ Արևմտյան Հայաստանը դարարկվեց հայ բնակչությունից, քանդվեցին եկեղեցիները, նահապետակվեցին հարյուրամյակ եկեղեցականներ: Նույն ժամանակ Արևելյան Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը հետևեցին Եկեղեցու հանդեպ հալածանքներն ու հեղափոխումները, հոգևորականների սքստրն ու ապանությունները: Սակայն Հայ Եկեղեցին շարունակեց իր առաքելությունը, և քարոզվող անհատավածության պայմաններում հույսն ու հավատը չբեց մեր ժողովրդին: 20-րդ դարի ավարտը նույնպես դժվարին եղավ մեր ժողովրդի և Եկեղեցու համար: Մենք անցանք 1988 թ. ողբերգական, ավերիչ երկրաշարժի, Լեռնային Ղարաբաղի սպառնալից արաբների, շրջափակման

բովում, որոնք ծանր անդրադարձան Հայաստանի և նորանկախ Հանրապետության կյանքում: Առ Մարված ունեցած իր անասան հավաքի շնորհիվ մեր ժողովուրդը կարողացավ հաղթահարել բոլոր այս աղետներն ու դժվարությունները և այսօր ապիկ ու ապիկ համախմբվելով իր Եկեղեցու հովանո ներքո, նորոգում ու զորացնում է հոգևոր կյանքը: Մեր ժողովուրդը հավատում է, որ անսխալ անհաշտության ճանապարհն է մարդկության ապագան:

Աշխարհն այսօր կրած է բազմաթիվ խնդիրների և մարտահրավերների ծանրությունից, որոնց մեջ՝ աղքատությունը, անաղարտությունը, պարերազմներն ու անաբակությունը: Եկեղեցիները և կրոնական կազմակերպությունները կարևոր դեր ունեն այդ հրամայականներին ու փորձություններին բարոյական և արդարացի լուծումներ գտնելու հարցում: Մարդկությունը առավել վարած քայլերով կրթական դեպի իր խաղաղ, անվտանգ և բարեկեցիկ կյանքը, երբ մենք դիտենք մեզ Ս. Պողոս առաքյալի՝ մեր մեկ մարմին լինելու խոսքի լուսանկարները: Երբ, լինելով մարմնի մեկ անդամը, մենք զգում ենք ուրիշների ցավը, ինչպես մեր սիրականը, և նույն կերպ զգում ենք միմյանց ուրախությունը: Յուրաքանչյուրս միմյանց անդամ՝ մեկի ուժը նաև մյուսինն է և բոլորինը:

Հայ Եկեղեցին միշտ ցանկացել ու ձգտել է եղբայրական հարաբերություններ պահպանել բոլոր Եկեղեցիների հետ: Այսօր Մենք կրկնում ենք Եկեղեցու Հայրերից Օգոստինոս Երանկիտ խոսքը, որը 11-րդ դարում Հայ Եկեղեցու դիրքորոշումն էր հասարակել է Հայոց Կաթողիկոս Ս. Ներսես Շնորհալի՝ արտահայտելով էկոմենիզմի ոգու նկարմամբ ունեցած մեր ազանդական մտրեցումը, և որով շարունակում է առաջնորդվել Հայ Եկեղեցին. «Միութեն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս, սէր յամենայնի»:

Այս մրտաճակատով և զգացումներով Մեր ջերմեռանդ աղոթքն ենք վերադառնում առ Բարձրյալն Մարված՝ ինդրելով, որ Տեղի օտրի մեզ Իր Միտ Շնորհով և զորացնի Ըջնարության Իր Հոգով: Եկեք բոլորս միավորվենք՝ երկրպագելու Տիրոջ և զոհություն մարտցնենք Նրան Իր բազում սրբաների, անասնման ողորմության ու խնամքի համար:

Թող Ամենաբարձրն Մարված օրհնի Ֆինլանդիայի Հանրապետությունը և այս հիսնայի և հյուրընկալ երկրի բարեախոր ժողովրդին՝ շնորհելով հաղթանակ խաղաղություն և բարգավաճում: Թող Ամենաբարձրյալն Մարված օրհնի, պահի և պահպանի մեզ բոլորիս, Ամեն:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Ֆինլանդիայի հայ համայնքի հետ: Նորին Սրբության օրհնությունը սրանալու համար Ֆինլանդիայի մայրաքաղաք էին եկել նաև Արթուրյան, Տալլինում և Ս. Պետրոսբուրգում ապրող բազմաթիվ հայորդիներ:

Հունիսի 5-ի առավոտյան կազմակերպվեց մի փոքրիկ ճանապարհորդություն նավով: Տուրկու վերադարձի ճանապարհին Նորին Սրբությունը և պապվիրակության անդամները,



Հովհաննէսյանը եւ ժողովուրդային գործչին Բ Վեշտոտի խորհուրդին
 եւ Վ Զինուորական ու Տնտեսական խորհուրդին անդամները



ՏԳԷ ԿԹՈՂՈՍՈՒԼ ԵՈՒԼ ՎԻԶԻՏ .ԿՏՏԷ ՍԵՐՈՒՄ ԵՎ ԿԵՆԿՆԱԴՐՈՒՄԻՔ ՇՏԳՆԱԽԵՆԷ ՅԱՐՈՒԼ



Արքեպիսկոպոս Լևոյի ուղեկցությամբ. այցելեցին Պոկրովա եկեղեցի և Նիրկոնոմմի Ուղղափառ Նսնարրոն:

Երեկոյան ժամը 17.30-ին Ֆինլանդիայում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպարոս պարոն Վադիմ Ռոգանովի հրավերով Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության անդամներն այցելեցին հյուպարոսարանի փարածքում գտնվող մալուխ: Տուրկուում Ռուսաստանի Հյուպարոսարանի փարածքում Ռուս Ուղղափառ Եկեղեցու հիմնադրման և զործունեության մասին պատմեց Ֆինլանդիայում Մոսկվայի Պատրիարքության ներկայացուցիչ Հայր Վիկտոր Լյուդիկը և ծխական քահանան՝ Հայր Նիկիտա Դորրոնրավովը:

Ի պարզիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն էր կազմակերպվել գլխավոր հյուպարոս պարոն Վ. Ռոգանովի կողմից: Ընդունելությանը ներկա էին նաև Ֆինլանդիայի Ավետարանական-Լուծերական Եկեղեցու պատվիրակությունը՝ Արքեպիսկոպոս Յուկկա Պարամայի գլխավորությամբ, և Նելսինկիի Մետրոպոլիս Ամբրոսիոսը:

Այցի ավարտին Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրառումներ կարարեց հյուպարոսարանի՝ պատվավոր հյուրերի համար նախարեսված մալուխում:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության անդամները միջնադարյան Նաանտալի վանքում մասնակցեցին այսօրեղ կազմակերպված երգի ավանդական փառատոնի բացման արարողությանը:

Հունիսի 6-ի առավոտյան Նորին Սրբությունը և հայրապետական շքախմբի անդամները Տուրկուի Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի: Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պարաման ողջունեց Վեհափառ Հայրապետին՝ ի մասնավորի անդրադառնալով հայ և ֆինն ժողովուրդների և Եկեղեցիների բարեկամական հարաբերություններին և դրանց հետագա զարգացմանը, այնուհետև հրավիրեց Վեհափառ Հայրապետին իր ողջույնի խոսքը ուղղելու ներկաներին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏՈՒՐԿՈՒԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Ձեզ կարգեցի, որ դուր գևար և պորդաբեր լինեք, և ձեր պարտողը մեա...:

Այս եւ ձեզ պարտվիրում, որ սիրեք միմյանց»:

(Հովհ. ԺԵ 16-17):

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի այս խոսքերը բովանդակում են Հոգեգալըսարյան շնորհանդրոգ օրերի խորհուրդը, որով այս օրերին տալիս են քրիստոնեական Եկեղեցիները: Մուրք Հոգու Լքոյով տալիս լինելի վրա և երկրից երկիր նրանց բարոգությամբ սկզբնավորվեց Քրիստոսի Մուրք Եկեղեցին, ամեն ու զորացավ սիրո մեղ և միջոք պորդաբեր և դավ, երբ չայսկասեց սիրո Եկեղեցուց նեղս:

Այսօր փառք և զոհություն ենք վերադարձում առ Տիրը, որ առիթն ընծայեց Մեզ հրավերով Ֆինլանդիայի Ավետարանական Եկեղեցու հոգևոր Առաջնորդ Ար-

քիպու Զովկա Պասարմայի, այցելելու ձևի գեղեցիկ երկիրը՝ իբրև մի նոր վկայություն մեր Եկեղեցիների միջև սիրո և հղթարական հարստիքությունների: Տանուն հավատացյալ հայ ժողովրդի ի Զրիսարու սիրով ուղջունում ենք այս սուրբ տաճարում միասնական աղոթքի հավաքված մեր հղթարներին ու քույրերին՝ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, Ֆիկանդիայի պետական պաշտոնյաներին, այսօրեղ սպորտը մեր Եկեղեցու զավակներին:

Մեր հոգում տակավին թաքնված են թեմակալ առաքելորդ հղած ժամանակ Ֆիկանդիա Մեր մասնավոր այցելության քաղցր հիշատակները: Նյուսիսային բացառիկ գեղեցկությամբ, համալրարած անպատեհերով, կղզիներով ու լճերով հարուստ ձեր երկրի ժողովուրդը մեզ ծանոթ է մարդկային վսեմ սրժանների հանդեպ տաճար խորին հարգանքով, ազատ ու արժանապարհիվ կյանք ունենալու իր հարասուն ձգտումով, իրավունքի և արդարության վրա հիմնված հասարակություն ձևավորելու իր վճռականությամբ:

Մենք գալիս ենք քրիստական Արարարի փեշերին տարածված Հայաստանի Հանրապետությունից, որ նոր կյանք է կառուցում՝ վերականգնյալ պետականության: Գալիս ենք Հայ Մուսքիական Եկեղեցու ամենամեծ իրավունք ստրավայրից՝ Սուրբ Էջմիածնից, որը 17 դար առաջ կառուցվել է այն տեղում, ուր հավատի մեր հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն լուսեղեն հրաշալի կերպարանքով իջավ Հաբուցյալ Զրիսարու, այցի գալով Իր անունով մկրտության պատրասարվող հայ ժողովրդին: Սուրբ Էջմիածնից հետո չէ այն վայրը, ուր Նոյր դուրս գալով տապանից, կառուցել էր առաջին զոհասեղանը և հավատարմության նոր ուխտ հաստատել: Աստծո հետ: Նախախնամարար այս նույն տեղում էր այն խորին գուրք, ուր մարդկանցից լքված, միայն Աստծո հետ 13 տարի տարեց Սուրբ Գրիգորը և դուրս գալով, Ավարարանի լույսը տարածեց համայն հայոց աշխարհում: Այս հիշատակներով մեր ժողովուրդը Սուրբ Էջմիածնի խորհրդի մեջ տեսնում է Աստծո ներկայությունը իր կյանքում, նորոգում իր հավատը ու ուխտը առ Փրկիչ Տերը մեր:

Այսօր նույն այդ սրբավայրի՝ Սուրբ Էջմիածնի անմահ խորհրդով, հզոր ներշնչանքով ու օրհնությամբ է, որ քանում ենք պայծառացնել ու շինացնել Հայ Եկեղեցու առաքելությունը վերածնվող Հայաստանի ազատ իրականության մեջ: Հոգևոր զարթոնքի պայմաններում բնդայնվող գործունեությամբ ու իրականացվող ծրագրերով մեր Եկեղեցին պիտի վերականգնի իր առօրյա ներկայությունը համայն մեր ժողովրդի կյանքում՝ իբրև հոգևոր կենդանության ու զորության ակունք, լույս և հույս, որոնցից հետո մնաց 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության, իսկ Արևելյան Հայաստանում՝ խորհրդային իշխանության բերած հոգևոր առկա արդյունքում:

Մեր Եկեղեցու առաքելության ճանապարհին մեծապես կարևորում ենք նաև Էկումենիկ ոգով սերտ հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ: Աստծո Կամքն ու պարգամն է մեզ. «Ձեզ կարգեցի, որ դուք գնաք և պրդարեք լիներ, և



ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՐԱԺԱՆՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԿԱՐԵՆԻԱՅԻ ՈՒ
ՀԱՄԱՅՆ ՖԻՆԱՆՍԻՍԻ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԵՈՆ ՊՈԿՐՈՎԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ





ԿԻՐԿՈՆՈՒՄԱՆ ՈՒՂԴԱՓԱՆՈՒ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ձևեր պարուղիք մնա...: Այս են ձեզ պատվիրում, որ սիրեք միմյանց» (Դովի Ժե 16-17):

Սիրո և փոխգործակցության պարզապարզականությունն է էկոմենիզմի ճշմարիտ ոգին, որով գորանում է Զրիարուսի Եկեղեցու հապարակյալ ուժը և բարոյական հեղինակությունը, որով սովելի գորավոր ու պրոպեր պիրի լինի նաև քրիստոնեական Եկեղեցիների մեկ առարկությունը: Մեր՝ Ֆինլանդիայի Ավերարանական և Նայ Առարկական Եկեղեցիները վերջին ժամանակներում են արձանագրել իրենց բարեկամական հարաբերությունները, որոնց ջերմության վկայությունն էր Գերաշնորհ Զուկկա Պատրմայի այցելությունը Մուրք Էրմիսմին: Ըներ հապարում ենք, որ քրիստոնեական Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռակար ու հնարավորություններ են բացելու միասնարար գործելու՝ հանուն ամենուր խաղաղության հասարարման, հանուն սովելի մի լավ աշխարհի կառուցման: Այո, Մենք հապարում ենք, որ մեր Փրկչի խոսարումը, թե Ըներ մեզ հեր է միենի ի կարարածն աշխարհի, պիրի զգանք սովելի ամրոդրական ու սովելի կարարայ՝ երբ մի ենք: Իրոք, մի ենք մեզ սրենդոդ ու նախաեանդ մեկ Նայր Աարծով, մեր փրկության համար մարդացած, խաչված ու Նարություն առած մեկ Փրկչի Նոսոս Զրիարոսով և մեր բոլոր մարարահրավերների ու դովարությունների մեք մեք միխթարոդ, ապարինոդ ու առարնորոդ մեկ Մուրք Նոգիով:

Այս հապարով է, որ այցի ենք եկել ձեզ, բերելով Մեր և հապարացյալ մեր ժողովրդի աղոթքները, մեր հազարամյա սրբավայրերի օրհնությունը Ֆինլանդիայի հողին ու ժողովրդին: Նայցում ենք առ Աարված, որ բարգավաճ ու բարձր պահպանի ձեզ, Իր շնորհի ներքո՝ Ֆինլանդիայի Ավերարանական Եկեղեցու հոգևոր դարը, նրա բարեջան առաջնորդներին և Ֆինլանդիայի և Տուրկուի Արբախակոպոս Զուկկա Պատրմային՝ պարզելով արեշար կյանքի երկար օրեր ու բազում բարի իրադործումներ:

Օգրվելով Մեր այս այցի ընձեռած հնարավորությունից, Նայրապերական զնահարանքի ու շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ֆինլանդիայի իշխանություններին ու աարվածասեր ժողովրդին, որ բաց պահեցին իրենց սրբերը ու դոները մեր ժողովրդի բազմաթիվ զավակների աղքն՝ օրնան տալով նրանց: Լիսհոյս ենք, որ մոր ժամանակում նրանք կունենան իրենց հոգևոր հովիվը և աղոթարունը ու համախմբված Նայ Եկեղեցիով, իրենց ազնիվ ծառայությունն ու վաստակը կրերեն Ֆինլանդիայի հասարակական կյանքին:

Այս հոգևորոդ օրը աղոթենք միասին, որ Երկնավոր Տերը ամրապնդի ու գորացնի ի Զրիարոս սիրո ու եղբայրության մեր ոգին, շնորհ և օրհնություն բաշխի հապարավոր Իր հորին՝ ի պայծառություն Ընդհանրական, Առարկական, Մուրք Եկեղեցու՝ այժմ և հավիրյաևս ամեն:

Արբախակոպոս Յուկկա Պատրմայի, ինչպես նաև Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պեր արբախակոպոս Լեոյի ենք հանդիպումների ընթացքում հավաստվեցին միջեկեղեցա-

կան կապերի կարևորությունը: Վեհափառ Հայրապետը հույս նայանց, որ համագործակցությունը կշարունակվի ոչ միայն հոգևոր պետերի, այլև եկեղեցապարկան հասարակությունների միջև:

Այցի ավարտին Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի նստավայրում երկու Եկեղեցիների պետերը նվերներ փոխանակեցին և համարեղ աղոթք բարձրացրեցին խաղաղության, ժողովուրդների բարեկամության, երկու երկրների համագործակցության, առաջընթացի և բարեկեցիկ կյանքի եամար:

Հունիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղեցի Բ Ամենյան Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Ֆինլանդիա, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՌԱՆԴԻԱՅԻ
ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

(10-18 հունիսի 2004 թ.)

Հունիսի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Անգլիկան Եկեղեցու պետ Ջենթրերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոուան Ուիլիամսի հրավերով մեկնեց Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն:

Հայոց Հայրապետին ողնկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արևդա Պարսամյանը՝ որպես զավագանակիր, և Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը: Հայտուկ այս այցելության համար Նորին Սրբության գլխավորած պատվիրակության հետ Անգլիա եկավ նաև Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Թորդա Արթավաթը:

Հունիսի 10-ին, ժամը 13.15-ին, Լոնդոնի Հիթորոու օդանավակայանում Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությանը դիմավորելու էին եկել Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը, տեր և տիկին Ջորջ և Դայանա Ջյուրբեյանները, բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհրդի ատենապետ Արս Փալամուդյանը, ինչպես նաև Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչներ՝ Եվրոպայի Եպիսկոպոս դր. Ջեֆրի Ռոուսը, Ջենթրերիի Արքեպիսկոպոսի Էկոմենիկ կապերի քարտուղար Կանոնիկ Ջոնսթան Գոֆը և Ռոբին Էլթսը:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետին ողնկցող պատվիրակությունը առաջնորդվեց Լամբեթի պալատ՝ Անգլիկան Եկեղեցու կենտրոն, ուր նրանց դիմավորեց Ջենթրերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոուան Ուիլիամսը: Իր ողջույնի խոսքում նա մասնավորաբար նշեց. «Ուրախ եմ ողջունելու Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ-ին Լամբեթում իմ տանը և Ջենթրերիի իմ թեմում: Մարդկային ջերմ հարաբերությունների երկար պատմություն գոյություն ունի Անգլիայի Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու միջև, և իմ բաղձանքն է նորոգել բարեկամությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ և առավել գորսցնել կապերը մեր Եկեղեցիների միջև»:

Երեկոյան ժամը 20.00-ին, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տրվեց բարիգայտյան ընթրիք Լամբեթի պալատի Նիկիական Ակումբում, որին ներկա էին Ջենթրերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոուան Ուիլիամսը, տիկին Ուիլիամսը, ակումբի արեսնապետուհին և այլ հյուրեր: Ընթրիքի ընթացքում Նորին Սրբությունը ողջույնի իր խոսքն ուղղեց ներկաներին:

ՎԵՏԱՓԱՌ ՀԱՅՐԱԴԵՏԻ ԽՈՍ-ԸՆ ԼԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Մենք մեծապես ուրախ ենք, որ ի Զրիսարու մեր սիրեցյալ եղբոր՝ Նորին Սրբազանության հրավերով այսօր գրեվում ենք Լամբերում և հնարավորություն ունենք հանդիպելու Ձեզ հետ: Օգտվելով այս առիթից, կուզենայինք ընդհանուր ակնարկով ներկայացնել Հայոց Եկեղեցին:

Վազոյն ու ավանդապահ Եկեղեցիներից մեկն է Հայ Առաքելական Եկեղեցին: Շարադրելով հայոց պատմությունը, մեր մարենագիրները միշտ խնդրությամբ են պատմում այն մասին, թե ինչպես մեր Տիրոջ՝ Պապի Զրիսարուի երկու աշակերտները՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, եկան Հայաստան՝ քարոզելու Ավետարանը մեր փրկության ու եղան առաջին Լուսավորիչները հայոց: Հայկական թագավորության ընդարձակ տարածքում, տարբեր եւսհանգեներում նրանց քարոզությամբ ծնունդ առան քրիստոնեական համայնքներ, ու հաստատվեց Հայ Առաքելական Եկեղեցին: Առաքյալներին հաջորդած Հայրապետները հովվեցին ժողովրդին, պահպանեցին Եկեղեցին՝ կրելով հալածանքներ և հալածանքներ թագավորների և բոլոր դժվարությունները հեթանոսական ժամանակների: Շուրջ 250-ամյա այդ ժամանակահատվածում հայոց հողում քրիստոնեության համար նահապտակեցին իրենք առաքյալները, նրանց հաջորդած եպիսկոպոսներ, բազմաթիվ հայ քրիստոնյաներ, որոնց մեջ նաև՝ աթոռյական տան անդամներ ու իշխանագուհիներ: Այսպես ապրեց Հայ Եկեղեցին մինչև 4-րդ դարասկիզբ, երբ Աստուծո Բարերար Կամքով քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն:

Հայոց կյանքի այդ մեծագույն իրադարձությունը իրականացավ 301 թ., երբ, ունենդրելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզությունը, քրիստոնեություն ընդունեց Տրդատ Գ թագավորը, ով մինչև այդ ինքը ևս խիստ հալածանքներ էր ծավալել քրիստոնյաների դեմ: Մեծարդիային տանջանքների ենթարկելով, նա կարգադրել էր մահապատրվների բանարը ներել նաև Սուրբ Գրիգորին: Բանարն այդ պարզ գուր էր՝ խորը փորված, ուր ընկնողն այնևս դուրս չէր գալիս: Այնտեղ բանարված, 13 տարի Սուրբ Գրիգորը համբերեց բոլոր նեղություններին: 13 տարի նրա աղոթքը երկինք բարձրացավ՝ մահապատրվների գուրից օրհնություն խնդրելով հայոց համար: Եվ Աստված անասց իր մեծ խոստովանողի ու կենդանի մահապատրվ վկայի հայցին: Երկնային ազդեմամբ պատուհասված թագավորին բռնելու համար դուրս բերեցին գուրից Սուրբ Գրիգորին, ում վիճակված էր լինելու հայոց երկրորդ Լուսավորիչը և Հայրը Հավարի:

Աստված կամեցավ համազգային դարձը հայ ժողովրդի: Սուրբ Գրիգորի հրաշագործ ձեռքով ստեղծվելով իր մարմնական ու հոգևոր ցավերից, Տրդատ արքան դարձավ նրա գործակիցը՝ ողջ Հայաստանը քրիստոնեական հավատին դարձնելու գործում: Հայաստանը մկրտվեց քրիստոնյա, առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Վաղարշապատ մայրաքաղաքում, այն տեղում, ուր Սուրբ Լուսավորչի հայացքի առջև երկնային լույսերի մեջ ի-

քել ևր Բրիտանոս, կառուցվեց Մայր Տաճարը հայոց, որը կրում է էջք Միսմնի՝ Էջմիածին անունը: Ժողովրդին համարաբար կրթելու համար ամենուր բացվեցին դպրոցներ, կարգվեցին հոգևորականներ, կառուցվեցին եկեղեցիներ ու վանքեր, կազմակերպվեց Տայ Եկեղեցու վարչական կառույցը, և Սուրբ Գրիգոր Լուսավորիչը եղավ առաջին Տայոց Դուքսը:

Այսօր մեր ժողովրդի համար մեծ ուխտարևոյի է ևոր Վերապ անունը կրող այն վանքը, որ կառուցված է Սուրբ Լուսավորչի բանավարժի հարևանությամբ: Վանքը կայում է ողիդ Արարարին, որ հանգրվանեց Նոյյան փրկության տապալնը, իսկ գուրն իջնող ուխտավորները հավատում են, որ իջնելով բարձրանում են դեպի Աստված:

Տայոց Մեծ Դարձով սկսվեց մի նոր ճանապարհ՝ քրիստոնեյա Տայապարնի ճանապարհը: Այսօր ևս Նոյնացու հայ ժողովուրդը և Տայ Առաքելական Եկեղեցին: Տարկապետ 5-րդ դարի սկզբին Մեարոյ Մաշտոց վարդապետի կողմից հայ գրերի սրբեզոքում հեղու մեծ գաղթներ ապրեց քրիստոնեական կյանքը Տայապարնում: Սահակ Դուքսը կոչում ու Մաշտոցը իրենց աշակերտների հետ հայերեն թարգմանեցին Աստվածաշունչը: Տունարենից ու ասորերենից թարգմանվեցին բազմաթիվ գործեր, որոնցից ոմանք այսօր միայն հայերենով են պահպանվել:

Տայ հոգևորականների ձեռքով սրբեզոքվեց ապրվածությունական, եկեղեցական, արարմագիրական ու բնագիրական հարուստ գրականություն, ծնունդ առավ հայ մշակույթի Ոսկեդարը: Այսպես քրիստոնեության պետականորեն ճանաչումից 100 տարի անց նոր օրհնություն իջավ հայոց կյանքին: Տայ ժողովուրդը հայերենով խոսեց աշխարհի հետ իրեն քրիստոնեյա ազգ՝ Տայ Առաքելական Եկեղեցի: Տևրագու 1700 տարիների պարմության մեջ ինչպիսի իրավիճակներում էլ որ գրեթե վեց հայ ժողովուրդը, ինչ դժվարություններ էլ կրեց, միշտ հաղթանակող եղավ նրա քրիստոնեական մշակույթը՝ ընդունակ սրբեզոքործելու և այլոց սրբեզոք ճանաչելու և ընդունելու: Տայ մշակույթը միշտ մնաց հարազատ ու անբաժան մասնիկը ընդհանուր քրիստոնեական մշակույթի, ինչպես որ Տայ Եկեղեցին՝ իրեն սուրապարություն Բրիտանոսակեր հայ հոգու, դավանաբանական ու ծիսական, վարչական կառույցի առանձնահատկություններով հանդերձ միշտ եղավ ու է՝ հարազատ անդամը Բրիտանոսի Ընդհանրական Սուրբ Եկեղեցու: Ընդհանուր եկեղեցական կյանքում Տայ Եկեղեցին առաջնորդվել ու շարունակում է առաջնորդվել «Միութին ի կարևորա, ազատութիւն յերկրայական և սէր ամենայնի» սկզբունքով: Այսօր էլ Մենք մեծապես կարևորում ենք ևղարայական սիրո հարաբերությունները բոլոր Եկեղեցիների հետ և քրիստոնեական Եկեղեցիների սերտ ու ցերմ համագործակցությունը՝ հոսուն մեր մեկ առաքելության, որին կոչված ենք մեր Տեր ու Փրկիչ Դիտու Բրիտանոսի կողմից:

Մեր ժողովրդին հավատով լուսավորելու, հավատի մեջ հաստատուն պահելու և դեպի Աստված առաջնորդելու իր առաքելությանը հավատարմի մնալով, Տայ Եկեղեցին պարմության ընթացքում, նոր դարարել է գոյությունը հայոց պետականության, հաճախ արիպված է եղել կրելու նաև հայ ժողովրդի գոյաստեպանության պարասխանապությունը, պարասխաններ գրեկելու նաև նրա քաղաքական

խնդիրներին: Հայոց պատմությանը թնկուզ հպակցիկ ժանոթները զիարեն, քի ինչ-պիսի փորձություններով է լեցուն այն, որքան հարձակումներ ու ավերներ է տեսել Հայաստանը, որքան մահ ու կոտորած է վերապրել հայ ժողովուրդը ու որքան ցանք ներդրել՝ ազատագրելու համար Հայրենիքը, վերաբերելու կառուցելու համար իր երկիրը: Իր կյանքի հույսն ու գոյությունը մեր ժողովուրդը գրել է Հայրության հավաքի մեջ և չի վառանել կռվել ու մեռնել հաճուն քրիստոնեության: Հայոց հոդի վրա միշտ հաղթական մնաց Քրիստոսի խաչը, Հայաստանը և Հայ Եկեղեցին մնացին քրիստոնեության բերդամրոց Արևելքում:

Նվաճողների աթից ու բռնություններից հալածական մեր ժողովրդի զավակները տարբեր ժամանակներում ստիպված են եղել հեռանալ Հայրենիքից ու հաստատվել այլ երկրներում: Աստուծոց իրեն վարստված ժողովրդի հետ աշխարհագրիվ է եղել նաև Հայ Առաքելական Եկեղեցին՝ իրավիճակով իր հոյուն, որպեսզի ստարելով տարբեր կրոնների ու մշակույթների հետ կողք-կողքի, պահպանեն քրիստոնեական մեր սուրբ հավատը, որ ժառանգություն ունենք մեր հայրերից, ազգային աղժեքներն ու ավանդույթն և մնան միաբան՝ իբրև ժողովուրդ Քրիստոսի՝ Հայ Առաքելական Եկեղեցի: Արտերկրում մեր Եկեղեցու շարք թմիր ունեն հայրաձայնների պարմություն, արեղծել են հարուստ ու ծաղկուն մշակույթ՝ իրենց կարևոր նպատակը բերելով այդ երկրների կյանքին ու առաքելության:

Հատկապես արվարացան հայկական գաղթաօջախները, երբ Օսմանյան Թուրքիայի փրկապարտության ներքո գրավող Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ այլ բնակավայրերում հայկական կոտորածներ տեղի ունեցան 19-րդ դարավերջին և իրականացվեց ցեղասպանություն 20-րդ դարասկզբին, երբ Թուրքիան Առաքին աշխարհամարտի իրավիճակը հարմար նկատեց, որպեսզի Արևմտյան Հայաստանը, որը պարմական Հայաստանի մեծ մասն է, դարարկվի նրա բնիկ ժողովրդից: Ամենավայրագ մեթոդներով կոտորվեց ազգն ժողովուրդը, գաղթի ճանապարհներին սովախար եղան կանայք, երեխաներ ու ծերեր, թալանվեցին ու քանդվեցին հարյուրավոր եկեղեցիներ ու սրբարեղիներ, այրվեցին հինավուրց ձեռագիր ու տպագիր մատյաններ: Մեծ եղեռնից փրկված բազմաթիվ հայ ընտանիքներ հաստատվեցին նաև Մեծ Բրիտանիայում: Հայրապետական Մեր սցի օրերին Մեծ Բրիտանիա Մենք ականատես եղանք մեր զավակների հավատարմոր կյանքին, հավատարմությանը ազգային աղժեքներին և լեցինք այն ազնիվ մասնակցության մասին, որ բերում են Մեծ Բրիտանիայի հաստատական կյանքի տարբեր բնագավառներում:

Նախորդ՝ 20-րդ դարասկզբը մեծ դժվարություններ բերեց նաև Արևելյան Հայաստանին, որ նույնպես տեսավ պարերազմի ավերները: Այնուհետև հաստատվեցին խորհրդային կարգերը, և այստեղ էլ փակվեցին եկեղեցիները, շարերը քանդվեցին կամ վերածվեցին պահեստարանների, սպանվեցին ու աքսորվեցին հարյուրավոր հոգևորականներ: 70 տարիներ ժողովուրդը հեռու մնաց իր հավատից, Աստծո հետ կենդանի հաղորդակցությունից: Այսօր, երբ մեր ժողովուրդը վերականգնել է ազգային Կուրականությունը պարմական իր Հայրենիքի Արևելյան մասում, Հայ Եկեղեցին ունի գործունեության ազատություն: Արդեն մեկ

տրանսմյակ ջանքեր և ևերդրվում հաղթահարելու համար սթեխարակս ժուանակների ստերները, եորոգկու հավարը մարդկանց հոգիներում, լուսավորելու քրիստոնեական ճանաչողությամբ: Իրականացվում և րարքեր ծրագրեր՝ քրիստոնեական գրականության հրարարակություն, հեռուարարակսյին և ուղիտ հաղորդումներ, սեցեոդ ուտոմեակսն տարվանից հանրակրթական դպրոցներում ուսուցանվում է ևան Հայ Եկեղեցու արարմություն: Միյուտքի և հայրեակսն մեր գավակների աջակցությամբ եորոգվկ ևև շար հիեդեցիներ, կաուուգվկ ևև եորերք: Եկեղեցաշխությունը սյաոր էլ շարունակում է մնալ աուարեարնոյք նարարակներից: Մուսնեակի կարնորում ևևր հոգեորակսն եոր սերեդի արարուարության խեդիդը, և սյաոր ուրախ ևևր սակու, որ սյա աուումով նույնակս հաջողությունեկը կան: Մանավանդ ուրախ ևևր սյարեդ սեդրադառնակու, որ մեր Եկեղեցուն ևևրկս դավարությունների մեք աջակից ևև քրիստոնեական րույր Եկեղեցիները՝ հարկակսն հոգեորակսնների հրիտաարդ սերեդի արարաարման ո սոցիարակսն գարգացման ծրագրերի իարմանն ոյորերներում:

Մյաոր Մայր Աթոռը ագար է ևան Միյուտքի իր թևների հևր հաղորդակցություն և րևակսեոն հարարերությունները պահարանելու հարցում: Միյուտքի մեր գավակները ագար ևև այցեկու Հայաարան ո Սուրբ Էջմիածին, մեր ոխարավայր սրուարեդիները, աջակցեկս Հայաարանի հայությանը երկրի ևևրկս դավարությունների մեք:

Գործունեության ընձեռնված ագարությունը և հոգեոր կյանքի հանդեպ ժողովրդի մեք աճող հարարքությունը միաժամանակ սակի րեսանելի է դարձնում այև րուր պակասություններն ո ինդիդները, որոնք կուրակվել ևև տրանսմյակներով: Մենք հավարում ևևր, և մեր ժողովուրդը՝ նույնակս, որ ներդրվող ջանքերը իրենց արդյունքներն ևև տարու, հաղթահարվելու ևև դավարությունները և Հայ Եկեղեցին լիաշունչ շարունակելու է իր աուարկությունը՝ ի սեր ո ի փառս Հոր և Որդվո և Հոգվոյն Սրբո: Ամեն:

Հաջորդ օրը, հունիսի 11-ին, աուավոյան ժամերգությունից հևրո, Գարեգին Բ Անհավառ Հայրակարը հանդիպում ունեցավ Ջենթրերիի Արեքսիսկոպոս Դոկտոր Ռոուան Ուիլիամսի հևր: Հանդիպմանը ներկա էին Անգլիայի հայոց թևմի աուաշնորդ Գերաշնորհ Տ. Նարան ևպ, Հովհաննիսյանը, Միջեկեղեցական հարարերությունների բամնի պարասխանարու Գերաշնորհ Տ. Եգնիկ ևպիսկոպոս Պերրոպանը, ԵՊՀ ոնկտոր Ռադիկ Մարտիրոպանը, Ջորջ Բյուրքյանը, Հոգեշնորհ Տ. Մկրտիչ արդ, Պոռլյանը և Հոգեշնորհ Տ. Գեորգ արդ, Սարոյանը, իսկ Անգլիկան Եկեղեցու կոդմից՝ Եվրոպայի Եպիսկոպոս Դո. Ջեֆրի Ռոուելը, Անգլիկան Եկեղեցիների Միության Էկոմենիկ հարարերությունների և ուտոմեսիրությունների րեսրեն Կանոնիկ Գրեգորի Կամերոնը, Կանոնիկ Ջոնարան Գոֆը և Հայր Էնդրյու Նորմանը:

Հանդիպման նպարակն էր ոչ պաշտոնական ձևով բնարկել ընդհանուր հարարքություն ներկայացնող հարցեր՝ կապված ասուրվաճարանական կրթության, դպրոցներում, հիվանդանոցներում, բանրերում և գնված ումերում հոգեոր սպասավորության, էկոմենիկ հարցերի և Անգլիկան-Արեկյան Ուղղաաիա Եկեղեցիների միջն երկխոսության հևր:

Հանդիպումից հետո Կոնգրեսի անդամները և խորհրդակցական խմբերը հանդիպումներ են ունենում իրենց հետևորդների հետ՝ քննարկելով իրենց օրվա աշխատանքները։

Նույն օրը, ժամը 12.20-ին, Նորին Սրբությունը Բուկինգհեմյան պալատում հանդիպում ունեցավ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի Նորին Մեծություն Էլիզաբեթ Երկրորդի հետ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու պետությունների, մոդավորդների և Եկեղեցինների ցերեպի Խարաքերությունների, առկա բարեկամության գորացման և ամրապնդման կարևորության մասին: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորաբար անդրադարձավ 1915 թ. Հայոց ցեղասպանությանը, նրա ճանաչմանն ու դատապարտման անհրաժեշտությանը:

Հանդիպմանը ներկա էին նաև Անգլիկան եկեղեցու պետ Ջենթրքերիի Արքեպիսկոպոս Ռոտուն Ուիլիամսը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում ՀՀ արքայազնը և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը:

Տեղամիջօրեին, ի պատիվ Նորին Սրբության, Համբեթի պալատում կազմակերպվեց ընդունելություն, որին ներկա էին մի շարք բարձրաստիճան հոգևորականներ և պաշտոնյաներ, որոնց թվում էր նաև Գլխաբերի դուքսը, որն իր մասնակցությունն էր բերել 1700-ամյակի տոնակատարություններին որպես Հիգարեթ երկրորդ թագուհու ներկայացուցիչ:

Ընդունելության ընթացքում ստորագրվեց Ս. Գրիգոր Լուսավորչի անվան կրթաթոշակ ստեղծելու մասին մի փաստաթուղթ: Սա մի կրթաթոշակ է, որը հովանավորում են Մեծ Բրիտանիայում ապրող հայ բարերարները և ղեկավարում է Ս. Անդրեասի Էկումենիկ ֆոնդը: Ուսանողը, որին պետք է կրթաթոշակ հատկացվի, նշանակվում է Վեհափառ Հայրապետի անձնակազմի և Բնթոթերիի Արքեպիսկոպոսի համաձայնությամբ:

Ջենթրեբերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Առուան Ուիլիամսը մի քանի խոսքով ներկայացրեց այդ փաստաթուղթը, որը սպորադերեցին Ֆոնդի նախագահ, Ուեսթուելլի Լորդ Նադեր և պարոն Ջորջ Զյուրբեյանը՝ քաղերարների անունից:

Նույն օրը, ժամը 17.00-ին, Վեհապետ Հայրապետի գլխավորած պատվիրակության անդամները և իրեն ուղեկցող շքախումբը Ուեսթմինսթրի Աբբայությունում մասնակցեց երեկոյան ժամերգության, որից հետո պսակ զերեդեցին 20-րդ դարի նահապակաների եռշալիղիում, ապա եղան Ս. Էդվարդի մատուռում, որտեղ Վեհապետ Հայրապետը և Զենթր-բերիի Արքեպիսկոպոսը ազդեց բարձրացրեցին առ Աստված, այնուհետև այցելեցին Աբբայության հիմնական տեսարժան վայրերը:

Երեկոյան ժամը 19.30-ին Գորինգ իշխրանոցում Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի իշխրասիրոյամբ տնդի տնցեալ ընթրիք, որին ներկա էին Զննթրերիի Արքեպիսկոպոս Դոկտոր Ռոտան Ուլիխամը, Եվրոպայի Եպիսկոպոս Դր. Զնթրի Ռոտելը, Եվրոպայի ընթերակա Եպիսկոպոս Դելվիդ համիդը, Ունթրմնթրի Արքայոթոյան վանահայր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՑԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ
 ԵՒ ԲԱՐՈՑԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱՐԱՐՈՒՄ ԵՒ ԲԱՐՈՑԱՆԻՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ





«ԴՐՈՇԱՊԱՆՈՒՄ»-ԻՎ ՄՈՒՏԶ ԵՎ ԴԱՅՐՈՒՄԵՏԱԿԱՆ ՕՐԻԴՆՈՒԹՅՈՒՆ
ԼՈՆԴՈՆԻ Ս. ՄԱՐԿԻԱՆ ԴԱՐԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ռեզոլյուցիայի ղեկավարը, Քննարկողների Արհեստագործական Էկոմենիկ կապերի քարտուղար Կառնոնիկ Զոնաթան Գոֆը, Անգլիկան Եկեղեցիների Միության Էկոմենիկ հարաբերությունների և ուսումնասիրությունների Կոնսիլի Գրեգորի Կամերոնը, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունում Քննարկողների Արհեստագործական Էկեղեցիների Կոնսիլի Միության Սրբորդինարի, Ս. Անդրեաս Էկոմենիկ Փոնդի ծրագրերի Կոնսիլի Կարոն Բրիտանիկ Օսթրեր և այլք:

Հայոց օրը, հունիսի 12-ին, առավոտյան ժամը 9.30-ին, տեղի ունեցավ հանդիպում (Մեծ Բրիտանիայի Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների խորհրդի ներկայացուցիչների հետ, որին մասնակցում էին խորհրդի նախագահ Գեորգ Տ. Նաթան Լալս, Հովհաննիսյանը, Տ. Շնորհք բեկ, Բաղդասարյանը (Հայ Առաքելական Եկեղեցի), Արքա Սերաֆիմ (Մարտիրոսյան), խորհրդի արհեստագործական Հայր Արամիս Զեմուրյան, Հայր Բիշոյ Մակարը (Հայոց Ուղղափառ Եկեղեցի), Հայր Էդուարդ Կոնգամպիլյոն, խորհրդի քարտուղար Ալիզ Նուրը (Մարտիրոսյան Եկեղեցի) և Հայր Յոհաննեսը (Հռոմեական Եկեղեցի):

Նույն օրը, ժամը 11.00-ին, Հայոց Հայրապետը պարավորականության անդամների հետ այցելեց Հայոց Ուղղափառ Եկեղեցու Թիաֆիրիայի և Մեծ Բրիտանիայի արհեստագործական Գրեգորիոսի, իսկ հետմիջոցին՝ Ս. Մարիամի արքայություն, որը Անգլիկան Բնակիչական կառույցի միաբանություն է և հիմնադրվել է մոտավորապես 1090 թ.: Առաջին միաբանությունը գործել է մինչև 1538 թ., երբ Մեծ Բրիտանիայում բոլոր վանքերը փակվեցին Հենրի Ը թագավորի հրամանով: Վանքի կալվածքները աշխարհականների ձեռքում մնաց մինչև 1892 թ., երբ այն գնվեց վանական կյանքը վերականգնելու նպատակով: Ներկայիս եկեղեցին օգտվել է 1966 թ.:

Վեհափառ Հայրապետը և Քննարկողների Արհեստագործական Ուղեորակցին Արքայության եկեղեցի, ուր նրանք ողջունեց մայրապետը, որից հետո կատարվեց համատեղ աղոթք: Այնուհետև Վեհափառ Հայրապետին հրավիրեցին Տերունական աղոթքը հայերենով ասելու: Կարճ արարողությունն ավարտվեց Նորին Մրբության և Քննարկողների Արհեստագործական օրհնության խոսքերով: Այնուհետև նրանք ուղեորակցին դիմելու Արքայության միջնադարյան կառույցները և այլքին, որից հետո Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ միանձնուհիների հետ, որոնք Նորին Մրբությանը խնդրեցին մի բանի խոսքով ներկայացնել Հայոց Եկեղեցու վանական կյանքը:

Ժամը 16.45-ին Նորին Մրբությունը հայրապետական շքախմբի անդամների հետ ժամանեց Քննարկողների հին պալատ, ուր երեկոյան ժամը 22.00-ին տեղի ունեցավ վառված մոմերով թափոր դեպի Մայր Տաճար:

Կիրակի օրը, հունիսի 13-ին, Քննարկողների Արհեստագործական Էկոմենիկ կապերի քարտուղարը տեղի ունեցավ Ս. Պատարագ Քննարկողների Մայր Տաճարում: Հրեաքա Ս. Պատարագի ներկայությունը իր խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետին:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԲԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(13 հունիսի 2004 թ.)

*«Այդպես և մենք թվով շատ. մի մարմին ենք Զրիարոսով.
բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»:
(Նոսմ. ԺԲ 5)*

Գոհություն և փառք Տիրոջը, որ մեկ մարմնի անդամները լինելու հոգևորազգացումը այսօր համախմբել է մեզ Զենթրբերիի այս հնագույն Մայր Տաճարում: Ուրախ է Մեր հոգին, որ Ամենակարող Աստված պարզեց Մեզ առիթը Զենթրբերիի Արքեպիսկոպոս, Մեր հոգևոր եղբայր Ռոտուն Ուիլիամսի ազնիվ հրավերով այսօր գլխավորու պարտի և ձեզ հետ միասնաբար աղոթք վերադարձնելու երկինք, հայցելով մեր Տեր ու Փրկիչ Նշուա Զրիարոսից, որ խաղաղություն պարզի ու խաղաղիկ համայն, գործակի եղբայրությունը մարդկանց մեջ և անասան ու պայծառ պատկանի Իր Սուրբ Եկեղեցին:

Մենք՝ որպես Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջուն և օրհնություն ենք քերում Անգլիկան Եկեղեցու հավատարմորդ անդամներին ու հոգևոր դասին. Մեծ Զրիարանիայի պետական այերերին, այսօրեղ ներկա բոլոր քույր Եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին և հայ համայնքի անդամներին: Թող Աստված օրհնի մեր եղբայրությունը և ունկնդիր լինի մեր աղոթքներին:

Մերնի եղբայրներ ու քույրեր, Նոգեցալարյան այս շնորհունորոց օրերին մենք բոլորս առավել զգում ենք մեր հոգևոր միությունը՝ իբրև Զրիարոսի մեկ Եկեղեցի: Սուրբ Նոգու Էջրով առաքյալների վրա և նրանց քարոզությամբ ծնունդ առավ Ընդհանրական Եկեղեցին, որ տարածվի ու պատկանվի փրկության հույսը աշխարհում, որ մարդկության կյանքը շարունակ նորոգվի մեր հսկողիկ Աստծո Միտ միփառությամբ ու մարդկանց մեջ հաճությամբ: Այս նույն առաքելությունն է միավորում մեզ՝ համաձայն Պողոս առաքյալի խոսքերի. «Այդպես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Զրիարոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»: Այս զգացումը քաջակերում ու գործակում է յուրաքանչյուրիս, երբ կողք-կողքի ենք՝ միմյանց աջակից ու գործակից:

Մեզ համար խորհրդանշական է, որ նախախնամական տնօրհնությամբ մենք աղոթքի ենք համախմբվել այսօր, երբ Հայ Եկեղեցին տոնախմբում է Սուրբ Էջմիածնի տոնը: Մեր ժողովուրդը ոգևորում է հիշատակները այն օրերի, երբ Զրիարոսի իջման տեղում մեր նախնիները հիմնադրեցին Տաճար Աստծո, որ տեղից Ավետարանի լույսը համապարած սփռվեց Հայաստանի վրա, և համաշխարհային պատմության մեջ առաջինը հայոց թագավորությունը 301 թ. քրիստո-

ներությունը հորսկեց պետական կրոն: Զրիարոնեությունն այս հաղթանակի խորհրդով Սուրբ Էջմիածնի տոնը համաքրիստոնեական հեղափոխություն ունի ու սերժիք: Այս ընկալումի ամենապայծառ արտահայտությունը եղավ 35 քույր Եկեղեցիների ու կրոնական կազմակերպությունների պիտերի ու դեկավարների մասնակցությունը Նալապարտում քրիստոնեության պետական ճանաչման 1700-ամյակի տոնակատարություններին: Սուրբ Էջմիածնում հորեկյանական հանդիսությունների մասնակցեց կան Զեկթրերիի կախորդ Արքայակոյոսն և Մեր հոգևոր կոյոսը Գերաշերի Զորք Զերիին:

Մեր Եկեղեցու ուսուցչության ճանապարհին մշտապես կարևորել ենք սերտ հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ՝ որպես սպանդակալան դիրքորոշում, որն սկսված հարազատ է Օգոստինոս Երանելու քննադատմանը «Միութիւնի կարևորութիւնը, սպանդակալան յերկրայական, և սեր յամենայնի»: Մենք հավատում ենք սիրո ու կոյոսության հաղթանակող գործությանը: Միայնի, քրիստոնեական Եկեղեցիների ղեկավարում մեր սերտացող հարաբերություններով ու գործակցությամբ ամիկի դյուրությունը պիտի վճիռներ գրեկներ մեզ հուզող խնդիրներին, ինչպես նաև՝ պարտախաններ սարդի ժամանակների հրամայականներին ու մարտնչություններին, որպեսզի աշխարհը գերծ լինի բոնություններից, կարիքից ու աղքատությունից, որպեսզի Ավերարանի լույսը Զրիարոսի Սուրբ Եկեղեցիով ակալովի տարածվի աշխարհում, և սարվածմանս հոգու բարի արգասիքները ուսուցիչորեն մարդկության կյանքը:

Ավանդաբար բարեկամական են Անգլիկան և Նայ Եկեղեցիների հարաբերությունները, որ գորացել են երջանկաւիշարակ Մեր կախորդների և Անգլիկան Արքայակոյոսների փոխացկություններով: Այս շրջագծում է նաև երիտասարդ հայ հոգևորականների ուսման շարունակումը Մեծ Բրիտանիայի ասարվածարանական կրթական հասարակություններում, ինչպես և Մեր այս սյցը: Նանդիսավոր ու աղոթաշունչ այս պահին սիրով հրավիրում ենք Ձեզ՝ հոգևոր կոյոսը Ռոտուն Ռիկիան, Ձեր ողեկիցների հետ սցեկլու Նալապարտ, կայելու բիբլիական Արարարին, տեսնելու հոգևոր կյանքի վերագարթները սզգային պետականությունը վերագրում մեր Նայրեկերում: Նայ Եկեղեցին ընդայնվող գործունեությամբ քանում է վերականգնել մեր ժողովրդի հավատի կյանքը, որը խաթարվեց 20-րդ դարասկզբին Արեւելյան Նալապարտում խորհրդային իշխանության քերած հոգևոր սովի, իսկ Արեւելյան Նալապարտում՝ Նայոց ցեղասպանության արդյունքում:

Նայրապետական գնահատանքի ու շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Մեծ Բրիտանիայի իշխանություններին ու ասարվածաներ ժողովրդին, որ քրիստոնեական սիրով ընդունեցին Նայոց ցեղասպանությունից փրկված հայորդիներին և այսօր նույն ազնիվ վերաբերմունքն ունեն կրանց ժառանգների ու այսրեղ սարող լույսը հույրի կկարմար, ովքեր արժանավոր քաղաքացիներն են Մեծ Բրիտանիայի և կիրումով ու հավատարմությամբ իրենց ժառանգությունն են քերում այս օրեկայ երկրի կյանքին ու առաջնեացին: Մենք հավատում ենք, որ Նայոց ցեղասպանությունը պիտի ճանաչվի ու դարապարտվի լույսը պետուր:

յունենքի կողմից, նաև՝ Մեծ Բրիտանիայի, քաղաքի ոճիքի դատապարտումն է սյն ճանապարհը, որով պիտի կանխվեն դրանց հետագա կրկնությունները, բռնություններն ու ահաբեկչությունները: Մեր ժողովուրդը միշտ երախտագիտությամբ է հիշելու նաև այն աջակցությունը, որ Մեծ Բրիտանիան ցուցաբերեց 1988 թ. ադիպայի երկրաշարժի ժամանակ, հայաստանի ամենամանր շրջափակման պայմաններում: Հայցում ենք ուր Աստված, որ շին ու բարձր պահպանի Մեծ Բրիտանիան, անվրդով ու հաւատարմով՝ Անգլիկան Եկեղեցին, ու երջանիկ՝ նրա բարեպաշտ ժողովրդին:

Տեղ. աղաչում ենք Քեզ, համապագ խնամքիդ ու օրհնությանդ ներքո փորձություններից ու վրանգներից պահպանելու Զո Սուրբ Եկեղեցին, գորացրու բոլորիս մեր պարտքի մեջ՝ լինելու միմյանց հարազատ սնուսմունք, լինելու մի մարմին՝ Զո խոսքով կենդանի ու կենդանացնող:

Թող Աստծու սերը, շնորհն ու խաղաղությունը թագավորեն աշխարհում այսօր և միշտ, ամեն:

Ճաշից հետո քնդի ունեցավ այցելություն Բենթրեբրիի Մայր Տաճար, իսկ երեկոյան ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը և իրեն ողեկցող պապի խորհուրդները գերմանացի Բենթրեբրիի Ս. Մարիամի եկեղեցում երիտասարդների կազմակերպած արարողությանը:

Երեկոյան ժամը 19.30-ին Բենթրեբրիի վանահայր Ռոբերտ Ուիլիսը ընթերիք Կարմիր Հայոց Հայրապետի: Ընթերիքի ընթացքում Նորին Սրբությունը խոսք ուղղեց ներկաներին՝ ասելով.

Միևնի բարեկամներ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն Մեր այցի պաշտոնական մասը մտրեցավ իր ավարտին: Այսօր, երբ մենք ես մեկ ունեցում հավաքվել ենք միասին հաց կիսելու ու միմյանց բարեկամությունը վայելելու քրիստոնեական սիրտ մթնոլորտում, Մեր սիրտը լի է ուրախությամբ ու մխիթարությամբ:

Այս չորս օրերը Մենք ստեղծագործեցինք Մեծ Բրիտանիայի օրհնյալ հողում՝ որպես Գերաշնորհ Արքեպիսկոպոս Ռոուսն Ուիլիամսի հյուրը: Մենք փառք և գոհություն ենք մատուցում ուր Ամենակալն Աստված, որ պարգևեց Մեզ այս հիանալի հնարավորությունը՝ Մեր այցելության ընթացքում ծանոթանալու ձեր հոգևորականության և հավատալով հոգի ենք:

Մենք նույնպես ուրախ ենք, որ մեր այս համատեղ վերջին ընթերիքի վայրը Բենթրեբրիին լ'Անգլիայի Եկեղեցու և Անգլիկան Եկեղեցիների Միության պատմական Մայր Աթոռը: Հրավերի և հյուրընկալության համար շնորհակալություն ենք հայտնում Բենթրեբրիի վանահայր Ռոբերտ Ուիլիամսին և բոլոր այն սննանց, ովքեր մաս են ունեցել Մեր այցը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն կազմակերպելու գործում:

Մենք տեսներ այն հաջողությունները, որ ունի Անգլիկան Եկեղեցին, և մարտիրոսներները, որոնց դիմագրավում է: Տեսներ նաև շատ ընդհանուր խնդիր-



ՔԵՆՈՐԲԵՐԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ





ՃԱՂԿԵՊԱԿԻ ՋԵՏԵՂՈՒՄ ՈՒՆԵՄԹԱՆԱԹՐԻ ԱԲԲԱՅՈՒԹՅԱՆ
20-ՐԴ ՂԱՐԻ ՆԱԳԱՏԱԿԱՅ ԶՈՒՇԱՏԵՂՈՒՄ

ներ, որ առկա են մեր Եկեղեցիների առաքելության ճանապարհին: Մեր այս այցելությունը և զրույցները Անգլիկան Եկեղեցու բարեգլուխ հոգևոր առաջնորդի հետ՝ զորացնելով մեր նրկու բոլոր Եկեղեցիների միջև աղդեն խսկ գոյություն ունեցող ափսոսական, պարմական հարաբերությունները, պիտի առաջնորդի ձեռք բերումների կրումներին ոլորտում:

Մենք հավատում ենք, որ քրիստոնեական սիրտ, փոխըմբռնման ու համագործակցության ճանապարհով միայն Քրիստոսի Եկեղեցին կարող է իր իրական ներուժը ծառայեցնել՝ առաջնորդելու մեր հավատարացյալներին դեպի Աստված: Մեր նրկու Եկեղեցիները՝ Անգլիկան Եկեղեցին և Հայ Եկեղեցին, մի շարք ոլորտներում նգույնի հարաբերություններ ունեն, որոնք կարող են օրինակ հանդիսանալ մեր բոլոր Եկեղեցիների համար: Ծննդիս է, որ մենք ոչ բոլոր հարցերում ենք համակարծիք՝ սաղմավածաբանական, մշակութային կամ հասարակական կյանքի, այնուամենայնիվ, մենք պետք է միշտ հիշենք, որ այն, ինչ միավորում է մեզ, ավելին է, քան այն, ինչ բաժանում է մեզ, և միության ոգին կարևոր է միմյանց հետ մեր հարաբերություններում: Միությունը, որը բոլոր Եկեղեցիների քաղմայի կրազանքն է, կարող ենք ունենալ, երբ մենք միմյանց մոտենանք ոչ միայն որպես ընկերներ, այլև որպես եղբայրներ, և մեզ համար միշտ առաջնորդող լինի Պողոս Առաքյալի խոսքը. «Բայց արդ, մնում են հավատ, հույս, սեր՝ սրանք՝ երկրը, և սրանցից մննուգույնը սերն է» (Ա Կորնթ. ԺԳ 13):

Միևնի կորայր ի Քրիստոս, Ձերդ Սրբուգնություն և սիրնի քարեկամներ, Մենք այսօր մեկնում ենք այն լավատիսությունը, որ մեր հարաբերությունները կշարունակեն զարգանալ Մեծ Բրիտանիայում, Հայաստանում և համայն աշխարհում, և քրիստոնեյա մեր ժողովուրդները կշարունակեն գորանալ հավատքով Աստծու Ամենախնամ Աջի հովանու ներքո:

Թող Աստված օրինի Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Հայաստանի Հանրապետությունը, Անգլիայի և Հայ Առաքելական Եկեղեցիները և բոլոր հոգևոր ապաստավորներին ու հավատացյալ հորը Քրիստոսի: Մեր մաղթանքն է, որ Աստծո շնորհով կրկին սեղանի շուրջ հավաքվենք հաջորդ անգամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Հունիսի 14-ին, Անգլիկան Եկեղեցի պաշտոնական այցի ավարտին, Վեհափառ Հայրապետը և իրեն ողեկեցող պապվիրակության անդամները այցելեցին Քենթրբերիի Արքայական դպրոց, ուր նրանց ողջունեց դպրոցի տնօրեն Կանոնիկ Կելյա Ուիլկինսոնը, որից հետո շրջնցին դպրոցի տարածքում, եղան Ս. Օգոստինոս եկեղեցում, գրադարանում, Արքայության պարմական շինություններում:

Քենթրբերիի Արքայական դպրոցում Հայ Եկեղեցու պապվիրակության պարմին կազմակերպված ճաշից հետո Վեհափառ Հայրապետը, շքախմբի անդամների հետ, վերադարձավ Լոնդոն:

Հունիսի 14-18-ը Ամենայն Հայոց Հայրապետն իր օրինաբեր այցելությունը տվեց Անգլիայի հավաքավոր հայոց հոտին:

Նորին Սրբությունը և իրեն ուղեկցող շքախումբը այցելեցին առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի, ուր «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց տաճար, ուր կանոնական աղոթքից հետո բարիգալստյան խոսք ասաց Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական այցը Անգլիա՝ համայնքային կյանքի էլ ավելի աշխուժացման և Մայր Աթոռի հետ կապը ամրապնդելու առումով: Հանուն Հին Արևելյան Ուղղափառ քույր եկեղեցիների բարիգալստյան խոսք ասաց նաև Ղապրի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Գերշ. Տ. Անգելոս նախկոպոսը: Այնուհետև հավաքված ժողովրդին Հայրապետական իր օրհնությունը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՈՆԴՈՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(14 հունիսի 2004 թ.)

Միտնի ժողովուրդ

Աստծո ռդորմությամբ ահավասիկ վերադին ձեզ հետ ենք: Ուրախ է Մեր հոգին ողջունելու և Հայրական Մեր օրհնությունը բերելու սիրելի Սրբազան Հորը, արժանապատիվ քահանա Հայրերին, եկեղեցական վարչականներին, ձեզ բոլորիդ, որ հավաքվել եք այս Սուրբ Տաճարում: Օրը բարի է մեր հունդիայման շնորհով, միասնական մեր աղոթքով, երբ բոլորիս հոգին բազմաձև է դեպի երկինք:

Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այս հնագույն ու ավանդաշատ, շեն ու բարգավաճ երկրում, կյանքի մեծ ասպարեզի մեջ դուք Հայ եկեղեցու շուրջ աւրում եք հավաքական կյանքով, ջանքեր եք գործադրում, որ Թեմայի ավերին հայոց շուրթերին կենդանի մնա մեր մայրենին, իսկ հոգում ամուր մնան հայրենական սրբություններն ու ավանդները: Հայաստանում ապրողներին համար քիչ ոճվար է պարկեռացնելն ու զգալը, որ կարելի է լինել հուրազար գավակը հայ ժողովրդի և միաժամանակ հարազատ գավակը Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և բոլոր այն երկրների, ուր ապրում են հայեր: Սակայն սա իրողություն է և մենք հպարտ ենք այս իրողությամբ, մենք հպարտ ենք մեր բազմաթիվ զաղթօրախների հուրուտ պատմությամբ ու մշակույթով, այն մասնակցությամբ, որ մեր ժողովրդի գավակները բերել ու բերում են իրենց հյուրընկալած երկրների հասարակական կյանքին: Մենք հպարտ ենք ձեզանով, և Մեր բարձր գնահատանք ենք բերում բոլորիդ ինչպես առ Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը մեր սիրտ, այնպես և Անգլիայի արժանավոր գավակները լինելու համար: Թող մեր առաջին աղոթքը լինի, որ Աստված Իր խնամքի և օրհնության ներքո պահպանի Անգլիան և բոլոր շնորհ պարգևի նրա ժողովրդին:

Օրհնություն ենք բերել այս հնագույն ու ավանդաշատ հողին և ձեզ ամենքիդ Սուրբ Էջմիածնից ու Հայաստանի սրբապարեզից: Մեր բոլորի Հայրենիքից ու հավաքրի Միաձուլեց կենտրոնից սեր ու կարտը ենք բերել ձեզ, որը, հավատում ենք, պատասխան սիրտ ու կարտի զգացումով արձագանքում է այս պահին մեր



תמונה מס' 10: ראש הממשלה, מר יצחק מורד, עם ראש המוסדות הדתיים, הרב יצחק אייזיק ווייס, ושרת המבחן, מרת רחל ווייס.



ՏԳԷ ՎԱԴԴԴՈՇՇԱՎԱՇ ՌԻՄՈՆԻ ԻԳ ԶԱՄՏ ԴՎԻԿՅՍ ԻԳ յԱՏ ԵՏԶԱՆՈՒՄԵՆԷ ՍՈՓՈՒԷԳԻ



հոգիներում: Ձեզանով և համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդով է պայծառ մնալու Մուրդ Էջմիածինը և հզորակալու ու բարգավաճելու հայաստանը: Ձեզանով ենք Մենք բաջալեր՝ ինչպես հայոց բոլոր հայրապետները: Հաստատուն մնացեր հավատքի մեջ, ապրեք ու գործեք սիրով միասին, և թող ձեր հոգիներդ միշտ լրաց մնան ապրվածային շնորհների առջև, փրկության հույսի ու հարության հավատի առջև, որով ապրել է մեր ժողովուրդը, ու պիտի ապրի միշտ:

Մենք միշտ աղոթող ենք ձեզ բոլորիդ համար, ձեր նշխանիկ կյանքի համար, ձեր բարի գործերի հաջողությունների համար: «Իսկ բարին գործելուց չմանձրանանք, որովհետև հարմար ժամանակին պիտի հնձնեք, եթե հրաշքներ» (Գալաթ. Զ 9):

Թող Մարմաժ խաղաղության մեջ պահպանի աշխարհը և իր հովանին տալու լույս պսակի նաև հայոց ազգիս վրա, պահպանելով միասուն Մուրդ Էջմիածնի թների ներքո:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում հայաստանի հանրապետության դեսպանատունը «Հայ Տանը» կազմակերպել էր ընդունելություն ի պատիվ Նորին Սրբության՝ Անգլիա ալեքսանդրյան, որին ներկա էին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում հայաստանի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը, ԱՊՀ երկրների դեսպանները, բարձրաստիճան ներկայացուցիչներ Անգլիկան, Ղպարի և Ասորի Ուղղափառ Եկեղեցիներից, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հունիսի 15-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Մանչեստրի Ս. Երրորդություն եկեղեցի, որը առաջին հայկական եկեղեցին է, որ կառուցվել է Անգլիայում դեռևս 19-րդ դարում: Արարողությանը ներկա էին Անգլիկան Եկեղեցու Մանչեստրի թեմի եպիսկոպոս Նիգել Միմնոն Մաքքուլթը և Անգլիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչը: Այնուհետև Նորին Սրբությունը ծանոթացավ Կրեդի հայ համայնքի կյանքին:

Երեկոյան Մանչեստրի «Միդլենդ» հյուրանոցում ճաշկերույթ տրվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասացին Մանչեստրի Ս. Երրորդություն հայոց եկեղեցու արևնապետ պրն Թադո Գուլիկյանը և Մանչեստրի անգլիկան եպիսկոպոս Միմնոն Մաքքուլթը: Ներկաներին այնուհետև իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը, օրհնության գրեթե արժանացնելով Մանչեստրի եկեղեցական վարչության անդամներ Դուգլաս Բուքանյանին և դպիր Արա Գուլիկյանին:

Հունիսի 16-ին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Լոնդոն, ուր հետմիջօրեին Վաչե Մանուկյանի կողմից կազմակերպվեց հյուրասիրություն:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Լոնդոնի Ս. Եղիշե հայոց եկեղեցում տեղի ունեցավ Ս. Պարարագ: Պարարագիչն էր Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ աօրնթերակայությամբ Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, Գերաշնորհ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի: Հընթացս Ս. Պարարագի ներկաներին հայրապետական իր պարգամը ուղղեց Վեհափառ Հայրապետը:

**ՆԱՕՏՏ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՄԾԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԼՈՆԴՈՆԻ ՍՈՒՐԲ ԵՂԵՇ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(16 հունիսի 2004 թ.)**

*«Արդ, ո՛վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց...»:
(Հոռմ. Ը 35)*

Միտիկ հայորդիք.

Մեր առաջին խոսքը ջերմագին ողջույնն է, որը քերիկ ենք ձեզ Սուրբ Էջմիածնից և մեր Մայր հողից: Քրիստոսալուսն մեր սրբորանի օրհնությունն ենք բերել ձեզ՝ կրկնելով Պողոս առաքյալի խոսքը. «Արդ, ո՛վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց...»:

Վերջին մի քանի շաբաթներին Մարծո Կամբով առիթն ու հնարավորությունն ունեցանք հայրապետական այցելություններ կատարելու, և ամեն անգամ մեր ժողովրդի հետ հանդիպման պահերին առաքելական այս պարզամե էր հնչում Մեր հոգում: Այսօր էլ, երբ դուր Սրբազան Պատրարագի եք հավաքվել ձեզ այցի հկամ հայրապետիս հետ, երբ տեսնում ենք Մեզ ուղղված ձեր հայացքները, երիցս փառք ու գոհության աղոթք բարձրացնելով երկինք, ուզում ենք կրկնել, ո՛վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց: Իր պարմությամբ, իր մշակույթով, մեր ժողովուրդը կարող է վկայել ամենախաղաղ գոյությունը առ Քրիստոս սիրո, որը հաղթության հավաքով համախմբել ու պահպանել է մեզ իբրև ազգ հայոց, իբրև հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Միտիկներ, ինչպես բոլոր մեր գաղթօջախներում, դուր էլ Մեր անձի մեջ տեսնում եք Սուրբ Էջմիածինը, որտեղից՝ Միածնի Իջման կենտրոնը ակունքից, աուրվածային սերո, Ավետարանի լույսով ծովացավ համայն հայաւրանի վրա և հոգեպարար քաղցրուսույց կրթությամբ պրոդարերեց հայոց հոգիներում: Անցնող կիրակի տոնն էր Սուրբ Էջմիածնի: Եվ երբ խորհում ենք Սուրբ Էջմիածնի առաքելության շուրջ, նախ և առաջ տեսնում ենք Բարձրյալի շնորհը, խնամքն ու մեծ ուղորմությունը մեր ժողովրդի հանդեպ: Մարված պարզենց մեզ Սուրբ Էջմիածինը, որ լինի հայ հոգու ծննդավայրը, քրիստոնեական մեր հավաքի անշարժ վեմը և հայոց հայրապետության Մայր Աթոռը: Մարված պարզենց մեզ հայոց փրկության տալարներ՝ տալարակիր Արարարի դիմաց: Սուրբ Էջմիածնից ճառագող լույսով, փրկության հույսով ու հավաքով ապրեց ու աղեղնագործեց մեր ժողովուրդը, պաշտպանեց իր ազատությունը, մոխիրներից հատենց և աշխարհաւիյոտ տարածված՝ մեաց մեկ ժողովուրդ, մեկ հոգի ու ներաշխարհ: Անգլիահայ համայնքի պարմությունն էլ հավասարումն է այս իրողության, այս մեծ ու թանկ ճշմարտության: Մենք գիտենք ձեր հավատավոր կյանքի ու գործերի մասին, Սուրբ Էջմիածնի հանդիպ ձեր սիրո ու նվիրումի մասին, որը փոխանցում եք նաև ձեր զավակներին:

Այսօր ազատ մեր հայրենիքից ևն հնչում Սուրբ Էջմիածնի դողանքները, ազատ ու վերաշինվող հայրենիքից է Սուրբ Էջմիածինը իր բոլոր զավակներին

բաշխում օրինություն ու շնորհ, երբ հույս և հավաստի մեր ժողովրդի միացյալ ու սրբազան գալիքի համեմատ: Մայր Տաճարի կամարների ներքո այսօր ձեր կոթողների ու բույրերի փառք ևն մատուցում Աստծուն, որ օրհնող բազմամարդ ևն դառնում մեր եկեղեցիները, որ հուշ ևն դառնում պարտադրվող անաստվածության ժամանակները: Չկարծենք, թե Աստծուն մերժելը միայն 20-րդ դարի արդյունքն է, երբ արագորեն բազմաստվածական գիտական մտքի հայրենագործությունները: Մարդկային սրտմտության մեջ շատ է կեղև, երբ հավաստիքը ընդունվել է իբրև ևս-խառնաշառում: Մարդը փորձել է երթանիկ լինել իր մտքի ձևորոշումներով և միշտ կանգնել է փակուղու առջև, քանզի առանց հոգու կենդանության, որը խորան է Աստծո, չի կարող լինել ճշմարիտ երթանկություն, և առանց Աստծո ներկայության չկա իրական առաջընթաց:

Փառք Աստծուն, մեր ժողովուրդը, ուր էլ հասարակվել ու ապրում է, ճանաչված է իր ցանասիրությամբ, իր շնորհներով: Գիրևական ու արվեստագետ շատ հայեր ևն ծանոթ աշխարհին: Բայց մանավանդ հայը ծանոթ է իրեն քրիստոնյա, որ գիրև արևելքում ու գեախարկ սայոց արեղծածը: Նոցեք բարձր աշխարհ է առ, որ բարձրանում է մեր հավաստի հիմքի վրա և պահել է մեր ժողովրդին մարդկային վստիք արժեքների մեջ, միշտ սաները, հայտար ու լավարև: Մենք բոլորս թե՛ Նայրեհիբում և թե՛ Միլյոնորում կանգնած պետք է մեանք առաջնորդական հոգու մեր անաստան վեմին ու երբեք չսիրի րկարսմանք, դժվարության մեջ երբեք չսիրի մեանք առանց միխրարության և երբեք չսիրի հեռանակը ճշմարտության արտեղծությունից, այլ միշտ հարակ պիրի րևաններ առաքելությունը մեր ժողովրդի՝ արեղծել ու արեղծագործել և գեախարկ սայոց արեղծածը: Թող Աստված օրհնի արեղծարար ջիղև ու ցանքերը մեր ժողովրդի, 17 դարերի քրիստոնեական ժառանգությունը և սեշարժ պահի հավաստի մեր վեմն ու խորանը՝ Նայ Առաքելական Մուրք Եկեղեցին:

Այսօր մեր հունդիպման ուրախությունը բազմաստվածի է, քանզի վերհիշում ենք այն րոնական ու շնորհանդող օրը, երբ Սուրբ Եղիշի անունով օծվեց այս եկեղեցին: Խորհրդանշաբար օծվեց Նայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի րարում՝ իբրև մի երդ վկայություն մեր ժողովրդի հավաստի կենդանության: Վերարին Մեր գեախարանքն ենք բերում Տիար Վաչե Մանուկյանին և Մանուկյան ընտանիքին, ում ազնիվ ջանքով ու ևսխանախընդությամբ երդովեց եկեղեցին ու բացեց իր դռները բարեպաշտ հայորդյաց առջև: Միշտ աղոթող ենք Մանուկյան ընտանիքի արեղծարության ու հաջողությանը համար, մեր Եկեղեցու բոլոր բարեբարքների համար, որոնց բարեգործություններն իրենք ևն հասարակում: «Արդ, ո՞վ պիրի բաժանի մեզ Զրիարոսի սիրուն...»:

Աղոթենք միասին, որ Տերը միշտ բաց պահի երկնի խորանաշեն դռները աշխարհի վրա և հայոց կյանքի վրա: Աղոթենք, որ միշտ գորացյալ մեա մեր հավաստի, ու պիրի հավարունք, որ մի օր Տերը համախմբելու է մեզ Արարարի փեշերին, Սուրբ Էջմիածնի հայացքի ներքո:

Թող Բարին Աստված իր խեղճի մեջ պահպանի Անգլիո հայոց թեմը, պարզեցի բոլորիդ երջանկությամբ լեցուն երկար օրեր և առաջնորդությամբ Գերս-

շնորհ Նաթան Սրբազանի ու քահանա Հայրերի՝ ազգային-հոգևոր կյանքի շինություն ու պայծառություն:

«Շնորհք և սէր Աստուծոյ եղիցին ընդ մեզ և ընդ ամենահաւն ամէն»:

Հավարտ Ա. Պապարագի Կոնգրեսի ունեցավ ընդունելություն Ա. Եղիշե եկեղեցու սրահում:

Հունիսի 17-ին Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցավ հայ համայնքի Կարգեր կազմակերպությունների և առանձին անհատների հետ, իր մասնակցությունը բերեց Ա. Եղիշե եկեղեցու սրահում Լոնդոնի հայկական դպրոցի սաների կողմից կազմակերպված հանդեսին: Հավարտ հանդեսի Նորին Սրբությունը գնահատանքի իր խոսքը, օրհնությունը և պատգամը ուղղեց լոնդոնաբնակ հայ պատանիներին և մանուկներին:

Նույն օրը, երեկոյան, Լոնդոնի Ռոյալ Գաղթին հյուրանոցում ի պալով Վեհափառ Հայրապետի Կրկն ռոջերթի ճաշկերույթ, որին ներկա էին Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահե Գաբրիելյանը և Կրկն ռոջերթի հետ, Հայաստանի Հանրապետության ղեկավար Մեծ Բրիտանիայի դեսպան Թորոյա Արթուրյանը, Կրկն ռոջերթի և Կրկն ռոջերթի ղեկավար Մանուկյանները, համայնքային եկեղեցական Կարգեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Վեհափառ Հայրապետին ուղղված ռոջերթի խոսք ասացին Ա. Սարգիս եկեղեցու հոգաբարձության նախագահ Զորջ Զորթյանը և բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհրդի Կարգեր Մրա Փալամուդյանը:

Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեց Վեհափառ Հայրապետի գահակալության հինգ տարիների ընթացքում Մայր Աթոռի գործունեությունը ներկայացնող մի ֆիլմ, որը նկարահանել էր «Շողակաթ» հեռուստաընկերությունը:

Այնուհետև հավաքվածներին իր խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետը: Բարձրորեն գնահատելով Անգլիայի հայության նվիրվածությունը ազգային եկեղեցական ավանդներին, Նորին Սրբությունը Հայոց եկեղեցու շքանշաններ և հայրապետական օրհնության գրքեր հանձնեց անգլիահայ համայնքի մի շարք ներկայացուցիչներին, որով և ավարտվեց Գաբրիել երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական անդրանիկ այցելությունը Մեծ Բրիտանիա և Անգլիայի հայոց թեմ:

Նորին Սրբությանը ճանապարհելու համար հաջորդ օրը Լոնդոնի Հիթոու օդանավակայան էին եկել Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Միազգայ թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը, Զեքերիայի Արքեպիսկոպոսի Էկոմենիկ կապելի գծով քարտուղար Կանոնիկ Զոնաթան Գոֆը, բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհրդի Կարգեր Մրա Փալամուդյանը, փոխարենապետ Զորիկ Գասպարյանը, գործադիր վարչության Կարգեր Մուրեն Սարոյանովը, խորհրդի անդամ Վիգեն Զալաշյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այսպիսով հունիսի 18-ին ավարտելով Հայրապետական անդրանիկ այցելությունը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միազգայ Թագավորություն և Անգլիայի հայոց թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՆ Ը. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՐՏԻԿԵԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԵՍԱԲՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Ս. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ,
ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ**

Սիրելի Սրբազան,

Ուրախութեամբ փնդեկացանք, որ Տիրախնամ Ձեր թեմի Թեմական Խորհրդի եւ հաւաքաւոր ժողովրդի կողմից կազմակերպուիւմ է Ձերդ Սրբազնութեանը նուիրուած մեծարժան հանդիսութիւն՝ Ձեր եպիսկոպոսական ձեռնադրութեան քառասնամեայ յօրեյեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները եւ գոհունակութեամբ անդրադառնում վաստակաշատ հոգեւորականիդ երկարամեայ բնդուն գործունէութեանը:

Հոգեւոր նախնական կրթութիւնը Դուք ստացաք Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց ժառանգաւորաց վարժարանում, այնուհետեւ ուսումնառութիւնը շարունակեցիք Սուրբ Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ճեմարանի աւանդաշատ յարկից ներս՝ վայելելով երջանկալիշատակ Գեորգ Զ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրական յարեխնամ հովանաւորութիւնը:

12յսօր Մեր Եկեղեցու անդաստանում բարեջան սպասաօրոտության շուրջ կենդարևայ վաստակն է Ձեր ուսերին, որոնցից 44 տարիները Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերում՝ որպես առաջնորդ: Ձեր ծառայության ընթացքում Դուք մեծ ներդրում էք բերել թեմական կառույցների կազմակերպման և Մայր Հայրենիքից հեռու ապրող հայորդիների հառափն ու հայրենապաշտ ոգին ամրացնելու, նրանց հոգիներում առ Հայրենիքն ու Մայր Եկեղեցին սերն ու նախանձախնդրությունը գորացնելու պարասխանալու գործում:

2002 թ. հովվապետական անդրանիկ այցելությամբ Մենք եղանք Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերում՝ ակնադրես դառնալով առաջնորդական Ձեր երկարամյա նախանձառոր ծառայության վաստակին, որով Դուք արժանացել էք հաւաքաւոր սիրեցեալ մեր զաւակների ջերմ սիրտն ու յարգանքին: Լիայոյս ենք, որ շնորհիւ Ձեր ջանքերի, օրաւոր պիտի գորանայ թեմի եայորդեաց հաւաքն առ Աստուած և սերն առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Սիրելի Սրբազան, Ձեր յոբելանի ատիթով Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ տասնամեակների Ձեր բազմարդիւն հոգեւոր ծառայության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ մշտապէս դրսևորած սիրոյ ու հաւաքարմութեան համար և շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս ՈՒՐԲ Ն ԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը գորավիզ լինի Ձեզ՝ շնորհելով ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջամողջ կենսքի արեւառար տարիներ և մշտանորոգ հաջողութիւններ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Բարին Աստուած հանապազ օրհնութեամբ հաստատուն պահի Ռումինիայի և Բուլղարիայի հայոց Տիրախնամ թեմերը:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւեր օրհնույ ի Մէնք, ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուա Կոնդակս յի 22-ն Յունիսի

Յամի Տեառն 2004 և ի թուին հայոց ՌՆԾԳ.

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարս 250

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԺԵԼԱ ՆՈՎՍԷՓԵՑԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ՝ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱՌՆԻԿ ԵՒ ԱՆԺԵԼԱ ՅՈՎՍԷՓԵՑԱՆՆԵՐ**

Սիրելի Տէր եւ Տիկին Յովսէփեաններ,

Գոհունակ սրտով բարձր գնահատանքի Մեր խօսքն ենք ուղղում Ձեզ, որ առ Աստուած ունեցած Ձեր հաստատուն հաւատով կարող եղաք առաւել ծաղկեցնել ու զօրացնել ձեռնարկից ժառանգած մեծ ու անկեղծ սէրը հարազատ ժողովրդի, Նայրենիքի եւ Առաքելական մեր Մօրը Եկեղեցու հանդէպ՝ այն էջանքի ու գործի վերածնունդ:

Տակաւին տարիներ առաջ լինելով Ձեր հայրենի ծննդավայր Չքնաղ գիւղում, Մենք աւանաւորես եղանք, թէ հուսալատոր մեր ժողովրդի գաւակները ինչպիսի զգացումով են սպասում այն երջանիկ օրուան, երբ վերստին իր դռները պիտի բացեր գլխի խոնարհուած եկեղեցին՝ օրհնութիւն բաշխելու իրենց հարազատ հողին եւ հոգեւոր Նոր շունչ ու ջերմութիւն բերելու իրենց կեանքին: Այսօր, Տիրոջ բարեխնամ օրհնութեամբ այդ երազն իրականութիւն է՝ կեանքի կոչումը Ձեր ազնիւ հովանաւորութեամբ: Մենք վերստին Չքնաղում ենք՝ կապարելու խոնարհուած եկեղեցու կողքին Նոր շուքով յատեալ Մօրը Ստեփաննոս եկեղեցու սծման արարողութիւնը եւ նրա խնկարոյր կամարների ներքոյ փառարանելու «զԱստուած հարցն մերոց», որ դարեր շարունակ անսասան է պահում Նայաստաննայց Առաքելական մեր Մօրը Եկեղեցին՝ Զրիստոսատուր ուղարկութեամբ հովուելու բարեպաշտ մեր ժողովրդին: Բոլորիս հոգիներում բարի մաղթանաց հայցն է առ Բարձրեալ Տէրը՝ Յովսէփեան հաւաքատուր ընտանիքի, Ձեր եւ Ձեր գաւակների՝ Աղուանի, Օձսանայի, Նրաչիկի եւ Ռուբէնի համար, որոնց ճանաչում ենք անձնապէս եւ ծանօթ ենք նրանց ազգասէր ու եկեղեցանուր ոգուն: Երանի Ձեզ՝ «եկեղեցի շինողաց, երախարարաց, պարզարոյից...»:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնը մեր Եկեղեցուն ու ժողովրդին, Մօրը Ստեփաննոս եկեղեցու սծման ուրախ առիթով Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մօրը Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատրույ բարձրագոյն շքանշանը:

Սրտաբաժնի աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած եաւարոյ մեր հայր եւ մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ Սուրբ Սարգիսնոս Նախավկայի բարեխօսութեամբ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ զօրավիգ ւնի Ձեզ ու Ձեր գաւակներին բարի ու հայրենանուէր բոլոր իրագործումներում:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սուրբ Սարգիսնոս եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհագարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր եաւարացեալներին:

Ողջ յերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգայն եւ յաւեր օրհնեալ ի Մէհրաւն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տոա Կոնդակս ի 20-ն Յունիսի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 249

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. հունիսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբապատկոն-
դակով

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Սյրեփան Ռոստոմյան (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ)
Ռազմիկ Թադևոսյան (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ)
Թամարա Սյրեփան (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ)
Հակոբ սրկ. Զյոշկևրյան (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ)
Անահիտ Ղազարյան (Մեծ Բրիտանիայի հայոց թեմ)
Լիլի Ռինկ Դալյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Հայկ Արամ Գրիգորյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Օվսաննա Սարգիսյան (Կանադայի հայոց թեմ)
Նահապետ Նահապետյան (Արգենտինայի հայոց թեմ)

ՆԱԴՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում փարվույս հունիսի 24-ին Կոնգրեսի Գերագույն Հոգևոր Խորհրդի և Նայաստանի եպիսկոպոսների ու թեմական առաջնորդների միացյալ ժողով: Ժողովը բնության առավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական առաքելությանը, կանոնական, թեմական կյանքին առնչվող հարցեր:

Նկատի առնելով նաև հավատացյալների շրջանում շարունակվող անհանգստությունները՝ մասնավոր ուշադրությամբ բնության առնվեցին Նայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական բարոյների համակարգի հետ կապված հարցեր նս. որոնք նախապես քննարկվել էին նաև Աշխատանքի և սոցիալական ապահովության հարցերի նախարարության «Նորք» փնդեկատվավերութւածական կենտրոնի աշխատակիցների և հանրության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքին:

Ժողովը վերահաստատելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը՝ արձանագրեց.

Սուրբգրային Նայսնությունը և Եկեղեցու Ուղղափառ Նայրերի սրբազան ուսուցումների լույսի ներքո բացառելի է սոցիալական բարոյի համարի որևէ առնչում «Նեմի դրոշմին»: Նայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական ապահովության բարոյների համակարգը վարանգ չի պարունակում անձի հոգու փրկության առումով, քանզի Աստված և մարդ հարաբերությունները հոգևոր անկյութական աղերս են: «Հոգի է Աստված, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարությամբ երկրպագեն» (Հովհ. Դ 24):

Այսուհանդերձ, Նկատի առնելով հանրության մեջ եղած փարակուսանքները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջնորդությամբ Նայաստանի Հանրապետության Կառավարության համապատասխան որոշմամբ բացառվել է «6» թվի երեք անգամ հաջորդական կրկնությունը սոցիալական ապահովության բարոյների համարներում և գծիկավոր պայմանանշաններում, որով նմանօրինակ փաստի արձանագրումը առաջացնելու է բրեական պատասխանատվություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հորդորում է հավատավոր իր հոտին՝ փութք չտալ նախապաշարումներին, այլ Տիրոջ խաչի ապավինությամբ, գորացած հավատքով շարունակել իր կյանքը՝ ի շինություն մեր երկրի և ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ն.Ս.Օ.Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԱՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Մեծարգո Նախագահ,

Հարգարժան Նախարար,

Միրելի ներկաներ՝ զինվորներ, սպաներ և ժողովուրդ հայոց.

Ուրախ ենք ողջունելու ձեզ հանդիսավոր ու օրինյալ այս օրվա՝ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական Ինստիտուտի հիմնադրման 10-ամյա հոբելյանի առիթով: Հայրապետական Մեր շնորհավորանքն ու օրհնությունն ենք բերում ամեներիդ՝ ի մասնավորի Ռազմական Ինստիտուտի սպասավորներին և շրջանավարտ սաներին, ովքեր այսօր ավարտական վկայական և սպայական ուսադիրներ ստացան:

Ռազմական Ինստիտուտի նորապսակ շրջանավարտները լրացնելու են Հայոց Բանակի ուսզմիկների շարքերը, ովքեր այսօր պաշտպանում են մեր Հայրենիքի սահմանները, շարքերը նաև նրանց, ովքեր մեր ժողովրդի խաղաղ կյանքը և ազատությունը պաշտպանեցին տասնամյակ առաջ, պաշտպանեցին հերոսական մաքառումով, արության գործերով ու սխրանքներով:

Միրելի շրջանավարտներ, դուք սպայական ինչ աստիճան էլ ունենաք ձեր ծառայության ընթացքում, միշտ լինելու եք Հայրենյաց Պաշտպան Զինվոր: Զինավորությունը սոսկ զենք կրելը չէ: Զինավորությունը ձեր հոգում պիտի լինի՝ իբրև սեր ու նվիրում, արժեք ու սրբություն: Զինվորը խաղաղության պաշտպանն է, պաշտպանն է արդարության, իրավունքի և ճշմարտության: Ինստիտուտում ուսումնառության փարիններին ձևք բերած ձեր գիտելիքները ծառայեցրեք այս արժեքներին և դուք կծառայեք մարդկանց նրջանկությանը ու ձեր ծառայության մեջ կգտնեք ձեր հոգու ուրախությունը:

Երկնավորի օրհնությունն ու հովանավոր Աջի գորակցությունն ենք հայցում ձեզ և աշխարհափյուռ մեր ժողովրդին: Թող Աստված խաղաղ պահի աշխարհը համայն և երկիրս Հայաստան: Թող Տերը մաքուր երկնքի ներքո առաջընթաց ու բարգավաճում պարգևի մեր Հայրենիքին ու ժողովրդին և գորացնի յուրաքանչյուրիս մեր ծառայության մեջ: Թող միշտ շողա փառքն ու պարծանքը Հայոց Բանակի՝ հանուն Տիրոջ Սուրբ Անվան, հանուն հայոց այս նոր օրվա ու գալիքի: Ամեն:

Ս. Էջմիածին,

26 հունիսի 2004 թ.

ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՇԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՄՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբան Հայրեր՝ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը և Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը, վերջերս Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Հոգևոր ակադեմիայի կողմից ստացան աստվածաբանական գիտությունների թեկնածուի կոչում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ Հոգեշնորհի Հայրերն աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու նպատակով երկու փարի է, ինչ ուսանում էին Մոսկվայի Հոգևոր ակադեմիայում: Ավարտելով ուսումը, Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը հաջողությամբ պաշտպանել է գիտական թեզ՝ «Ս. Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքները» թեմայով: Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանի գիտական ուսումնասիրության թեման է՝ «Հայ Եկեղեցու ձևի գարգացման պատմությունը 5-15-րդ դդ. և նրա յուրահատկությունները Ուղղափառ ավանդության հետ զուգահեռում»:

Հայր Մուշեղն ու Հայր Հովակիմը, վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, կշարունակեն իրենց հոգևոր ծառայությունը Մայր Աթոռի կառույցներում:

ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՏԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՄՊԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Հունիսի 1-7-ը Էստոնիայի Հանրապետության մայրաքաղաք Տալլինում տեղի ունեցավ Բաների հոգևոր սպասավորների միջազգային ասոցիացիայի (APCA) համանվիրոպական հավաքը, որին արդեն երրորդ փարին իր մասնակցությունն է բերում Հայ Առաքելական Եկեղեցին: Ի թիվս 30 երկրների շուրջ 150 հոգևորականների, այս փարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հավաքին մասնակցում էր հայաստանյան քրեակադարողական հիմնարկների հոգևոր պատրասխանարու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես սարկավազ Ռուշանյանը:

Համանվիրոպական հերթական այս հավաքի նշանաբանն էր՝ «Ես բանտում էի, և դուրս ելայի եկաք», և նպատակ ունեի զեկուցումների և քննարկումների միջոցով նպաստել բանտային հոգևոր ծառայության մակարդակի բարձրացմանը:

ՔԱՐՈՉԽԱՍԱԿԱՆ

Տ. ԱՌԵՆ ԱՐԵՂԱ ՃԵՊԵՃՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 հունիսի 2004 թ.)

*«Ես դենմ գծեալս ի վերայ սորայ եւ դուք ամենեքեան աղօթս առարէք
զի արժանի լիցի սա զասորիման քահանայութեան
անառար սրահէլ առաքի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:
(Ձեռնադրոյթյան Մաշտոց)*

«Յանուն Տօր եւ Արդույ եւ Տոգույն Սրբոյ. ամեն»:

Սիրելի հավատացյալ բոլորեւ եւ եղբայրներ.

Մուր քառասուն օրեր առաջ Միացյալ Նահանգների Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարում թնմիս առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան աղօթքի միջոցով հրահանգեց, որ ներկա գտնվող ժողովուրդը աղօթք ինձ համար, անպիտան ու անպետք ծառայի մը համար: Ես այսօր կիսնդրեմ, որ դուք բոլորդ շարունակեք այդ աղօթքներն ինձ համար:

Ամմիջապես ձեռնադրութենէն ետք եկա Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր քառասուն օրեր մնացի. որպէսզի պատրաստվիմ անառար պահել ինքզինքս առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ: Այս պահուս ես կնորոգեմ իմ հավատարիմ ուխտի ծառայութիւնը Մայր Աթոռույս Ս. Էջմիածնի եւ հավատարիմ ու հնազանդ մնալ Նորին Սուրբ Օծութիւն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Ես իմ շնորհակալութիւնն եմ հայտնում Վեհափառ Հայրապետին իր հայրական սիրտ համար, նույնպէս եւ իմ շնորհակալութիւնը կհայտնեմ իմ հոգևոր ծնողին՝ Խաժակ Սրբազանին, որ զիս արժանի տեսավ ձեռնադրելու, նույնպէս շնորհակալութիւնս կհայտնեմ իմ Հայրս եւ Մայրս, որոնք տարիներ ի վեր անեռն սեր տվին ինձ, ինչպէս նաև իմ կնքանայրիս: Կիսնդրեմ, որ դուք շարունակեք ձեր աղօթքները ինձ համար: Ձեզանից շատերը թերևս ինձ ճանաչում են, ես ալ ձեզանից ոմանց ճանաչում եմ, պատահմամբ չեղավ, որ զիրար ճանաչում ենք մենք, այլ Եկեղեցին էր, Հայաստանայց Եկեղեցին էր, որ մեզ բով բովի բերավ, որպէսզի մենք կարողանանք լինել հավատարիմ ծառաներ Քրիստոսի: Այս պահուս ես անկեղծորեն շատ զգացված եմ եւ ինքզինքս օրհնված կզգամ, որ առիթը տրվեցավ, որ մատուցեմ իմ անդրանիկ Պատարագն այս սուրբ կամարներու տակ, հոս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Այս նույն Սուրբ Սեղանի վրա պատարագած են բազմաթիւ հոգևորականներ՝ Կաթողիկոսներ, եպիսկոպոսներ եւ քահանաներ, այդ շարքին մէջ՝ նաև Տիրան արքեպիսկոպոս Ներսիսեան, որ իմ ազգականն էր: Պատարագած է նաև իմ հայրը՝ Տեր Ներսեսը, եւ գտցե իմ մեծ պապը՝ Տ. Ներսես ավագ քահանա Թափուզյան, որ եղավ Այնթապի հոգևորականը եւ տեղի հերոսամարտին հերոսներէն: Երբ երկուսսարդ մը ձեռնադրվի, ինքը կմտնէ հոգևորականներու շարքին մէջ, ինչպէս շղթա մը կա, յորաքանցուոր հոգևորական օղակ մըն է այդ շղթային մէջ: Ամեն անգամ, որ հոգևորական մը ձեռնադրվի, նոր օղակ մը

կմիանա այդ շղթային: Եվ այդ հոգևորականներու շղթան մեզի կտանի դեպի Կոմիտաս վարդապետ, Խրիմյան Հայրիկ, և այսպես մինչև Գրիգոր Լուսավորիչ, առաքյալները և վերջապես, այդ շղթան կհասնի մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ այդ շղթային խարխախ է:

Միքելի հավատացյալներ, ինձ հետ կմիանան Ս. Լսողանին վրա վեց ուրիշ նորընծաներ, որոնք այսօր կմիանան ինձ հետ աղոթքի մեջ: Անոնք կվերջացնեն իրենց քառասունը այս քաղաքում, և գալ կիրակի անոնք ևս պիտի մատուցեն իրենց անդրանիկ Պատարագը: Միքելի հավատացյալներ, ես խնդրում եմ, որ դուք նրանց համար ալ աղոթեք, որովհետև երբ ձեր հոգևորականները ռժեղ ըլլան, գորավոր ըլլան, այն արեն ձեզ ավելի ուժ կուտան, որպեսզի միասին մենք կարենանք ծառայել մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցին կիշխ Եղիա մարգարեն: Մենք գիտենք, որ ժամանակի ընթացքին շատ մարդիկ մտիկ չէին ընում մարգարեններուն, այս վեց նորընծաները մարգարեններու շավղով գալ շարաքականե սկսյալ պիտի մտնեն ձեր մեջ, պիտի սկսին առաքվել, պիտի սկսին քառուղի մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը, և ես խնդրում եմ, որ դուք ընդունեք իրենց, ընդունեք իրենց խոսքերը և չըլլաք այն ժողովուրդներ, որ չընդունեց Եղիա մարգարեի խոսքերը:

Միքելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, մենք հավաքված ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սուրբ կամարներու տակ, կոչվում ենք Հայաստանյայց Եկեղեցի: Եկեղեցին, սիրելի հավատացյալներ, մեր կամուրջն է մեր և Աստուծո միջև: Այդ կամուրջը պետք է միշտ ամուր ըլլա, և վերջապես, սիրելի հավատացյալներ, ես ղարձայալ խնդրում եմ, որ դուք աղոթեք այս օղակին համար: Ես գրեթե ամենեւնի նոր օղակներն մեկն եմ ուղի հոգևորականներու շղթային մեջ: Ես խնդրում եմ անկեղծորեն, որ դուք իմ համար աղոթեք, որպեսզի այս նոր և դեռես տկար օղակը գորանա, այնքան, որ ես կարենամ պինդ ըլլալ, ամուր ըլլալ, պիտի ծառայեմ Հայաստանյայց Եկեղեցվո և մեր Տեր Հիսուս Քրիստոսին, հավիտյանս հավիտենից, ամեն:

«Շնորհ, սէր եւ խաղաղութիւն նղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւեանդ, ամէն»:

Տ. ԶԱՎԵՆ ԱՔԵՂԱ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԷԶՄԻԱԾՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ (13 հունիսի 2004 թ.)

Հոգևոր հայրեր, եղբայրներ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Նախ գոհություն և փառք եմ վերընծայում առ բարձրյալն Աստված և մեկ պեղամ նա խոնարհվում մեր Ս. Եկեղեցուն, ուր շուրջ բառասուն օրեր առաջ իմ օծակից հինգ եղբայր-ներին հեղ Միածնաէջ Սուրբ Տաճարում արժանացանք քահանայական պարգևաբաշխ. սրբազան խորհրդին, որի համար իմ որդիական սերը և նրախաղաղությունն եմ հայտնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ազգրեպիտ Հայրապետին, մեր հոգևոր ծնող Սրբազան Հորը՝ Սյուն-յաց թեմի բարխանամ առաջնորդ Տ. Արքահամ եպիսկոպոս Արքեպիսկոպոսին, հոգու դարբնոց և մտքի կոճառ Գևորգյան Հոգևոր Ճեմարանին, ուր անցան ուսումնասությանս տարիները, ինչպես նաև ծնողներին, որոնք դեռ վաղ հասակից առաջնորդել են ինձ և անդրանիկ թայ-լերս ուղղել դնպի Սուրբ Աստվածածին այս եկեղեցին, ուր այժմ մատուցում եմ իմ անդրա-նիկ Սուրբ Պատարագը:

*«Եկայք շինեսցուք Սուրբ!
զևորսուն յուսոյ»:
(Շարակնոց)*

Սիրելի բարեպաշտ բույրեր և եղբայրներ,

Այս խոսքերը Սահակ Չորափորեցի շարականագիր Հայրապետի հոգու և մտքի թարգ-մանությունն է, և այս խոսքերով եմ ցանկանում սկսել իմ անդրանիկ Պատարագի անդրա-նիկ քառոցը:

Ինչն էր, որ Ս. Էջմիածնի եիմնումից չորս դար հետո մղեց մեր նրանաշնորհ Հայրապե-տին գրելու այսբան վեհ ու զգայացունց այս խոսքերը, որոնք, իսկապիսի, վերաբնակորումն ու վերախմաստավորումն են Գաթողիկե Սուրբ Էջմիածնի Լուսո Լսորանի տիրական ներկայությանը հայոց իրականության մեջ:

Հավատացյալ հայորդիներ, Դուք լավ գիտեք Սուրբ Էջմիածնի փառավոր պատմությու-նը և նրա սրբազան խորհուրդը և Դուք բոլորդ Սուրբ Էջմիածնի ծնունդն եք, քանզի Ձեր ճա-կապին և հոգում կրոմ եք Միածնաէջ Լուսո Լսորանի Սրբաբույր կնիքը, և Ձեր փաճառա-ցած հոգիների դմներն այսօր թակելու է Ինքը՝ Միածինը, Ձեր կյանքին նոր լիցք և կենսա-կանություն հաղորդելու: Սրբաբույր Մյուռոնը Միածնաէջ Սուրբ Տաճարի ներկայությունն է մեր մեջ, ներկայություն, որն ազնվացնում, հզորացնում, ինչպես նաև պարտավորեցնում է հայորդուն հանդեպ իր Սրբություն Սրբոցը:

Սիրելի՛ հավատացյալներ, շնորհավորում եմ Ձեզ թուրքիդ Սուրբ Էջմիածնի բերկրալի և Զրիստոսով պարտոված տոնի առիթով, որն ինքնօրինակ մի առիթ է նորոգվելու, ամրա-նալու և գորանալու: Պատրաստե՛ք մեր սիրտն ու հոգին ընդունելու մեր Տեր և Փրկիչ Հի-սուս Զրիստոսին: Էվ ինչպես 1700 տարիներ առաջ Աստված իջավ դաշտն Արարապյան և

սրբագործեց հողը հայոց և իր ոսկե մուրճի հարվածով փխրեցրեց հայի հեթանոս և կարծրացած սիրտը, այսօր էլ Քրիստոսի էջքի խորհրդի մարտումներով և վերապրումներով արդենության մեջ պահենք մեր նիրհած և թմրած հոգիները, և մեր փխրեցրած սրտերը ևս առավել պարարտացնենք պտղաբերելու ավերարանական սերմերը:

Իրավամբ, Սուրբ Էջմիածնի տոնը մի հրաշալի առիթ է, որ ամեն մի հայ ինքն իրեն հաշիվ տա և անդրադառնա, թե արդյո՞ք հարազատ է մնացել Էջմիածնականի իր վսեմ կոչման ու անվանը, թե արդյոք չի՞ հեռացել այն նախանձախնդրությունից և հավաքարմությունից, որոնք ունեցել են մեր Սուրբ հայրեր, ովքեր աշխարհի չորս ծագերից կրթնյով հազարավոր մոռներ՝ գալիս էին Սուրբ Էջմիածին, իրենց ընծաներն էին նվիրաբերում Մայր Տաճարին և իրենց ուխտը նորոգում Սուրբ Էջմիածնում իրենց համբույրի դրոշմը թողնելով երկնքի և երկրի հանդիպման և համբուրման վայրում, և ինչպես բանաձևում է Պերճ Պողոսյանը՝ «Միքիի Էջմիածինը, ներս մտիր, համբուրիր Իջման Տեղը և դու համբուրած կլիենս փնեզերքի վրա փարագիր ցրված ամբողջ ազգը»:

Արդարև Աստուծո Արդու ներկայությամբ շնորհագործված Սուրբ Էջմիածինը երաշխիքն է հայի ինքնության: Մինչդեռ այսօր մեր մեջ նկատվում են օտարամուտ կրոնական շարժումներ և շատ վրանգահարույց աղանդավորական հոսանքներ, որոնք խղճի ազատությունը, մարդու իրավունքները և էիմնարար ազատությունները նենգափոխելով փորձում են մեզ հեռացնել մեր իսկ արմատներից և մեր Մայր Եկեղեցուց: Եկեղեցի, որ 1700 փարի շարունակ պահել և պահպանել է մեր սուրբ նախնյաց իրավունքներն ու ավանդույթները: Եկեղեցի, որ երկնքի շքեղաշուք դուռ է երկրի վրա, եկեղեցի, որ միակն է աշխարհում, որի ճարտարապետը և հիմնադիրն Ինքը հասու Քրիստոս է:

Հիրավի, ամրակուռ Սուրբ Էջմիածինը փորձություններ շատ է տեսել երևելի և աներևույթ թշնամիներից, սակայն մշտապես դիմագրավել և հաղթահարել է դրանք, քանզի այն կառուցվել է ժայռացած հավաքքի և լեռնացած կամքի վրա և շաղախված է ամբողջանվեր և անստակարկ սիրով: Ալկեերն է նաև այս սրբավայրի նախախնամական ընտրությունը՝ Բիբլիական Արարարի և Քառագագաթ Արագածի հայացքների և հովանու ներքո: Բիբլիական Արարարը, ուր Տերն Իր ուխտը վերահաստատեց Նոյան փապանով փրկվածների հետ, և խաչագագաթ Արագածը, ուր առանց պարանի կախված է Լուսավորչի կանթեղը բոցավառվելով իր իսկ արցունքներով՝ մշտապես առաջնորդող փարոս է և երկնառաք շնորհ Էջմիածին Տապանում անդամագրվածներիս համար:

Այսօր Սուրբ Էջմիածնի Տաճարը հիմնովին վերանորոգվել և բարեկարգվել է շնորհիվ մեր շնորհագարդ և առաքելաշավիղ հայրապետի: Մնում է մեր հոգու փառարը մաքրագործենք և նորոգենք: Մեր միջի փառարը վերաշինելով և մաքրասրբելով արդեն իսկ մեծ ընծա և նվեր մատուցած կլինենք Մայր Տաճարին:

Մարդիկ մեծամեծ շինություններ են կառուցում և նորոգում, որոնք ևս անհրաժեշտ են, բայց հաճախ մոռանում են ամենակարևոր և կենսորոնական շինությունը՝ սիրտը՝ Սուրբ հոգու բնակարանը, քանզի կենտրոնից և առաջնայինից պետք է սկսել, ինչպես Դավիթ թագավոր և մարգարեն է սաղմոսում՝ «Ձսիրք սուրբ և հոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհել» (Մաղմուս Ծ 19): Այո, չի արհամարհվում համաձայն բրիստոսականդ պարզամի, թե «ուր Չեր գանձերն են, այնպեղ և Չեր սրտերը կլինեն» (Մատթ. Զ 21):

Ինչպես սիրտն է բարախում և արյուն մաշակարարելով սնուցում ամբողջ մարմինը, այնպես էլ հավերափրաշ Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ավուտն և կենսականությունն է հաղորդում Հայ Եկեղեցուն և իայ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս աշխարհի: Եվ որքան ծառայենք ու մասնակից դառնանք այդ օրհնաբաշխությանն ու նկեղեցաշինությանը, այնքան գորացած և օրհնված կլինենք:

Սիրելի՛ բարեպաշար ժողովուրդ, Էջմիածնածիններ, Կաթողիկե Մայր Տաճարի տոնը սիրո և համերաշխության օր է: Սուրբ Էջմիածինը Աստծո սիրո արտացոլումն է հայոց մեջ: Ձե՛զ ամենքիդ հրավիրում եմ միասիրտ ու միախոհ Տերունական աղոթք ուղղելու առ Բարձրյայն Աստված՝ առաքելու նորոգիչ և մխիթարիչ Սուրբ Հոգուն՝ մաքրաստրելու մեր սիրտն ու հոգին և անսասան պահելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Մեկ անգամ ես շնորհավորելով Ձեր բոլորի հոգենորոգ և համագգային տոնը՝ հիշեցնում եմ Սուրբ Սահակ Հայրապետի բոլորանվեր և անսակարկ սիրուց բխած խոսքերը՝ «Եկե՛ք կառուցենք Լույսի Սուրբ Խորանը»:

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ՇՆՈՐՀՔ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՒՄ**
(13 հունիսի 2004 թ.)

*«Էջմիածինը միշտ կբաշխի ու չի նվազի, ինչքան
բաշխվի՝ այնքան կշարունակեցան յույս ու փռե՛լ այնքան կշողա:
Դարեր կուզան. դարեր կանցնեն, Ան կբարձրանա, կրտսավորի,
միշտ կնեղվեցի, կյանք տալով կապրի»:
Վազգեն Ա*

Խոսքեր, որոնք արտաբերվել են հոգեւոյս Նայրապետ Վազգեն Ա-ի կողմից, ով Աստուծոյ փնտրութեան ճանապարհին գտավ Ս. Էջմիածինը ոչ միայն որպէս եկեղեցական հաստատութիւն, այլն կենդանարար ջուր, կենաց հաց, աղբյուր անմահութեան եւ բաշխող պարգևաց:

Վեհաբարբառ պատշաճ խոսքեր, որոնց հնչմամբ էլ ավելի է ցնծում եւ բերկրում մեր հոգին անդրանիկ պատարագումով եւ օրվա խորհրդի ամբողջացմամբ ու լոյսմամբ:

Փառք Ամենակարող Բարձրաւ Տիրոջը այս պահին եւ ապրումին արժանացնելու համար, բանգի տկար էինք եւ Աստուծով գորացանք, հիմար էինք եւ իմաստնացանք, աղբար էինք եւ հարստացանք եւ ահա պարփակ ունենք մեր տկար ձեռքերով ունենալու Տիրոջ Սուրբ Նշանն ու Սուրբ Ավետարանը՝ աղբարներին բարոգելու Աստուծոյ Ավետարանը եւ հիւսնողներին բժշկելու:

Այդու մեր որդիական խոնարհութիւնը, հավատարմութիւնն ու սերն ենք հայտնում ազգիս Վեհափառ Նայրապետին՝ Նորին Սուրբ Օծութիւն Տեր Տեր Գարեգին Բ Սրբազնագոյն Կաթողիկոսին եւ Ծայրագոյն Պատրիարքին Ամենայն Նայոց, ով իր մականի ենթեռ այս սուրբ եւ խնկաբոյր կամարներէջ սկստալ մեզ ջամբեց Ս. Էջմիածնի հոգևոր կաթը: Իսկ մենք՝ իր ձեռնաստուները, միշտ մեր հոգիներում եւ մտքներում իբրն ճշմարիտ հոգևորականի փայտ ունենք Նորին Սրբութեանը: Չեմ կարող չհիշել եւ երախտագիտութեան խոսքը չփոխանցել ծնողներին: Նրանք են առաջին պատճառը ելութեան մարմնումս հոգևոր լուսնի առկայծման՝ իբրն մի կանթեղ, որը պիտի նորոգվեր, պիտի շողարձակեր իր ցոլքերը գիտակցական հավաքի եւ իմացականի անուշաբոյր յոյժի սնուցմամբ, ինչի համար երախտապարտ եմ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչութեանը եւ դասախոսական կազմին: Նա եւ իմ որդիական ակնածանքն ու սերը ինձ ձեռնադրող Սրբազան Հորը՝ իմ հոգևոր ծնողին, Սյունյաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանին, ում ձեռամբ իմ եւ օծակից եղբայրներին վրա Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհները հեղվեցին:

Օգտագործելով պարեմի առիթը՝ շնորհակալութիւն եմ հայտնում Արարարւոյն Նայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին եւ ներկա

գրկվող բախանայից դասին՝ իրենց լսարի վերաբերմունքի և արբանամյան հյուրընկալության համար, այս լուստ խորանում պատարագելու և սրբի բարեխոսությունը հայցելու մեզ յուրորիս համար:

Այսօր մենք ազգովի իբրև հավաքականություն վերստին կանգնած ենք անպատմելի և աննկարագրելի մի խորհրդի առջև: Խորհուրդ, որ մեր դարավոր գոյության առհավաքյան է, ինչն ինքնին մեր բոլոր եկեղեցիների մայր Ս. Էջմիածնի փոքն է: Դարերի հոյակապություն այն իբրև տեմար վարդա, ուղենիչ է եղել հայի համար թե՛ հոգևոր, թե՛ ֆիզիկական գոյության և ոչ միայն գոյության, այլև բարգավաճման համար: Այս հանգամանքով են պայմանավորված պատմիչների, գրողների և ժողովրդական բանաստեղծների փառքեր ժամանակներում արտահայտած հիացական խոսքերը, որոնցով Էջմիածինը համեմատվում և համարվել է: Նկատվում էինկարակարանյան մի շարք սրբությունների և հասկացությունների: Վստահաբար բոլորս բաջարեղակ ենք Ազաթանգեղոսի Պատմության այն դրվագին, որ փրկող պատմվում է, թե ինչպես մեր հավաքի հայր աստվածախոս Գրիգոր Լուսավորիչն իր հավաքով ու ջրամեռանդ աղոթքներով Միսմին իջեցրեց Արարապյան աշխարհ՝ ի բժշկություն իր ազգի հոգևոր վերքերի ու ախտերի: Եվ միևնույն ուրիշ ազգեր ու եկեղեցիներ նորանոր փոստեր ու հավաստումներ են վարձում վերհանել ի հավաստումն իրենց եկեղեցիների տաքելահիմն լինելու, ապա Հայր Աստված շնորհ արեց մեզ երկրորդ անգամ ուղարկելով իր Որդուն աշխարհ՝ դաշտն Արարապյան ի սրտորոպ Մասայաց: Եվ Միածինը ռսկն ուռը ձևաթին հարվածեց այն փողին, որ փրկող ջրեղեղով աշխարհի նորոգության ժամանակ Նոյ նախակերպն իր առաջին գոհր մարտոցեց Ամենակալ Աստծուն: Այն մեզ համար այդ պահից սկսած դարձավ արգանդ սրբության, նոր կյանքի սկիզբ՝ հասարակական և մշակութային նոր դրսևորումներով: Եվ իրական, երբ հաղորդվում ենք այդ ձեռակերպ, բայց և հոգեզմայլ ու հոգեպարար, ավետարանական խոսքով ասված՝ անկյունաքարին, կենդանի աղբյուրներ են բխում մեր հոգում, ապրում ենք «ոչ միայն հացի, այլ ամենայն բանի, որ ելանել ի բերանեյ Տեսուն» (հմմտ. Մատթ. Դ 4):

«Էջմիածինը միշտ կրաշխվի ու չի նվազի»՝ միայն ազգասիրությունից և եկեղեցապաշտությունից ըխած բառեր չեն սրանք, ոչ երբևէ: Երբ թերթում ենք մեր ռսկերիչ պատմիչների գործերը, մեր հայացքի առջև Այն կանգնած է ինչպես անխորակելի մի նավ, որը պատմության ավելոծ օվկիանոս անվրդով իր ընթացքն է կատարել դեպի խաղաղ նավահանգիստ: Մայր Տաճարի գանգերի դողանջներն են, որ միշտ «ի փուլ և ի գիշերի» մեզ արթուն են պահում:

Ինչքան բաշխվի՝ այնքան կշարանա, ինչպես որ Հին Ուխտում Աստված երկնքից մանանա իջեցրեց, այնպես էլ Տիրոջ գայտյամբ և մանավանդ էջեղով Արարապյան աշխարհ, Հայկազնյաց երկիր, մեզ համար փակց մի նոր կերակուր, որի ճաշակմամբ կյանք պիտի ունենանք և ավելիով ունենանք: Ամեն անգամ, երբ մուտք եմ գործում նրա աղոթաշաղախ կամարներից ներս, հոգումս ու մարմնս կոչնակի նման դողանջում են ասված եկեղեցալ խոսքերը. «Շատերն են մտնում Աստվածախիմն այդ տաճարը, սակայն ոչ բոլորն են միախառնվում ու միախառնվում նրա խորհրդին, փանում իրենց հետ այդ սուրբ խորհուրդը՝ նորոգելու ու պայծառացնելու հայրենական օջախի լույսը, այն մշտաբարբար պահելու»:

Ահա այդ լույսի մասին էր Վազգեն Վեհափառը ասում. «Ինքան լույս սփռե, այնքան կշողաս»:

Եվ ի վերջո՝ «Դարեր կուգան, դարեր կանցնեն, Ան կբարձրանա, կլուսավորե, միշտ կենըշնչե, կյանք տալով կապրի»: Իրապես, դարեր են եկել ու անցել՝ իրենց հեր ընդունված թուգում որոգայթներն ու վտանգներ, սակայն Էջմիածինը միշտ կմնա կանգուն ու անխախտ, «քանզի ի վերայ վիմի հաւաքոյ է հաստատեալ», որպես ճշմարիտ ակնանարեսն ու վկան մեր անցած ուղու տխուր և ուրախալի պահերի: Նովեանես Նովիաննիսյանի բնորոշմամբ՝

Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին,

Զո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Քանի՛ անգամ է նա տեսել իր մանուկների կուրորածը, ողբացել ու սգացել, բայց ոչ երբեք հուսահատվել իր ու նման Ռաբելին, քանզի զգում էր իր մանուկների փրկությունը, զիտեր, որ մի այսօր առավոտ, նմանողությամբ այս առավոտին, իր զանգերի ավետաբեր դողանքների ներքո, իր զավակներով շրջապարված ողբզմայլ շարականների երգեցողությամբ իր գիրկն է ընդունելու զեփյուռի մեղմ հովից շարժվող վեղարավոր հայրեր, որոնք ազգընտիր և Սրբալույս Մյուռնոնով օծված Նայրապետի զխավորությամբ օրհնություն պիտի բաշխեն նոր կյանքով լեցուն իր զավակներին, և ինքը՝ Էջմիածինը, խինդով լեցուն պիտի նայի մեր հավերժությունը խորհրդանշող Մասիսին՝ հրավիրելով նրան մասնակիցը լինելու այդ հանդեսին: Թերես այս մտածումներով փոփոխված հոգեւոյս Նայրապետը ասաց, *«Էջմիածինը միշտ կբաշխվի ու չի նվազի, ինչքան բաշխվի՝ այնքան կլուսուրենա, ինչքան լույս սփռն՝ այնքան կշողա: Դարեր կուգան, դարեր կանցնեն, Ան կբարձրանա, կլուսավորե, միշտ կենըշնչե, կյանք տալով կապրի»:*

Ընդունենք մեզ վստահված այս ազնիվ քանքարը, որպեսզի Տիրոջ երկրորդ զաւսրյան ժամանակ ազգովի լսենք արքայական բառերը. *«Ազնիվ և բարի ծառա, քանի որ փոքրի մեջ հաւատարմիւմ գրեւելցիր, մեծ բաների վրա կկատրուեմք, մարի՛ր իմ ուրախության մեջ»:*

Ահա այս խորհրդածություններով լեցուն բացենք մեր հոգու դռները, որպեսզի Միածինը մեկ անգամ նս ոսկի ուռը ձեռքին, լուսազգյաց կերպարանքով իջնի մեր հոգուց ներս, սուգվի այնտեղ, տաք շունչ տարածի մեր մարմնի մեջ, մի տեսակ սուրբ սարսուռ, որ ասում է. *«Կոչիկներոյ հսակի՛ր, որովհետեւ այն տեղը, ուր կանգնած ես, սուրբ է»:*

Շնորհք, սեր և աստվածային սրբաբար գործություն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսյանդ, ամեն:

Տ. ՏԱՃԱՏ ԱՎԱԳ ՔԱՆԱՆԱ ԴԱՎԻԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝

ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(27 հունիսի 2004 թ.)

«Եկե՛ք ի ծագաց երկրի լսել զիմաստութիսն Սողոմոնի,

և ահա մեծ քան զՍողոմոն է աւար»:

«... և ա երկրի ծայգերից եկա՛վ լսելու Սողոմոնի իմաստությունը,

և ահա այսպեղ Սողոմոնից մեծը կա»:

(Մաթթ. ԺԲ 42)

Ավետարանի այսօրվա ընթերցվածը պարմում է, թե ինչպես դպիրները և փարիսեցիները Հիսուսին մոտենալով նրանից հրաշք խնդրեցին: Հիսուսը նրանց պատասխանեց՝ ասելով. «Անհավարարիմ և չար սերունդդ նշան կամ հրաշք է ուզում»: Այսինքն, հավատում են միայն այն ժամանակ, երբ մի հրաշք են տեսնում, եթե մի սքանչելագործություն են տեսնում: Չպետք է նմանվել Սաղանային, որը Հիսուսին փորձեց անապարի մեջ, և մեր Տերը պատասխանեց. «Թո Տեր Աստվածը պիտի չփորձես» (Մաթթ. Դ 7): Նաև այսօրվա սնապաշարները և աղանդավորները նման են այդ դպիրներին և փարիսեցիներին, նրանք հրաշք են պահանջում, որպեսզի հավատան: Նավատբը մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Բրիստոսի Ավետարանի վրա հիմնվում է ներքին վստահությամբ դեպ Տիրոջ ճշմարտությունը:

Մեր Տերը այդ հրաշքի պահանջին պատասխանեց, թե ոչ մի նշան չպիտի փրվի չար և անհավարարիմ սերունդին, բացի Նովնանի նշանից, այսինքն՝ հարության նշանից: Ինչպես Նովնանը ծովի մեջ նետվեց և երեք օր մնաց կեպի փորում, նույնպես էլ Մարդու Որդին պիտի նետվի մահվան սփվերների մեջ և պիտի մնա երեք օր գերեզմանի մեջ: Եվ ինչպես Նովնանը վերադարձավ մահվան գրկից, նույնպես Հիսուս հարություն առավ: Այսօր մենք այսպեղ եմք հավաքված, որովհետև հավատում ենք և մեր սրբերի մեջ վստահ ենք, որ *Քրիստոս յարևաա ի մեռելոց*:

Նինվուսցիները Նովնանի քարոզչությամբ դարձի եկան, բայց այսօր *սակի մեծ քան Յովնան է աւար*: Այսօր աշխարհը դառնում է դեպի Բրիստոսի Ավետարանը: Մենք վկա ենք մեծ հրաշքի՝ Բրիստոսի Ավետարանի տարածմանը Ասիայի և Աֆրիկայի մեջ: Մեր հայրենիքը, որ 1700 տարի առաջ դարձի եկավ, 20-րդ դարի ընթացքում նրա հավատավոր ժողովուրդը ենթարկվեց ջարդի, հալածանքի, և սակայն Բրիստոսի Եկեղեցին տոկաց և այսօր վերածննդի մեջ է:

Նարավի դշխոն՝ Մաբայի թագուհին, եկավ՝ աշխարհի ծայրերից լսելու Սողոմոնի իմաստությունը և այսօր *սակի մեծ քան Սողոմոն է աւար*: Այսօր մենք եկել ենք այս Սուրբ Տաճար՝ ունկնդրելու աստվածային իմաստությունը, որը բխում է Նրանից, որ է ճշմարիտ ճանապարհը դեպի հավիտենական կյանք՝ Աստծո Միածին Որդին, որ այսպեղ իջավ և սերմանեց Իր իմաստությունը մեր երկրի վրա:

Այսօր, իունիսի 27-ին, Արարապյան հայրապետական թեմի Երիտասարդաց Շարժման անդամները եկել են այսպեղ՝ Սուրբ Էջմիածին, որպես նշան դարձի և որպես վկայություն իմաստության, բանգի *աւելի մեծ քան Յովնան կամ որեւէ մարգարէ եւ ուելի մեծ քան Սողոմոն կամ որեւէ իշխանատու է ասուր*: Երիտասարդաց Շարժումը կազմված է մոտ 20 տարբեր միություններից, որոնք հայ Առաքելական ծիսական եկեղեցիների հովանավորությամբ են գործում: Այս Շարժման կորիզն է Առաջնորդանիստ Սուրբ Սաղոսի եկեղեցու մայր միությունը, որը 15 տարի առաջ հիմնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը, և ներկայումս Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի հովանավորությամբ շարունակում է և փարածում է Վեհափառ հայրապետի տեսիլքը, որպեսզի հայ երիտասարդները դառնան և լինեն հայ Առաքելական եկեղեցու իմաստուն զավակներ:

Այսօր այս երիտասարդները ուսումնական փարվա ավարտվելու առիթով եկել են այսպեղ ուխտի՝ վերահաստատելու մեր հավատքի, հույսի և Սիրո մկրտության ուխտը, որպեսզի շարունակենք լինել Երկնավոր հոր որդեգիրներ, Քրիստոսի ժառանգորդակիցներ և Սուրբ հոգու փաճառներ: Եկել ենք ուխտի, որովհետև եկեղեցին կենդանի ժողովուրդ է՝ Նոր Իսրայել: Նոր Ուխտի Աստծո ժողովուրդը նման է հին Ուխտի Իսրայելին, որ հետևեց Մովսեսին: Մենք հետևում ենք Քրիստոսին, ելնում ենք Եզիպտոսից, այսինքն՝ մեղքի ստրկությունից, և քայլում ենք դեպի Ավետյաց Երկիրը, որ է Աստծո Արքայությունը: Այս ուղևորության ընթացքում կանգ առնենք՝ սնունդ ստանալու համար մեր Լուսավորչի՝ Սուրբ Գրիգորի տեսիլքից: Ուսումնական փարվա այս վերջավորության հարկ է, որ մենք մեզ հիշեցնենք, թե ուսումը, գիտությունը ունայն է առանց հավատքի իմաստության, առանց դարձի դեպի Քրիստոսի տեսիլքին:

Երեկ փոքն էր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Նշխարաց Գյուրի, որը հիշեցնում է մեր անցյալը, անցյալ, որ ապրում է մեր հայ Առաքելական եկեղեցու մեջ, որ մեզ հանգստացնում է, մեզ սնուցում է, մեզ ներշնչում է: Մեր ներկան հիմնված է մեր անցյալի վրա և մեր ապագան հիմնված է մեր այսօրվա հավատքի վրա: Նա, որ անցյալ չունի, ապագա էլ չունի: Ուստի այս երիտասարդների ուխտը օղակ է, որը կապում է անցյալը ապագայի հետ:

Աղոթենք այսօր, որ ոչ միայն մեր երիտասարդները, այլև մեր ամբողջ ժողովուրդը հայրենիքում և Սփյուռքում դառնան դեպի իմաստություն՝ սիրելով և հարգելով մեր հայ Առաքելական եկեղեցին, որի հիմնադիրը նույն ինքը մեր Տեր և Փրկիչ հիսուս Քրիստոսն է, Միածինը, որ այստեղ իջավ: Եվ վերստին սիրենք իրար, որպես նույն ընտանիքի զավակներ, որպեսզի կարողանանք սիրել մեր բոլորի Երկնավոր հորը, Արդու և Սուրբ հոգու հետ, որին վայել է փառք, իշխանություն և պարփվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅԶԱԶՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Եկեղեցու Առաքելական ավանդության մասին հիմնական սկզբնաղբյուրներն են V դարի պապմինների երկերը, հատկապես՝ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը, ինչպես նաև «Կանոնագիրք Հայոց»-ը և «Կնիք հաւաքոյ»-ն: Եկեղեցու ավանդության մասին հստակ գիտական և աստվածաբանական ձևակերպումներ են տրված հայրախոսական երկերում: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Դ Կոլայեցի (Շնորհալիս, կթղ. 1166-1173 թթ.) «Հայ Եկեղեցու ավանդության» ակտերների մասին գրում է. «Առ մեզ միայն հաստատելով առանդութեամբ ի Սրբոյն Գրիգորի»: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում «Եկեղեցու ավանդության»-ը հերքելով ձևակերպումն է տրված, «Նարդապետութիւն կամ խորհուրդ հաւաքոյ, և ուսմունք Եկեղեցւոյ»¹:

Ներկայումս ստվարածավալ գրականություն գոյություն ունի Հայ Եկեղեցու ավանդության շուրջ՝ նախված Ազգաթնգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու երկերի ընտզրային և պապմագիտական հեղափոխությունների հետ: Հայտնվել են իրար հակադրվող, նույնիսկ իրարամերձ կարծիքներ, որոնցում բննարկվում են պատմական հավաստիության, ավանդություն լինելու (ըստ միջազգային հայկական, ասորական, հունական) և պատմականության սկզբունքների հիմնահարցերը:

Հավաքի, ավանդության և գիտության մասին խոսելիս պետք է հիշել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա Նովսեփյանի (կթղ. 1943-1952 թթ.) արտահայտած խորիմաստ մտքերը: Հավաքի մասին նա գրել է. «Հաստատյ աշխարհն է բարձրագոյն գաղափարականի և բարոյական գեղեցկութեան աշխարհը, որ հակադրութիւնն է նսի, շահախորհրութեան, բռնակալութեան և փառամոլութեան աշխարհի»²: «Գիտություն և Եկեղեցի» հոդվածում Գարեգին Նովսեփյանը կրօնի ու գիտության մասին գրել է. «Իսկական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն (Յովհ. Ը 32) և զօրութիւն է պալիս մարդուն... Պատմութեան ընթացքը գիտութեան և Եկեղեցու սերտ դաշնակցութիւնն է... Եկեղեցու համարեայ բոլոր մեծ պաշտօնեաները իրենց անձի մէջ կրօնականի հետ միացրել են և գիտութեան տարրերը... Աստուածաբանութիւնը իւր էութեամբ պատմական գիտութիւն է, որովհետեւ նորա ուսումնասիրութեան նիւթը պատմական փոփոխւելուն են, այսինքն՝ քրիստոնէական կրօնը իւր էութեամբ, ծագմամբ, զարգացմամբ և ներկայ վիճակով... Պատմութիւնը մարդկային հոգու գիտակցութիւնն է ընդհանրապէս, իսկ կրօնը՝ նորա ամենախորին խորհուրդը... Քրիստոնէական կրօնի և Եկեղե-

¹ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Խ. Ա. Վենետիկ, 1836, Երևան, 1979, էջ 390:

² «Հայաստաննայ Եկեղեցի», օգոստոս, 1940:

ցու մասին մեր գիտակցությունը սրող պայմանական գիտությունը աստիճանաբանությունն է... Եկեղեցական եղանակը զենքը գիտությունն է...»³:

Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանը Սրբազան Ավանդության և գիտության մասին էլ ասում է. «Ներկայ եկեղեցականներս շատ բանով նրախաբալարք ենք մեր նախորդներին: Նորա, մինչև իսկ ներկայ մտքով գիտություն չունենալով հանդերձ, իրենց հաւատարմութեամբ, ասանդապաեութեամբ, նախանձախնդրութեամբ պահպանել են նախնեաց թողած ամենամեծ ժառանգութիւնը, բայց այսօր անհրաժեշտութիւն է դարձել, որ նախալիշեալ լատկութիւնների վերայ աւելանայ եւ գիտութեան ոգին: *Ասանդութիւնը երկուք ժամանակ պահպանում է սրբազան ժառանգութիւնները, բայց առանց գիտութիւնը կենդանացնող միջոցների նա աղօտաւում է եւ կորցնում իր զօրութիւնը*»⁴:

Եկեղեցու ավանդության նշանակության գիտական, աստվածաբանական և գրական բնանադրմաների հարցը չի ժխտվել և մեծ տեղ է գրավել անվանի հայագետների՝ պատմաբանների, բանասերների, գրականագետների հետազոտություններում, քանզի այն նաև գիտական խնդիրների ոլորտին է պատկանում:

Հայ Եկեղեցու հայրապետությունը հիմնվեց Թադեոս և Բարդուղիմեոս ատաքայների կողմից, ուստի Հայոց Եկեղեցին անկախ, ինքնուրույն և ինքնագլուխ Եկեղեցի է: Հայ Եկեղեցու Աթոռը առաքելական է, այն եպիսկոպոսապետական հաջորդականությամբ հասել է մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ, որը կարելի է համարել Աստուծո կողմից փրկած մի պարզ: Այս միտքը համահունչ է հայ միջնադարյան պատմագրության ոգուն և առավել ցայտուն դրսևորվել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում, քանզի Պատմահայրը մինչ իր ժամանակները հասած Հայոց ամբողջական պատմության հոգևոր առանցքը հետևյալ բնութաւմբ է ներկայացրել. Ս. Գրիգոր Լուսավորիչ «ի ծերութիւն պարարտութեան հոգևորի գմեզ ժողովեաց ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ»⁵: Պատմահոր այս միտքը կարելի է համարել հայ պատմագիտական և աստվածաբանական գոհարներից մեկը:

³ «Արարատ», օգոստոս-սեպտեմբեր, 1900:

⁴ Գարեգին Ա Կաթողիկոս, Պ. Ուլի Լոյս եւ Կեանք, Երևան, 1994, էջ 30, 97-103:

⁵ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, Գիրք Բ, գլ. ՂԱ, էջ 245:

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՀԻԵՐՈԳԼԻՓԻԿ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Մեն Հայքի Բարձր Հայք Ճառագի եկեղյաց գավառում գտնվող Ոսկե-բլուրում կամ Այթից-թեփեում կատարված հնագիտական պեղումների ընթացքում 1970-ական թթ. հայտնաբերվել են խեցանոթներ, բրոնզե ամոթներ և քրոմզե երեսկավներ, որոնց վրա կան շուրջ մեկ տասնյակի հասնող վանկազիր հիերոգլիֆիկ արձանագրություններ¹: Արձանագրությունները հիմնականում վերաբերում են ամոթների տարողության չափերին: Այդ նպատակի համար արձանագրություններում օգտագործվել են ուրարտերենի տարողության չափերը ցույց տվող *a-gar-qi* «ա-կար-կի» և *i-iu-si* «տի-րու-սի» տերմինները: Բայց այդ տերմինները չեն զրվել այնպիսի ուղղագրությամբ, ինչպես դրանք զրվել են ուրարտական սեպագիր արձանագրություններում: Այդ տերմիններից առաջինը զրվել է *a-ha+r-ku* «ա-խա+ր-քու», իսկ երկրորդը՝ *tu-iu-za* «թու-րու-զա» ձևով, որոնց ուղղագրությունը, ակներևաբար, տարբերվել է այդ տերմինների գրության ուրարտական ուղղագրությունից: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ուրարտները երբեք ճշված հիերոգլիֆիկ գրերով արձանագրություններ չեն գրել:

Ուրարտերենին ամսովոր ուղղագրությունը և ուրարտերին ամսովոր գրությունը թույլ են տալիս մտածելու, որ եթե այդ արձանագրությունների գրողները լինեին ուրարտները, ապա նրանք հիշյալ տերմինները կգրեին այնպիսի ուղղագրությամբ, ինչպես դրանք զրվել են ուրարտերեն սեպագրերով: Ինչպես ուրարտերենին ամսովոր այդ ուղղագրության, այնպես էլ ուրարտերին ամսովոր այդ գրության փաստերը թույլ են տալիս մտածելու, որ այդ արձանագրությունների հեղինակները ոչ թե ուրարտներն են, այլ ուրիշ ցեղեր: Եթե այդ արձանագրությունների հեղինակները խեթա-լուվիական ցեղեր լինեին, ապա հիշյալ ամսանների տարողության չափերը կգրեին իրենց լեզվում եղած համապատասխան տերմիններով, որոնցով նրանք զրել են բազմաթիվ հիերոգլիֆիկ արձանագրություններ: Բայց այդպես չէ: Ամենայն հավանականությամբ այդ արձանագրությունները զրել են եկեղյաց գավառի տեղաբնիկները:

Հույն աշխարհագիր Ստրաբոնի (մ.թ.ա. մոտ 63) «Աշխարհագրություն»² աշխատությունում պահպանվել է տեղեկություն, ըստ որի արգոնավորդների առասպելի ձևավորման ժամանակ, այն է՝ մ.թ.ա. XIII դարում, Էկիլիսեն (Ekilisene) և Սու(ս)պիրիտիս (Su(s)pirtis) երկրների բնակիչները եղել են արմենները կամ հայերը: Դրանք երկուսն էլ,

¹ J. J. Klein, *Urmian hieroglyphic inscriptions from Akintepa (Anatolian Studies, 24, London, 1974, ersch. 1975)*, p. 77; Д. Ж. Клейн, Урартские иероглифические надписи из Акинтепе (Древний Восток, III, Ерewan, 1976), стр. 127-149.

² Strabonis, *Geographica*, X(4).

որոնք հիշատակվել են կողք-կողքի, իրենց գրաված տարածքով կապված են Մոսիքի հետ: 11-րդ տարածքում կողք-կողքի գտնվող Էկիլիսենե և Սու(ս)պիրիտիս երկրները տեղադրելիս իրենց վրա ուշադրություն են հրավիրում Մոսիքից անմիջապես դեպի հյուսիս-արևելք տարածված Բարձր Հայք մահաճի կողք-կողքի գտնվող Եկեղյաց և Սպեր գավառները, որոնցից առաջինը համապատասխանում է Էկիլիսենեին, իսկ երկրորդը՝ Սու(ս)պիրիտիսին: Այս փաստը հաստատում է, որ Եկեղյաց գավառի բնակիչները եղել են արմենները կամ հայերը դեռևս մ.թ.ա. XIII դարից, այսինքն՝ ուրարտական դարաշրջանից շատ առաջ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Եկեղյաց գավառի Երիզա կամ Երզնկա ավանում է գտնվել հայոց հնագույն կրոնի աստվածներից Ամահիտի պաշտամունքի գլխավոր կենտրոնը, իսկ մույն գավառի Թիլ ավանում՝ Նանեի պաշտամունքի գլխավոր կենտրոնը³:

Չափազանց ուշագրավ են նաև հնագիտական պեղումների ընձեռած հետևյալ փաստերը: Այսպես՝ Երիզա կամ Երզնկա ավանի մոտ գտնվող Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի պեղումների ընթացքում բացահայտված հանգուցյալների թաղման սովորություններն ու հավատալիքները⁴, որոնք թվագրվում են ուրարտական դարաշրջանով, ամբողջովին համընկնում են հայ ժողովրդի մեծ սովորություններին ու հավատալիքներին: Այսպես, օրինակ՝ այնտեղ տարածված է եղել հանգուցյալների թաղելու ոչ թե դիակիզման հավատալիքն ու դրանից բխող սովորությունը, որը յուրահատուկ է եղել թուրքաբնակների, այլ դիաթաղման հավատալիքն ու դրանից բխող սովորությունը, որը յուրահատուկ է հայ ժողովրդին:

Այնտեղ տարածված է եղել նաև հանգուցյալներին թաղելու դուալ (զույգ) ձևը, այսինքն՝ տղամարդու և կնոջ թաղումը կողք-կողքի (տղամարդուն աջ կողմում, կնոջը՝ ձախ), հանգուցյալներին դազաղով, ինչպես նաև իրենց անձնական իրերով (տղամարդուն իր զենքերով, կնոջը իր զարդերով) թաղելու հավատալիքն ու սովորությունը: Հատկապես ուշագրավ է նրանց մոտ կնոջ՝ որպես ընտանիքի մոր, որպես պտղաբերության ակունքի, որպես ցեղի հավերժության մարմնացումի նկատմամբ ցուցաբերվող մեծարման սովորությունը: Այդ երևույթն իր դրսևորումն է գտել մույնիսկ թաղման ծեսերի մեջ (եթե տղամարդը կրել է միայն պղնձյա և երկաթյա զենքեր, ապա կինը կրել է ոսկյա կոճակներ ու այլ զարդեր): Հիշյալ ամբողջ հավատալիքներն ու սովորությունները (դիաթաղումը, դուալ (զույգ) թաղումը, դազաղով թաղումը, անձնական իրերով թաղումը, կնոջ մեծարումը) յուրահատուկ են հայ ժողովրդին: Բնականաբար պետք է ասել, որ այդ պեղումների ընթացքում հայտնաբերված մշակույթն էլ մույնպես պատկանում է հայերին կամ արմեններին: Սովորությունների, հավատալիքների, մշակույթի հետ կապված հնագիտական այս փաստերն իրենց հերթին հաստատում են, որ Էկիլիսենեի կամ Եկեղյաց գավառի բնակիչները ուրարտական դարաշրջանում եղել են հայերը կամ արմենները:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Բարձր Հայքի մյուս գավառներում ևս գտնվել են հայոց հնագույն աստվածների պաշտամունքի գլխավոր մեծիանները կամ գլխավոր կենտրոնները: Օրինակ՝ այդ մահաճի Դերջան գավառի Բազառիճ կամ Բազայառիճ ավանում է

³ Աղաթանգեղոս, Պատմություն հայոց, § 8785, 786:

⁴ Özgüç, Umut and Altınörs (Archaeology, 22, Cambridge, 1969), p. 256-263.

գտնվել Միհրի պաշտամունքի գլխավոր մեհյանը⁵, իսկ Դարաճաղի գավառի Անի (այժմ՝ Քեմախ) ամրոցում՝ գերագույն աստված Արամազդի պաշտամունքի գլխավոր մեհյանը⁶։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ Բարձր Հայքի Դարաճաղի գավառի Անի (Քեմախ) ամրոցում են գտնվել հայոց հնագույն թագավորների դամբարանները⁷։

Մատնանշված փաստերը հաստատում են, որ ոչ միայն Բարձր Հայքի եկեղյաց և Սպեր գավառների, այլև այդ նահանգի մեջ մտնող գրեթե բոլոր գավառների բնակիչները դեռ շատ վաղուց, առնվազն մ.թ.ա. XIII դարից, հիմնականում եղել են հայերը կամ արմենները։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել, որ, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, մ.թ.ա. XIII դարում հետագա Բարձր Հայքի տարածքում հանդես է եկել շումերա-աքքադական դարաշրջանում (մ.թ.ա. III հազարամյակ) սեպագիր արձանագրություններում հիշատակված խաթե կամ Հայ մայր ցեղի ժառանգորդը հանդիսացող Նաիրի ցեղամիությունը հայկական էթնիկական աշխարհին պատկանող իր բնակչությանը⁸, իսկ ուրարտական դարաշրջանում էլ այդ ցեղամիության էթնիկական ու տարածքային հիմքի վրա ձևավորվել է Դայանեհի-Դիաուխի պետությունը, որի բնակիչները, բնականաբար, շարունակել են մնալ արմենները կամ հայերը⁹, թեև այդ պետությունը նվաճվել է ուրարտական պետության կողմից։ Սեպագիր արձանագրություններում վկայված այս փաստերը հաստատում են, որ իրոք մ.թ.ա. XIII դարում և նրան հաջորդող ժամանակաշրջանում, այդ թվում ուրարտական դարաշրջանում Բարձր Հայքի տարածքում, մասնավորապես եկեղյաց գավառում ապրում էին խաթե կամ Հայ մայր ցեղի ժառանգորդները՝ հայերը կամ արմենները։

Հույն պատմիչ Քսենոփոնի (մ.թ.ա. 401) «Անաբասիս»¹⁰ աշխատությունում պահպանվել է տեղեկություն, որ Արածանի (Արծանիա) կամ Տեղեքոաս գետից մինչև Ռիոն կամ Փասիս գետը ձգվող տարածքը կոչվել է Արևմտյան Արմենիա։ Հիշյալ տարածքին տրվող Արևմտյան Արմենիա անվանումը մատնանշում է, որ այնտեղի բնակիչները եղել են արմենները կամ հայերը նաև Քսենոփոնի ժամանակ։

Նշված փաստերը վկայում են, որ ինչպես նախաուրարտական, այնպես էլ ուրարտական դարաշրջանում Բարձր Հայք նահանգի եկեղյաց գավառի բնակիչները եղել են հայալեզու ցեղերը, այն է՝ արմենները կամ հայերը։ Անշուշտ բոլորից առաջ եկեղյաց գավառի տեղաբնիկ բնակիչները, այն է՝ արմենները կամ հայերը, կարող էին ղսկե-բլուրի կամ Ալթին-Թեփեի վերոհիշյալ հիերոգլիֆիկ արձանագրությունների հեղինակները լինել։

⁵ Ազաթանգեղոս, Պատմություն հայոց, § 790։

⁶ Նշվ. աշխ., § 785։

⁷ Նշվ. աշխ., § 785

⁸ Գ. Ն. Սարգսյան, Նոր փաստեր հայ ժողովրդի մասին՝ կապված խաթե ցեղամիության հետ, («Էքս-միանի», 2003, N9), էջ 81-89, նրա՝ Դայանեհի-Դիաուխի պետության զրաված տարածքը և բնակչության հայկական ծագումը (1, ԷԳ, 2003, N2), էջ 168-183։

⁹ Գ. Ն. Սարգսյան, Դայանեհի-Դիաուխի պետության զրաված տարածքը և բնակչության հայկական ծագումը (1, ԷԳ, 2003, N 2), էջ 168-183։

¹⁰ Xenophon's, *Expedition Cyn.* IV (III-VIII)։ Քսենոփոն, Անաբասիս, գիրք IV (III-VIII)։

Նոսանք էլ, փաստորեն, օգտագործել են ուրարտերեն լեզվով տեքմիցները, բայց հետացել են ուրարտերեն լեզվից՝ նրա ուղղագրությունից և այդ տեքմիցները գրել են այլ լեզվով: Հավանական է, որ այդ լեզուն եղել է էփիլիսեեն կամ եկեղյաց գավառի հայալեզու բնակիչների, այսինքն՝ արմենների կամ հայերի լեզուն: Սա թերևս Ուրարտուի կողմից Ռայանե-Ռի-Ռիաուսի կամ Արևմտյան Արմենիա պետությունը մվաճվելուց հետո ուրարտերենի և հայերենի առաջին մերձեցման փաստն է, որը բխում է ուրարտերենի և արմենների կամ հայերի մերձեցումից: Արմենները կամ հայերը մոտ ապրելով խեթա-լուվիական ցեղերից՝ նրանցից ընդօրինակել են հիերոգլիֆիկ գրությունը վերոհիշյալ արձանագրությունները գրելու համար:

Այս կապակցությամբ ուշագրավ է Ոսկե-բլուրից կամ Ալթին-թեփեից հայտնաբերված հիերոգլիֆիկ արձանագրություններից 9-րդը, որ գրիչը շեղվել է ամրոցների տարրողությունը ցույց տվող գրությամբ միօրինակությունից և նրանում տեսա տեքմիցից բացի օգտագործել է s(a)-a-wi և E.GAL տվորական բառերը. «s(a)-a-wi E.GAL 2 TU»: Այս արձանագրության մեջ հիշատակված TU բառը տեսա բառի կրճատ ձևն է, 2-ը ցույց է տալիս տարրողության չափի աստիճանը, E.GAL-ը շումերական գաղափարագիր է, որը նշանակում է «ամրոց», իսկ «s(a)-a-wi» բառը հետազոտողներից Ջ. Քլեյներ¹¹ ստուգաբանում է ուրարտերենի լեզվաֆիմքով՝ որպես «կառավարիչ»՝ թեև ուրարտերենում մեծ բառ ինչպես հատուկ անունների, այնպես էլ հասարակ անունների շարքում չի հիշատակվել: Սակայն հակառակ Ջ. Քլեյնի, եկեղյաց (էփիլիսեեն) գավառը, որ գտնվել է Ոսկե-բլուրը կամ Ալթին-թեփեն, ինչպես ընդգծվեց վերևում, ըստ Ստրաբոնի հասած ավանդության, եղել է արմենների կամ հայերի բնօրրաններից մեկը դեռևս մ.թ.ա. 13-րդ դարում, երբ ձևավորվում էր Արգոնավորդների առասպելը: Ուստի Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի արձանագրությունները գրվել են ոչ խեթերենով, որ ենթադրել են հետազոտողներ Բարնետտ, Գյոգչեն¹² և Շտեյնհերր¹³, և ոչ էլ ուրարտերենով, որ ենթադրել են Ջ. Քլեյներ և Ի.Մ. Դյակոնով¹⁴, այլ հայերենով, և, բնականաբար, s(a)-a-wi բառը պետք է ստուգաբանել հայերենի լեզվաֆիմքով:

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ ենթատեքստում s(a)-a-wi բառը ցույց է տալիս արձանագրությունում հիշատակած ամրոցի (E.GAL) որպիսությունը՝ նրա բարձրությունը, ցածրությունը, ամրության աստիճանը կամ նրա արտաքին տեսքը (խոսքը պատերի դրսի գույնի մասին է) և այլն: Մեր կարծիքով տվյալ ենթատեքստում «s(a)-a-wi» բառը ցույց է տալիս ամրոցի գույնը (դրսի սվադի, շարված քարերի գույնը), ինչպես որ հայերի մոտ տարածված է եղել, օրինակ՝ Սպիտակ եկեղեցի, Սև եկեղեցի, Կապույտ ամրոց, Կարմրավոր եկեղեցի և այլն: Հավանաբար տվյալ ենթատեքստում «s(a/i,c,u)-a-wi» բառը ցույց է տալիս ամրոցի սև լինելը, նամանավանդ որ այն իր «sw» բաղաձայնական

¹¹ Джеффри Дж. Клейн, Урартские неоглифические надписи из Аштинте (Древний Восток, III, Ереван, 1976), стр. 135-138.

¹² R. D. Barnett and N. Cokçe, Anatolian Studies, III, Ankara, 1953, p. 124, table XVI (2, 4).


¹³ E. Steinherr, Die urartäischen Bronzen von Ahtintepe, Anatolia, III, Ankara, 1958, S. 97-102.



¹⁴ И. М. Дьяколов, Замечания к урартским неоглифическим надписям из Аштинте (Древний Восток, III, Ереван, 1978), стр. 150-152.

արմատով հիշեցնում է հայերենի «սև» բառը, և ամբողջ տեքստը թարգմանվում է. «Սև ամբողջից 2 թուրուզա»: Այս փաստը ցույց է տալիս, որ Ռիրավի Բարձր Հայքի Ոսկե-բլուրի կամ Ալթին-թեփեի Ռիերոգլիֆիկ արձանագրությունները, որոնք թվագրվում են ուրարտական-դարաշրջանով, գրվել են հայերեն լեզվով:

Այսպիսով, Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգը, մասնավորապես նրա կազմում գտնվող Եկեղյաց գավառը և նրա անբաժան մասը կազմող Երիզա կամ Երզնկա քաղաքն ու անմիջապես նրա մոտ գտնվող Ոսկե-բլուրը կամ Ալթին-թեփեն ի սկզբանե բնակեցված են եղել հայալեզու ցեղերով, այն է՝ արմեններով կամ հայերով: Ոսկե-բլուրից կամ Ալթին-թեփեից հայտնաբերված խեցանոթների, կենցաղային այլ իրերի վրա փորագրված Ռիերոգլիֆիկ արձանագրությունները, որոնք թվագրվում են ուրարտական դարաշրջանով, գրվել են այնտեղի բնակիչների, այն է՝ արմենների կամ հայերի լեզվով, այլ ոչ թե այնտեղի բնակիչներ չհամարվող խեթերի կամ ուրարտների լեզվով, որ ենթադրել են Բարեետուն, Գյոզչեն, Շտեյնգերրոն, Զ. Քլեյնը և Ի. Մ. Դյակոնովը:

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՏՆՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎՐԱ ԵՂԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՆԿԱՎԱՅ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ

ՆԱԽԱՊԱԾԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ

Կրոնական հավատալիքները, ինչպես նաև մախապաշարումներն իրենց ուրույն դրոշմն են դնում ժողովուրդների մտածողության, հոգեբանության, ավանդույթների, հետևաբար և բառապաշարի վրա: Ենթադրաբար կրոն և դրանից բխող հավատալիքներն ու մախապաշարումները, դրանցով պայմանավորված կրոնական արարողությունները, ընդունված ծիսակարգը լեզուն համալրում են առանձնահատուկ արտահայտություններով, դարձվածքներով, առածներով, ասացվածքներով և այլն:

Հայ ժողովրդի պատմությամբ պայմանավորված՝ հայերենի բարբառներին բնորոշ են հեթանոսությանը և քրիստոնեությանը հետ առնչվող բազմաթիվ բառեր և արտահայտություններ: Մեր ուսումնասիրության մյուսն այդ բառապաշարի ածականներն են, մասնավորաբար գրական հայերենի արմատական ածականների բարբառային հոմանիշները:

Հայաստան ցերեպահանգած աղանդները հայերենի բարբառներում ածականական հոմանիշներով չեն արտացոլվել: Թեևս կարելի է մշել միայն արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբի վանի բարբառի *անավուտ* (առանց այգաբացի՝ լուսածաղի) բառը, որ հոմանիշ է *խոստոր* ածականին և բնորոշում է ուղղափառ դավանությունից շեղված, անկրոն, անհավատ մարդուն:

Ընդհանուր առմամբ, ուղղափառ դավանությունից ցանկացած շեղում բնորոշվել է *սատանա* բառով և դրանով կազմված բազմաթիվ բառակապակցություններով, դարձվածքներով և այլն:

Հեթանոսական կրոնին առնչվող բարբառային ածականները քանակական առումով զիջում են քրիստոնեությանը հետ կապվող ածականներին: Ի դեպ, նկատելի է, որ քրիստոնեությանը առնչվող բարբառային ածականները ևս այդքան էլ մեծաթիվ չեն: Դա, իհարկե, կարելի է բացատրել քրիստոնեությանը՝ ժամանակի գրական լեզվին՝ գրաբարին ավելի մոտ գտնվելով: Հայտնի է, որ քրիստոնեությանը վերաբերող բառերը հայերենին են անցել թարգմանական դպրոցի միջոցով և հիմնականում հունական և ասորական փոխառություններ են՝ գրական հայերենի զանազան մտած:

Հեթանոսության հետ է առնչվում *կոռպաշտ* բառը, որը արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի միջբարբառի Ուրմիայի բարբառում բազմիմաստ բառ է և ունի ա) *դաժան*, բ) *քիտ* բ) *ժլատ*, ազան, կծի ածականական իմաստները: Արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի բարբառում *կոռպաշտ* բառը հանդես է գալիս

քար բառի հետ և կազմում քար կոապաշտ հարադրությունը՝ «դաժան» իմաստով:

Հայաստանում 301 թվականին որպես պետական կրոն հաստատված քրիստոնեությունը ցոռանոր բառերով ու արտահայտություններով հարստացրեց հայոց լեզուն: Նոր կրոնը տարածվում է Աստվածաշնչի թարգմանությունների, ինչպես նաև կրոնական երգա-կան, հսկողաբանական գրականության միջոցով: Աստվածաշնչյան սրբազան պատմությունները զանազան տարբերակներով մտնում են ժողովրդի մեջ, որի ընթացքում կերտվում են դարձվածքներ և արտահայտություններ՝ խոսքին տալով մոր երանգ ու կենդանություն:

Քրիստոնեության հետ վերաբժեղություն է Աստված հասկացությունը: Բազմաստվածությանը բնորոշ աստվածներ Ռոզմակի ձևի փոխարեն հայերենի բարբառներում գործածական է դառնում եզակի թիվը՝ շեշտելով քրիստոնեական ուղղափառ դավանության միաստվածությունը:

ա) Աստված բառով արտահայտված հոմանիշներ.

Այս բառով կազմված բառակապակցություններ հանդիպում են թե՛ դրական, թե՛ բացասական հատկանիշ արտահայտող հոմանշանից շարքերում: Ի դեպ, երկու դեպքում էլ հատկանիշի սաստկականություն է արտահայտվում: Այսպես՝ «բարի» ածականի համար ունենք *Աստված սիրող* (Թբ.), մանավանդ առաքինությանը աչքի ընկնող բարի մարդու համար՝ *Աստուծո օրհնած* (Ղգ. ՆՆ.) բառակապակցությունները, օրինակ՝ «Աստծո օրհնած Աբելը»: «Ընտիր», «մաքուր», նաև «կանաչ» ածականները Լոռու խոսվածքում ունեն *Աստոծ միչին ման էկած* նկարագրական եղանակով արտահայտված հոմանիշը, ինչպես՝ «Աստոծ միչին ման էկած դաշտ, արտ» և այլն: Օտար աշխույժ երեխան բնորոշվում է *Աստծու կրակ* (Ար.) հատկացուցիչ-հատկացյալով, ճշմարիտը՝ *Աստուծո համար*, (Պլ.), արդար, ազնվագույն մարդը՝ *Աստուծո հղեցը* (հղեցը-ուղի) վրա (Ղբբ.), այսինքն՝ Աստծու ճանապարհի, ուղիղ ճանապարհի վրա գտնվող բնորոշումներով: Դրան հակառակ՝ *ամբարիշտ* ածականի համար մույն բարբառում հանդիպում է *Աստուծո հղեցն դուրս էկած* (Ղբբ.) արտահայտությունը: Համեստ ածականն ունի *Աստուծո գառ* (Ալքս. Եր. Ղբբ.) հոմանիշը և այլն:

Ահմեդ, անտարբեր մարդը բնորոշվում է *Աստված աղունն աղացած* (Եր.) արտահայտությամբ, որը *դինը* արմատական ածականի հոմանիշն է: *Աստուծո աղերսագիր տվող* հեռաքրքիր նկարագրականով են պոլսեցիները բնորոշում չափազանց բարձրահասակ մարդկանց՝ հիմք ունենալով աղերսագիր մատուցողների՝ ժողովրդի միջից տեսանելի լինելու համար բարձր տեղերում կանգնելը:

Բացասական ընդգծված հատկանիշ ունեցող մարդիկ բնորոշվում են հետևյալ արտահայտություններով. *Աստուծո եզը*, Պլ. «բութ», *Աստուծո կովը*, Պլ. «խենթ», *Աստու խենթը*, Աբ. «խենթ» և այլն: Հայտնի է, որ բթությունը բնորոշվում է *եզ, կով, էշ* և նման բառերով, *Աստված* բառով արտահայտված հատկացուցիչն ընդգծում է նշվող բացասական հատկանիշը: Չար ածականի համար ունենք *Աստծո պատիժ/պատիք* (ՆՆ. Պլ. Մշ.), *Աստծու բեղիք* (Զինչին) և այլն: Եմթադեղի է, որ *բեղիք* բառը կազմված է թուրքերեն *բե* ժխտա-

կան նախածանցից և *դիլ*՝ տեսք բառից: «Համառ» ածականին հոմանիշ են՝ *մեռնող, մեղա Աստծու չասող* (Աշտ. Լ.), *օխտը գոմեշ տվող, մեղա Աստծու չասող*, (Ծիր. Աշտ.), «գող» ածականին՝ *Աստծու գողակը ձեռքեն գողցող* (Դվ.), «սարսափելի գող, ոչինչ չխնայող գող», «ստահակ»՝ *աստվածները վար իջեցնող* (Պլ.) և այլն: *Աստված* բառի հոգնակի ձևը վկայում է այս դարձվածքի նախաքրիստոնեական լինելը, միաժամանակ խտացում է բացասականությունը: «Թոգնակին կը ցուցնէ, թէ այս ոճը նախաքրիստոնեական դարձուած մըն է»,- գրում է Հրայրյա Աճառյանը (Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 140):

Դաժանությունը, անգթությունը բնորոշվում են *անաստված* (Ար.), *Աստված չունեցող* (Ախք. Պլ.), *Աստծուց չվախեցող* (Ղլթ. Ծիր. Ալշ. Բլխ.), *Աստուծո կրակ* (Եր. Պլ.) և այլ արտահայտություններով: «Լիր» ածականի դիմաց արևելյան բարբառախմբի Արարատյան բարբառի Երևանի խոսվածքում ունենք *Աստծու անը սրտից հանած, Աստծու երեսիցը թափած* դարձվածքները և այլն: Թշվառությունը բնորոշվում է *Աստված ողորմիին բան* (Պլ.) արտահայտությամբ: Այսինքն՝ այնքան թշվառ, որ կարող է ողորմել միայն Աստված, մարդկային գթությունն ու օգնությունն անգամ անկարող են փարատելու այդպիսի թշվառությունը: *Աստված* բառով արտահայտվում է Սուրբ Երրորդությունը, և սակավադեպ են այս եռամիասնության որևէ կողմով արտահայտված հոմանիշները: Արևելյան խմբակցության Թիֆլիսի բարբառում *Քրիստոս* հատուկ անունով կազմված *սուտ Քրիստոս* որոշիչ-որոշյալ կապակցությունը հանդես է գալիս որպես «ամբարտավան», «խարդախ» ածականների հոմանիշ: Հոմանշային շարքում «ամուր, հաղթ» արմատական ածականների դիմաց ունենք *գորքով* (ՆԲ.) արտահայտությունը, որում ի նկատի է առնված պահապան հրեշտակների զորքի աջակցությունն ու սատարելը: Արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Կարմո բարբառում *ծույլ* ածականի դիմաց ունենք *իշու հրեշտակ* բառակապակցությունը, որով բնորոշվում է անբան, նաև միամիտ մարդը:

Արևելյան խմբակցության Նոր Նախիջևանի և հյուսիսարևմտյան բարբառախմբի Պոլսի միջբարբառում «ամայի», «դատարկ» ածականներն ունեն *Աստուծո լեռները* (աստծու լեռները տեղը, քաղաքը են) հոմանիշը: Բնականաբար այն վայրը, որտեղ բնակվում է միայն Աստված, անհասանելի է մարդ արարածի համար, հետևաբար և ամայի է: Այսպես՝ «Ան ալ ի՞նչ տեղ է որ, Աստուծո լեռները»:

Դրական կամ բացասական հատկանիշ արտահայտող մշված ածականներից զատ, կան նաև այնպիսի ածականներ, որոնցով բնորոշելի է միայն Աստված: Այսպես՝ «վեհ» արմատական ածականին հոմանիշ է *անահուն* (Ապ. Բլ.) բառը, որը հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի բարբառի Բուլանուխի խոսվածքում որպես որոշիչ կիրառելի է միայն *Աստված* որոշյալի համար՝ «Անահուն Աստված»: Այդպես և *արդար* արմատական ածականը Պոլսում և հարավկենտրոնական բարբառախմբի Տիգրանակերտի բարբառում ունի *ջշմարիդ* հոմանիշը, որով բնորոշվում է Աստված: *Ջշմարիդ* բառը գործածելի է միայն «Ջշմարիդ Աստված» երդման մեջ: «Ամուր», «պինդ», «շեն» հոմանշային շարքի շէօն հնչյունափոխված տարբերակը ծայր հյուսիսարևմտյան միջբարբառախմբի Սուչավայի

բարբառում մակբայաբար կիրառելի է միայն «Աստված շեն պահե» բարեմաղթության մեջ:

Աստվածաշնչական թեմաների հետ են առնչվում հետևյալ հոմանիշները. *սաղուկեցի*. Սք. «խարդախ. մահ» խորամանկ. անզգամ», *փղշտացի*. Պլ. «քաջ», *անառակ որդի*. Պլ. «ըմբոստ», *Ավագ ուրբաթ գիշեր, խավարման գիշեր*. Պլ., Մրդ., *սև ուրբաթի պես* (Քրիստոսի տաճարաքանդակի և խաչելության օրը, որ կոչվում է Ավագ Ուրբաթ) - տխուր», *բոբոլական կրակ*, Թբ. «չար, անտանելի մարդ» և այլն: Ակնհայտ է, որ *բոբոլական* բառը *բաբելական* բառի հնչյունական տարբերակն է, և նկատի է առնված հինկտակարանյան բաբելոնյան հնոցը, ուր մետվեցիք երեք մանուկները:

Բարբառներում հաճախադեպ են մահ *աղոթք*, *անեծք*, *երդում* և այլն բառերով. ինչպես և եկեղեցական ծիսակարգի հետ առնչվող բառերով ու բառակապակցություններով արտահայտված հոմանիշները: Այսպես՝ «խև»՝ *իրեն համար ժամ չանող, ուրիշի համար պատարագ անող*, Աշտ. Օշկ. Ծիր. Ախց., (այս նախադասության մեջ *ժամ* նշանակում է *ժամերգություն*. հոգևոր ծիսակարգում ամենօրյա ժամերգությունները բովանդակությամբ, տևողությամբ և այլ առանձնահատկություններով էականորեն տարբերվում են Տիրոջը մատուցվող պատարագներից), *ուրիշին քարոզող, իրան լողողող*. Ծիր. խտջ. Բլխ. «կեղծ»՝ *սուտ մոլորուսի*, Վճ., «խեղճ, անճարակ»՝ *էջը խլած մղդսի*, Լ., (*մոլորուսին, մոխսին, հաջին* Քրիստոսի լույս գերեզմանին ուխտավորաբար այցելած հավատացյալն է), «մոլոր», «հիմար»՝ *աղոթած էջ*, Ար. Լ. Ղրբ., *աղոթած էջի մման*, Եր. Ղրբ., *աղոթած էջ կտրած*, Ար., «վատ»՝ *անիծից* (անեծքների) *արմատ*, Պլ., *նզովից արմատ*, Պլ., (ասվում է չար, վատ մարդու մասին), «նվաստ», «չնչին»՝ *ո՛չ օրհնելու, ո՛չ անիծելու*, Աշտ. Ծիր., *ո՛չ մոլի պոխ* (ծոպ), *ո՛չ տերտերի ծուխ*, Կր. Բլխ., *ո՛չ արողի, ո՛չ գրողի*, Ակն Եվդ. Օմխ., «ստահակ»՝ *երդումը ջրի պես խմող*, Տ., «վաղ»՝ *աղոթարանխառն* (աղոթարանխառն գործ, հանդիպում), Բլ. Սք. Վճ., *հետ աղոթարանին* (գործ, որևէ իրողություն), Վճ. «ղինջ»՝ *մա պախս կիտցող, մա զատիկ*, Շտխ., «լիր», «լկտի»՝ *երեսի ջուրը զնացած*, Ղրբ. Եր., *երեսի ջուրը փախած*, Սք. (ի նկատի է առնված մկրտության ժամանակ երեսին ըսվող մյուտոնաջուրը, երեսի մեռոնը զնացած, Եր. Պլ., *իրեսը պրոթըճիրավ լվացած*, Ղրբ. Ղգ. (մյուտոնաջրի փոխարեն), «շողոքորթ»՝ *գիշերը գողություն անող, ցերեկը՝ Տեր ողորմյա՝ ասող*, Վդպ. Աստ., *վանքի հավերը ուտող սուտ ճգնավոր*, Ծիր. Սք., *վանքին հավը ուտող սուտ խենթ*, Կճ., «չար»՝ *անեծքատուր*, Ղրբ., *անեծքներան*, ՆՆ., «շողոքորթ»՝ *մեկ ձեռքը խաչ հանող, մեկալով գողություն էնող*, Քդ. և այլն:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, հաճախադեպ են նկարագրական եղանակով արտահայտված հոմանիշները:

բ) «Սատանա» բառով կազմված բառակապակցություններով արտահայտված հոմանիշներ: Ընդհանրապես *սատանա*-ով կազմված ածականական հոմանիշներն աչքի են ընկնում ոչ միայն քանակային գերազանցությամբ, այլև հայերենի թուր բարբառներին բնորոշ լինելով և համահայերենյան բնույթ կրելով: Հավաքված նյութերը ցույց են տալիս, որ *սատանա* բառով կազմված արտահայտությունները քանակապես գերազանցում են

Աստված բառով կազմվածներին: Երբեմն սատանա բառը փոխարինվում է այլ «կանացի զգվելի դեմքով, պղծն եղունգներով, վարագի ժանիքով, ամեն ինչ հոշոտող առասպելական զազան», այս -չար ոգի, չար շունչ, չար քամի, պիղծ», դժ - ոգի, մարդանման արարած՝ բարձր կարողություններով», սաղայել -սատանայի զխավոր», ճեռ, քաջք «քարանձավներում, լեռներում ապրող երբեմն բարի, երբեմն չար առասպելական ոգիներ, երբեմն պատժող ուժեր, որոնք մտնում են մարդկանց մեջ», չար, չարք և այլ համարժեքներով:

Արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառում քաշկ հնչյունական տարբերակով բնութագրվում են աշխույժ, արի, կտրիճ մարդիկ, որում ի նկատի է առնված առասպելական այս ոգու դրական հատկանիշը: Այսպես՝ այլք, ՆԲ., այլքի նման, ՆԲ. արտահայտությունները հոմանիշ են ազահ արմատական ածականին, իսկ այլքու կոխած, Օհ. արտահայտությունը միհար բառի հոմանիշն է և ասվում է շատ միհար, հիվանդոտ և տգեղ երեխայի մասին: Նեռ-ը (Ար. Նսրբ.) «թշմաղի» ածականի հոմանիշն է, իսկ Արարատյան, Ղարաբաղի, Սեբաստիայի, Քղիի բարբառներում հոմանիշ է ճեճգ արմատական ածականին, չար, խարդախ, ճեճգ արմատական ածականները Պոլսում ճեռի պաշտոնյա բառակապակցությամբ են դրսևորվում, իսկ արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Ամասիայի և Սեբաստիայի բարբառներում՝ սաղայել-ով: Այդ իմաստին հոմանիշ են նաև սիրտը չարին տված, Ար. դարձվածքը, ճիզվիթ, Երզ. բառը, որն ունի «հիսուսյան կրոնավոր», մասնավորաբար Կաթոլիկ եկեղեցուն հարող ուղիղ իմաստը և այլն: Նկատելի է, որ «սատանա»-ով կազմված բառակապակցություններում հաճախորդեալ է «ծի» բառը: Դրանով կազմված արտահայտությունները հոմանիշ են համառ, ըմբոստ ածականներին. օրինակ՝ սատանի ձին հեծած, Ար., սատանի ձի մի էլած, Լ., սատանի ձի նստած, Նսրբ. Թբ., Օիր., սատանի ձիուն հեծնած, Օիր. Զվխ., սատանի ձիուն նստած, Օիր., սատանի ձին միլած, վեր չեկող, Աշտ. Լ. Այշ. և այլն:

Հայերենի բարբառներում տարածված են դուրսը քահանա, ճերսը՝ սատանա, Ար. Նխ. Թբ. Լ. Բլխ. Վն. Չհր. Սյն. Տգր. Եվդ. ԿՄ Տրպ., տանը քահանա, դուրսը սատանա, Ար. Թբ. Ղրբ. Այշ. Վն. Պլ. արտահայտությունները որպես շողոքորթ, խարդախ ածականներից հոմանիշ: Նշված արտահայտությունների փոփոխակներ կարելի է համարել նկարագրական եղանակով դրսևորված հետևյալ հոմանիշները. դուրսը սուրբ, տունը սատանա, Օիր. Աշտ., դուս գա դուրը քահանա, ճերս գա՝ տանը սատանա, Վդպ., երսանան քահանա, տակնահան սատանա, Աշտ. Ղրբ., ճերսը սուրբ, դուրսը սատանա, Օիր., տանը քահանա, դուրսը սատանա, Թբ. Ղրբ. Այշ. Վն. Պլ. և այլն: Այս կազմություններում սուրբը, քահանան դիտարկված են որպես մարդկային դրական հատկանիշների խտացում, որին հակադրված են սատանայի բացասական հատկանիշները: Այդ է պատճառը, որ կեղծ, երկերեսանի, շողոքորթ մարդիկ արտաքուստ համեմատվում են սրբի և քահանայի, իսկ ճերսուստ՝ սատանայի հետ: Ինչպես ցույց են տալիս թվարկված բարբառների մշումները, դրանք բնորոշ են և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներին և կրում են համահայերենյան բնույթ: Հավաքչական աշխատանքի ընթացքում մման ընդարձակ տարածք ընդգրկող մեկ այլ արտահայտության չհանդիպեցինք:

Սատանան բանվոր բռնած, Սբ., սատանի ճուտ, Ար., սատանի ձագ- Ար., սատանի ոտ, Ար., սատանի պիպել, Վն., սատանի սրուց, Թբ., սատանի վիլակ (Պպ.) և այլն արտահայտությունները հոմանիշ են աշխույժ, ժիր արմատական ածականներին, ունեն հիմաստային որոշակի սահմանափակում, որոնցով բնորոշվում են երեխաները: Խոտոր, չար, ամբարիշտ ածականներին հոմանիշ են սատանան կողերը մտած, Սբ., սատանի ճախարակ (երեխաների մասին), սատանեն մեշը մդուկ, Այշ., սատանի կմիկ, Թբ. (կնոջ մասին): Եթե նշվածները հանդես են գալիս իմաստային որոշակի սահմանափակումով, ապա հետևյալները ցուցաբերում են բազմիմաստություն, այսպես՝ սատանից սատանա, Մշ., սատանեքու սատանա, Թբ., միաժամանակ՝ «ճարպիկ», «ստահակ» և «խորամանկ»: Քիչ չեմ նաև «արիկա», «խարդախ» արմատական ածականների հոմանիշները, ինչպես՝ սատանի կծիկ, Մշ., սատանի պոչ, սատանին նալնող, սատանին թարս նալնող, Թբ., էղեվանց նալնած սատանա, Թբ., ներսեն սատանա, դրսեն սուրբ, նես սատանա, դուս՝ քահանա, սատանի ծնունդ, սատանային թարս նալող, Թբ., սատանից յոթ օր առաջ ծնված, սատանախար, Ար. Ծիր. Մշ. Մկս., սատանխապի, Սս., սատանըխապի, Ուրմ., սատանայություն անող, Ար., սատանություն բանեցնող, սատանին չարոխ հագցնող, կատվին՝ վարտիք, Այսց. և այլն: Դրանց մի մասը ևս հանդես է բերում բազմիմաստություն՝ հոմանիշ դառնալով նաև «ճարպիկ», «ըմբոստ» արմատական ածականներին, օրինակ՝ սատանի ճուտ Ար., սատանի տակից քաջած, Ար., սատանի սրուց, Թբ., (նաև՝ 1. չարածնի, 2. ճարպիկ), սատանի վիլակ Պպ. (նաև՝ 1. չարածնի, 2. ճարպիկ), սատանի սերունդ, Ար. (հատկացուցիչ-հատկացյալի այս բառակապակցությունը չնայած արտահայտված է սերունդ ըստով, սակայն ի մկատի ունի կոնկրետ, որոշակի մարդու) և այլն:

Այսպիսով՝ հայերենի բարբառները հարուստ են կրոնական հավատալիքների հետ առնչվող ածականական հոմանիշներով, որոնք հարստացնում են արդի ժողովրդախոսակցական լեզուն և հաճախ մկարագրական պատկերավոր եղանակներով արտահայտում մարդկային դրական և բացասական հատկանիշներ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այշ. - Ալաշկերտ

Այք. - Ալեքսանդրապոլ

Այսց. - Ախալցխա

Ախք. - Ախալքալաք

Աշտ. - Աշտարակ

Ապ. - Ապարան

Աստ. - Աստապատ (Նախիջևան)

Ար. - Արարատյան

Բլ. - Բալու

Բլխ. - Բուլանովս

Դվ. - Դավրեժ

Եվդ. - Եվդոկիա

Եր. - Երևան

Երգ. - Երզնկա

Թբ. - Թբիլիսի

Լ. - Լոռի

Խրք. - Խարքերդ	Պլ. - Պոլիս
Խտջ. - Խոտրջուր	Պպ. - Պապեն
Խիզ. - Խիզան	Ջվխ. - Ջավախք
Կլլպ. - Կուլլապ (Սուրմալու)	Աբ. - Աբքաստիա
ԿՄ - Կեյվե-Միջագյուղ (Բութանիա)	Աս. - Սասուն
Կմ. - Կյուրիմ	Ալմ. - Սալմաստ
Ղլթ. - Ղուլթիկ (Բաղեշ)	Վղպ. - Վաղարշապատ
Ղզ. - Ղազաք	Վմ. - Վան
Ղրբ. - Ղարաբաղ	Տ. - Տարենտե
Մկս. - Մոկս	Տրպ. - Տրապիզոն
Մշ. - Մուշ	Ուրմ. - Ուրմիա
ՆԲ. - Նոր Բայազետ	Ք. - Քդի
ՆՆ. - Նոր Նախիջևան	Օշկ. - Օշական
Նխ. - Նախիջևան	
Օիր. - Օիրակ	
Շճ. - Շապին-Գարահիսար (Նիկոպոլիս)	
Շմխ. - Շամախի	
Չճր. - Չառարմահալ	

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԵՎ
ՀԱՅՈՑ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԶԱՏԱԳՈՎ

Գրիգոր Մագիստրոս Պառլամենիոս (Բջնեցի) բազմակողմանի գիտնական էր: Հիմնավորապես կրթված լինելով Անիի ուսումնագիտական կենտրոնում, ապա Կոստանդնուպոլսի բարձրագույն դպրոցներում, նա իմաստասիրական և տեսական մյուս բնագավառներում ամբարած խորը գիտելիքներից զուգահեռ հմտացավ նաև Հայոց եկեղեցու դավանաբանության ասպարեզում: Նրա հեղինակած գրեթե բոլոր գործերն արգասիք են խորահմուտ հավատարմի և հայրենասեր գործչի իմաստահեղ մտորումների: Հիմնականում դրանով էր պայմանավորված Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի և ուրիշ հայ հոգևորականների հետ նրա դրսևորած հոգեկցությունը, որն արտացոլք է գտել նրա թղթերում: Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին հղած նամակներից երևում է, որ Գրիգոր Բջնեցից զնահատել է նրա բարձր պատրաստվածությունը: Հայոց Կաթողիկոսն իր հերթին հիացել է Գրիգոր Մագիստրոսի իմաստասիրությամբ, որին նա գրել է՝ «Ջանսպառն հեղուս գիտութիւն և շնորհ»¹:

Գրիգոր Մագիստրոսը համոզված էր, որ «Գիտության լույսն ընկալում են հավատով»²: Նա մարդկանց մեջ զնահատում է երկու կարևոր հատկանիշ՝ հավատն ու իմաստությունը, գտնում է, որ «ի կենցաղումս յայս դուզնաքեայ երկիցս այս պատուելի է նախ հաւատ, երկրորդ, իմաստութիւն և հաճնար»³: Ի զուգակշիռ Գրիգոր Նարեկացու, Մագիստրոսը համոզված է, որ մարդու ամենամիկրակն ձգտումը պետք է լինի Աստծուն մերձեցալը, քրիստոնեական հավատի մեջ ունեցած ջերմեռանդությունը: Նա կողմնակից է բանական և գիտության հետ աղերսակցվող, նրանով հարստացող ու լիակշիռ թովանդակությամբ օժտված հավատքին:

Մագիստրոսը մեծ հեղինակություն էր վայելում բարձրաստիճան հայ հոգևորականության շրջանում: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, Հայոց ՆՁԵ (485/1036) թվականին արեգակի խավարմամբ ահաբեկված Հովհաննես-Սմբատ թագավորը և Պետրոս Կաթողիկոսն այդ երևույթի պարզաբանման համար ճշմանավոր վարդապետ և աստվածաբան Հովհաննես Կոզեռնի մոտ են ուղարկում պատվիրակություն՝ բաղկացած հոգևոր հայրերից ու աշխարհական տերերից՝ Գրիգոր Մագիստրոսի գլխավորությամբ⁴, ինչը վկայում է արքունիքում և հոգևոր վերնախավում նրա ունեցած բարձր համարումի մասին:

¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լույս ընծ. Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 3:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 201:

⁴ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 67:

Գիտության և բանականության լույսով հավատն իմաստավորելու համար Գրիգոր Մագիստրոսն անցնի գիտում Գրիգոր Հոմեցի Պահլավունուն առաքելք վաճառողի թագավոր Դագիկ Արասյանի մոտ՝ նրան հորդորելով հիմնել թագավորական ճեմարան, ընդ որում ճեմելով, որ գոյություն ունի Աստծուն մերձեցնալու միայն մեկ ուղի, այն է՝ երբ հավատացյալն իրեն լուսավորում է գիտությամբ։ «Մերձեցնալ առ Աստուած,- գրում է Մագիստրոսը,- բարի է յոյժ։ Եւ ոչ այլ ինչ է հմար մերձեցնալ, եթէ ոչ գիտութեամբ լուսաւորել զանձն»⁵։ Գագիկ արքային հղած թղթում Մագիստրոսը Գրիգոր Հոմեցուն բնութագրում է իրեն խորագիտակ «աստուածեղէն դասանութեան մերոյ բախտի»⁶։

Միաժամանակ դիտելի է, որ Մագիստրոսը հավատը և նրա իմաստասիրությունը՝ աստվածաբանությունը, շաղկապում է բնական գիտությունների հետ։ Նա հմուտ էր ոչ միայն իմաստասիրության, քերականության, դիցաբանության, քրիստոնեաբանության, այլև բնագիտության, բժշկագիտության և մաթեմատիկայի բնագավառներում⁷։ Մոկբի և Մաճազկերտի եպիսկոպոս Գրիգորին հղած թղթում Մագիստրոսը տիեզերքը բաժանում է մեծ և փոքր աշխարհների, մեծը՝ «աշխարհ աստուածային էութիւնն իմացի... իսկ փոքր՝ մարդկայինս սեռ», և հորդորում է՝ «որքան կարողութիւն է զաթղարել զաշխարհ և օգնական լինել իբրև զծառայ Յիւս և հպատակ Ստեղծչին զսա»⁸։

Նա գիտությունը բաժանում է երեք գլխավոր ճյուղերի՝ բնագիտություն, մաթեմատիկա և աստվածաբանություն՝ դրանք հարակցելով միմյանց հետ։ Հույն դպիր Կիրակոսին ուղղած թղթում նա գրում է՝ «որք ի բնաբանականն յաստուածաբանականն ամբառնան, ըստ այնոսիկ հաւանիմք զոյ»։ Բնագիտությունից աստվածաբանություն բարձրացողներից համարում է խավարից դեպի լույսն ու արեգակը ձգտողներ⁹։ Իմաստասերները,- գրում է նա, նյութականից բարձրանում են աննյութականը՝ «այսինքն ի բնաբանականն յաստուածաբանականն»¹⁰։ Մագիստրոսը համոզված է, որ Հայոց Եկեղեցին կարող է անսասան մնալ «քաջողջական հոգևովն մաքրափայլ տեսութեամբ», քանի որ «քաջաց և առաքինեաց են յարմարագոյն հովուաց»¹¹։

Նա Տիրոջ պատվիրանները և գիտությունը համարում է «աչքերի լույս», որից զրկվում են դրան անգիտացողները։ Ի հաստատումն դրա, Մագիստրոսը վկայաբերում է Սողոմոն իմաստունից, որը «գիմաստութիւն խնդրէ յԱստուծոյ», իսկ Դավիթը՝ «զպատուիրանս Աստուծոյ և զգիտութիւն լոյս աչաց հաւանեցաւ զոյ»¹²։

Գրիգոր Մագիստրոսը հելլենական գիտության քատագովն էր¹³, ձգտում էր այն սերմանել նաև հայ մտաշխարհում։ Հունական գիտությունը համարում է այս աշխարհում

⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 97։

⁶ Նույն տեղում։

⁷ V. Langlois, *Mémoire sur la vie et les e'crits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur arménien du XI^e siècle* ("Journal Asiatique", t. XIII, Paris, 1869, p. 3).

⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 85։

⁹ Նույն տեղում, էջ 114։

¹⁰ Նույն տեղում։

¹¹ Նույն տեղում, էջ 146։

¹² Նույն տեղում, էջ 173։

¹³ Տե՛ս Մ. Արենյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 34-35, 37։

վեճագույնն ու ազնվագույնը¹⁴։ Բայց մա իր աշակերտներին խորհուրդ էր տալիս հույճ իմաստասերների և գիտության մյուս մշակների գործերն ուսումնասիրելուց առաջ տիրա-
պետել «նեղկոտ վերծանության» զՀին և զՆոր Կտակարան» և դիցաբանությանը¹⁵։ Իր-
րահիմ անուճով արաբ (մոր կողմից՝ հայ) գիտունին հղած թղթում Մագիստրոսը գրում է.
որ «թէն ոչ եմք անտեղեակ աթենացոցն ստորոգութեանց և հելլենական հանճարոյ, աս-
կայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն, վասն զի հոգեղեցք եմք և ոչ մարմին, և ոչ
անմարմին»։ Բայց հարում է մա.՝ հոգին ծածկում է մարմնին՝ «երկրորդ ծննդեամբն մեր. որ
ի հոգւոյն ծնեալք եղեալք»։ Դրա շնորհիվ, շարունակում է գիտնականը, մեր հավատքը
հմարավորություն է ընձեռում վերաբառու լինել և հավատալ աներևոյթին, այդ կերպ ըմ-
բռնել մարդկային իմացականությանն անհասանելի, անմեկնելի երևոյթները¹⁶։

Նույն ամիրային ուղղած մեկ այլ մասնակում Մագիստրոսը մեկ անգամ ևս հավաստում
է, որ այս կյանքում «պատուելի է մախ հաւատ, երկրորդ իմաստութիւն և հանճար։ Եւ եճ
սոքա մակաւասար ամենայն պարառութեան և պայծառութեան», ավելին՝ դրանք պարու-
նակում են ամենայն բարիքներ և ապագայի առհավատչյան են¹⁷։ Այդպիսով հավատն ու
իմաստությունն ընդգրկում են ամեն ինչ և մախապատրաստում գալիքը։ Այստեղից հե-
տևում է, որ առանց հավատի և իմաստության չի կարող լինել քովանդակալից ու պայծառ
ապագա։ Այս դէպքում ևս գիտնականը առաջնություն է վերապահում հավատին։

Գրիգոր Մագիստրոսը հավատքի աղբյուր է համարում Ս. Գիրքն իբրև արդարախոյզ
ու ճշմարիտ ուսմունք և աշխարհընկալում պարզևոր առաջին ու զխափոր մատյան։ «Եւ ո՞
արդեօք ծեր կամ հնազոյն քան զԳիրս Սուրբս և Աստուածաշունչս. վասն զի յայնժամ ոչ
գոյր զիրս, այլ միայն հարցն և ծերոցն պարտ էր հաւանել զրուցատրութեան»¹⁸, գրում է
մա Պետրոս Կաթողիկոսին ուղղված թղթերից մեկում։ Ըստ Մագիստրոսի, աստվածային
պատվիրանները «լոյս են և լոյս տան աչաց, և յայնմանէ երկիւղ սուրբ, որ մնայ
յաւիտեան»¹⁹, ուստի Սուրբ Գիրքը հավերժագո ու հարամնա արժեք է դառնում։ Ընդ որում
Մագիստրոսը գտնում է մաև, որ հելլենացի գիտունների իմացախոհական գործերում
նույնպէս առկա է «կաթիլ իմն աստուածային»²⁰։ Հետևությունը պարզ է՝ բացի Աստվածա-
շնչից, կարևորում է մաև ամտիկ գիտության ուսումնասիրությունը, ինչը աշխարհականա-
ցող, մտավոր վերազարթոնք ապրող ժամանակի պահանջն էր։

Գրիգոր Մագիստրոսն աշխարհական լինելով հանդերձ, խորացել է մաև աստվածա-
բանության մեջ։ Նա Ս. Գրքից կատարում է բազմաթիվ ու անթերի հղումներ, քաջագի-
տակ էր Եկեղեցու հայրերի գործերին։

Մագիստրոսն իրեն դրսևորում է ոչ միայն իբրև խորատես հավատաբան և ջերմեռանդ
եկեղեցաբան, այլև գտնում է, որ առանց քառյակ գիտությունները, բնագիտությունն

¹⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 106։

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 105։

¹⁶ Նույն տեղում, էջ 174։

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 201-202։

¹⁸ Նույն տեղում, էջ 27։

¹⁹ Նույն տեղում, էջ 4։

²⁰ Նույն տեղում, էջ 5։

ուսումնասիրելու, հնարավոր չէ աստվածաբանություն ուսուցանել: «Որք,- կարդում ենք Պետրոս Կաթողիկոսին նրա հղած մի թղթում,- ոչ մախուստ կրթեալք եմ, թուրոտվին ոչ զոյ հնար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս, քանզի պարտ է մախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և ամտուստ աստուածաբանականն»²¹:

Մագիստրոսի կարծիքով, իմաստասիրելու ունակությունը «ձիր պարզևի ի հոգւոյն է. բայց և զկնի քառիցն ուսումնականաց տիրապէս կատարեալ անցանել... ի մակացութեանն մակացութիւն. քանզի և սա ոչ այլ ինչ ունի տեսութեամբ ղիտաւորութիւն, եթէ ոչ ի նմանութիւն Աստուծոյ»²²: Այդպիսով, «Գիտությունների գիտություն» («մակացութեանն մակացութիւն»), իմա՝ աստվածաբանության (որի նպատակն Աստծուն մեամբելն է) ուսումնասիրելուց առաջ պետք է խորանալ քառյակ գիտությունների մեջ:

Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» պոեմը Ս. Գրքի չափածոյացված համառոտ շարադրանքն է: 1045 թ. Բագրատունի վերջին թագավորը նեոգաղղոս կնրպով հրավիրվեց Կ. Պոլիս: Նրա ետևից այնտեղ մեկնեց նաև Գրիգոր Մագիստրոսը՝ հավանաբար հայոց թագավորին պաշտպանելու նպատակով²³: Կայսրության մայրաքաղաքում նա հանդիպեց մահմեդական հավատաբան Մանուչեին, որն իր իմաստությամբ հռչակված էր արաբական աշխարհում, նաև պատվի էր արժանացել Կոստանդին կայսեր կողմից: Այս գիտունի հետ Մագիստրոսը զրույցի է բռնվում հավատի շուրջ: Մանուչեն Ղուրանը գերիվեր է համարում Աստվածաշնչից, քանի որ, ըստ նրա, մահմեդականների այդ սրբազան գիրքը շարադրված է չափածո ձևով, որին ի պատասխան, Մագիստրոսն ասում է, որ չափածոյով հորինելը ոչ թե ի վերուստ է սահմանված, այլ ձեռք է բերվում աշխատությամբ:

Վեճը հանգուցալուծվում է, երբ Մագիստրոսը հայտարարում է, թե այն, ինչ Մուհամմեդը գրել է 40 տարում, ինքը գրելու է 4 օրում՝ սկսելով աշխարհի արարչագործությունից և հասցնելով մինչև Բրիստոս: Մանուչեն խոստանում է քրիստոնյա դառնալ, եթե Մագիստրոսն իրոք շարադրի իր խոստացածը²⁴: Հեղինակն այս պոեմում գրում է նաև Հայոց եկեղեցու հայրերի մասին՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև Մաշտոցն ու թարգմանիչները: Պոեմն սկսվում է այսպես.

Մ'են եմ գործք աստուածային, սքանչելի մորա բանին.

Հրաշալի անպատմելիմ, յամենայնի զարմանալիմ...

Ստեղծող զոյից թուրո՝ որք ի ծածուկ և որք երևիմ...

Անսկիզբն, անծամանակ և արարող յափտեցիմ²⁵:

²¹ Նույն տեղում, էջ 8:

²² Նույն տեղում, էջ 226:

²³ Տե՛ս Լ. Խաչերեան, Գրիգոր Պաթարաբուհի Մագիստրոս (985-1058), Լոս Անճելոս, 1987, էջ 134-135:

²⁴ Տե՛ս Տաղասացությունը Գրիգորի Մագիստրոսի Պաթարաբուհի, Վեճեցիկ, 1868, էջ Ա-Գ:

²⁵ Նույն տեղում, էջ 1-2:

Գրիգոր Լուսավորչի մասին գրում է.

Ջարբոյն մեր Գրիգորի և զՀայոց Լուսաւորչին.
Քաղաքաւըն Պաճլատին և ըստ ազգին Արշակունին.
Ջմաքուր Բայրապետին և սքանչելի մարտիրոսին...
Մարգարէ զսա տեսողին և ուսուցիչ մերոյ ազգին²⁶:

Այնուհետև տրված են Տրդատ Մեծի հետ Գրիգորի Հոռմ մեկնելը, ապա Կեսարիայում ձեռնադրվելը, այնտեղից Ս. Կարապետի և Աթանազիոսի մատուցեցրը Հայաստան բերելը և Աշտիշատում ամփոփելը. Հոփսիսմյանց մահատակությունը և այլն: Հիշվում են նաև Գրիգոր Լուսավորչի որդիները՝ Օշելով ճակ՝ «Արդ զիս լայս տոհմէ գիտեմ ազգաւ մահա Գրիգոր Լուսավորչի որդիները՝ Օշելով ճակ՝ «Արդ զիս լայս տոհմէ գիտեմ ազգաւ Պաղթա իմ Բայրեցին»²⁷: Գրիգոր Լուսավորչից սերած լինելու զաղապարը նույնպես հիմք կարող էր դառնալ Մագիստրոսի եկեղեցամպաստ ուղեգծի և հոգևոր հայրերի հետ նրա ունեցած հոգեկցության համար:

Պոեմում զգացվում է նաև Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Նրա հետևողությամբ Մագիստրոսն առաջադրում է թուր ազգերի, ցեղերի ու ամհատների փրկության զաղապարը²⁸: Վերջին դատաստանը պատկերելիս նա դողում ու սարսափում է Նարեկացու պես²⁹:

«Հազարտողյանը» համարվում է հայոց տաղասացության մեջ նորարարություն, և անդրամիկ հանգավոր երկասիրությունը³⁰: Այս պոեմին է հարում Մագիստրոսի «Ներքողեան ի սուրբ Խաչն Բրիստոսընկալ» գործը, որտեղ գովերգում է Ս. Խաչը.

Նախնոյն մեր առաջին նորոգութեան կմիքը կանգնեալ...

Գործիդ մահու կենաց՝ ի յարութիւն մեզ ներգործեալ:

Բըղխումն անապական՝ աղբիւր կենաց ի քեզ հոսեալ³¹:

Ս. Խաչը ոչ միայն արիություն, իմաստություն է պարզևում, այլև «սգաւորաց մխիթարիչ» է, տրտմացողներին ուրախացնող, աշխարհի չորս ծագերից մոլորյալներին ժողովող, որը նաև թողություն է պարզևում մեղապարտ հոգիներին³²: Այստեղ նույնպես զգացվում է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Վերջինս համոզված էր, որ խաչի մշանով խափանվում են թշնամական հարձակումները, պրկվում են չար ոգիները և այլն³³: Նարե-

²⁶ Նույն տեղում, էջ 70-71:

²⁷ Նույն տեղում, էջ 73:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 76:

²⁹ Տե՛ս Մ. Արեղյան, Երկեր, Գ, էջ 47:

³⁰ Տե՛ս Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 2001, էջ 106:

³¹ Գրիգոր Մագիստրոս, Տաղասացութիւնք, էջ 85:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 84, 86-87, տե՛ս նաև Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 168-169:

³³ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենադարանական, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազիմյանի, Երևան, 1985, Բաճ ՂԱ, 15-26:

կացին տեղում է, որպեսզի խաչը պաշտպան լինի իր երդիկին, միշտ լինի իր աչքերի առջև, մույմիսկ դրոշմվի իր դոան ճակատին³⁴:

Գրիգոր Մագիստրոսը գրել է մահ «Առ սուրբ Կարապետն Յովհաննու» մեթոդյանը, որտեղ շեշտում է Հովհաննեսի հրեշտակային վարքը, Աստուծոց նրա արժանանալը Փրկչին մկրտելու շնորհին: Այս գրվածքը մամոնության եզրեր ունի Գրիգոր Նարեկացու «Քարոզ Գրիգոր Նարեկացույ ասացեալ ի սուրբ Յովհաննու Մկրտչին» գործի³⁵ հետ: Մագիստրոսը գրել է մահ մի շարական, ուր գովերգվում է Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցուն քանդակված Հիսուսի պատկերը: Նույն եկեղեցու որմին Գրիգոր Մագիստրոսի կողմից 1013 թ. թողած արձանագրության մեջ Հավուց թառը համարվում է «հանգստարան եւ արարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին»³⁶:

Հետագայում (1360-ական թթ.) Արարատյան երկրի Եպիսկոպոս Մանուել Բջնեցին (Եղվարդի Ագիթեկեցի իշխանական գերդաստանից) այդ սրբությունը մկրտված գանձի մեջ գրում է, որ «Քրիստոսի խաչելությունից հետո նրա պատկերը տեղափոխվում է Հոռմ: Գրիգոր Մագիստրոսն իր վաճառքով ողորկում է Հոռմ խնդրելու այդ սրբությունը: Վասիլ կայսրը և Գորգ իշխանը Մագիստրոսին են մկրտում այդ գանձը: Վերջինս «մեծաւ հանդիսիւ ընդ յառաջ շարժի» և ուսամբարձ բերում-գետեղում է «յովստի, յարկ իւր կայանի», ապա, որոշ ժամանակ անցնելուց հետո, այն տեղափոխում է իր հիմնած Հավուց թառի վանք»³⁷: Վասիլ կայսեր հիշատակումը վկայում է, որ հիշյալ սրբությունը Հայաստան է տեղափոխվել ավելի վաղ՝ հավանաբար, Վասիլ II կայսեր և վրաց Գեորգի թագավորի օրոք: Այնուհետև Մանուել Բջնեցին գրում է.

Իսկ Մագիստրոսին յորժամ եղ հարկին զտիպն աստուածային:

Արար խրախութիւն տաւնախմբութիւն զեալոց ար միասին:

Եւ ի դէմս դրոշմին եւ լեկեղեցին երգեաց գովութիւն

Զերզս շարականին, զորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին³⁸:

Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցու վերոնշյալ արձանագրության մեջ նշվում է, որ եկեղեցին «վերստին կառուցել է» Մագիստրոսը³⁹: Հետևաբար, վերջինս վերաշինել է նախկինում կառուցվածը՝ այնտեղ գետեղելով Փրկչի պատկերը՝ «գվէմն հաւատոյ», ինչի մասին նշվում է մահ Մագիստրոսի հորինած շարականում:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր եկեղեցու հայրերին, որոնք նրան էին դիմում իրենց հուզող գիտական, ուսումնական, մահ առօրեական կենսաժողով խնդիրները լուծելու

³⁴ Տե՛ս նույն տեղում, համ ՂԱ., 34, 36: Նշենք մահ, որ Նարեկացին ունի «Տաղ սուրբ խաչին» քանաստեղծությունը (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և վանքեր, աղբյ. Ա. Գյոշկերյանի, Երևան, 1981, էջ 129-130):

³⁵ Տե՛ս Գր. Նարեկացի, Տաղեր և վանքեր, էջ 141 և հտ.:

³⁶ Փ. Յովսէփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը եւ մոյմամոս լուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 2:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 88:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վեմետիկ, 1890, էջ 354:

Ռիասթափություն էր ապրում, իրեն համարում վաճառված ու տարագիր, «ի հարց շիրմաց արտակացեալ և ի դաստակերտաց և ի բազում աշխատութեանց ունայնացեալ»⁴⁴։ Աճ-շուշտ, Գրիգոր Նարեկացու հետևողությամբ է Մագիստրոսն ինքնապարսապ խոսքերով հիշում իր աշխարհական «ծովածուփ կենցաղավարության» և այլ մեղանշումների մասին՝ գոչելով. «Ո՛ր զիս փրկեսցէ յայսպիսի վտանգէ»։ Իր ծանրամեղ համարվող աշխարհական գայթակղությունների պատճառով նա իր մերձավորներ Գրիգոր քահանային և Ստեփան-նոս արքեպիսկոպոսին ուղղած նամակում խնդրում է. «Անկեալ առ ոոսս աղաչեցէ՛ք, խնդրելով և պաղատանօք, զի բացցի աչք իմ հոգւոյ և լուսաորեսցէ իւրով աստուածութեամբն և թողցէ զիմս յանցանս և ողորմեսցի ամենակալն Աստուած»⁴⁵։

Նման մտայնությամբ հոգևոր խոկումների գիրկն ընկած Մագիստրոսը բնական մղումով հարկ է, որ ընկներ խորհրդապաշտ մտորումների գիրկը՝ ջանալով բանական ճանապարհով կապվել Բարձրյալի հետ և արժանանալ Տիրոջ ամենալից շնորհներին։ Աճ-շուշտ, նման պայմաններում նրա խորհրդապաշտական մտազեղումներն առաջադեմ մտածողի հոգևոր տարերքն էին, նրա վերասլաց մղումների արգասիքը։

Մագիստրոսը ջատագով էր հոգևորականների համերաշխության։ Նա խնամի վանքի առաջնորդին գրում է. «Հրամայիմք անաչառու և հմազանդ և հլու աստուածային պատուիրանին լսել և ծառայել անարատութեամբ»⁴⁶։ Նույն վանքի միաբաններին հորդորում է լինել համերաշխ, «քանզի զի՞նչ բարի է կամ զի՞նչ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին»։ Նրանց առաջարկում է ժողով գումարել և ընտրել մոր առաջնորդ՝ վախճանվածի փոխարեն, «գոր կամի» Աստուած և դուք, և միաբանութեամբ գրեցէք առ իս, և փոյթ առ իս առաքեցէք»⁴⁷։

Գրիգոր Մագիստրոսը եկեղեցականներին հորդորում էր չհեռանալ լեռները, չմեկուսանալ ժողովրդից, հետևել Բրիստոսին և Տիրոջ պես շրջել ամենուր, քանզի «ոչ միայն ի լերին կարող եմք զԱստուած Բանն ի մեզ ընդունել, այլ և յամենայն տեղուք, վասն զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն մորա»⁴⁸։

Հայտնի է Մագիստրոսի բացասական դիրքորոշումը թոնդրակյան աղանդավորների նկատմամբ, որոնց նա հեռացած էր համարում Հայոց եկեղեցուց ու նրա դավանանքից։ Այդ աղանդավորները, գրում է Մագիստրոսը, խաղիլում են Հայոց եկեղեցու հիմքերը՝ հետևելով «խարդաւանող խաւարասէր խոպանողացն և ցանկապատառ հետևողաց մոցա»⁴⁹։ Մագիստրոսը դատապարտում է թոնդրակեցիներին, որոնք մեղադրում էին եկեղեցուն՝ նյութապաշտության (խաչի պաշտամունքի, քահանայի զգեստների, Պատարագի պարագաների և այլնի) մեջ, նաև նշում, որ նրանք մերժում են Ս. Գիրքը, եկեղեցու խոր-

⁴⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 139-140։

⁴⁵ Նույն տեղում, էջ 77։

⁴⁶ Նույն տեղում, էջ 99։

⁴⁷ Նույն տեղում, էջ 101։

⁴⁸ Նույն տեղում, էջ 91։

⁴⁹ Նույն տեղում, էջ 164։

Ռուրդնեբը, Ռոզնոր Եվիրապետությունը: Նրանց հասարակում է «արտաքին օրինացն քրիստոնեից»⁵⁰:

Ինչպես հավաստում է Մագիստրոսը, թոնդրակեցիները «զինքեանս անուանեն քրիստոնեա:», և շրջելով առանց եպիսկոպոսների ու քահանաների, ասում են՝ «մեք յԱրամեան գնդէն ենք և հաւատով համեմատ ցոցա»⁵¹: Անշուշտ, Մագիստրոսը համոզված էր, որ թոնդրակեցիները հավատորաց չլին, ուստի մա ըմբատուքեց սցն աղանդավորներին, որ վեբեր ցանկանում էին վերադառնալ Հայոց Եկեղեցու գիրկը և «խոստովանեցան զյամբաւս իւղեանց և զմոլորութիւնս իրեանց»: Մարդասիրական մղումներով մա Բջնիի Եփրեմ եպիսկոպոսի և ուրիշ Ռոզնոր հայրերի միջոցով մկրտել տվեց թոնդրակեցիներին՝ «աւելի քան զհազարս»⁵²:

Մագիստրոսը Ռոզնու էր մա Եկեղեցու արծաճավոր սպասավորներ պատրաստելու գործին: Իր աշակերտներ Բարսեղին ու Եղիշին մա ուղարկեց Պետրոս Կաթողիկոսի մոտ՝ կրօնավորելու և ծառայելու «Հիսուսի կենսաբեր Սուրբ Նշանին»՝ վստահելով, որ մրանջ «զձայն օտարի ոչ լուիցեն» և չեն դավի իրենց կոչմանը⁵³: Հարկավ, հետագայում մրա այս աշակերտները ձեռնադրվեցին եպիսկոպոսներ: Ընդսմին Մագիստրոսը չէր զլանում մա սովորել Ռոզնոր հայրերից: Նա բարձր էր գնահատում Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին՝ մրան համարելով «իր լուսատուն», «աստվածապատիվ Ռոզնոր տեբը», «իր խոհերում վեհագույնը»⁵⁴, որակումներ, որոնց թույլ են տալիս կարծելու, որ Մագիստրոսը շատ բան է սովորել մրանից: Հովհաննեսի նկատմամբ Մագիստրոսի տածած հարգանքը հավանորեն բխում էր մա այդ Ռոզնորականի կողմից Սյունյաց Աթոռի և Հայոց Հայրապետական կենտրոնի միջև հարաբերությունների բարելավման փաստից: Սյունյաց պատմիչը մրան կոչում է «յոզներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսատրիչն և երկրորդ մորոգողն մուագեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Սիսական», որը զահակալեց «աւելի քան զ50 ամ»⁵⁵ (1006-1056):

Հովհաննեսից Մագիստրոսը մխիթարական թուղթ է ստացել՝ «յաղագս անեզրական և անտանել տարակուսանաց կործանման բոլոր Արամեան մահանգի»⁵⁶: Նրան հղած մամակում Մագիստրոսն իր հորեղբորը՝ Վահրամին գնահատում է իբրև «մոր մարտիրոս և հրաշալի վկա», որը «խոցվեց Բրիտտոսի խաչի թշմամիներից և մահատակվեց հանուն Մայր Եկեղեցու», իսկ Վահրամի ծնողները, հետևելով «իրենց մախնի»՝ Սահակ Պարթևին, «վանս մորագոյնս շինեալ բազումս, և զաւերեալս մորոգեալ...»⁵⁷: Այդպիսով մատենագիրը հորեղբոր և մրա ծնողների վաստակն արժեվորում է մա Եկեղեցու հանդեպ մրանց Եվիրվածությամբ:

⁵⁰ Նույն տեղում, էջ 154-155, 160, 168—169:

⁵¹ Նույն տեղում, էջ 159, 161:

⁵² Տե՛ս մույն տեղում, էջ 158:

⁵³ Տե՛ս մույն տեղում, էջ 18-20:

⁵⁴ Տե՛ս մույն տեղում, էջ 46:

⁵⁵ Տե՛ս Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն մահանգիմ Սիսական, Թիֆլիս, 1910, ԵԲ, էջ 295:

⁵⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 36:

⁵⁷ Նույն տեղում, էջ 42-43:

Գրիգոր Մագիստրոսը խորին հարգանք էր տածում նաև Անիի Սարգիս վարդապետի նկատմամբ, որին անվանում է «ամբողջ Ռոմտորական դասի մեջ «մտքերով վեհագույնը»⁵⁸, «աստվածային տեղեկիս»՝ Ռգոր «ի պուետիկոսականն մատենագրութեամբ»⁵⁹: Սարգսին հղած թղթերից մեկում խոսելով Միջագետքում, Վասպուրականում իր ջանքերով ձեռք բերած խաղաղության, թոնդրակեցիների աղանդի վնասակար միտումների մասին, Մագիստրոսը նշում է, որ թեև շատ է զբաղված, բայց կարոտ է այդ վարդապետի օժանդակությամբ և ցանկություն է հայտնում, որպեսզի հանդիպեն և «առ միմեանս սիրովմ Աստուծոյ ողջունեմք և առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպեմք իմաստասիրել»⁶⁰: Այս վարդապետին Մագիստրոսը դիտում է որպես քրիստոնեացված նոր պլատոնականության հետևորդ՝ «զնորագոյնմ իբրու չքնաղ և պայծառ պլատոնական»⁶¹: Հետևաբար, Մագիստրոսը Սարգսի մեջ զնահատել է նրա մտավոր տարերքը և իմացական արժանիքները: Մագիստրոսի թղթերից երևում է, որ երբ վերջինիս և Գագիկ II արքայի միջև հույժ սրվել էին հարաբերությունները (որի հետևանքով Մագիստրոսը մեկուսացել էր Բջճիում), արքան Սարգսին ուղարկեց նրա մոտ, որպեսզի հաշտեցնի իր հետ: Սարգսը ժամանեց Պառլավունյաց երկրորդ ուստան՝ Ամբերդ, և այնտեղից հաշտության ջուրջ թողլո՞ հղեց Մագիստրոսին, որը պատասխանեց նամակով՝ յի ցաւատանջ մտորումներով⁶²:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական խոհերը կիսում էր նաև Սևանա վանքի Սարգիս վարդապետի հետ: Երբ նա տեղեկացավ Բյուզանդիա տարագրված Գագիկ II-ի մոտ Սարգսի մեկնելու մասին, խնդրեց, որպեսզի վերջինս նախ այցելի իրեն, որպեսզի «ճեպեմք իմաստասիրել»,- գրում է նա⁶³: Մագիստրոսը թղթակցում էր նաև Տարոնի Ս. Կարապետ վանքի վանառոր՝ Սարգսի հետ: Նշելով Սարգսի «կատարյալ գիտության և իմաստության» մասին, նա գրում է, որ «Հոգւոյն այսոցիկ շարժին ի մեղ ներգործութիւնք. քանզի յորժամ կամիցի գողորմութիւն իւր առատացուցանել և հրաշագործել, յաւելու զհաւատսն զօրութեամբ և զհայցուածսն ըստ պատշաճին... այսպէս Ստեղծին միշտ հմարի զհոգւոց և մարմնոց մերոց փրկութիւն»⁶⁴: Ս. Կարապետի այս վանահայրն աշակերտել էր Մագիստրոսին, երբ վերջինս դասավանդում էր այդ հռչակավոր մեծաստանի ճեմարանում⁶⁵: Մագիստրոսը վանառորից խնդրում է միջոցներ գտնել ծաղիկ հիվանդությանը տառապող իր որդու՝ Բուծելու համար⁶⁶:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական մտորումները կիսում էր նաև Գրիգոր և Ստեփանոս անուններով արքեպիսկոպոսների, Մոկքի և Մամազկերտի եկեղեցական վիճակի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի, Պառլավունյաց հայրենական տիրույթների հոգևոր

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 54, 57:

⁵⁹ Նույն տեղում, էջ 57:

⁶⁰ Նույն տեղում, էջ 69:

⁶¹ Նույն տեղում, էջ 69:

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 64:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 68-69:

⁶⁴ Նույն տեղում, էջ 73:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:

հայրերի, զանազան կրոնավորների հետ, խորհուրդներ տալիս նրանց, ակնկալում նրանց հոգեկցությունը:

Մագիստրոսը մտերմիկ հարաբերությունների մեջ էր նաև Մարմաշենի վանքի առաջնորդ Սոսթենես եպիսկոպոսի հետ: Գիտնականը նրան համարում էր «ամենայն աստուածելի և պատգամացն տեսանող և յարդարող», որը խոսկահույզ ժամանակներում դարձավ «ճակատամարտիկ իմն, միամարտ և անճաճաց արիությանմ դիմակայեալ անտանելի և անժոծելի խազմարարաց ներքուստ և արտաքուստ»: Նա Սոսթենեսին ուղարկում է կնքամատանի՝ «պերճ և պանդոյն մակագրեալ»⁶⁷:

Հայոց եկեղեցու հիմքերն ամրապնդելու, նրա դավանանքը տեսական բարձր հիմքերի վրա դնելու համար Գրիգոր Մագիստրոսը հիմնեց և հովանավորեց Սանահնի, Կեչառույքի, Բջնիի, Հավուց թառի և Տարոնի Ս. Կարապետ վանքի ճեմարանները, որտեղ տրվում էին նաև աստվածաբանական, դավանաբանական խորը գիտելիքներ:

Մագիստրոսը մեծ ավանդ ունի և եկեղեցաշինության բնագավառում: Նա հայրենի տաճար Բջնիում կառուցել տվեց Ս. Աստվածածին հույաշուք եկեղեցին⁶⁸: Պահպանուցիների մյուս կենտրոն Կեչառույք ավանում (Ծաղկոցաձոր) 1051 թ. Մագիստրոսը կառուցեց Ս. Գրիգոր եկեղեցին⁶⁹ այն օժտելով «սպասուք, արծաթեղինօջ և ոսկեղինօջ զրովք եւ այլովք պիտոյիւք... զեօղս երկուս և այգի մի»⁷⁰: Նա յուրաջեն Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման առթիվ 1013 թ. թողած արձանագրության մեջ հավաստում է, որ «զանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբն, որ ի սմա», չի մոռացում նաև շենտել, որ դրել է «զվեմն հաւատոյ հիման Սուրբ եկեղեցոյ»⁷¹: Այս եկեղեցին XIII դ. նշանավոր ուսումնագիտական կենտրոն էր, ուր զբաղվում էին նաև աստվածաբանությամբ:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր նաև Սանահնի վանքին կից գործող վարդապետարանը, որտեղ նա ուներ իր ճեմարանը (կոչվել է «ճեմարան Մագիստրոսի») ⁷²:

Գրիգոր Մագիստրոսի շղջ գործունեությունը վկայում է, որ նա հավատացած էր, որ հայության հարատևման կայուն գրավականը եղել և մնում է Հայ Առաքելաշաքվի եկեղեցին:

⁶⁷ Տե՛ս մույն տեղում, էջ 102-104:

⁶⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, Այդարատ, էջ 271-272:

⁶⁹ Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 58-59:

⁷⁰ Ղ. Ալիշան, Այդարատ, էջ 260:

⁷¹ Ղ. Ալիշան, Այդարատ, էջ 354, Գ. Յովսեփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը, էջ 2:

⁷² Տե՛ս Լ. Խաչեղյան, Ոջվ. աշխ., էջ 273:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ» ՊՈԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՆՆՔԸ

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը հայոց միջնադարյան քնարերգության մեծարժեք ստեղծագործություններից է: Պոեմը մշտապես գտնվել է միջնադարագետների ուշադրության ոլորտում, բայց այն հիմնականում զնահատվել է պատմական հայեցակետից՝ բանաստեղծի կրոնամիստիկական հայացքների բացատմամբ և, ընդհակառակը, աշխարհիկ տրամադրությունների ընդգծմամբ: Անշուշտ, այդ միտումը ժամանակաշրջանի թելադրամբ էր. գրականագետը ևս իր ապրած ժամանակի հասարակական գիտակցության ըմբռնումների և պատկերացումների կրողն է:

Իբրև ճշմարիտ երկ՝ «Ողբ Եդեսիոն» ոչ միայն բավարարում էր ժամանակաշրջանի գրական և գեղագիտական պահանջներին, այլև ըստ ամենայնի արձագանքում էր հասարակական-քաղաքական, փիլիսոփայական և բարոյական խնդիրներին:

Տարակարծություններ չկան Ողբի պատմական նյութի և բովանդակության հարցում: Իր ուսումնասիրության մեջ Գր. Հակոբյանը գրում է. «Սյունեն ազատ է կրոնական բնությանից և ընդգրկում է պատմական իրադարձություններ՝ կապված Եդեսիայի առմամբ ու աղետի հետ»¹: Վ. Չալոյանի դիտարկմամբ՝ «Ողբ Եդեսիոյ» պոեմը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ իր ձևով ընդհանուր ոչինչ չունի կրոնական-եկեղեցական պոեզիայի հետ»²: Մ. Արեղյանը նույնպես ընդգծում է, որ «դրա նյութը ո՛չ կրոնական է և ո՛չ կրոնավորներից է վերաբերում, այլ աշխարհիկ է»³:

Իսկապես, Ողբի նյութը աշխարհիկ է, և ուսումնասիրողները, խորապես զնահատելով երկի գեղարվեստական արժանիքները, միանշանակ շեշտել են, որ քերթվածի գաղափարական հիմքը հայրենասիրությունն է, և այն ծրագրային ստեղծագործություն է: Գր. Հակոբյանը գրել է, որ «պոեմը դառնում է աշխարհիկ-քաղաքական մի քերթված, հայրենասիրական չափածո առաջին ողբերգությունը»⁴: Ըստ Պ. Խաչատրյանի՝ «Ողբն ստացել է պատմական ու հայրենասիրական լայն բովանդակություն, դարձել է ծրագրային բանաստեղծություն»⁵: Վ. Նալբանդյանի կարծիքով՝ «Ողբը հայության ազգային ճակատագրի վերաբերյալ քերթողի խոհերի բանաստեղծական ընդհանրացումն է, ծրագրային մի բանաստեղծություն, որտեղ իբրև փրկության միջոց առաջ է քաշվում ազգահավաքման, ազգի ցրված ուժերը միավորելու խնդիրը, բանաստեղծական խոսքի վիթխարի ուժով ներթողվում է ազատագրական կռիվի գաղափարը, շեշտվում հաղթանակի հավատն ու վճռակա-

¹ Գրիգոր Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 194:

² Վ. Վ. Չալոյան, Հայկական ոեմեսանս, Երևան, 1964, էջ 183:

³ Մամուկ Արեղյան, Երկեր, Քատ. Դ. Երևան, 1970, էջ 128:

⁴ Գրիգոր Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 198:

⁵ Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, աշխ. Մ. Մկրտչյանի, Երևան, 1973, էջ 14:

նությունը»⁶։ Սակայն բոլոր գնահատականներում ամենավում, երկրորդական պլան է մղվում Ողբի կրոնական ելակետը։ Միմյուր կրոնական միտվածքը չի նվազեցնում քերթվածի արժեքն ու նշանակությունը, ավելի՛մ՝ հնարավորություն է տալիս մորթի ներկայացնելու հոգևոր այն մթնոլորտը, որի մեջ ձևավորվել է Շնորհալու աշխարհայացքը։

Ա. Մաղոյանը Ողբը գրելու դրդապատճառ է համարում հայրենակիցներին մխիթարելը։ Իր նկատառումը նա հիմնավորում է Ողբից բերված օրինակներով⁷։ Իրավացի է գրականագետը, Շնորհալին քանիցս շեշտում է, որ Ողբը գրել է մխիթարելու և սփոփելու գրականագետը, Շնորհալին քանիցս շեշտում է, որ Ողբը գրել է մխիթարելու և սփոփելու համար։ Սակայն բանաստեղծն ունեցել է նաև այլ դրդապատճառ, քրիստոնեական շերմեռանդությունը գնալով թուլանում էր, գլուխ էր բարձրացնում երկբայության ոգին։ Դա չէր կարող չմտահոգել բարեպաշտ քրիստոնյային։ Եվ պոեմի ստեղծագործական մտահոգումը ծնվել է հոգևոր գաղափարների և աշխարհիկ տրամադրությունների փոխկապակցմամբ։

Միջագետքի հյուսիս-արևմուտքում գտնվող Եդեսիա քաղաքը Արևելքի քրիստոնեական աշխարհի նշանավոր կենտրոններից էր։ 1098 թվականին՝ խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ, հիմնվել էր Եդեսիայի կոմսությունը։ XII դարում քաղաքը կառավարում էր ֆրանկ մի կոմս՝ Մոսլին անունով։ 1144 թ. Հալեպի Ջանգի ամիրան հարձակվում է քաղաքի վրա։ Բնակիչները մեկ ամիս շարունակ հետ են մղում թշնամու զորհմերը։ Նրանք օգնություն են սպասում դրսից, սակայն օգնություն չստանալով՝ հավատում են Ջանգի ամիրայի նրդմանը՝ չկոտորել բնակիչներին, և դեկտեմբերի 23-ին քաղաքը հանձնվում է թշնամուն։ Ջանգին դրժում է երդումը, ավերի, կոդոպուտի և կոտորածի է մատնում քաղաքը, գերեվարում մարդկանց։

Գ. Զարպիանայանը գրում է, որ երբ Եդեսիայի ավերման լուրը հասնում է Կիլիկիա, շատերի կարեկցությունն է շարժվում, և Ասիրատը, փափագելով թշնամու անցթույան տխուր հիշատակը կենդանի պահել «ապագայից մտքին ու սրտին», խնդրում է Ներսեսին, որ «իրեն բանաստեղծական աշխոյժը բանեցնեն այս միթին վրայ։ Ամոր խնդրանացն արգասիքն է Եդեսիոյ Ողբը»⁸։

Իրոք, Ն. Շնորհալին Ողբը գրել է իր եղբորորդու՝ Ասիրատի խնդրանքով։ Այդ մասին նա տեղեկացնում է պոեմի հիշատակարանում։

... Զոր պահանջեաց տարփմամբ սիրոյ
եղբորորդին իմ ըստ մարմնոյ...⁹

Մ. Աբեղյանը ենթադրում է, որ պաշարման ժամանակ Ասիրատը եղել է Եդեսիայում և այնտեղից ազատվելով՝ գնացել է Ծովք և պատմել քաղաքի ավերման մասին¹⁰։ Ըստ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ այդ տեղեկությունը թյուրիմացության արդյունք է, և պատճառը

⁶ «Ներսես Օմորհայի», Հողվածների ժողովածու, էջ 21։

⁷ Տե՛ս Ա. Մաղոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Երևան, 1985, էջ 222։

⁸ Գ. Զարպիանայան, Պատմություն հայերեն դպրութեան, Վենետիկ, 1865, էջ 517։

⁹ Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, աշխատասիրությանը Մ. Մկրտչյանի, Եր., 1973, էջ 137։

¹⁰ Տե՛ս Մանուկ Արեղյան, Երկեր, հատ. Դ, էջ 129 (այնուհետև՝ «Ողբ Եդեսիոյ»)։

Ծնորհալու հիշատակարանի սխալ վերծանությունն է, որը տրված է Ողբի թիֆլիսյան հրատարակության առաջաբանում: Բացառելով Եդեսիայի գրավմանը Ապիրատի ականատես լինելու փաստը՝ հողվածագիրն իրավացիորեն ավելացնում է. «Ավելի հավանական է ենթադրել, որ Ապիրատը պարզապես ծանոթ է եղել Եդեսիայի առումը ողբալու գրական մի փորձի և բարի մախամձով մղված՝ խնդրել հորեղբորը, որ մա էլ մի բան հորիցի»¹¹:

XII դարի ասորական գրականության մեջ բանավեճ է ծագում երկրային աղետների գործում մախախմանության խաղացած դերի մասին: Հովհաննես Մերդիցի եպիսկոպոսն արտահայտում է այն տեսակետը, որ բոլոր աղետներն Աստծո կողմից չեն ուղարկվում: Երբ գրավվում է Եդեսիան, մա պնդում է, որ քաղաքը կործանվեց ո՛չ Աստծո կամքով: Նրան հակաճառում են շատերը, այդ թվում՝ Դիոնիսիոս Բար-Սալիբին՝ հանդես գալով ճառերով, աշխատություններով:

Լ. Տեր-Պետրոսյանը ներկայացնում է բանավեճի մանրամասներն ըստ Միքայել Ասորու¹²: Ն. Տեր-Ներսիսյանը վկայակոչում է Սեց-Մարտեմին, որը հաղորդում է, որ ասորի երկու եպիսկոպոսներ՝ Մար Դիոնիսիոս Բար-Սալիբի և Մար Բարսեղ, ըստ Ապուլ-Ֆարադի վկայության, ողբեր են գրել Եդեսիայի գրավման առթիվ, բայց դրանք կորել են¹³:

Հայ Եկեղեցին սերտ հարաբերությունների մեջ է եղել ասորական Եկեղեցու հետ: Երվանդ Տեր-Մինասյանցի ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ դավանաբանական հարցերի շուրջ վեճն ու կոփվել շարունակվում էին հոգևորականների միջև, և այդ վեճերին եռանդուն մասնակցություն է ունեցել Դիոնիսիոս Բար-Սալիբին, որը «երբեք առիթ չէ փախցրել հայերի սովորությունները պարսավելու և նրանց ամենածանր, անթույլատրելի խոսքերով մախատելու»¹⁴: Հակառակ այդ վիճաբանությունների՝ երկու Եկեղեցիների ներկայացուցիչներն էական հարցերում միաբան են եղել: Ծնորհալին ասորերենից թարգմանել է տվել տարբեր գործեր:

Ահհհար է, որ Ծնորհալին տեղյակ չլիներ վերը նշված բանավեճին: Լ. Տեր-Պետրոսյանը բացահայտում է Ծնորհալու Ողբի կապը ժամանակի ասորական գրականության հետ, նրանում բանավեճի արձագանքը:

Ծնորհալին Ողբում մի ամբողջ հատված է նվիրել այն խնդրին, թե արդոք միայն քրիստոնյանե՞րն էին մեղավոր, որ նրանք են պատժվում, կամ ինչո՞ւ պատժվողը հենց Եդեսիա քաղաքն է: Բերվող հատվածում Ծնորհալին հստակ է նշում, որ իր խոսքն ուղղված է նրանց, ովքեր իրավացի չեն համարում Աստծո դատաստանը.

¹¹ Տե՛ս «Ներսես Ծնորհալի». Հողվածների ժողովածու, էջ 204-205, ծանոթագրություն 13:

¹² Նույն տեղում, էջ 205-210:

¹³ Տե՛ս «Բազմավեպ», 1973, էջ 543:

¹⁴ Երվանդ Տեր-Մինասյանց, Հայոց Եկեղեցու հարաբերությունները ասորվոց Եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 264:

Այլ զի ոմանք ըմդդեմ բերին
և աստամօր հակառակին,
Ասեմ՝ զիա՞րդ իրաւացի
այս է վճիռ դատաստանին...¹⁵

Իր դատումի մեջ ավելի ամաչառ է մեծացուն գիտնական Մ. Արեղյանը՝ նշելով, որ Շնորհալին աղետը ընդունում է իբրև աստվածային պատիժ մեղքերի համար՝ այդ հարցում հետևելով հին մեկնաբաններից¹⁶։ Նա համամիտ է Հակոբյանին, որ հատվածն իր արվեստով չի հյուսվում երկի կառուցվածքին, և եմթադրում է, որ Շնորհալին այն հետո է ավելացրել, որովհետև այնտեղ ոչ թե բանաստեղծն է խոսում, այլ մեկնաբանը¹⁷։

Այդ հատվածը, սակայն, Ողբի ստաֆղագման տրամաբանական ընթացքի մի օղակն է։ Երկի մյուս էջերում ևս շեշտվում է, որ Աստծու պատվիրանները մոռանալու պատճառով է պատժվում քաղաքը։

Արդ, մայն՝ ասեմ զայն, որ կրեցի
ի ձեռանէ Տեառն զքարի,
Ապա՝ զչարիսն, որ պատահեաց
իճձ ըստ մեղաց հանկարծակի¹⁸։

Վերը հիշված հատվածում Շնորհալին արձագանքում է Մերդինցու կողմից առաջ քաշված բանավեճին։ Երբ Զանգին գրավում է Եդեսիան, շատերն են դժգոհում, թե Աստված ինչու է թողնում, որ ամօրեմները կոտորեն քրիստոնյաներին, իսկ Մերդինցին գրում է, որ եթե ֆրանկների զորքը քաղաքում լիներ, Եդեսիան չէր ընկնի թուրքերի ձեռքը, ուրեմն հրամանը Տիրոջից չէ։ Մերդինցին Սուրբ Գրքից մեջբերումներով և բնական օրինակներով փորձում է ապացուցել իր տեսակետը։ Շնորհալին հակաճառում է Մերդինցուն և թուրք երկբալողներին՝ պնդելով, որ Զանգին ինքնին ոչնչություն է, երկնային թագավորն է տնօրինում կյանքը, նա պատժում է ոչ թե մեծ իշխանի և սիրելի բարեկամի ձեռքով, այլ «հրամայե անարժան մարդոյ վերջին և դառնագոյն դիմաց դահճին»¹⁹։

Աստված Զանգիին պատժի միջոց է դարձրել ճիշտ այնպես, ինչպես պատժում է սաստիկ կարկուտ կամ եղյամ բերելով, անչափ անձրևների կամ խիստ չոր երաշտի, մորեխի բազմամալու կամ էլ արտերի մեջ զազրագույն մկների բազմամալու միջոցով։

Այն, որ հատվածն իր «ստոնություն» ու երկայնությամբ վնասում է երկի վայելչահյուս գեղեցկությանը²⁰, կարելի է բացատրել նրանով, որ Շնորհալին կարևորել է հատվածի գաղափարական նպատակադրումը. հետևելով Մերդինցուն՝ բազմաթիվ օրինակներ է

¹⁵ «Ողբ Եդեսիոյ», էջ 102։

¹⁶ Մամուկ Արեղյան, Երկեր, հատոր Դ, էջ 139։

¹⁷ Նույն տեղում, էջ 140։

¹⁸ «Ողբ Եդեսիոյ», էջ 45, տե՛ս նաև էջ 53, 66։

¹⁹ Նույն տեղում, էջ 104։

²⁰ Տե՛ս Մամուկ Արեղյան, Երկեր, Դ, էջ 140։

բերում Աստվածաշնչից և առօրյա կյանքից՝ ապացուցելու համար, որ Աստված է տնօրինում ամեն ինչ:

Ծնորհալի՜՜ Հակոբ Օշականի դիպուկ բնորոշմամբ՝ «յորովայնէ ընտրեալ եկեղեցականը»²¹, որ կրթվել ու դաստիարակվել է քրիստոնեական ոգով, չէր կարող կասկածի տակ առնել Աստծո իրավացիությունը: Իզուր չէ, որ Ծնորհալու վարքագիծը գրում է, որ «... եղբայրը զոհաճում էր Տիրոջից, որ այդպիսի մեծ փարթամության տեր և հավատի այնքան մեծ սյուն տեսավ հաստատված սուրբ եկեղեցում՝ իր ծնողների որովայնից»²²:

«Ողբ Եղեսիոյ» պոեմը գրելու մտահղացումը բխում էր աստվածաշնչյան դրույթների ճշմարտացիությունն ամրակայելու միտումից, իհարկե, միահյուսված այն մեծ ցավին ու կարեկցանքին, որ ապրում էր Ծնորհալին քրիստոնեական աշխարհին հասած ծանր աղետի, մարդկային զոհերի համար:

Երկի ճախերգանքն սկսվում է Եղեսիայի կոչով՝ ուղղված երկնային առաքաաստի հարսներին՝ եկեղեցիներին, աշխարհի ազգերին ու ցեղերին, Քրիստոսի հավատացյալներին ու նրա խաչին երկրպագողներին, որ զան ու ողբան իր հետ: Նախ և առաջ իր կամչը նա ուղղում է նրանց, որ աստվածային բխումն են Աղենի աղբյուրների.

Որ էք բղխումն աստուածային
ի յաղբերէմ Աղենայի²³:

Այդպես են բնորոշվում Ծնորհալու կողմից Երուսաղեմը, Հոռմը, Կոստանդնուպոլիսը, Ալեքսանդրիան, Ամսիոքը, որովհետև նրանք եկեղեցական մկրտապետության կարևոր կենտրոններ էին.

Յորս առ ի ձէնջ քառավտակ
յորդահոսան գետք հոյովին՝
Արբուցանել զտիեզերս
աւետաբեր բղխմամբ բանի²⁴:

Նախերգանքի այս հատվածին Մ. Արեղյանն անդրադարձել է մեկ-երկու տողով. «Եղեսիան... դիմում է քրիստոնեական ճշմանվոր կենտրոններին՝ բանաստեղծորեն բնորոշելով նրանց կատարած դերերը»²⁵:

Ըստ էության սա միայն բանաստեղծական բնորոշում չէ: Գործածելով Ավետարանից քաղված մակդիրներ ու բացատրություններ, Ծնորհալին փաստորեն արտահայտում է վարդապետական մտքեր: Եղեսիան ճախ դիմում է Երուսաղեմին. նա երկնավոր թագավորի մեծ քաղաք է, որովհետև այնտեղից են բխել Օրենքը և Մարգարեները, այնտեղից է

²¹ Տե՛ս Հակոբ Օշական. Երկեր, Եր., 1979, էջ 399:

²² «Հայկական վարքեր և վկայաբանություններ V-XV դդ.», Եր., 1998, էջ 80:

²³ «Ողբ Եղեսիոյ», էջ 22:

²⁴ Նույն տեղում, էջ 22:

²⁵ Մամուկ Արեղյան, Երկեր, Դ, էջ 129:

ծագել ամճառելի լույսը: Այնովնուհե Եղեալուն դիմում է Հոռմին, որտեղ հաստատված է Պետրոս առաքյալի Աթոռը:

Եկեղեցիդ անշարժելի.

ի Կեփայեան շինեալ վիմի,

Դրանց դժոխոց անյաղթելի

և Կնիք երկնիցն քացողի...²⁶

Ընդդիմալին ակնարկում է Պետրոս առաքյալին: Պետրոս հունարեն նշանակում է՝ քար, վեմ: Եկեղեցական գրականության մեջ Պետրոս առաքյալին կոչում են վեմ հավատո: Հոռմից հետո Եղեսիան ողբալու է հրավիրում կոստանդնուպոլսին՝ ամվանելով նրան «երկրորդ Երուսաղեմ և նոր Հոռմ գաղմանալի»²⁷:

Եղեսիան դիմում է նաև Ալեքսանդրիային, որտեղ գրվել է Մարկոսի Ավետարանը, Ամտիոքին, ուր գրվել է Մատթեոսի Ավետարանը:

Հաստվածի վարդապետական կողմին անդրադարձել է Ներսես Տեր-Ներսիսյանը²⁸:

Խորքային առումով տարողունակ է հատվածը: Նախ՝ Ընդդիմալին ամուղղակի կերպով կարևորում է այդ քաղաքների նշանակությունը՝ իբրև քրիստոնեության տարածման կենտրոններ, նրանց դերը հավատի գորացման գործում: Քրիստոնեության ամրապնդման համար կարևոր դեր է կատարել նաև Հայաստանյայց Եկեղեցին: Եվ Եղեսիան աշխարհի Ստորին կողմից իր հայացքն ուղղում է դեպի Արևելք, դեպի Մեծ Հայք, դեպի Հայոց Եկեղեցին:

Յորում կաթեաց շողն երկնային,

գալաղն հալեաց գրիւնիսի...²⁹

Եղեսիան ողբակցելու է կանչում նաև Ամիին, որի անունն իսկ «երթակի տառիս քերի լերորդութեանն խորհրդի»³⁰:

Ամենկատելի ու անորսալի՝ հյուսվածքի մեջ մուտք է գործում հայրենասիրության զգացումը, հայրենասիրության այն որակը, որը մուրք է, բայց միևնույն ժամանակ գորեղ, որով հետև շաղախված է մվիտվածությամբ ու ազգի արժանապատվության զգացումով:

Քերթվածի նախերգանքում Եղեսիայի կողմից հիշատակված քաղաքներից շատերը արժանացել են մույն ճակատագրին, ավերվել են մույն թշնամու կողմից:

Եղեսիան խնդում է Ալեքսանդրիային՝ ողբակից լինել իրեն:

²⁶ «Ողբ Եղեսիոյ», էջ 24:

²⁷ Նույն տեղում, էջ 25:

²⁸ Տե՛ս «Բազմավեպ», 1953, էջ 237:

²⁹ «Ողբ Եղեսիոյ», էջ 31:

³⁰ Նույն տեղում, էջ 37:

Զի հաւասար հանգանակի
յանցօրինաց եղաք գերի³¹:

Ծնորհալին, սակայն, չի սահմանափակվում միայն ողբալով: Խորաթափանց մտա-
ծողը, սթափ հայացքով վերլուծելով քաղաքական իրադրությունը, քրիստոնեության գո-
րացումը դիտում է իբրև այլադավանների դեմ մղվող պայքարի կարևոր միջոց, և նրա
երկը դառնում է քրիստոնյա աշխարհի, այդ թվում՝ հայերի փրկության ծրագիր:

Ծնորհալին առաջադրում է քրիստոնյա երկրների միասնության խնդիրը, հմշնցնում բո-
ղոքի ձայնը քրիստոնյա աշխարհի անտարբերության դեմ: Դիմելով Ամտիոքին՝ Եղեսիան
ասում է.

Իմ մերձավոր և անձկալի՝
յուրախութեան ժամանակի:
Ընդէ՛ր չհասեր վաղվադակի
իճձ ի թիկունս օգնականի,
Այլ թոյլ ետուր վասն խեթի
մատնիլ ի ձեռս անցօրինի³²:

Նթե Ամտիոքը շուտ հասներ օգնության, Եղեսիան չէր տապալվի և Ծնորհալին վրեժ-
խընդրության կոչ է անում քրիստոնյա երկրներին.

Զե՛ռն մատո վաղվադակի
իճձ՝ կապելոյս ի տան բանտի,
Ա՛ռ զվրեժս անցերելի
ի թշնամոյն զիս գերողի³³:

-Ողբ Եղեսիոյ»-ի նախերգանքն իր մեջ խտացնում է երկի գաղափարական ու հուզա-
կան բովանդակությունը, որ բացվում, նորանոր շեշտեր է ստանում սյուժեի զարգացման
հետ: Վերստին ընդգծվում է մեղքի գաղափարը. Եղեսիան կործանվում է Տիրոջ
գիտությամբ, որովհետև բոլորն էին ընկած մեղքի ախտում:

Ծնորհալին աղետի պատճառը տեսնում է մարդկանց մեղքերի մեջ, հավատացնում, որ
միայն ապաշխարելով կարող են Տիրոջ բարկությունը մեղմել: Բանաստեղծը քրիստոնեա-
կան վարդապետության ճշմարտությունների վրա է հենվում հոգու և մարմնավորի, դա-
տաստանի և հատուցման հարցերում: Ազատող Եղեսիան իր զոհված զավակներից
մխիթարում է հարության հույսով: Նրանք լուսն պսակ են ստանալու Աստծուց՝ միանալով
հրեշտակների դասին, քանի որ նրանք մահատակվել են՝ Բրիստոսի հավատը սրտերում

³¹ Նույն տեղում, էջ 28:

³² «Ողբ Եղեսիոյ», էջ 29:

³³ Նույն տեղում, էջ 25:

ու հոգիներում: Նրանք մեղքի պարտքը կրկին առան, չարիքների տգեղ պատկերը եղծեցին:

Դուք ի ձեռաց Տեառն տանջեալք,
զպարտիս մեղաց կրկին առիք,
Ջտգեղ պատկեր չարեացն եղծիք,
զոր ի մարմնի աստ ունէիք³⁴:

Ու թեև նրանք մեռան մարմնով, Աստծո մոտ պահված կյանք ունեն: Յուրաքանչյուր ոք ըստ իր արած գործերի է հատուցվելու Ահեղ Դատաստանի օրը, ուստի պետք է արդարության գործերը հավատի հետ զուգակցել:

Արդ, այս խրատ է մարդկային
հանուրց բոլոր բարեպաշտին,
Ոչ ի հաւատն ճշմարիտ
ունել միայն վստահութիւն,
Այլ և զգործն արդարութեան
միաբանել ընդ հաւատին,
Քանզի մեռեալ հաւատք ասին,
որում և գործք ոչ հետևին...³⁵

Ողբը համակված է նաև կենսագրացողությամբ ու կենսասիրությամբ: Բանաստեղծը խաղաղ ու երջանիկ կյանք է ցանկանում մարդկանց իրենց սեփական երկրում: Սակայն Ողբում առկա նոր աշխարհայեցողությունը, կրոնական ըմբռնումների, գաղափարների, գեղարվեստական ընկալման նոր մակարդակը խոր արմատներ ունեն: Դեռ 1121 թվականին գրած «Վիպասանության» մեջ Շնորհալին արտահայտում է իր գեղարվեստական կողմնորոշումը՝ վկայելով, որ իրեն հուզող թեման պետք է լինի Հայրենիքը և Հայ Եկեղեցին:

Շնորհալին Ողբում հիշատակում է Վարդանանց: Սա խոր իմաստ ունի. Եղիշեն ընդգծել է քրիստոնեական հավատի վճռական նշանակությունը Հայաստանի և հայ ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու խնդրում: Վարդանանց նվիրված իր «Նորահրաշ պսակաւոր» շարականում Շնորհալին դրվատում է ոչ միայն այն վսեմ նպատակը, հանուն որի նահատակության լուսապսակին արժանացան այդ նահատակները, այլև նրանց հայրենասիրական ոգին և մարդկային կերպարը: «Ողբ Եղեւիոյ» քերթվածում ընդգծում է հոգևորականների դերը ազատագրական կռվի կազմակերպման գործում: Նրանք հորդորում են կռվողներին:

³⁴ Նույն տեղում, էջ 123:

³⁵ Նույն տեղում, էջ 103:

Մի՛ երկնչիլ ի սրոյ ճորից,
որ սպանանէ միայն զմարմին,
Այլ յայնմանէ՝ զարիւրեսցուք,
որ զեհեցին տայ զերկոսին...³⁶

Ծնորհալին զովերգում է հավատի մկատմամբ՝ ցրանց ունեցած անդավաճան մվիրվածությունը, ցրանց մարդկային մկարագրի արիությունը:

Այնուհետև է Ծնորհալու խրատաբարոյական միտումը, ե իրավացի է Ա. Մաղոյանը, որ Ծնորհալին «առաջադրում է երիտասարդության հոգեֆիզիկական համակողմանի, ներդաշնակ զարգացման պահանջը»³⁷: Ողբի հիշատակարանում դրվատվում է Ապիրատի՝ ոչ միայն գրի իմաստը լավ իմանալը, այլև զենքի արվեստում ներհմտացած լինելը:

Ներսես Ծնորհալու «Ողբ Եղեսիոյ» քերթվածը չի կորցրել իր արդիական մշամակությունը: Այսօրվա ընթերցողին էլ զրավում են այդ երկում պատկերված ապրումները, մարդու մկատմամբ բանաստեղծի տածած սերն ու կարեկցանքը, հայրենի պետկանությունը վերականգնման բուռն տենչանքը, շիկացած ատելությունը բոնատիրության մկատմամբ, բանաստեղծի իսկ բնորոշմամբ:

Սուրմ անողորմ անօրինի,
որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագեալ և ոչ յագի՝
մինչև ի գալ կատարածի՝³⁸:

«Ողբ Եղեսիոյ» պոեմը հմչել է դարեր շարունակ՝ հայ ժողովրդի համար դառնալով սիտկանքի ու հուսսի երգ, ուղենշելով մաքառելու ուղին:

³⁶ «Ողբ Եղեսիոյ». էջ 64:

³⁷ Ա. Մաղոյան, Միջնադարյան հայկական պոեմը, էջ 222:

³⁸ «Ողբ Եղեսիոյ». էջ 39:

ԱՐՄԵՆ ՄԱԽԱՍՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(ԺԶ-ԺԸ դդ.)

Ինչպես հայտնի է. ԺԴ-ԺԷ դարերի հայ արվեստում իր յուրահատուկ տեղն ունի Վա-
նա լճի ավազանում ձևավորված մանրանկարչական դպրոցը՝ ինքնատիպ ոճով և սյուժե-
ների բազմազանությամբ: Վասպուրականի տարբեր վանքերի գրչատներում՝ Աղթամա-
րում, Արճեշում, Վանում, Խիզանում, Ոստանում և այլուր, պատկերազարդված, ինչպես
նաև կազմված ձեռագրերն ամբողջաճանում են մեկ ընդհանուր՝ Վասպուրականի կամ Վանի
դպրոցի շրջանակներում: Վասպուրականում Ժ-ԺԳ դդ. տեղական ավանդույթների ճիմքի
վրա ձևավորվում է գեղարվեստական մի ոճ, որն իր նկարագրով տարբերվում է Հա-
յաստանի մյուս կենտրոններում ստեղծված գործերից: Հետագայում, ԺԴ-ԺԵ դարերում,
այստեղ մոտից վերածնվում է գրքի գեղարվեստական ձևավորման արվեստը և առանձին
խումբ կազմում հայ միջնադարյան մշակույթում:

Վասպուրականում ստեղծված ձեռագրերի ճիշատակարաններում տեղեկություններ
են պահպանված ձեռագիր մատյանների պատրաստման հետ կապված արհեստների
(թղթի և կաշվի մշակում, արծաթագործություն, ոսկերչություն, գունազարդում) զարգա-
ման, ինչպես և արհեստավորների գործունեության մասին: Այդ ժամանակաշրջանում Հա-
յաստանի նշանավոր քաղաքների շարքին Վասպուրականից դասվել են Վանը, Արճեշը,
Բաղեշը, Խիզանը, Ոստանը և Բերկրին:

Վասպուրականի գրչարվեստի դպրոցի ԺԳ-ԺԴ դդ. նշանավոր ներկայացուցիչներն
են Սիմեոն Արճիշեցին, Ծերուն ծաղկողը, Ռստակեսը և ուրիշներ, իսկ, որպես կազմարա-
րության դպրոցի ներկայացուցիչ, ԺԶ դարի վերջում հայտնի է դառնում Փիլիպոս Հիզան-
ցին: ԺԷ դարում և, հատկապես, ԺԸ դարի երկրորդ կեսին հայկական արծաթագործական
արվեստի բազմադարյան ավանդույթներն ինքնատիպ և զուսպ ձևերով, իրենց կոթողայ-
նությամբ և վարպետությամբ դրսևորվում են այս դպրոցում ստեղծված արծաթապատ
կրկնակազմերի դրվագումներում: Հիմնվելով Աղթամարի Ս. Խաչ տաճարի քանդակների
ոճի և ձևերի ընկալման յուրահատկությունների վրա և զարգանալով նրա ու շրջապատի
հոգևոր հարստությունների ազդեցությամբ՝ Վասպուրականի դպրոցի ավանդույթները
զուտ ազգային լինելով մնացել են անադարտ և, առևտրական սերտ կապերի շնորհիվ,
տարածվել են մինչև Կեսարիա, Կոստանդնուպոլիս և Նոր Զուղա: Ինչպես գրում է Հայկ
Տեր-Ղևոնդյանը. «Վասպուրականի մեջ յառաջացած է դրուագման ոճ մը, որը իւրայա-
տուկ է իր միաստիճան բարձրութեամբ (relief), ընդհանրացումներով և զուսպ ու չափաւոր
զարդաքանդակներով, թէև դրուագման ոճը ազդուած է Ս. Խաչի զարդաքանդակներէն և
մարդկային ու կենդանական կերպարներու ներկայացման առանձնայատուկ եղող յետ-
դրուագման գծային փորագրական ձևերէն»¹:

¹ Տեր Տեր-Ղևոնդյան Հ., «Համդես ամսագրայ», 1984, էջ 287-288: Ներկայացված է Վասպուրականի
դպրոցում պատրաստված 8 ձեռագրակազմ N№ 5516, 5578, 7713, 8940, 5637, 5645, 2582, 6776:

Մեզ հասած ձեռագրերի կազմերին կատարված արձանագրությունների համաձայն, վասպուրականում ժԶ դարի վերջերից, 1575-1597 թվականներին, որպես կաշեկազմ ձեռագրերի կազմող է հիշատակվում Փիլիպոս աբեղա Հիզանցին, ժԸ դարից արծաթագործներ կամ արծաթապատողներ են հիշատակվում 1739 թ.² վարպետ Զիրաքը (No 5580), 1756 թ.³ Օհանեսը (No 5653), 1760 թ.⁴ մառտեսի Զաքարը և մառտեսի Գրիգորը (No 5650), 1765 թ.⁵ Հովսեփ վարդապետը (No 2582): Ձեռագրակազմերի պատրաստման վայրեր են հիշատակվում Վանի գյուղի Ս. Թեոդորոս, Խաչգյուխ լեռան Ս. Սահակ Պարթև վանքերը, Վանի Ս. Վարդան եկեղեցին, Բագենից վանքը, Լիմ անապատը և այլն: Ստորև ներկայացնում ենք վասպուրականի դպրոցում պատրաստված՝ արձանագրություն ունեցող որոշ կազմեր, ումանք՝ իրենց պատրաստողներով հանդերձ:

Վասպուրականի դպրոցում ստեղծված և, ընդհանրապես, Մատենադարանի հավաքածուի արձանագրություն ունեցող հնագույն կաշվե կազմը պատրաստվել է 1585 թ. Վանի գյուղի Ս. Թեոդորոս վանքում և ամրացվել 1304 թ. գրված Ավետարանին (No 4812): Վանի գյուղը գտնվում է Վանի վիլայեթի Կարճկան գավառում, որի եկեղեցուն կից գործում էր վարժարան⁶: Ձեռագիր Ավետարանի Ա փեղկի ներքևում պահպանվել է հետևյալ որվագը. «Յ(Ի)ՇԷՔ Տ(Է)Ր [ՅՈՂՎԱՆԷՍԻՆ]//»⁷: Երկրորդ կաշեկազմը պատրաստվել է 1586 թվականին Խաչգյուխ լեռան Ս. Սահակ վանքում և ամրացվել 1452 թ. Մոկսի Սերի վանքում գրված Ավետարանին (No 9841): Խաչգյուխ լեռը գտնվում է Վասպուրականի Առեբրանցի գավառում, Երեբրի Ս. Սահակ Պարթևի վանքի մոտ⁸: «Թիմարայ Երեբրին կամ Էրեբրին գիւղի հարաւակողմը քարծրացող լեռան լանջին կը հանգչի Ս. Սահակայ վանքը, գրում է Հ. Ոսկյանը, - որ պարսպապատ է և քաղկացած ցմբեթայարկ տաճարէ և հասաքակ դարպասէ»⁹:

Այստեղ էր պահվում Ս. Սահակ Պարթևի աչքը, որը հետագայում փոխադրվում է Լիմ անապատ, որի ենթակայության ներքո էր Էրեբրին գյուղը¹⁰: Ձեռագիր Ավետարանի երկրորդ փեղկի մեջտեղում կա «[Զ]Խ[ՈԶԱՅ ԱԻԵ]ՏԻՍ ԵՒ ԶԱՄ[ԻՐԱՂԷՆ] Յ(Ի)ՇԷՔ[Բ] արձանագրությունը»¹¹: Ս. Սահակ վանքում հետագայում պատրաստվել են երկու այլ կազմեր ևս (NNo 5651, 5332): Վերոնշյալ երկու ձեռագրերի արձանագրությամբ կազմերը

² Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 277:

³ Ձեռագրի կազմը վճռված է. արձանագրությամ տառերը՝ թափված: 212ա թերթում կարդում ենք հետևյալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմոխս զՍուրբ Կարմիր Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս զտէր Յովանէս, զոր տեսնալ զՍուրբ Կարմիր Աւետարանս ի յայտնմ հմացեալ էր. զոր վերնստիմ մորոզել նտուր հոգոյ իւր... Նս, տուտանուն Փիլիպոս, որ կազմեցի զՍուրբ Աւետարանն ի թվականիս Հայոց ԲԷԴ (1585). ի գետաղմ որ կոչի Վանիկ. ի դուռմ Սուրբ Թեոդորոսին...»:

⁴ Տե՛ս Էփրիկեան Հ. Ս., Պատկերագրող քմաշխարհիկ դառարան. հ. Բ, գիրք Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1907, էջ 139:

⁵ Ոսկյան Հ. Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 346:

⁶ Տե՛ս Լալայեան Ե., Վասպուրական. ճշմարտոր վանքեր, Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 83:

⁷ Արձանագրության ամբողջացման օգնում է ձեռագրի 293ա թերթին անկա հետևյալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմողս Սուրբ Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»՝ զխոջայ Աւետիսմ, զոր տեսնալ զՍուրբ Աւետարանս ի ձեռն անաորիմաց ազատեաց և վերնստիմ մորոզել նտուր հոգոյ իւր... և եղբարոն՝ խոջայ Ամիրաղիւ... Նս, տուտանուն Փիլիպոս, կազմեցի զՍուրբ Աւետարանս ի լեռնմ սուրբ, որ կոչի Խաչգյուխ. ի վանքմ, որ կոչի Սուրբ Սահակ... ի թուականութիւն Հայոց ԲԷԴ (1586)... և այլն: Ձեռագրի կազմի առաջին փեղկին դրոշմված հյուսանո խաչի աջ և ձախ թևերի վերևում և ներքևում կա. «Տ(Է)Ր ԱՍՏՈՒԱՆԵ Թ(Ի)ՍՈՒՆԱ ԲԵՐԻՍՏԱՆ»՝ մակագրությունը:

պատրաստել է արեղա Փիլիպոսը, որը հաճախ հիշատակվում է որպես ինուն կամ խու-
նուն, Հիզանցի մականունով⁸։ Այս ձեռագրերի կազմերից բացի, Մատենադարանի հավա-
քածոն պահվում են Փիլիպոսի կազմած 9 ձեռագրեր ևս, որոնց կազմերից չկան արձա-
նագրություններ։ Ժամանակագրական առումով Փիլիպոս Հիզանցու ստեղծած տասնմեկ
ձեռագրերի կազմերը պատրաստված են 1575-1597 թթ. ընկած ժամանակահատվածում,
այսպես՝

1575 թ.-NNo 4831, 5001

1579 թ.-No 956

1584 թ.-No 4648

1585 թ.-No 4812

1586 թ.-No 9841

1587 թ.-NNo 4861, 5651

1593 թ.-No 4978

1597 թ.-No 5332⁹

ԺԶ դ.-No 7862

Ստորև ժամանակագրական դասակարգությամբ ներկայացնում ենք Փիլիպոս Հիզան-
ցու կազմած և նրան վերագրված կազմերը համապատասխան քննությամբ։ 1575 թ. Վա-
նում (ձեռ. No 4831) և տեղի Ս. Վարդան եկեղեցում¹⁰ (ձեռ. No 5001) Փիլիպոսը պատրաս-
տել է երկու կազմ։ No 4831 ձեռագրի կազմողը Մատենադարանի Համառոտ ձեռագրա-
ցուցակում համարվել է նույնանուն մեկ այլ անձնավորություն¹¹։ Իրականում ձեռագրի
կազմողը նույն Փիլիպոս Հիզանցի է, իսկ թուղթ կոկողը՝ Հովհաննես սարկավազը։ Գրչի
բուն հիշատակարանի (281ա) վերջում (էջ 284ա) նույն թանաքով, բայց ավելի փոքր տա-
ռերով գրված է. «...Դարձեալ յիշեցէք զտէր Փիլիպոս արեղէն, որ աշխատեցաւ կապել

⁸ Արձանագիր այս երկու ձեռագրի մասնուների կարծիքի մամուլը կրկին զննումը ցույց է տալիս, որ, իրոք, եր-
կու կազմերն էլ հետազայում են ավելացվել, ինչպես վկայում է կազմողը, այսինքն՝ գրչության ժամանակին
չեն։ Երկու կազմերի կաշի մուգ շագանակագույն է, առաջին փեղկերին զգուսպործված է կարմիր մերկ։ No
4812 ձեռագրի կարմիր մերկն ավելի գերիշխող է, այդ պատճառով էլ առաջել է «Կարմիր Ավետարան» անունը։
Քանի որ բովանդակությամբ երկուսն էլ Ավետարան են, առաջին փեղկերին դրոշմված են հյուսաճ պատվա-
դանով խաչեր, որոնց վերևի, աջ ու ձախ թևերի շուրջ լուսապսակաման, իրար միացած կիսաշրջանակներ են,
որոնց ներքևում, խաչի պատվանդանից վեր, դառնում են զարդադրոշմ գեղեցիկ շրջանակներ։ No 4812 ձեռա-
գրի զարդանախշերն ավելի հայտնու են ու գեղեցիկ։ Երկրորդ փեղկերին դրոշմված են երկրաչափական
պատկերներ։ Փեղկերը 2 մասի են բաշխված, ամեն մասում պատկերված են մեծ կլոր շրջանակներ, որոնց ներ-
սում դրոշմված են եռանկյուն, քառանկյուն, քաղմանկյուն և կլոր շրջանակների միահյուսված պատկերներ։
Զարդանախշերը հիմնականում կետադրոշմ են։ Երկու ձեռագրերում էլ բացակայում են պատտառիկ-պահա-
մակները։

⁹ Ձեռագիրը մախկհում պատկանել է Վանի Ս. Վարդան եկեղեցուն։ Մամուլման տե՛ս Լալայեան Ե.,
Յուզակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, ձեռ. No 102, էջ 211-216։

¹⁰ Ս. Վարդան վանքի մասին է. Լալայանը գրում է. «Այս վանքը, որ այժմ անը է, գտնուել է Նարեկյա
վանքից արեւելք ու Պատական գիւղից արեւմուտք», տե՛ս Լալայեան Ե., Վասպուրական, ժշամաւոր վանքեր,
Ապրակ, Թիֆլիս, 1912, էջ 27։

¹¹ Տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի ամվան Մատենադարանի, Բ. Ա., Երևան, 1965, էջ 1627։

Աւետարանիս. յի քերանով Աստուած ողորմի ասացէք նրմայ. ամէն: Դարձեալ յիշեցէք Յովանէս սարկատագն, որ Էջմիածնա Աւետարանի¹² թուխթն կոկեց-:

1579 թ. պատրաստված No 956 ձեռագիր Մաշտոցի կազմողի մասին հիշատակարանում (1ա) գրված է Փիլիպոս: ԺԶ և ԺԷ դդ. Փիլիպոս Հիզանցուց քացի համանուն ուրիշ մեկը մեզ հայտնի չէ: Սակայն հիշյալ ձեռագիրը հետագա դարերում նորից է կազմվել և նորոգվել: Հետևապես դժվար է ասել, որ կազմը հայտնի Փիլիպոսին է. թե՛ ոչ:

1584 թ.¹³ No 4648 ձեռագրի կազմն առավել պարզ է և տարբերվում է Փիլիպոսի մյուս կազմերից: Սակայն հիշատակագրության կառուցվածքից պարզ կոսմելի է, որ կազմողը նույն Փիլիպոս Հիզանցին է: Ավելին, հիշատակագրությունը գրել է ինքը՝ կազմողը, որտեղ կարդում ենք (284ա). «Զվերջին կազմողս զՍուրբ Աւետարանս յիշեցէք, զխոջայ Ագաւոն... Ես՝ Փիլիպոս սուտանուն կազմեցի զՍուրբ Աւետարանս ի յերկրին Գաւառոյ ի վանքն Սուրբ Քառասնից, ի թվականութիւն Հայոց ՌՂԳ. (1584). յիշեցէք ի Քրիստոս զԱմիրազիզն և Աստուած ողորմի ասացէք իւր հոգոյն, և Աստուած ուր դազգային շատ բարաքաթ տայ. ամէն»:

Փիլիպոս Հիզանցին պատրաստել է այլ կազմեր ևս. Գնունյանց երկրի Ս. Սահակ վանքում 1586, 1587 և 1797 թթ. կազմել է 3 ձեռագիր (NNo 9841, 5651, 5332), Բազենից վանքում, որ կոչի Էջմիածին¹⁴, 1593 թ. վերակազմել է 1 ձեռագիր (No 4978¹⁴), իսկ վանիկ գյուղում 1585 և 1587 թթ.¹⁵ 2 ձեռագիր (NNo 4812, 4861): Այս ձեռագրերից բացի, իրավացիորեն, Փիլիպոսին է վերագրված նաև ԺԶ դ. կազմված No 7862 ձեռագիրը¹⁵: Միշտ է, ձեռագրի հին կազմը չի պահպանվել (այժմ թավշով պատված ստվարաթուղթ է), սակայն հետագա հիշատակարանում (էջ 342բ) գրված է. «կազմեցաւ ձեռամբն սուտանուն Փիլիպոսի. ի սուրբ Աւետարանս ի խնդրոյ Պապա աղին, ի դուռն Սևան Ս. Առաքելոցն Անդրէի և Մաթէի և ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ...»: Հիշատակարանի գիրը և կառուցվածքը վստահաբար Փիլիպոս Հիզանցունը չէ, սակայն No 4648 ձեռագրի վերոնշյալ հիշատակարանից իմանում ենք, որ մեզ հայտնի Փիլիպոս Հիզանցին 1584 թվականին գտնվել է Սևանա լճի ավազանում, Գավառի Ս. Քառասնից վանքում, որտեղ Ամիրազիզի «դազգայի» վրա կազմել է Ավետարան (Սևանի Ս. Առաքելոց վանքն էլ շատ հեռու չէր): Իսկ հաջորդ՝ 1585 թ. Փիլիպոսն արդեն վանիկ գյուղում էր: Ուստի կարելի է ենթադրել, որ No 7862 ձեռագրի կազմը Փիլիպոս Հիզանցին պատրաստել է 1579-1584 թթ. միջև ընկած ժամանակահատվածում:

Վասպուրականի դարոցում ստեղծված արծաթակազմերից հիշատակելի են արձանագրությամբ երկու կրկնակազմեր, որոնք պատրաստվել են 1641 և 1765 թթ.: No 5637 Ավետարանի կրկնակազմը 1641 թվականին պատրաստել և կոստողել է տվել Զուղայեցի մահ-

¹² Պետք է նշել, որ այս ձեռագիրը ևս ունի «Էջմիածնի Ավետարան» անունը:
¹³ Էջմիածին կամ Բազենից Ս. Աստվածածնի վանքը գտնվում է Գնունյաց գավառում, Էրերին գյուղի մոտ, խաչգյուղ լեռան Ս. Սահակ Պաթեհի վանքի դիմաց: Երկվեզերյա վանք է: Ունի ընդարձակ թափառանք և մի պարտեզ և շատ ամրառներ: Վանքն ունի մի մատուռ և երկու եկեղեցի՝ Ս. Աստվածածին և Ս. Էջմիածին: Այս վանքը ճգնաժամի է եղել. որտեղից ևս, համաձայն ավանդության, Միածնի իջնելը տեսնել են տեղի ճգնավորները, որից հետո մենաստանը սկսել են ամրացնել Էջմիածին (տե՛ս Ոսկյան Հ. Հ., մշվ. աշխ., էջ 350):
¹⁴ Ձեռագրի առաջին կազմողը Ալիքսանոսն է, 1511 թ.:
¹⁵ Տե՛ս Յուզյան ձեռագրաց Մաշտոցի ամգան Մատենադարանի, Բ. Բ, Երևան, 1970, էջ 1474:

տեսի Պետրոսը¹⁶։ Կրկնակազմի Ա փեղկին պատկերված է ոսկեզօծ բարձրաքանդակ խաչելություն՝ «ԹՆԹՀ» (Թխուս Նազովրեցի թագաւոր Քրէից) մակագրությամբ¹⁷։ Բ փեղկին Համբարձման տեսարանն է՝ բարձրաքանդակ ոսկեզօծ պատկերներով, իսկ դրոշակին պատկերված են 4 ավետարանիչները։ Արձանագրությունը սկսվում է Ա փեղկի ներքևի մասից և շարունակվում Բ փեղկի ներքևի մասում. «ԿՈՍՏՂՍ ՅԻԽԻՍՏԱՅԻ Է ԶՈՒՂԱՅԵՑԻ // ՄԱՀՏԵՍԻ ՊԵՏՐՈՍԻՆ, ԹՎԻՆ ՌՂ (1641)»¹⁸։ Երկրորդ՝ No 2582 Ավետարանի արձաթե կազմը 1765 թ. պատրաստել է Հովսեփ վարդապետը։ Արձաթակազմի Ա փեղկին պատկերված է Համբարձման տեսարանը¹⁹, որի ներքևի մասում արձանագրված է. «ՍԻՈՒՐԻԱ ԱԻԵՏԱՐԱՆՍ ԱՐԾԱԴԱՊԱՏ ԵՂԵԻ ԶԵՌԱՄԱՐՆ /ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԹՎԻՆ ՌՄԺԴ (1765)-ԻՆ»²⁰։

ԺԸ դարում ստեղծված արձանագրություն ունեցող արձաթակազմերի մեջ առանձնացում է մի խումբ՝ թվով 7 ձեռագրեր, որոնք պատրաստվել են Լիմ անապատում։ Լիմ կամ Լիմն կղզին, որը միջնադարյան հայկական գրչության կենտրոններից է եղել, գտնվում է Վանա լճի հյուսիս-արևելքում, ափից 1 կմ հեռավորության վրա, դեպի Արճեշ գավառը տարածված ծովախորշի մեջ։ Նախկինում միացած է եղել ցամաքին և անջատվել է ջրի մակարդակի բարձրացման պատճառով։ Վանքը Ս. Գևորգ Զորավարի անունով է կոչվում, որովհետև, համաձայն ավանդության, այստեղ ամփոփված են նրա մասունքները։ Լիմի վանական համալիրը կազմված էր երկու եկեղեցուց, գավթից, զանգակատնից և խցերից։ Զաքարիա Ա Աղթամարցի Կաթողիկոսը (1296-1336 թթ.), որի անունը սերտորեն կապված է Լիմի հետ, Ս. Գևորգի տաճարն այնքան մեծ փոփոխություններով է նորոգում (1310 թ.), որ այն մի մոր վերակառուցում է դառնում։ 1538-ին Գոգջա սուլթանի զորքերը ստնում են Լիմ և «գրչագիր մատենանքերը կայրեն կամ ծով կը նետեն»²¹։

Լիմի մշակութային կյանքի մասին հնագույն տեղեկությունները վերաբերում են Թ դարին։ Գրչական կյանքն աշխուժանում է հատկապես ԺԴ դ., երբ Զաքարիա Կաթողիկոսը վերակառուցելով Ս. Գևորգ եկեղեցին՝ ընդարձակում է միաբանությունը։ Խոսելով Ժե դարի գրչագրերի մասին՝ Ա. Մաթևոսյանը նկատում է. «Ժե դարի Լիմի գրիչների ընդօրինակությունները նման են իրար։ Դրա պատճառն այն է, որ նրանք բոլորը կա՛մ Մեծոփե-

¹⁶ Ձեռագիրը գրվել է 1636 թ. Լիմում, այժմոստ՝ Վանում։ Գրիչներն են Տեղ Ավետիս Թագունցին և Կատայետ Երեցը, ծաղկողը՝ Ստեփանոս Զողայեցին, ստացողը՝ Ստեփանոս վրդ. (ուչ ծաղկողը)։

¹⁷ Խաչի ձախ և աջ մասերում երկու կամանց ոսկեզօծ բարձրաքանդակ պատկերներ են, իսկ վերևում, ձախ կողմում պատկերված է արեգակ, աջ կողմում՝ լուսին, երկուսն էլ դիմապատկեր։ Ա և Բ փեղկի, ինչպես նաև դոմակի ազատ մասերում դրվագված են գեղեցիկ ծաղկազարդեր։

¹⁸ Ձեռագրի բուն կազմը շագանակագույն կաշի է, միջուկը՝ տախտակ, աստաղը՝ ոսկեթել զարդալուսն մետաղաբույր։

¹⁹ Փեղկի մեջտեղում, ուղղանկյուն շրջանակի մեջ կամգման է Քրիստոս, Ում ձախ և աջ կողմերում երկու Քրիստաներ են։ Եզրագծով արված են բարձրաքանդակ ծաղկազարդեր։ Բ փեղկին, ուղղանկյուն շրջանակի մեջ, Ս. Աստվածածնի պատկերն է՝ նստած գեղեցիկ զարդով, ձեռքին զավազան, գրկին մանուկ Հիսուսն է՝ ձեռքին թոճած կտր գոմը։ Ձեռագրի բուն կազմի կաշին մեզ չի հասել, իսկ աստաղի միայն կարմիր գույնի հետքերն են երևում, վերջում ունի շեղք մագաղաթն պատառիկ-պախպախակ։

²⁰ Տե՛ս Տեղ-Ղևնդեան Լ., «Համդես ամսօրեայ», 1984, էջ 287-288, մկար 7։ Նաև «Համդես ամսօրեայ», 1988, էջ 116։

²¹ Ոսկյան Լ., Լ., մշվ. աշխ., էջ 16։ Լիմ անապատի մասին տե՛ս նաև Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բաբսեղյան Լ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Բ. 2, Երևան, 1988, էջ 588։

ցու աշակերտներն են, կա՛մ նրա աշակերտների աշակերտները, որոնք ողողել էին ո՛չ միայն Քաջբերուհիքը, այլև Վասպուրականը»²²։ ԺԷ դ. Ներսես Մոկացի փոխադրված այս-տեղ Քիմնել էր բարձր տիպի դպրոց։ Լիմ ամապատն ունեցել է նաև Ռարուստ մատենա-դարան, որտեղ 1693-ից կար 3124 ձեռագիր, ԺԹ դարի վերջին՝ 550 ձեռագիր և 3 Ռազար տպագիր գիրք²³։

ԺԸ դարում Լիմում ստեղծվում են նաև գեղարվեստական արժեք ունեցող արծաթե կրկնակազմեր, որոնք պատրաստել են վարպետ Զիրաքը (1739 թ.), Օհանեսը (1756 թ.), մառտեսի Զաքարը, մառտեսի Գրիգորը (1760 թ) և Հովսեփ վարդապետը (1765 թ.)։ Ըստ պատրաստման թվականների՝ այդ կրկնակազմերը դասակարգվում են այսպես²⁴։

1739 թ.- No 5680. Ավետարան, 1622-1623 թթ., Բաղեշ,

1748 թ.- No 5638. Ավետարան, ԺԷ դ. (1678-ից առաջ), Բաղեշ,

1756 թ.- No 5653. Ավետարան, ԺԷ դ.,

1760 թ.- No 5650. Ժողովածու, ԺԵ դ.,

1761 թ.- No 5649. Ավետարան, 1671 թ., Ակունք գյուղ (Պազարչա),

ԺԸ դ.- No 5645. Ավետարան, 1635 թ., Վաճ,

ԺԸ դ.- No 5646. Ավետարան, 1672 թ.:

1739 թ. է ստեղծվել No 5580 Ավետարանի²⁵ արծաթե կազմը, որը դրվագման եղանակով պատրաստել է վարպետ Զիրաքը՝ Մարտիրոս վարդապետի պատվերով։ Ա փեղկի կենտրոնում պատկերված է խաչելություն՝ «ԹՆԹՀ» մակագրությամբ²⁶։ Ջեռագրի թիկունքին կազմված արծաթե թիթեղի մեջտեղում կտր շրջանակի, իսկ անկյուններում ուղղանկյուն շրջանակի մեջ գեղեցիկ ծաղկազարդեր են դրվագված։ Թիթեղի միջամասի ծաղկազարդից վեր ու վար մեկական փոքրիկ գեղեցիկ խաչեր են։ Զարդանախշերի շուրջ դրվագված է երկաթագիր արձանագրությունը. «ԹԻՇԱ/ՏԱԿ Է /Ս/ՈՒՐ/Բ ԱԿԵՏԱՐԱՆԱ /ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԵՏ Դ/ՈՒ/ՈՒՆ ԳԵՈՐԴԳԱՅ /Ս/ՈՒՐ/Բ ԱՆԱՊԱ/ՏԻՆ, ԹՎԻՆ ՌԺ/ՁԸ (1739), ՆՈՐՈԳԵՑ/ԱԻ ՋԵՌԱՄԲ ՈՒՍ/ԹԱ ՋԻՐ/ԱՔԻ/Ն: /ԴԱՐՁԵԱԼ /Ա/ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍ/ԱՑԷՔ ՏԻՐԱՑ/Ո/Ի(Ի) ԹՈՒՄԻՆ, /ՄԻՆԱՍԻՆ, ՈՐ Ջ/ՐԻ Ն/Ա/ՂՈՅԵՑԻՆ, ԲԱ/ՋՈՒՄ ԱՇԵԱՏԵ/ՑԱՆ. ԹԻՇԱ(Կ)ՑԷՔ, /Ա/ՍՏՈՒԱ]Ծ /ՈՂՈՐՄԻ Ա/ՍԱՑԷ/Ք»²⁷։

²² Մաթևոսյան Ա., Լիմ ամապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դդ., -Էջմիածին, 1966, թիվ 6, էջ 52:

²³ Մաթևոսյան Ա., Ոջվ. աշխ., էջ 53:

²⁴ Նախ՝ ցերեկայացված է կազմի պատրաստման թվականը, ապա՝ ձեռագրի գույքաճանաչը, թվանշան-կությամբ, գրչության ժամանակը, գրչության վայրը:

²⁵ Ավետարանը գրվել է 1622-1623 թթ. Բաղեշում, գրիչը և ծաղկողը Սահակ քահանան է, ստացողը՝ Ստեփանոս արեղան:

²⁶ խաչի վերևում ընդունված պատկերագրությամբ արեգակ և լուսին են՝ երկուսն էլ դիմապակեր, մերը-նում Աղամի զամգն է։ խաչից ձախ և աջ պատկերված են Մարիամ Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը՝ քարեխոսի դիրքով։ Փեղկի անկյուններում և եզրերի միջին մասերում դրվագված են քարձրաքանդակ ծաղկազարդեր, իսկ խաչելության պատկերի շուրջ՝ փորագրված են այլ ծաղկազարդեր։ Ա փեղկը զարդարված է Ա փեղկի մեծությամբ, միայն կենտրոնում, խաչելության պատկերի փոխարեն, խորամի մեջ դրվագված է Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, ոտքերի տակ գտնվող կիսալուսնով:

²⁷ Ջեռագրի բուն կազմը տախտակե միջուկով դրոշմազարդ մուգ շագանակագույն կաշի է (տե՛ս կազմի դոմուկը), աստաղը՝ դեղին մետաքս, ումի 4 (2+2) թերթ մագաղաթե, երկաթագիր Ավետարան պատառիկ-պաթ-պանակ։ կազմի մամրամասն մկարագությունը տե՛ս Գ. Հովսեփյան, ՄԻ էջ Քայ արվեստի և մշակույթի պատ-

ճոֆարին... Գրեցաւ յիշատակարանս ի թվականս Հայոց ՌՃՂԹ (1750), ի յամի և յամսեանց ապրիլի ի և Գ (23)-ից, օրն Գ (3)-շաբթի, Ս. Գէորգայ տօնից, ձեռամբ անարժան և անպիտան չից Տէր Ովանէս քահանայից. ամէն: Եթե թերված հիշատակարանում և կազմի արձանագրությունում հիշատակված նուճոֆարը կամ նօճօֆարը նույն անձն է, ապա կարելի է ենթադրել, որ արծաթակազմը պատրաստվել է 1750 թվականից հետո, երբ ձեռագրի տեք է դարձել նուճոֆարը:

Լիմ անապատում պատրաստված No 5653 (1756 թ.) և No 5649 (1761 թ.) ձեռագրերի արծաթակազմերի արձանագրությունների տառերը (հատկապես Շ գիրը) մնան են վերոցշյալ՝ No 5646 ձեռագրի արձանագրության տառերից: Այս երեք կազմերն էլ պատրաստված են ձուլման և դրվագման եղանակներով, սակայն ձևավորմամբ և զարդարմամբ էապես տարբեր են: No 5653 Ավետարանի արծաթակազմը պատրաստվել է 1756 թ. ի հիշատակ Պայազիթի խոջա Կարապետի որդի պարոն Մարգար աղայից, վանքի Պետրոս վարդապետի և տիրացու Գրիգորի ցանկությամբ: Կազմը պատրաստել է Օհանեսը, Ճախշողն է Հոհանն: Կազմի Ա և Բ փեղկերը զարդարված են նույնությամբ՝ բարձրաքանդակ ծաղկազարդ պատկերներով: Թիկունքի արծաթե թիթեղից, ուղղանկյուն շրջանակի մեջ, գրված է երկաթագիր արձանագրություն. «ՅԻՇԱ(ՏԱ)Կ Է ԱՐԾԱԹԱՊԱՍ ԱՌԻՐ)Բ ԱԻԵՏԱՐԱՆՍ ՊԱՅԱԶԻԹ/ՑԻ ԽՕԸԱՅ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՐ/ԳԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԳԱՐԱՅ Ա/ՂԻՆ, Ի ԴՈՒՌՆ ԼԻՄԱՅ Ս(ՈՒՐ)Բ ԱՆԱՊԱՏԻՆ, ՇԻՆՈՂՈՒԹԵԱՄ)Բ, ԿԱՄՕՓ(Բ) ՎԱՆԵՑԻ ՊԵՏ/ՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ և /ՏԻՐԱՑՈՒ ԳԻՐԻԳՈՐԻՆ, և ԹՎԻՆ ՄԵՇ ՀԱ/ՅԱՌ)Ց ՌՄ և Ե (1756)-ԻՆ, և ՀՐ/ՈՏԻՑ ԱՄՍՈՑ Ի (20)-Ը. ԱՄԷ/Ն: Ի ԲԱՐԻՆ և ՁԵՌ/ԱՄԲ ՕՀԱՆՆԷՍԻ, /Ե(Ա)ՂՇՈՂԻՆ /ՅՕՀԱՆԻՆ»³²: No 5649 Ավետարանի³³ արծաթակազմը պատրաստվել է 1761 թ. Լիմում ի հիշատակ մահուտի Սարգսի որդի վանքի Կարապետ վարդապետի, որի՝ կազմի դնակիմ արված արձանագրություն-հիշատակարանում կարդում ենք. «ՅԻՇԱ(ՏԱ)Կ Է ԱՐԾԱԹ/ԵԱՅ ԱՎԷՏԱՐԱՆՍ ՎԱՆԵՑԻ ԿԱՐԱՊԵՏ Վ(Ա)Ր/ԴԱ)ՊԵՏԻՆ և ԾՆՈՂԱՑՆ ԻԻՐ՝ ՀՕՐՆ Մ(Ա)/ՀՏ/ԻՄ/Ի ԱՐԳԻՍԻՆ, ՄՕՐ/Ն ԵՂԻՍԱԲԵԹԻՆ, /ԲՎԵՐՑՆ՝ ՆԱԶԼՈՒԻՆ, ՀԱՆԳՈՒՑԵԼՈ/ՑՆ Ի Բ(ՐԻՍՏՈ)Ա, ԹՎ(ԻՆ) ՌՄԹ (1761)»³⁴:

³² Տե՛ս նաև հետագա հիշատակարաններ 109թ. 169թ. 274թ. 350ա: «Ցուցակ ձեռագրաց», Բ. Բ, էջ 157-ում թվականը սխալմամբ կարդացել են ՌՄԼ, Ն (1786): ՌՄ և Ե տառերի մեջտեղում գրված տառը ոչ թե Լ է, այլ միամիշ՝ և (համեմատի՛ր արձանագրության և-երի հետ):

³³ Ավետարանը գրվել է 1671 թ. Պազարչայի Ակունք գյուղում: Գրիչը Աստվածատուր երեցն է, ստացողը՝ Տաթևի վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսը:

³⁴ Ա. փեղկից պատկերված է բարձրաքանդակ խաչելություն (հրիստոսը պատկերված է երկար մագերով): Խաչի ճեքքետում Ադամի գանգն է, ձախ և աջ կողմերում՝ Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը: Խաչելությունից վեր պատկերված է Հայր Աստված՝ ամպերի մեջ, եռանկյուն լուսապսակով: Ամպերից դեպի խաչն է իջնում աղավաճակերպ Սուրբ Հոգին: Բ փեղկից պատկերված է Տիրամայրը՝ նստած, Հիսուսը գրկից: Տիրամոր ղևավերևում, ձախ կողմում, աղավաճակերպ Սուրբ Հոգին է: Պատկերների շուրջ արված են բարձրաքանդակ ծաղկազարդեր: Ռոմակի մեջտեղում, կտր շրջանակի մեջ, դրվագված է բարձրաքանդակ գեղեցիկ խաչ՝ շրջապատված երկթև 4 փողբիկ հրեշտակներով: Խաչի վերևում և ճեքքետում գրված է արձանապրություն: Ձեռագրի բուն կազմը տախտակն միջուկով կարծրաքանդակ շաղանկազույց կաշի է, աստաղը՝ դրոշմազարդ կարմիր կտավ: Արծաթակազմը տեղադրելու ժամանակ վնասել են կաշեկազմի եզրերը, եզրերի մոտ երևում է ճեքակ տախտակը:

№ 5649 կազմի պատկերագրության և համաբանությամբ են ստեղծված N№ 5650 (1760 թ.) և 5645 (ԺԸ դ.) ձեռագրերի արծաթակազմերը: № 5650 Ավետարանի արծաթակազմը պատրաստել են մահտեսի Զաքարը և մահտեսի Գրիգորը 1760 թ.: Կազմի թիկունքին, վերևում և ներքևում, պատկերված են բարձրաքանդակ գեղեցիկ ծաղկազարդեր, որոնց մեջտեղում կա երկաթազիր արծաճագրությունը. «Ն[Ա]ԽԱՆԱՊ[Ե]Ս Ս[ՈՒՐ]Բ ՆԱՍԻՐ[Ե]ԿԱՍԹ /Գ[Ի]ՐԱՍ ԼԻՄԱՅՈՒ ԱՆԱՊԱՍՏԻՆ ԳՈՂԼՈՂՎ՝ ԱՐԾԱԹԱԹԱՊԱՍՏԵՆ ԲՆԻԿԿ/ՍԻ ՄԱՂՆԵՍԻ ԶԱԲԱՐՆ /ԵՒ ՄԱՂՆԵՍԻ ԳՐԻԳՈՐԻՆ ԻՆ/ՅԻՇԱՍԻԱԿ ԼՈՂԳԻՈՅ ԻԻՐ/ԵԱՆՑ. ՌՄԹ (1760)»³⁵:

№ 5645 ձեռագրի արծաթակազմը պատրաստվել է Հակոբ վարդապետի պատվերով և դատեր՝ Ալմաստի հիշատակին, որն իմանում ենք կազմի թիկունքին, խաչից վեր ու վար արված արծաճագրությունից. «ՅԻՇԱՍԱԿ Է ՍՈՒՐԲ ԱԻ/ԵՍԱՐԱՆՍ ՅԱԿՈՐ ԱԼԱՐԴԱՊԵՏԻՆ և ԳՍՏ/ԵՐՆ ԱԼՄԱՍՏԻՆ, (ՈՐ) ԴԵ Ի ԴՈՒՐՆ ԼԸ/ՄԱՑ ՍՈՒՐԲ ԱՆԱՊԱՍՏԻՆ»³⁶: Արծաթե կրկնակազմն արված պատկերները, ինչպես ասվեց, մեծ են № 5649-ի կազմի պատկերներին, այսինքն՝ այս երկու կազմերը պատրաստել է միևնույն արծաթագործը³⁷:

Ամփոփելով մշեմք, որ Վասպուրականում պատրաստված կազմերի զարդարման արվեստը, տեղի մանրանկարչական արվեստին բնորոշ, առանձնանում է յուրահատուկ, ինքնատիպ ոճով և սյուժեների բազմազանությամբ: Մատենադարանի հավաքածուի արծաճագրություն ունեցող հնագույն կաշեկազմ գործերը ստեղծվել են այս դպրոցում ԺԶ դարում: Հետագայում, ԺԷ և ԺԸ դդ., հատկապես Լիմ անապատում ստեղծված արծաթե կրկնակազմերին բնորոշ է դրվագման գեղարվեստական մի ոճ, որը յուրահատուկ է իր միաստիճան բարձրությամբ, ընդհանրացումներով և զուսպ ու չափավոր զարդաքանդակներով: Կազմերի արծաճագրությունները բովանդակալից են, տեղեկություններ են տալիս պատմիչառու-ստացողների, նրանց ընտանիքի անդամների, կազմող վարպետների, կազմերի պատրաստման ժամանակի և վայրի մասին, այսինքն՝ այն ամենը, ինչ յուրահատուկ է ձեռագրերի հիշատակարաններին:

³⁵ Կազմի Ա փեղկիմ պատկերված է բարձրաքանդակ խաչելություն: Խաչի մերքևում Ադամի զանգն է, ձախ և աջ կողմերում կանգնած են Մարիամ Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը: Վերևում Հայր Աստուծո բարձրաքանդակ պատկերն է՝ եռամկյուն լուսապսակով, շրջապատված ամպերով: Ամպերի միջից դեպ Ջրիստոս է իջնում աղավանակերպ Սուրբ Հոգին: Բ փեղկիմ պատկերված է Տյառնըմդառաջը. Աստվածածինը կանգնած, մանուկ Հիսուսը գրկին, որոնց դիմաց, եկեղեցու մեջ, կանգնած է Սիմեոն ճերուժին: Տիրամոր գլխավերևում, ձախ կողմում, դեպի Տիրամայրն է իջնում աղավանակերպ Սուրբ Հոգին: Փեղկի պատկերները շրջանակված են բարձրաքանդակ ծաղկազարդերով: Արծաթե թիթեղը ամրացված է կազմի թիկունքին շրջված դիրքով:

³⁶ Տե՛ս մաս Տեր-Ղևոնդյան Հ., մշվ. աշխ., 1984, Ոկար 6:

³⁷ Կազմն ամբողջությամբ ոսկեզօծ է: Ա փեղկի խաչելության պատկերը մույմությամբ կրկնում է № 5649-ի Ա փեղկի մույմ պատկերին: Նույն է մաս Բրիստոսի դիմաքանդակը (երկար մագերով): Բ փեղկը ևս մախորդի մեծ է պատկերագրված: Աղավանակերպ Սուրբ Հոգին, ի տարբերություն մախորդի, պատկերված է Տիրամոր գլխավերևի աջ մասում: Փեղկի ամկյուններում մեկական երկթե Քրիստոսների բարձրաքանդակ պատկերներ են: Դռնակին և կազմի մեջքին, կնժտոճում, պատկերված է կլոր շրջանակի մեջ բարձրաքանդակ խաչ (մեծաճ № 5649-ի դռնակի խաչին): Ձեռագրի բուն կազմը տախտակե միջուկով շաղամակազույն կաշի է, աստիճան վարդազույն մետաքս: Արծաթակազմը տեղադրելու ժամանակ կտրել-համել են կաշեկազմ փեղկերի եզրերը:

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԱՅՈՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ 1600-ԱՄՅԱԿԻՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆԱՅԿԱԿԱՆ ՏԱՌ-ԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԿԱԶՄԻՉ ԱՐԺԵՔԸ

Հայերենն ունի հարուստ դարձվածանքի, որ բազմաշերտ է ըստ առաջացման ուղիների, ժամանակագրության, կառուցվածքային տիպերի, իմաստային-թեմատիկ խմբերի, ձևաբանական արժեքի և այլն: Բազմաթիվ դարձվածքներ իրենց ծագումով կապվում են ժողովրդական մտածողության, ավանդույթների, հավատալիքների, սովորույթների հետ, մի շարք դարձվածքներ առաջ են եկել հին հունական դիցաբանությունից, գրական ճշանգավոր ստեղծագործություններից, կան այնպիսիները, որոնք առաջացել են պատմական այս կամ այն իրադարձության հետևանքով (կամ ազդեցությամբ) և այլն:

Առանձին շերտ են կազմում այն դարձվածքները, որոնք հայերեն թափանցեցին քրիստոնեության ընդունումից և Սուրբ Գրքի թարգմանությունից հետո, ինչպես՝ *բաբելոնյան աշտարակաշինություն, Սողոմ և Գոմոր, քաղության նոխազ, գայթակղության քար, Նոյի ագռավ, պարարտ հող, ավազի վրա տուն շինել, Աստված վկա, Քրիստոսի հարսնացու*¹ և այլն:

Ե դարի սկզբներից, հայոց գրերի ստեղծմանը զուգընթաց, ձևավորվեցին հայկական տառաճուճները, որոնք ինքնուրույնաբար գործածվելով՝ նախ բառային արժեք ձեռք բերեցին: Այնուհետև ժամանակի ընթացքում դրանցով բազմաթիվ բառեր կազմվեցին²:

Հայկական դարձվածանու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դարձվածքներում որպես բաղադրիչ միավորներ հանդես են գալիս հայկական Այբուբենի ավանդական և ոչ ավանդական տառաճուճներ:

Հայկական տառաճուն բաղադրիչով դարձվածքներն առ այսօր առանձին քննության օյուր չեն դարձել: Սա, ամշուշտ, մասնակի, բայց հետաքրքրական հարց է: Խնդիրը կարևոր է նաև այն առումով, որ նմանատիպ (այսինքն՝ տառաճուն բաղադրիչով) դարձվածքներ կան ուրիշ լեզուներում ևս:

Հայ դարձվածաբանական գրականության մեջ ուղղակի ճշվել է, որ հայերեն բազմաթիվ դարձվածքների հիմնական բաղադրիչ են դառնում նաև դպրությանը վերաբերող բառեր, ինչպես՝ *այք, գիր, գիրք, դաս, թուղթ, կարդալ, հաշիվ, տառ*³: Օրինակ՝ *գլխում մի*

¹ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Խրոմանկեղեցական լեզվական միավորների քննություն, Ա. Էջմիածին, 2002, էջ 35-60:

² Մամրամասն տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայկական տառաճուճների բառակազմական արժեքը, «Էջմիածին» հանդես, 2004, Ա, էջ 59-76:

³ Տե՛ս Ե. Հ. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 94:

այդ չկա - «անգրագիտ է», *զոհ սեն ու սպիտակը ջոկել* - «փոքր-ինչ գրագետ լինել», *մեռած տառ մնալ* - «անփրագործելի մնալ» (օրենքի, որոշման, կարգադրության մասին) և այլն: Իհարկե, սա չի նշանակում, թե տառանում բաղադրիչով դարձվածքները բացառապես դպրությանն են առնչվում, բովանդակային կողմով դրանք հաճախ բոլորովին տառեր պատկեր են ներկայացնում:

Դիցուք է, տառանում բաղադրիչով դարձվածքների մասին մեզանում հատուկեմտ դիտարկումներ են եղել, սակայն մյուս կողմից հարկավոր է նշել, որ այդ դարձվածքները հիմնականում գրանցվել են դարձվածաբանական, քաջատրական և քարքառային բառարաններում⁴, Դրանք փաստական կարևոր նյութ են պարունակում:

Ո՞ր տառանումներն են հանդիպում դարձվածքների կազմում, ինչպե՞ս են առաջացել առ դարձվածքները, իմաստակառուցվածքային ինչպիսի՞ աղերսներ կան այլ լեզուների համամասն կապակցությունների հետ, այս և ուրիշ հարցերի պատասխանը կփորձենք տալ ստորև:

Հայկական տառանում բաղադրիչով դարձվածքները կընենք ըստ տառանումների առկայության:

Հայկական Այբուբենի առաջին և վերջին տառանում բաղադրիչներով դարձվածքներ

Տառանում բաղադրիչով դարձվածային միավորների առաջացման ամենավաղ ժամանակային կետը հայտնի է. քանի որ տառանումները ձևավորվել են գրերի գյուտի ժամանակ (կամ դրանից անմիջապես հետո), ապա դարձվածքները, բնականաբար, դրանցից փոքր-ինչ ավելի ուշ:

Ժամանակագրական տեսանկյունից առաջինը Սուրբ Գրքում գործածված *այդ և քէ* դարձվածքն է: Հմմտ. *ես եմ Այդ եւ ես եմ Քէ, ասէ Տէր Աստուած, որ է՛ն եւ որ է՛ եւ որ գալոցն է, Ամենակալ* (Յայտ. Ա. 8)⁵: Պատճենվել է հին հունարենից, այստեղ կապակցության բաղադրիչները հունական Այբուբենի առաջին և վերջին տառերի անուններն են՝ *ալֆա և օմեգա*: *Այդ և քէ* դարձվածքի մեջ էլ մետրոպյան Այբուբենի առաջին և վերջին տառերն են հանդես եկել:

Սուրբ Գրքի Սահակ-Մեսրոպյան թարգմանության մեջ մյուս դեպքերում գործածվել է կապակցության փոխառյալ ձևը: Հմմտ. *ես եմ Ալփա եւ Ով, Առաջին եւ Վերջին* (Յայտ. Ա. 10), *Եղէ ես Ալփա եւ Ով, Սկիզբն եւ Կատարած* (Յայտ. ԻԱ 6), *ես եմ Ալփա եւ Ով, Սկիզբն եւ Կատարած, Առաջին եւ Վերջին* (Յայտ. ԻԲ 13):

⁴ Հմմտ. Ա. վրդ. Ամատուհի, Հայոց քառ ու քամ, Վաղարշապատ, 1912, Հր. Աճառեան, Փաստական քառարան, Թիֆլիս, 1913, Ստ. Մալխասեանց, Հայերեմ քաջատրական քառարան, Բ.Բ. 1-4, Երևան, 1944-1945: Պ. Ս. Բեդիդյան, Դարձվածաբանական քաջատրական քառարան (դպրոցական, համառոտ), Երևան, 1971 (այսուհետև՝ *ԴԲԲ*), Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Փալտյան, Հայոց լեզվի դարձվածաբանական քառարան, Երևան, 1975 (այսուհետև՝ *ՀԼԴԲ*), Խ. Բադիկյան, Ուսումնական դարձվածաբանական քառարան, Երևան, 2002 (այսուհետև՝ *ՈՒԴԲ*) և այլն: Բնագրային որոշ օրինակներ քաղել ենք հիշյալ քառարաններից՝ մշելով համապատասխան համառոտագրություն-հապավումները:

⁵ Աստուածաշունչ մատեան Հիմ եւ Նոր Կտակարանաց, Հայաստանի աստուածաշունչային ըմկերութիւն, Երևան, 1997:

Այնուհետև դարձվածային այս միավորը փոխանցվել է աշխարհաբարին. հմմտ. *ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան*, - *ասում է Տեր Աստուածը* (Յայտ. Ա. 8)⁶, «*ես եմ Ալֆան, եւ ես եմ Օմեղան*», *այսինքն՝ Սկիզբն ու Վախճանը*, - *ասում է Տեր Աստվածը* (Հայտ. Ա. 8)⁷:

Ալֆա և Օմեղա կապակցությունը շրջասաբար Հիսուս Քրիստոս է նշանակում⁸:

Փոխառյալ ձևն են որդեգրել նաև ուրիշ լեզուներ, և «միջազգային» թևավոր խոսք է առաջացել: Հմմտ. ռուս. *альфа и омега*, օտ *альфа и омега*, գերմ. *das A und O* (*das Alpha und das Omega*) և այլն, ինչպես նաև սեփական Այբուբենի առաջին ու վերջին տառերով կամ տառաճանոցներով՝ ռուս. *от аза до ахуиас*, գերմ. *von A bis Z*, անգլ. *from A to Z*, ֆրանս. *depuis A jusqu' à Z / de A à Z* և այլն⁹:

Այնհայտ է, որ վերոհիշյալ հայերեն վկայություններում սուկ տառադարձության խրճ-դիր կա՝ *ալֆա - ալֆա* (հայտնի է, որ հին հայերենը ֆ հնչյուն չի ունեցել), *ոլ - օմեղա* (5-րդ դարի հայերենը *օ* չուներ, տառադարձում էր *ոլ*). հմմտ. *ոլկիանեան, ոլսամնայ*), *օմեղա - օմեղա*: Արդի արևելահայերենում, թերևս ռուսերենի ազդեցությամբ, նախապատվությունը տրվում է *օմեղա* ձևին: Հմմտ. արևմտ. *Այդ շրջանին ըրած է նաև ուսուցչությունը, Ալֆորվիլի մէջ, ներկայանալով իբր կենդանի քերական և ներկայացնելով իր վրայ հայ լեզուի ալֆան և օմեղան* (ՆՊ, էջ 52) և արևել. *Այնտեղ գտնելու է քոյր ժամանակների գրականությունների, մանավանդ վիպագրության իրավունքն ու գոյությունը վա-վերացնող «ալֆան ու օմեղան»՝ Մարդուն՝ իր հավերժ ծանոթ ու հավերժ դժվար վերծանելի ներաշխարհով* (ԱՀ, 14.05.1986)¹⁰:

Առաջացել է դարձվածային մեկ այլ տարբերակ՝ *այբ և ֆե*, որտեղ *քե*-ի փոխարեն հանդես է գալիս հայերեն այժմյան Այբուբենի վերջին տառի անունը: Հմմտ. *ես եմ Այբը եւ Ֆէն*, Առաջինը եւ Վերջինը, Սկիզբն ու Վախճանը (Յայտ. ԻԲ 13)¹¹:

Սուրբգրային նախադասությունից առաջացել է *ալֆա և օմեղա* -1, որևէ բանի սկիզբն ու վերջը, ամբողջը, 2. հիմնականը, գլխավորը՝ նշանակությամբ դարձվածքը: Օր.՝ *Բայց նրա մտածողության ալֆան և օմեղան կինն էր* (Շ - ՀՀԴԲ, էջ 3): Դարձվածային միավորի գործածության ոլորտը բավական ընդարձակ է՝ գեղարվեստական գրականություն, հրապարակախոսություն:

Ալֆա և օմեղա-ի նշանակություններն ունեն *այբ և քե*, *այբ և ֆե* դարձվածքները:

⁶ Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կտակարանների, Արևելահայերեն մոթ թարգմանություն, Հայաստանի աստուածաշունչային ընկերություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

⁷ Աստվածաշունչ. Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի, Աշխարհաբար մոթ թարգմանություն, Հայաստանի աստվածաշունչային ընկերություն, Երևան, 2001:

⁸ Հմմտ. А. Г. Саркисов, Русско-армянский словарь библейских крылатых слов, Тбили, 2001, ст. 27-28:

⁹ Հմմտ. Фразеологический словарь русского языка под ред. А. И. Молоткова, Москва, 1967, Немецко-русский фразеологический словарь под ред. д-ра Малитс-Клиппельбах и К. Агрикош, Москва, 1975, Французско-русский фразеологический словарь под ред. Я. И. Роткера, Москва, 1963:

¹⁰ Տառաճանոցների միջև որպես կամոն պորձաձվում է և շաղկապը. սա թերևս բացատրություն է: Համոզիպում է նաև առանց միավորիչ շաղկապի, շարահարությամբ: Հմմտ. *Հայոց պատմության Ալֆան է Բեյը, իսկ Օմեղան՝ Ստայինը* (ԱՍ, էջ 61):

¹¹ Աստուածաշունչ. Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի, Աշխարհաբար մոթ թարգմանություն, Ամթիլիան, 1993:

վերջիցներս հանդես են գալիս քանակական և կառուցվածքային տարբերակներով՝ ա) «բացառական հոլովածն + միմչև + հայցական»։ *այբից միմչև քե, այբից միմչև ֆե*¹², բ) «բացառական + հայցական հոլովածն»։ *այբից քե, այբից ֆե, գ* «տառանուն + տառանուն»։ *այբ-ֆե*¹³։

Բոլորն էլ գրքային են։

Նկատելի է, որ նորագույն ժամանակներում տառանուն բաղադրիչների փոխարեն հանդես են գալիս պարզապես տառերը, օրինակ՝ *Ճուտբոլ Ա-ից միմչև Ճ* (Եր., 22.04.2004)։

Իմաստակառուցվածքային նկատելի աղբյուրներ կան վերոհիշյալ դարձվածքների և հետևյալ տառ(անվան)ագործածության միջև. «... ա.բ.գ.ե.միմչև և, օ, ֆ, մեկ մեկ ածական կը գտնես, ըլլայն աշխարհ Արարատ կը վկայե» (ՀՊ, 5, էջ 56)։

Հայկական Այբուբենի առաջին տառանուն բաղադրիչով դարձվածքներ

Այբ-ը Այբուբենի առաջին տառի անունն է, ուստի և բնական է մրա ձեռք բերած «սկիզբ» փոխաբերական նշանակությունը։ Այս դեպքում, ինչ խոսք, դեր են խաղացել նաև *ալֆա-ն*¹⁴, *ալֆա և օմեգա* դարձվածային միավորն ու մրա հայերեն համարժեքները։ Ի դեպ, Այբուբենի առաջին տառի անվան «սկիզբ» նշանակությունը հաստուկ է այլ լեզուների դարձվածքների ևս։

«Սկիզբ» նշանակությունը տեսնում ենք *այբից սկսել* «սկզբից» ամենասկզբից, տարրական բաներից սկսել՝ բայական դարձվածքի մեջ։ Սա ևս գրական - գրքային է։

Արևմտահայերենում գործածվում է սրա բառային-քանակական տարբերակը՝ *այբ-բեն-գիմն* // *այբենգիմն սկսիլ*։ Հմմտ. *Մերացք եմ, մորեն այբենգիմն սկսելու, մոր կեանքի յարմարելու* (ՎԹ, էջ 388)։ Հոմանիշ է *Հայր մերից սկսել* դարձվածքի¹⁵։

Այբ-ը փոխաբերաբար նշանակում է նաև «տարրական գիտելիք»¹⁶։ Դարձվածային մակարդակում առաջին տառանունը բառ-խորհրդանշի արժեք է ձեռք բերել՝ նշանակելով գիրը, գրագիտությունն առհասարակ։ Սրանք մեծ մասամբ քնորոշ են խոսակցական լեզվին, գործածական են նաև որոշ բարբառներում։

Դարձվածային այս նշանակությունը ցայտուն երևում է *այբի կտոր* «գրագիտության նվազագույնը, մի փոքր գրել-կարդալ իմանալը» դարձվածքի մեջ։ Օր.՝ *Նա դուրս եկավ մեր դպրոցից, առանց այբի կտոր անգամ հետը տանելու* (Բ - ՀՀԴԲ, էջ 18)։ Այս դարձվածքի ծավալումից են առաջացել մի քանի դարձվածքներ։

¹² Հմմտ. սրա հակառակ շարադասությամբ կառույցը՝ *Ֆեից միմչև այբ* «վերջից միմչև սկիզբը», որը դարձվածք չէ, բայց կարող է կայունանալ. *Եվ*

Օջախն անմար, օժիտն անհատնում,

Ֆե-ից միմչև Այբ (ԳԷ, էջ 26)։

¹³ «Այբ-ֆե»-ն նաև բաղադրյալ հատուկ անուն է (շաքաթաթերթի, հեռուստատեսային լրատվական ծրագրի, լրագրային էջի)։

¹⁴ Հմմտ. *Իրաւ որ դժբախտ արտեստ մըն է գրելը։ Ին գոհել գիտնալը՝ անոր ալֆամ* (ՀԸ, էջ 54)։

¹⁵ Տե՛ս Ե. Հ. Գևորգյան, *Ոչվ. աշխ.*, էջ 105։

¹⁶ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի քաղաքական բառարան, Երևան, 1976, էջ 38։

Գլխում մի այր չկա, այսինքն՝ «անգորագետ, տգետ է, գրել-կարդալ չգիտի», որի արևմտահայ բարբառային տարբերակն է *գլուխը այր մը չկայ*: *Գլխում մի այր չկա* և *այրի կտոր* դարձվածքների թաղարկության հետևանքով է առաջացել *գլխում այրի կտոր չկա* -չափազանց տգետ է, ոչինչ չի հասկանում» դարձվածքը: Բարբառային է *գլխումը այրի կտոր չկա* կառույցը, որտեղ ներգոյական հոլովածներ որոշյալ հոդով է:

Առավել արհամարհական-հեզմական երանգավորում ունի այս դարձվածքի բառային տարբերակը. առաջին թաղադրիչի փոխարեն այլ բառային միավոր է հանդես գալիս՝ *փորում այրի կտոր չկա*: Օր.՝ *Քաղաքական ոչ մի հարց չկար, որ նա անձամբ չքննարկեր, թեև, ինչպես նույն Մաղաքանց Այսերն էր նկատում*՝ «փորում այրի կտոր չկար» (ԽԳ, էջ 555): Դարձվածքը ձևավորվել է խոսակցական լեզվում¹⁷, այնուհետև անցել գրականին:

Բայական թաղադրիչի փոփոխումով ստեղծվել են դարձվածքի բառային-քերականական տարբերակները՝ *փորում այրի կտոր չգտնվել / չլինել / չունենալ*: Օր.՝ *Շատի փորում, հինգ օր ման գաս, մեկ այրի կտոր չես գտնիլ* (ԽԱ, էջ 54): Ինչպես նկատելի է, *մեկ-ը* դարձվածքի կառուցման անդամ է (ինհարկն, որոշակի սաստկական ճշանակությամբ). հսմտ. *այրի կտոր և մեկ այրի կտոր*:

Բարբառներում սովորական է որոշյալ հոդով գործածությունը՝ *փորումը այրի կտոր չկա*. հսմտ. *գլխումը այրի կտոր չկա*:

Դարձվածքի բառային մյուս տարբերակում *այր* թաղադրիչի փոխարեն հանդես է գալիս *Այբուբեն-ը*՝ *փորում Այբուբենի կտոր չլինել / չգտնվել*. հայտնի է, որ *Այբուբեն* բառը փոխաբերաբար ճշանակում է «գրաճանաչություն, գրագիտություն», «որևէ ասպարեզի տարրական գիտելիքներ, հիմունքներ»: Այսինքն՝ *այր-ը* և *Այբուբեն-ը* այս պարագայում համարվեք են դառնում:

Վերոհիշյալ՝ *փորում այրի կտոր չկա* դարձվածքի կրճատումից է առաջացել *այբը փորում* դարձվածային միավորը: Օր.՝ *Նա զա ինձ հետ ինչի՞ մասին խոսի, զրո գեղացի, աշխարհի այբը նրա փորում* (ԽԳ, էջ 503):

«Անգորագետ է» ճշանակությունն ունեն *այր է տեսնում, մարդակ*¹⁸ է *կարծում / այբը տեսնելիս, մարդակ կը կարծեն*¹⁹ և *փորը ճեղքես մէ, այբ մը չէլլեր* նախադասությամբ արտահայտված դարձվածային միավորները: Առաջին արտահայտությանը իմաստով և կառուցվածքով նման է *այբը տեսնայ՝ պապում սանտրը կը գիտնայ* արտահայտությունը:

Նույն «անգորագետ, տգետ, թերուս» իմաստն են արտահայտում տարբերակային երկու դարձվածքներ՝ բարբառային-ժողովրդական *այբը փալատով բռնել*, բարբառային *այբը չանգալով բռնել*, որտեղ տարբերակայնության հիմք են ծառայել *փալատով* – *չանգալով* ձևերը: Սրանցում բայը, որպես կանոն, գործածվում է սահմանական եղանակի ներկա ժամանակով:

Դարձվածքներում *այբ* թաղադրիչը հանդիպում է նաև հայկական Այբուբենի երկրորդ տառանգվան հետ:

¹⁷ Տե՛ս Գ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 62:

¹⁸ Այսինքն՝ «տաճիկի գերան»:

¹⁹ Այս կապակցությունը մի դեպքում առած է դիտվում (տե՛ս Ա. Տ. Ղաճալաճյան, Առանձնի, Երևան, 1960, էջ 54), մեկ այլ դեպքում՝ դարձվածք (տե՛ս Ա. Մ. Սուրիսյան, Ս. Ա. Գալստյան, ՁԺ. քառադարձ, էջ 18): Առանձնի և դարձվածքների սահմանների հստակեցումը դարձվածաբանության կարևոր խնդիրներից է:

հմնտ. գերմ. Wer A sagt, muss auch B sagen, ֆրանս. qui dit A dit (doit dire) B և այլն:

Իրար հաջորդող տառաճուճներ կան *եղը ձգենք, զան մայինք / մայենք* դարձվածքի մեջ: Նշանակում է «անցնենք մեր բուն մյութին, այդ թողնենք, բուն գործին անցնենք»: Նշվում է որպես Պոլսո բարբառի դարձվածային միավոր²¹:

Մեզ թվում է, որ ուղղակի գործ ունենք հաջորդական տառաճուճներից կազմված դարձվածային միավորի հետ: Որ տառերի և տառաճուճների հաջորդական գործածությունը «նստած է» մեր մտածողության մեջ, լավագույնս վկայում է հետևյալ հատվածը (ի դեպ, այստեղ հենց քննարկվող տառերն ենք տեսնում). «Ա... կենդանին Բ... կենդանինն քույրը կը սիրե և կ'ուզե զայն իրեն կնության առնուլ: ... Գ...ը Դ...ին մեծ զուսար մը պարտը ունի: ... Ե...ը Զ...են բարիք մը կ'ակնկալե» (ՀՊ, 5, էջ 155):

Հայկական Այբուբենի առանձին տառաճուն բաղադրիչներով այլ դարձվածքեր

Ինչպես տեսանք, հայկական տառաճուճներից առանձնաբար հանդես է գալիս *այբ*-ը: Ընդամենը երկու դարձվածքում ունենք *ճե* տառաճունը, որը բառակազմական արժեքից անցած գուրկ է: *Ճե*-ով դարձվածքները հակաճիշդներ են: Այսպես, *ճեի պոչը երկարացնել* «երկարաբանել, խոսքը ձգձգել» և *ճեի պոչը կարճ անել* - «երկար չխոսել, խոսքը կարճ կապել»: Սրանք խոսակցական ծագում ունեն, բայց այսօր հնացած են:

Կարծիք է արտահայտվել, թե դարձվածքը ծագել է որոշ կակազների արտասանությունից, որոնք *ճ* արտասանելիս այն տևաբար կրկնում են²²: Մեզ այս բացատրությունը չիովին անհավանական է թվում: Եթե անցած համաձայնենք այս տեսակետին, առկախ է մնում հիմնական հարցը, թե ինչու է հենց այս տառաճունը կիրառվել: Ավելի հավանական է այն տառի գրության հետ կապելը. *ճ* գրելն անվարժ մարդկանց համար որոշակի դժվարություն է ներկայացնում:

Արդի խոսակցական հայերենում (հատկապես երիտասարդների խոսքում) գործածվում է *ճը կարգի* դարձվածային միավորը (հանդես է գալիս տառի ոչ ավանդական անվանումը), որ նշանակում է «հետին» ստորին կարգի»: Համեմատելի է *առաջին կարգի, երկրորդ կարգի* բաղադրյալ անվանումների: Կարելի է ենթադրել, որ առաջացել է սրանց նմանակությամբ՝ իբրև վերոհիշյալների հակադրություն. Այբուբենում *ճե*-ն թվային արժեքով հավասար է 100-ի:

Այսպիսով, կարելի է հետևյալ ամփոփիչ նկատառումներն անել:

²¹ Տե՛ս Հր. Աճառեան, *Ոճվ. քառարանը*, էջ 296: Հր. Աճառյանը կարծում է, որ դարձվածքը կազմվել է *զայն մայինք* - «այն թանը մայենք» կապակցությունից՝ թառախաղ կազմելով. *զայն - զան*: Դայն հենց Աճառյանն էլ վկայում է, որ *եղ*-ը բառային արժեք ունի քոլորովին այլ բարբառային տարածքում՝ Ղարաբաղի ընթացողում, և նշանակում է «հետույք» (*ետն* բառի առաջին տառի ամուճն է վործածվել քաղաքավարության՝ բարեկրթության նպատակով):

Ստ. Մալխասյանը *ճուճ* է ասում՝ ավելացնելով «հավանորեն» երկրաչափական (տե՛ս Ստ. Մալխասեան, *Ոճվ. քառարանը*, հ. 1, էջ 564):

²² Հմնտ. Ստ. Մալխասեան, *Ոճվ. քառարանը*, հ. 3, էջ 209:

Հայերեն դարձվածքների կազմում, ի տարբերություն բառերի, հանդես են գալիս սահմանափակ թվով տառանդումներ՝ *այբ, բեն, գիմ, եչ, զա, ճե, քե, ֆե* :

Տառանդում քաղադրիչով դարձվածքներն առաջացել են՝

ա) հայերենում ինքնուրույնաբար, առանց օտար ազդեցությունների, ինչպես՝ *այբ ու բենի հոտն առնել, ճեի պոչը երկարացնել, այբը փախստվ բռնել*,

բ) օտար լեզուների դարձվածային միավորների պատճենման կամ դրանց մանակության հետևանքով, ինչպես՝ *այբ և քե, այբից մինչև քե, այբից սկսել, այբ ասողը բեն էլ պիտի ասի*,

գ) հայերեն արդեն գոյություն ունեցող դարձվածքների համաքանությամբ, ինչպես՝ *ճեի պոչը կարճ առնել, այբից ֆե, այբը չանգալով բռնել* և այլն:

Տառանդումներով դարձվածքները ժամանակագրական տարբեր շերտերի են պատկանում. 5-րդ դարի գրաբարից է ավանդված *այբ և քե* դարձվածքը, մնացածները նոր ժամանակների իրողություններ են:

Տառանդում քաղադրիչով դարձվածքները ռիմնականում գրքային ծագում ունեն, մի քանիսն առաջացել են ժողովրդական խոսքում:

Իմաստային կողմով դրանք զգալի չափով առնչվում են գրագիտությանը, կրթությանը ու դաստիարակությանը:

Տառանդումներով դարձվածքների կազմը, թվում է, ծավալվելու հնարավորություններ գրեթե չունի. ավանդական տառանդումները մեզանում գործածության խիստ սահմանափակ շրջանակ ունեն: Դա կարող է լինել միայն օտար որոշ դարձվածքների հայերեն համարձեքները ստեղծելու ճանապարհով:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԷ - *Գևորգ Էմին*, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1985:

ԵԵ - *Երեկոյան Երևան* (օրաթերթ)

ԵԹ - *Եթեր* (շաբաթաթերթ)

ԽԱ - *Խաչատուր Աբովյան, Վերջ Հայաստանի, Երևան, 1981*:

ԽԳ - *Խաժակ Գյուլնազարյան, Զրադացը, Երևան, 1989*:

ՀԹ - *Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1959*:

ՀՊ - *Հակոբ Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 4, հ. 5, Երևան, 1965*:

ՀՕ - *Հակոբ Օշական, Հարիւր մէկ տարուամ, Հաճի Ապտուլլահ, Երևան, 2000*:

ՆՊ - *Նշան Պէշիկթաշեան, Ծաւարշ Նարդունի, Մաղրանկարներ, Փարիզ, 1938*:

Ը - *Օհրվանգադե*

ՊՊ - *Պերճ Պոռշյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962*:

ՍՀ - *Սովետական Հայաստան* (օրաթերթ)

ՍՍ - *Սիմոն Սիմոնեան, Կը խնդրուի խաչածնել, Բեյրութ, 1965*:

ՎԲ - *Վիկտոր Բալայան*

Բ - *Բաֆֆի*

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎՈՐԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԻՄՆԱԴՐՄԱՆ 130-ԱՄՅԱԿԻՆ

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

Բաժնաժողովական գիտությունների դոկտոր

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ (ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ)

Գարեգին Լևոնյանի ընդգրկումը լայն էր, հետաքրքրությունները՝ բազմազան, ծրագրերը՝ շատ... Նա տասնյակ տարիների ընթացքում, իր անխոնջ գործունեությամբ հիշեցնելով ժողջան մեղվին, հավաքել է կուտակել է հսկայական փաստական նյութ... ԱՎԵՏԻԶ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հայագիտական երեք մշակավոր ուսումնական հաստատություններ (Մոսկվայի Լազարյան ճեմարանը՝ 1815-1921 թթ., Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը՝ 1824-1924 թթ., և Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ 1874 թվականից առ այսօր) մեծ ու արգասավոր դեր են խաղացել հայ մտավորականության կյանքում:

Գևորգյան Ճեմարանի մտավորականության փառանքի երախտավորներից մեկն էլ աշուղ Զիվանու որդի Գարեգին Լևոնյանն է:

ՀԻՍՆՀ արվեստի վաստակավոր գործիչ, Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, «Գեղարվեստ» հանդեսի հիմնադիր ու հրատարակիչ, պրոֆեսոր, Գևորգյան Ճեմարանի դասախոս Գարեգին Լևոնյանը ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) մեծահամբավ ժողովրդական երգիչ-աշուղ Զիվանու ընտանիքում 1872 թ. նոյեմբերի 11-ին:

Հայ հոգևոր և նյութական մշակույթի պատմության մեջ չկա մի բնագավառ, ուր իր լուսնային ցերեղած չլիմի արվեստի տեսաբան ու պատմաբան, բանասեր Գարեգին Լևոնյանը, աշուղական արվեստ, տպագրության պատմություն ու արվեստ, պարբերական մամուլի պատմություն, գրականություն և թարգմանություն, մանկավարժություն և լրագրություն, թատրոն և երաժշտություն, պար, կերպարվեստ և ճարտարապետություն... Ահա ոչ լրիվ ցանկն այն բնագավառների, ուր դրսևորվել են տքնաջան ու բազմաբեղուն արվեստի մշակի հմտություններն ու կարողությունները: Եթե ասվածին ավելացնենք նաև «Գեղարվեստ» գրական-գեղարվեստական-երաժշտական պատկերազարդ հանդեսի հիմնադրման նրա ազգանվեր գործը, ավելի կամքողջանա Գ. Լևոնյանի դիմանկարը:

Ակերբական կրթությունը ստացել է իր ծննդավայրի թեմական դպրոցում՝ դասընկերը լինելով Ավետիք Խսանկյանի: Դպրոցն ավարտելուց հետո նա մշակակվում է հայրենի քաղաքի «Շիրակ» գրավաճառանոցի կառավարիչ: Սա հենց այն միջավայրն էր, որտեղ

ապառաջ բանասերը լուսինից շփվեց գրականությանը ու արվեստի ժամանակի նշանավոր դեմքերի և ընթերցասեր շիրակեցիների հետ, որը և նշանակալից դեր խաղաց իր հետագա գոյծունեությունում:

Հետաքրքրասեր երիտասարդի համար կյանքի ուրույն դպրոց եղավ նաև հայրական տունը, ուր հաճախ էին հավաքվում ինչպես տեղի, այնպես էլ Թիֆլիսից և այլ քաղաքներից ու գյուղերից Ալեքսանդրապոլ այցելող գրողներ, արվեստագետներ, աշուղներ ու երգիչներ: Կազմակերպվում էին հետաքրքիր ասուլիսներ, երեկույթներ, բանավեճեր, որոնց զոռնե միշտ ներկա էր լինում աշուղական բանաստեղծության ու երգի նկատմամբ հատուկ սեր տածող ապագայի մեծ բանաստեղծը՝ Ավետիք Իսահակյանը: Պատահական չէ, որ նրա երգերի մի շարքն էլ կոչվում է «Աշուղական երգեր»: Նշելի է հատկապես այն, որ Ավ. Իսահակյանը Թիֆլիսում մուսկաթ հաճախ է այցելել աշուղ Զիվանուն և միշտ մնացել նրա որդու հավատարիմ ընկերը:

Հայրական տան մթնոլորտը, հայ աշուղական երգարվեստի հետ շփվելը, հայ բանաստեղծների ու աշուղների խոսքն ու նվագն այնքան են հմայում երիտասարդ Գարեգինին, որ նա սկսում է գիտականորեն զբաղվել աշուղական արվեստով, որի արդյունքը լինում է նրա բանասիրական երախայրիքը՝ «Հայ աշուղներ» գիրքը, որը լույս է տեսնում 1892 թվականին: Այն շատ է ոգևորում 20-ամյա ստեղծագործողին, և երկու տարի անց նա հրատարակում է «Հայ պարբերական մամուլը» աշխատությունը: Գրավաճառների միջոցով արտաքին աշխարհի հետ ունեցած նրա կապը երիտասարդ բանասերի համբավը Օիրակի դաշտից հասցնում է Վենետիկ: Գիրքն արժանանում է Ղևոնդ Ալիշանի գնահատությանը, և հեղինակին շնորհվում է Սահակ-Մեսրոպյան մրցանակ:

Լևոնյանի համար գործունեության ավելի լայն ասպարեզ է բացվում Թիֆլիսում, ուր նրանց ընտանիքը փոխադրվում է 1895-ին: Այստեղ արդեն իր երկու աշխատություններով անուն հանած Գարեգինն անմիջապես աչքի է ընկնում և շրջապատվում գրողներով, արվեստագետներով ու գիտնականներով: Նրա համար բացվում է գործունեության լայն ասպարեզ: Նա մոտիկից կապվում է տեղի խմբագրությունների, գրադատարակիչների ու արվեստագետների հետ, անձնական ծանոթություն հաստատում Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Մուրացանի, Պոռշյանի, Սուրդուկյանի և ժամանակի գրական-հասարակական մտքի այլ ներկայացուցիչների հետ: Այս նոր միջավայրը հարստացնում է Գ. Լևոնյանի գիտելիքների պաշարը, զգալի չափով ընդլայնում նրա մտահորիզոնը:

Արվեստների նկատմամբ ունեցած մախափրությունները Լևոնյանին տանում են Մոսկվա, որտեղ մեկ տարի նկարչական դասեր առնելուց հետո՝ 1897-ին մեկնում է Սանկտ Պետերբուրգ և ընդունվում Գեղարվեստների ակադեմիա: Այստեղ 5 տարի ուսումնասիրում է արվեստների պատմություն:

1902 թ. ավարտելով Պետերբուրգի ակադեմիան՝ Լևոնյանը վերադառնում է Թիֆլիս: Ընճապարհին, Ղրիմով վերադառնալիս, նա Սիմֆերոպոլում մի երկու օրով հյուրընկալվում է իր վաղեմի բարեկամի տանը: Ընկերը նրան ծանոթացնում է այստեղ բնակություն հաստատած Դորպատի համալսարանի Գախկին սան Գևորգ Դոդոխյանի հետ:

Դոդոխյանը պատմում է, որ իր «Միծեռնակ» բանաստեղծությունը շատ է դուր եկել «Քնար Հայկական» զրքի հրատարակիչ Մ. Միսնաբայանին, և առաջինը նա է տպագրել:

Գ. Լևոնյանը Գևորգյան ժեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանից վաղուց էր հրավեր ստացել ճեմարանում գեղարվեստի պատմություն և նկարչություն դասավանդելու, որը սիրահիժաբ հանձն էր առնում:

1902-1907 թթ. Լևոնյանը Էջմիածնի ժեմարանում մանկավարժական աշխատանքին զուգահեռ հանգամանորեն ուսումնասիրում է Մայր Աթոռի հարուստ մատենադարանի ձեռագիր ու տպագիր գործերը: Գրչագիր մատյաններից նա ընդօրինակում է հայ մանրանկարչության բազմաթիվ նմուշներ և բավականին նյութ հավաքում իր ապագա հետազոտական աշխատանքների համար:

Էջմիածնյան հինգ տարիներն արվեստասեր ու արվեստագետ Լևոնյանի համար լինում են ամենահետաքրքիր ու արգասավոր տարիները: Նա իր սաների հետ աշխատում էր մեծագույն սիրով ու նվիրումով՝ նրանց կապելով հայ արվեստի բազմադարյան պատմությանն ու մանրանկարչության արվեստին: Միևնույն ժամանակ այստեղ նրա համար ստեղծվում է ընկերական մի հրաշալի միջավայր: Նրան հոգատարությամբ են շրջապատում Ամենայն Հայոց Կաթողիկոս Նրբիմյան Հայրիկը, հետևում երաշտական կրթություն ստացած Կոմիտաս Վարդապետը, Մոսկվայի Լազարյան ժեմարանի շրջանավարտ Հ. Հովհաննիսյանը, Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Ա. Տեր-Պետրոսյանը, Ս. Տեր-Ավետիսյանը և շատ ուրիշներ: «Էջմիածնի ժեմարանում գտա ջերմ մթնոլորտ և մտերիմ շրջան», - իր հուշերում գրում է Գ. Լևոնյանը:

Նա բնութագրական գեղեցիկ հուշեր է թողել իր մտերիմ ընկերների մասին: Ժեմարանում Լևոնյանը մտերմանում է բանաստեղծ, ռուսաց լեզվի դասախոս Հովհաննես Հովհաննիսյանի և երաժշտության դասախոս ու խմբավար Կոմիտաս Վարդապետի հետ:

Ահա թե ինչպես է գնահատում ու բնութագրում Հ. Հովհաննիսյանին. «Նա ընդհանուր հարգանք էր վայելում ճեմարանի ինչպես ուսուցչության, այնպես էլ աշակերտության և ուսանողության կողմից: Այդ հարգանքը նա վաստակել էր թե՛ որպես բանաստեղծ, թե՛ որպես ուսուցիչ-մանկավարժ և թե՛ որպես մարդ»: Գրում է, որ նա մեծ էր ուղիքիա ուներ պատմության, գրականության և արվեստի քննադատական, քաջածանոթ էր ռուս և արևմտաեվրոպական գրականությանը:

Ժեմարանում Լևոնյանի ամենամոտիկ ընկերը Կոմիտասն էր: Նրան Լևոնյանն առաջին անգամ հանդիպում է 1890-ին, երբ գետ Կոմիտասը ճեմարանի ուսանող էր և վաճառում հայտնի էր ձայնեղ երգիչ Սողոմոն սարկավազ անունով: Ռեանից հետո նրան վերստին հանդիպում է 12 տարի անց, երբ հրավիրվել էր ճեմարանում աշխատելու: «Այս հիմնարկության մեջ մեր միասին պաշտոնավարությունը տևեց հինգ տարի (1902-1906 թթ.): Ես ժամանակ ունեի թե՛ դպրոցում և թե՛ դրսում լավ ճանաչելու Կոմիտասին, որպես արվեստագետ-մանկավարժի, որպես մարդու և ընկերոջ», - գրում է Լևոնյանը: Եվ այդ հինգ տարիների մտերմությունը նրան լիովին հմարավորություն է տալիս ըստ ամենայնի ճանաչելու, բնութագրելու և ներկայացնելու Կոմիտասին, ում մասին արժեքավոր հուշեր ունի:

Ասում է, որ Կոմիտասը քնում էր՝ սենյակի պատուհանը բաց, առանց մերքնակի ու բարձի՝ ուղղակի հատակի վրա՝ տակն ու վրան մեկական սավան գցելով. «Կարելի է ասել՝ ապրում էր ասկետական կյանքով»:

Իսկ ինչպիսիք էր Կոմիտասն իր գիտական ու աշխատանքային գործունեության մեջ. «Իր գիտական ուսումնասիրությունների, իր երաժշտական ստեղծագործությունների պրոգնոստիկան էր, ծամր ու զուսպ, ինչպես մի գերման գիտնական, իր դպրոցական-մանկավարժական պարապմունքների, իր համերգային փորձերի ժամանակ լուրջ էր, խիստ և պահանջկոտ... Այսպիսիք էր Կոմիտասը»,- գրում է Լևոնյանը՝ ավելացնելով նաև, թե այնպես գեղեցիկ էր գրում, որ նրա ձեռագրերից կարելի էր կլիշե պատրաստել:

Լևոնյանը բավականին հիշարժան դեպքեր է պատմում Էջմիածնում Կոմիտասի ծավալած գործունեության մասին: Հիշենք դրանցից մի երկուսը: Կոմիտասը Էջմիածնի իր քնակարանը դարձրել էր մի տեսակ «վերնատուն», որտեղ գրեթե միշտ հավաքվում էին ոչ միայն ճեմարանական իր գործընկերները, այլև այստեղ էին գալիս Թիֆլիսից, Երևանից, Մոսկվայից ու արտասահմանից Էջմիածին եկած գրականության ու արվեստի մարդիկ: Այստեղ Կոմիտասին է այցելում ֆրանսիացի հայտնի երաժշտագետ Պյեր Օբրին, որն իր հուշերում գրում է. «Էջմիածնի ճեմարանը հայագիտության բուն օրրանն է... Ճեմարանը միաժամանակ հոգևոր ու աշխարհիկ դպրոց է... Մեյքի աշակերտ Հրաչյա Աճառյանը այստեղ համեմատական քերականություն է դասավանդում... Ճեմարանում Կոմիտասի շնորհիվ երաժշտությունը մոր թափ է ստացել... Նա սովորեցնում է մուլմիսկ եվրոպական երաժշտություն... Վերջապես գործիքային երաժշտությունն էլ թերագնահատված չէ...»:

Օբրին լսելով Կոմիտասի քառաձայն երգչախմբի համերգները՝ բացականչում է. «Կեցցեն ժողովրդական երգերը, և ավելացնում դրանց ժողովրդի կենսունակության նշան են, և մեր լսածներում զգացի՞նք հայկական ոգին, նրա ըմբոստ ճիչերը, սիրտ երգերը, Մշո հուսալի ազատության ճիչը: Կոմիտասն իրավացիորեն ասաց, որքան ապրի հայկական երաժշտությունը, այնքան կապրի Հայաստանը»:

Կոմիտասի «վերնատուն» հետ կապված՝ Լևոնյանը պատմում է նաև իր հոր՝ աշուղ Զիվանու (իր խմբով) Հ. Թումանյանի հետ Կոմիտասին այցելելը: Մի քանի օր հյուրերը Կոմիտասի հարկի տակ հրաշալի ժամանակ են անցկացնում: Կոմիտասը ձայնագրում է Զիվանու «Ծիրանի ծառ», «Այս կորավ», «Սասունա սար», ինչպես նաև Գուսան Օհրիցի «Այգեպան» երգերը: Այստեղ Թումանյանը երգում է քոլորի համար անծանոթ իր գրած ու եղանակած հետևյալ երգը՝

Այս, ինչ լավ են սարի վրա
Անցնում օրերն՝ անո՜ւշ, անո՜ւշ,
Անըջային, թեթևասահ՝
Ամպն ու ձուկերն՝ անո՜ւշ, անո՜ւշ...

Ներսիսյան այգում զբոսնելիս՝ Կոմիտասը Թումանյանին ասում է, որ շուտով ավարտելու է «Անուշ» օպերան՝ և պատրաստվում է գրել նաև «Կարմիր վարդան» ու «Սասնա ծռեր» օպերաները, և որ վերջինիս լիբրետոն գրելու է Մանուկ Աբեղյանը:

Իր սիրելի հյուրերին ճանապարհելուց առաջ Կոմիտասը Ճեմարանի դահլիճում մի հատուկ երեկույթ է կազմակերպում նրանց պատվին, որի նպատակն էր նաև աշուղական երգն ու նվագն իր ուսանողներին ծանոթացնելը, ինչպես նաև՝ իր մշակած երգերը հյուրե-

որին լսելի դարձնելը: Երեկոյի բացման խոսքը ինքը՝ Կոմիտասն է ասում՝ հանգամանորեն վերլուծելով աշուղական երգարվեստը, իսկ Զիվանու մասին խոսում է Հ. Հովհաննիսյանը: «Երեկոն անցավ փայլուն հաջողությամբ: Գոհ մնացին թե՛ հանդիսականները և թե՛ աշուղները»,- գրում է Գարեգին Լևոնյանը:

Գ. Լևոնյանը հիշում է նաև հետևյալ դրվագը. «Հիմզերորդ դասարանցիները քննություն էին հանձնում եկեղեցական պատմությունից: Պատասխանում է այդ առարկայից թույլ, բայց երաժշտությունից ուժեղ մի աշակերտ, որին Կոմիտաս Հայր Սուրբը շատ էր սիրում:

- Ասա՛, տղան,- հարց է տալիս եպիսկոպոսներից մեկը,- ո՞վ է կառուցել Հոփսիսմեի վանքը:

Աշակերտը վարանում է պատասխանել ու խեղճ-խեղճ մայում է Կոմիտասի երեսին՝ կարծես աղերսելու՝ մի կերպ օգնել իրեն: Կոմիտասը հասավ օգնության, ուրիշների համար անկատելի կերպով նա աջ ձեռքը մի քանի անգամ խփեց կրծքին, այսինքն՝ ուզում էր հիշեցնել, թե՛ «Հիշիր՝ Կոմիտաս Կաթողիկոսը՝ 7-րդ դարում»:

Իսկ խեղճ աշակերտն այնպես շփոթվեց, որ հանկարծակի գոռաց.

- Հոփսիսմեի վանքը կառուցել է Կոմիտաս Հայր Սուրբը»:

Գարեգին Լևոնյանը վաղուց էր միտք հղացել Էջմիածնում հրատարակել գրական-երաժշտական մի շքեղ հանդես: Այդ մասին նա խորհրդակցում է Կոմիտասի հետ: Նա հավանություն է տալիս մտահղացմանը և համաձայնում՝ ամսագրի երաժշտական մասն ինքը խմբագրել: Երկուսով որոշում են ամսագրին տալ «Գեղարվեստ» բարեհունչ ու բովանդակալից անունը: Թույլտվություն ստանալու համար նրանք դիմում են Երևանի նահանգապետին: Ստեղծվում է խմբագրական խորհուրդ, որի կազմում էին նաև Մ. Արեղյանը, Հ. Հովհաննիսյանը, Սպիրիդոն Մելիքյանը և էլի ուրիշներ: Բավական մյուս էր հավաքվել, և առաջին համարը գրեթե պատրաստ էր, երբ նահանգապետից բացասական պատասխան են ստանում: Մերժումը պատճառաբանված էր նրանով, որ գյուղն իրավունք չունի նման հանդես հրատարակելու (իսկ այն ժամանակ Էջմիածինը գյուղ էր) և երկրորդ, որ Կոմիտաս Սողոմոնյանը ռուսաճապատակ չէ և իրավունք չունի խմբագրի պաշտոնում հաստատվելու: Դա 1905 թվականն էր:

Լևոնյանն իր այդ գեղեցիկ ծրագիրն իրագործեց Թիֆլիսում՝ 1908 թվականից: 1907-1908 ուսումնական տարում Գ. Լևոնյանը հրավիրվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում աշխատելու: Այստեղ նա դասավանդում է հայ արվեստի և հայ թատրոնի պատմություն, ինչպես նաև նկարչություն ու գեղագիտություն: Թիֆլիսում Լևոնյանի համար ստեղծագործելու ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ նա հատուկ դասընթացներ է կազմակերպում՝ նվիրված գրականությանը և արվեստին: Դասընթացներին սիրով մասնակցում են ոչ միայն Ներսիսյանի աշակերտներն ու ուսուցիչները, այլև թիֆլիսահայ արվեստասեր ու գրականության հետ կապված մտավորականությունը: Նա միաժամանակ կազմում ու հրատարակում է դասագրքեր, ինչպես՝ «Հայկական վայելչագրություն և գեղագրություն» (1908), «Գծագրություն և նկարչություն» (1909), պատրաստում է գրչարվեստի պատմության ու նկարչության ուսուցիչներ:

Կոմիտասը Թիֆլիս այցելելիս միշտ հանդիպել է իր սիրելի ընկերոջը, մշտապես եղել ճրանց տանը և Գարեգինի մորից տեղեկություններ գրառել Ալեքսանդրապոլի երգերի ու պարեղանակների վերաբերյալ, հորից էլ լսել ու ձայնագրել Զիվանու երգերից: Կոմիտասին ուրախություն է պատճառել Զիվանու ընծայագրող ստացած հայ երաժշտության տեսությանը վերաբերող գիրքը՝ հրատարակված Պոլսում: «Նա ուրախացավ անչափ, երեսայի պես՝ ստանալով իր համար այդպիսի հազվագյուտ Գվեր»,- գրում է Լևոնյանը:

Եարուցակելով իր հուշերը Կոմիտասի մասին՝ Լևոնյանը ասում է, որ հրան վերջին անգամ հանդիպել է Բեպիհնու 1914-ին: Դրանից հետո կապը կտրվել է: Սկսվել էր Առաջին համաշխարհայինը, որին էլ հաջորդել էր Մեծ եղեռնը:

Հետաքրքիր է նաև Գ. Լևոնյանի «Վաղաժամ հոգեհանգիստ» վերջին հուշը Կոմիտասի մասին: Նա գրում է, որ 1921 թ. Թիֆլիսում մի օր հանդիպել է Եղիշե Թադևոսյանին, որը ցավով հայտնել է, որ Փարիզի հոգեբուժաբաններից մեկում վախճանվել է Կոմիտասը, այդ մասին գրել են Պոլսի թերթերը:

Հայ մտավորականները Թիֆլիսի կոմսերվատորիայի դահլիճում կազմակերպում են ճոխ սգահանդես: Բացման խոսքով և «Կոմիտասի կյանքն ու գործը» ելույթով հանդես է գալիս Գարեգին Լևոնյանը: Ցավակցական խոսքեր են ասում նաև հայ ու վրացի մտավորականներ: Թիֆլիսի թերթերը տպագրել են այդ տխուր լուրը և սգո երեկույթի արարողությունը:

«Ծառ չանցած Պարիզից ստացանք հաստատ տեղեկություն, որ Կոմիտասն ապրում է իր վիճակում: Ուրեմն մեր հոգեհանգիստը և սգահանդեսը եղել է վաղաժամ»,- այսպես է ավարտում Գ. Լևոնյանը իր հուշերը Կոմիտասի մասին:

1906 թ. Լևոնյանը մեկնում է Լայպցիգ ու մասնագիտանում փորագրության արվեստի մեջ:

Լայպցիգից վերադառնալով Թիֆլիս՝ Լևոնյանը ձեռնամուխ է լինում իր փափայած ծրագրին՝ իրականացնել «Գեղարվեստի» հրատարակությունը: Այս նպատակով հրաշքում են համախմբվում ժամանակի արևելահայ ու արևմտահայ մտավորականներից շատերը՝ Կոմիտաս, Հ. Հովհաննիսյան, Ավ. Իսահակյան, Հ. Թումանյան, Վ. Տերյան, Ե. Չարենց, Վ. Փափազյան, Ծիրվանզադե, Գ. Սումդուկյան, Դ. Վարուժան, Փ. Թերլեմեզյան, Արշակ Չոպանյան, Թորոս Թորամանյան, Ռոմանոս Մելիքյան, Ստ. Զորյան, Ծ. Կուրդինյան, Հ. Հակոբյան և ուրիշներ:

Այս նվիրյալների ջանքերով 1908 թ. Թիֆլիսում լույս է տեսնում արվեստագիտական, գրական-երաժշտական պատկերազարդ «Գեղարվեստ» ամսագրի առաջին համարը:

Դեռ Էջմիածնում հավաքած առատ նյութի շնորհիվ նույն թվականին լույս է տեսնում նաև հանդեսի երկրորդ համարը՝ իր շուրջը համախմբելով ավելի շատ արվեստագետների, գրականագետների, բանաստեղծների, թարգմանիչների և գրականության ու արվեստի հետ կապված շատ մտավորականների: Իսկ իճշո՞վ էր պայմանավորված «Գեղարվեստի» նման հաջողությունը. ամենից առաջ այն հանգամանքով, որ հանդեսն ընդգրկում էր գրականության ու արվեստի գրեթե բոլոր բնագավառները՝ գրականություն, գրաքննադատություն, գրականագիտություն, պատմություն:

Հայացիտությանը և հայ արվեստին նվիրված հոդվածներում մասնագիտական բարձր մակարդակով լուսաբանվում էին ազգագրության, ճարտարապետության, ճարտասանության, երաժշտության, պարարվեստին ու կերպարվեստին նվիրված բազմազան հարցեր: Տպագրվում էին քննադատական հոդվածներ, ուսումնասիրություններ ու ակնարկներ ժամանակի հայ, ռուս և արևմտաեվրոպական գրականության, արվեստի տարբեր ճյուղերի, հատկապես թատրոնի ու պատմության վերաբերյալ: Հանդեսն ուներ արվեստի աշխարհի նորությունների հարուստ լրատու: Նկարչության բաժնում պատկերներ էին տպագրվում կերպարվեստի նշանավոր վարպետների ստեղծագործություններից: Հանդեսի առավելություններից մեկն էլ այն էր, որ այն այնքի էր ընկնում ճաշակավոր ձևավորումով, մանրանկարներով ու զարդաքանդակներով:

Նշենք նաև, որ առաջին անգամ այս հանդեսում են տպագրվել Ավ. Իսահակյանի «Աբու-Հալա Մահարին», Հ. Թումանյանի «Հայոց վիշտը», Խ. Աբովյանի «Առաջին սերը», Դ. Վարուժանի «Ով Լալագեն», Ե. Չարենցի «Գալանտ երգերը», Մ. Մանվելյանի «Ապիտակ ծաղիկները», Վ. Փափազյանի «Մարդագայլը» և էլի ուրիշ շատ գրական գործեր, գրաքննադատական հոդվածներ և այլ նյութեր:

Ափսոսանքով մշենք, սակայն, որ Գ. Լևոնյանի և հայ մտավորականների նյութական սուղ միջոցների պատճառով 14 տարվա ընթացքում լույս է տեսնում միայն յոթ համար, ըստ որում համարներից մեկը Գ. Լևոնյանը հրատարակում է Վենետիկում:

Թեև լույս տեսավ «Գեղարվեստի» ընդամենը յոթ համար, սակայն այն իր նշանակալից տեղն ունի հայ արվեստագիտական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ:

Գ. Լևոնյանի կյանքը թիֆլիսյան հետաքրքիր է անցնում: Նա ավելի մոտիկից է ճանաչում Թումանյանին, Աղայանին, Տերյանին, Սումգուկյանին, Դեմիրճյանին, Հ. Հակոբյանին, Արմեն Տիգրանյանին և էլի ուրիշ շատ գրողների ու արվեստագետների, որոնց նվիրված հետաքրքիր հուշեր ունի: Այդ հուշերում ըստ արժանվույն է գնահատել իր ճանաչած գրողներին, արվեստագետներին ու պետական գործիչներին, ներկայացրել նրանց բնավորության գծերն ու իրար հետ ունեցած հարաբերությունները: Բերենք նրա՝ թեկուզ միայն Հ. Թումանյանին բնութագրող տողերը: Գրում է, որ այդ մեծ Լոռեցին բարի մարդ էր, հարեհաս՝ միշտ ժպտերես, կատակախոս, քաղցրալեզու և զգայուն սրտի տեր: Հատկապես ընդգծում է Թումանյանի լավ հաշտարար լինելը և «ամենայն հայոց թամադայի» համբավը վայելելը:

«Թումանյանը կենտրոնական դեմք էր թիֆլիսի մտավորական շրջանակներում, գրում է Լևոնյանը, - նրա մոտ լինում էին զանազան ուղղությունների և քաղաքական հաստատվածների տեր մարդիկ, նա հեղինակություն էր վայելում ոչ միայն հայ, այլև վրաց գրական շրջաններում... Թումանյանը շատ անգամ էր հաշտարարի դեր կատարում միմյանց հետ լարված, տարիներով իրար հետ չխոսող գրողների միջև»: Լևոնյանը պատմում է, թե ինչպես է Թումանյանը իրար հետ հաշտեցրել Աղայանին ու Պոռչյանին, Լեոյին ու Իսահակյանին, Խնկո Ապրեն ու Կարա Դարվիշին:

Լալայանը հետաքրքրական հուշեր է պատմում նաև Թումանյանի կազմակերպած «Հայարտուն» գրական կազմակերպության ու նրա գործունեության մասին:

Զբոսվացող հետաքրքրությամբ են կարդացվում Իսահակյանի, Տերյանի, Դոդոխյանի, Օիրվանգադեի, Սուրբուկյանի, Գրիգոր Սյունու և հատկապես Ալ. Մյասնիկյանի մասին գրած Լևոնյանի հուշերը: Մյասնիկյանի մասին հուշը նա վերնագրել է «Հազվագյուտ մարդը», որտեղ տրված են նրա մարդ-քաղաքացի և պետական գրծիչ լինելու բարձր հատկանիշները (Տեն Գ. Լևոնյան, Հուշեր, Եր. 1959):

Գ. Լևոնյանի գործունեության նոր, առավել բեղմնավոր փուլը սկսվում է Խորհրդային Հայաստանում:

1927-ին նա Թիֆլիսից տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Գեղարվեստի ուսումնարանում, ապա՝ Թատերական ու մանկավարժական ինստիտուտներում: Իսկ կյանքի վերջին տարիներին՝ Երևանի պետական համալսարանում:

Հայ մշակույթի ու պատմության վերաբերյալ տասնյակ տարիների նրա կուտակած փաստական հարուստ նյութը հնարավորություն է ընձեռում տեսաբան-գիտնականին իրար հետևից հրատարակել մի շարք աշխատություններ:

1927-ին նա տպագրեց 18-րդ դարի քերական, բանաստեղծ և երաժիշտ Պաղտասար Դալիրի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատությունը, որին հետևեց «Հայ ժողովրդական և աշուղական երգերը» (1930) աշխատությունը: Վերջինիս առաջին տարբերակը նա հրատարակել էր դեռ 1892-ին՝ Ալեքսանդրապոլում: Իր այս երկրորդ տարբերակը նա ավելի է ընդարձակում և վերլուծում է 225 հայ աշուղների բանաստեղծություններն ու նրանց մեղեդիները, խոսում նաև դրանց որոշ մասի՝ արևելյան մեղեդիներից կրած ազդեցությունների մասին:

Գևորգ Ախվերդյանից հետո Գարեգին Լևոնյանն առաջինն էր, որ հանգամանորեն ուսումնասիրեց Սայաթ-Նովայի կյանքի հետ կապված մանրամասները և գրեց «Սայաթ-Նովա, կյանքը և գործը» աշխատությունը (1931 թ.):

1934-ին Լևոնյանը հրատարակեց «Հայ պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը» մատենագիտական բնույթի շատ կարևոր ուսումնասիրությունը: Երկու տարի անց տպագրվեց «Հովնաթանյան Նադաշները հայ նկարչության պատմության մեջ» գիրքը: Ապա իրար հաջորդեցին «Հայ կուլտուրան «Սասունցի Դավիթ» էպոսի ժամանակաշրջանում» (1939) և «Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը» (1940) գրքերը:

Կոթողային աշխատանք կարելի է համարել Գ. Լևոնյանի «Թատրոնը հին Հայաստանում» աշխատությունը, որտեղ խոսում է 2000-ամյա հայ թատրոնի, նրա սկզբնավորման ու հետագա ընթացքի մասին: Անուրանայի է, որ Լևոնյանի այս գիրքն է հիմք հանդիսացել հայ թատրոնի պատմությամբ հետագայի զբաղվողների համար:

Գ. Լևոնյանն այն ամենից գիտնականներից էր, որ քրտնաջանորեն աշխատեց մինչև մահվանացուն կնքելը՝ 1947 թվականը: Մահից մեկ տարի առաջ հրատարակեց հայ գրքի տպագրությանը նվիրված «Հայ գիրքը և տպագրության արվեստը» ուսումնասիրությունը, որին նախորդել էր «Էջեր հայ երաժշտության պատմությունից» գիրքը (1945 թ.):

Գ. Լևոնյանը չհասցրեց հրատարակել նաև մի քանի արժեքավոր այլ աշխատություններ, որոնք այդպես էլ անտիպ մնացին: Նշենք դրանցից մի քանիսի վերնագրերը՝ «Հայ կերպարվեստագետներ» միջին դարերից մինչև մեր ժամանակը», «Կենսագրական բառարան», «Բառարան գրական ծածկանունների», «Հայ արվեստի պատմության բիբլիոգրա-

ֆիա»: Նա Մ. Աբեղյանի և Դ. Դեմիրճյանի մասնակցությամբ կազմել էր մաս երկու հազար բառահոդված ընդգրկող «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինաբանական բառարանը» և այլ գործեր:

Ժամանակակիցներն իրավամբ Լևոնյանին համարում են հայ մշակույթի պատմության կենդանի հանրագիտարան:

Գ. Լևոնյանը աշխատակցել է մոտ երկու տասնյակ պարբերականների, այդ թվում՝ «Նոր դար», «Մշակ», «Ազգագրական հանդես», «Անահիտ», ինչպես նաև՝ իր հրատարակած «Գեղարվեստ» հանդեսներին:

1932 թվականին հանդիսավորապես մշվեց Գարեգին Լևոնյանի ծննդյան 60 և զիտական, հասարակական ու մանկավարժական գործունեության 40-ամյակը: Խորհրդային Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով նրա երկարամյա վաստակը և հայ գրականությանն ու մշակույթին մատուցած ծառայությունները, նրան շնորհեց Արվեստի վաստակավոր գործչի, ապա և պրոֆեսորի կոչում:

Գարեգին Լևոնյանը մահացավ 1947 թ. սեպտեմբերի 28-ին Երևանում:

Գրականությանը և արվեստին նվիրված նրա ստեղծագործությունները լուրջ նվաճումներ են մեր մշակութային կյանքում և արժանի են համակողմանի ուսումնասիրման ու ըստ արժանվույն գնահատման:

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ

Յ. ԿՆԵԽՏ-ԿԵՐՊԱՐԻ («ՈՒԼՈՒՆՔԱԽԱՂ») ԵԶՐՈՒՅԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՔՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՍՆՁՆԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հերման Հեսսեն (1877-1962) 20-րդ դարի այն մեծագույն ստեղծագործողներից է, որն ունի իր ուրույն տեղը ու դերը համաշխարհային գրականության պատմության մեջ: Նա մի շարք հայտնի ստեղծագործությունների («Մամկան հոգի» (1919), «Քլայնը և Վագները» (1919), «Քլինգզորրի վերջին ամառը» (1919), «Սիդիարթհա» (1922), «Տափաստանի գայլը» (1927), «Նարցիս և Գուլդմունդ» (1930), «Ընամապարհորդություն դեպի Արևելք» (1932) և այլն) հեղինակն է: Սակայն նրա ստեղծագործական ուղու պսակն է «Ուլունքախաղ» (1943) վեպը, որի համար հեղինակը 1946 թ. Նոբելյան մրցանակ ստացավ: «Ուլունքախաղ» վեպը Հ. Հեսսենի ամբողջ գրական գործունեության ամփոփիչ երկն է թե՛ գեղագիտական, թե՛ փիլիսոփայական, թե՛ ձևաբովանդակային առումներով: Հեղինակն այս վեպի վրա աշխատել է տասներկու տարի¹:

Հ. Հեսսենի «Ուլունքախաղ» վեպը պոլիֆոնիկ-բազմաշերտ է և՛ գաղափարական, և՛ կառուցվածքային տեսանկյուններից: Նրա տեքստային տիրույթում նկատելի է արևելյան և արևմտյան մշակույթների համադրումը, ունի բարդ կառուցվածք, բաժանված է ոլորտների՝ ներքին և վերին, իդեալական և առօրեական, ռացիոնալ և իռացիոնալ, որոնք միասնական են, սակայն միաժամանակ հակասական ամբողջություն են կազմում: Այս և ընդհանրապես հեսսենական տեքստերը (վաղ շրջանի) հիմնականում կառուցված են երկակի պլանով՝ միֆը և իրականը միաձուլված կամ շատ հաճախ հերթափոխով, տեքստային տարրերի («նեզմեմո»)՝ մեկը մյուսի ներթափանցումով:

Հատկապես «Ուլունքախաղ» վեպում տեքստային տարրերը վերլուծաբար անջատված են, որոնք ընդհանուր համատեքստում միավորվում են՝ մտնելով մոր համակցումների՝ պատճառահետևանքային կապի, փոխազդեցության, հակասության մեջ, և ձևավորում են կերպարներ՝ պոստմոդեռնիստական գեղագիտությամբ բնորոշ տարրերով: Հեսսենական կերպարները կերտվում են հենց այս վերլուծական (փխական տիրույթ) գործընթացում, որը, իր հերթին, մուծպես կերպար է (բայց ոչ սրա դասական ընկալմամբ), կառուցվածք:

Ելնելով այս առանձնահատկություններից՝ մեր նպատակն է այս հոդվածում ներկայացնել Յոզեֆ Կնեխտ-կերպարի հետ կապված մի քանի առանձնահատկություններ և ճշտել, թե զրականագիտական ո՞ր եզրույթն է (հասկացական-իմաստաբանական պլանում) նպատակահարմար, բնորոշիչ, դիպուկ, ընդունելի և ոչ ընդունելի Յոզեֆ Կնեխտի համար:

«Կերպար» (образ) եզրույթն ավելի չեզոք է, իմաստով՝ լայն, իսկ ավելի կոնկրետ «կեր-

¹ Kindlers Neues Literatur Lexikon (Herausgegeben von: Rudolf Rodler), München, 1988, B.7, S.791.

պար»-ը շատ բնորոշ և բնութագրական է I-պայմանականության հերոսներին, «կերպար»-ը (Գեղ իմաստով) դառնում է իրականությանը՝ (= I-պայմանականությանը) ցույցա-կան արտացոլողը²: Բանի որ «կերպար»-ը հեղինակային ասելիքի, ինֆորմացիայի կրողն է և ունի ինֆորմացիայի ապակողավորելու (раскoлoвoрoзкa) հնարավորությունը, ապա այս երևույթը, «Ուլունքախաղ» վեպի տեքստային մակարդակում, ընկալման գործընթացում (ընթերցող-տեքստ) վերակողավորվում է, երբ պատումի ընթացքում ավելանում, մոցվում են ճորանոր իմաստներ և, հարստացնելով բովանդակային կողմը, նպաստում են *ճշանի ձևավորմանը*³: Փաստորեն, այս ճանապարհով է կատարվում անցումը «կերպար»-ից *ճշանին*: Սա կարելի է բացատրել նաև այն երևույթով, որ «Ուլունքախաղ» վեպը *ճշանային կիրարկությունների* մի լայն դաշտ է, «վեր առնված» ձև, առարկայա-պրակտիկ (բայց պսևվող-, կվազի- պրակտիկ) գործողությունների այլակենցությունը:

Ընդհանրապես, *ճշանը* ենթադրում է երկու կողմ, որը նրա էությունն է կազմում. առաջին՝ կողավորում, «ծածկում», «թաքուցում» («сокрытие»), երկրորդը՝ կողավորման բացում, «բացահայտում» («раскрытие»): Այս երկու կողմերը պետք է լինեն հավասարության մեջ, կողմերի խախտումը *ճշանը* դարձնում է պարադոքսալ, այսինքն՝ *ճշան* առանց *ճշանակու-թյան*: Եթե ասվածը դիտարկենք Յ. Կենխտի կյանք//մահ հակադրության մեջ, ապա Յ. Կենխտի կյանքի ընթացքը, նրա կայացումը «բացահայտման» («раскрытие») փուլն է, իսկ նրա մահը՝ «թաքուցման» («сокрытие»): Նշանի նորմալ «կենսունակության» համար պետք է աշխատի «թաքուցում-բացահայտում» մոդելը, սակայն «Ուլունքախաղ» վեպում հակա-ռակ մոդելով է կառուցված՝ «բացահայտում-թաքուցում», որի արդյունքում Յ. Կենխտի մահը պարադոքսալ նրբերանգ է ստանում:

«Բնավորություն» (характер) կատեգորիայից հեղինակն ընդհանրապես հրաժարվում է, որովհետև նրա հերոսներն առօրյա-էմպիրիկ պլանում չեն ներկայացված, գուրկ են սոցիալ-հասարակական պատկերումից: Նրանք գոյացում են, այսպես կոչված, «մոզական իրականությունում»՝ իբրև մի երևակայական հոգեկան տարածության մեջ գոյացած, որոնք դառնալով «իր»՝ ինքն իր մեջ (Ding an sich), գոյություն ունեն իրենց իրենց համար: Սոցիումի. «կենցաղի» (Alltag) ոչ կվազի գիտակցումն ի հայտ է գալիս կերպարի միայն գիտակցական մակարդակում, որը գրեթե տեղ չի գտնում վիպական հյուսվածքում իբրև առանձին ակարագրություն, միավոր⁴:

«Բնավորություն»-ը, Հ. Հեսսեի համար «արտաքին աշխարհի և անհատականության փոխգիշման (կոմպարտիս) հետևանք է, մարդու վրա զգվող մի թիկնոց, տարբերակիչ *ճշան*, որով ճանաչում է շրջապատը: Սրանով է պայմանավորված Հեսսեի գրքերում կեր-

² Ի դեպ, Գկատեմք, որ Ծմամ բաժանում առկա է նաև հենց քում վեպում. հեղինակը, խոսելով Պիմիո Դե-գիմյորիի մասին, նշում է, որ նրա վերադարձը Կաստայիայից «աշխարհ», «իրական կյանք» (տեքստում Ծույմ-պես այս բառերն առնված են չակերտների մեջ) պատիժ կամ ամբարգանք չի կարող լինել (GPS, 90-91):

³ Мейрахан В. В., Ойраб, оирк, урлорлорл, М., 1980, с. 4.

⁴ Նույն գիրքը, էջ 13:

⁵ Hermann Hesse, Das Glasperlenspiel, Tübingen, Suhrkamp Verlag, S. 55. Այս և հետագա մեջբերումները կատարելու ենք այս գրքից հետևյալ կերպ՝ (GPS, ...).

պարմերի երերումությունը, անորոշությունը, ճապաղությունը⁵: Բացի այդ, «բնավորություն» չեն դառնում մահ այն պատճառով, որ հետսեական տեքստերը հիմնականում կառուցված են միֆական (անժամանակ) ֆոնի վրա: Իսկ սա մշակակում է, որ եթե չկա «բնավորություն»՝ կերպարի հոգեբանական առանցքը սոցիոմի ֆոնին, չկա կամ ամորսալի է դառնում կերպարի որոշակիությունը, որովհետև առանց բնավորության անհատի համար ամհմար է ձեռք բերել մշտական որոշակիությունը⁶:

Եթե խնդիրը տեղափոխենք հուսերյան ֆենոմենոլոգիական ճանաչողության ոլորտ, ապա կարող ենք ասել, որ հեղինակի իմտեմցիոնալ* ճանաչողության արդյունքում մրազիտակցությունը լքում է առօրյա-էմպիրիկ ոլորտը և հայտնվում ֆենոմենոլոգիական գիտակցության գոտում, «որի իրականությունն են կազմում մշված «երևույթները» կամ «ֆենոմենները»՝ բառիս բուն իմաստով»⁷:

Ահա հենց այս իմտեմցիոնալ ճանաչողության գործընթացում քննվող նյութը Յ. Լենինը «մաքրում» է պրակտիկ և երկրորդական գործոններից: Պատահական չէ, որ հեղինակն իր մեթոդականում գրում է, որ «մեզ՝ ներկաներիս, չի հետաքրքրում ո՛չ պաթոլոգիան, ո՛չ ըմտանկան կյանքը, ո՛չ սեռական կյանքը...» (GPS, 11): Հատվածը վկայում է, որ հեղինակը, ազատվելով «երկրորդական խանգարող» հանգամանքներից, կարող է մերթափանցել որոնվող և բոժոժ էության մեջ: Սա իրականացվում է *երևակայության* միջոցով:

Երևակայությունը, որպես կատեգորիա, գիտակցված է հեղինակի կողմից, որն ամրագրված է «տեստում» իբրև «Fiktion» (հորինվածք, вымысел) (GPS, 44): Փաստորեն, վերաբերում է «իրերը»՝ կերպարները, հանդես են գալիս իբրև «մեկնակետեր», իսկ մնացածն իրականացվում է «մաքուր ազատ երևակայության ոլորտում», ինչպես Հուսերն է գրում. «Մենք գտնվում ենք (կամ հայտնվում ենք, հավելումը մերն է՝ Տ. Ս) մաքուր երևակայության աշխարհում, այսպես ասած, ամբողջապես մաքուր հնարավորությունների (ընդգծումը մերն է՝ Տ. Ս.) աշխարհում»⁸:

Կարևորն այն է, որ հեղինակի կողմից ստեղծված *հնարավորությունների* այս «խաղում» ֆիքսել կերպարներին տրվող հատկանիշների մեջ «կայունը», «անփոփոխը» (եթե մեր պարագայում դա հնարավոր է) կամ այլ կերպ ասած՝ «խաղայինը», «կաստալիան, Ուլունքախաղը, մագիստրոսի կոչումը,» գրում է կենսագիրը, յուրաքանչյուրը մի թեմա էր, որոնք պետք էր այլաձևության ենթարկել և սպառել...» (GPS, 386):

Հ. Հեսսեի կերպար-հերոսները (երկու տարբերակներն էլ ընդունելի են) «հոգևորի», համամարդկային կրողներն են, կոնկրետ ժամանակային ընկալումից դուրս (պայմանա-

⁵ Караппаили Р., Мир романа Германа Гессе, Тбилиси, 1987, с. 49.

⁶ Гегель, Сочинения, М., 1956, т. III, с. 76.

⁷ Հատ Հուսերի, «իմտեմցիոնալ» է այն ճանաչողությունը, երբ «մենք ուշադրությունը սևեռում ենք ընկալվող իրերից բուն ընկալմանը, որում այդ իրերը «հայտնվում» են»:

⁸ Слезин К. А., Феноменологическое познание (проектировка и критика), Ерewan, 1987, с. 64.

⁹ Նոյմ գիրքը, էջ 84:

կամ). Ռետևաբար չեմ կարող լինել տիպ, տիպական կերպար⁹: Այսպիսով, եթե «կերպար»-ը չեզոք է, ոչ այնքան կոնկրետ-բնութագրական, ապա՝ տիպը, տիպականը, որն ավելի շատ կապված է ընդհանուրի (որովհետև Ռեդիմակը *-հավաքական աշխատանքներ-* չի տաճում, այլ բերում է իր անհատական ղեկավար փորձը) կատեգորիայի Ռետ, իսկ կերպար-բնավորությունը՝ եզակիի (անհատական)՝ վառ ընդգծված ժամանակային տարրերով, որը հակադրվում է անժամանակ-միֆականին:

Գրականագիտությանը հայտնի է մեկ «գործող անձ» (վ. Կ. Պրոպայ) և «պերսոնաժ» (персонаж լատ. persona-դեմք, անհատ) եզրույթները: «Գործող անձ»-ը ևս լայն է իր իմաստային ընդգրկմամբ. որովհետև «գործող անձ» կարող են համարվել գրական ստեղծագործության բոլոր դեմքերը (զխավոր, երկրորդական, դրական, բացասական և այլն): Այս եզրույթը մույնպես չի կարող բավարարել. որովհետև դասակարգող-տիպաբանական առանձնահատկություն է ենթադրում, որը մույնպես բնութագրական չէ:

«Պերսոնաժ» եզրույթը գրականագիտության մեջ ընդունված եզրույթները օգտագործելու ավանդույթի, II-ական անձերը մշելու համար է կիրառվում. Ռետևաբար այս հասկացությունը Յ. Կնեխտին չի համապատասխանում: Սակայն «պերսոնաժ» եզրույթը միանշանակ չէ, օժտված է մի ինքնատիպ ճրբերանգով: Ելնելով արտահայտման ձևի և բովանդակության առանձնահատկությունից՝ վերը հիշատակված բոլոր եզրույթներն ավելի շատ առնչվում են *բովանդակային* պլանի Ռետ, սակայն «պերսոնաժ» հասկացությունից բխում է մի այլ եզրույթ՝ ֆիգուր (լատ. figura տեսք, ձև)¹⁰, որը իմաստաբանորեն մոտ է ձև հասկացությանը: Նշեմք միայն, որ «ֆիգուր»-ը կարելի է դիտարկել իբրև «ակտանտ»-ի միաձուլվածության (սինկրետիկ) բաղադրիչ տարր¹¹:

Այսպիսով, «ֆիգուր»-ը «պերսոնաժ»-ի ձևային ցուցիչն է, որը ենթադրում է միայն ձև, այսինքն՝ դատարկ «տարածություն», որի մեջ կարող են դրվել ինչպես շարահյուսական (ֆունկցիոնալ-գործառնական), այնպես էլ իմաստաբանական տարրեր: Այս առումով Յ. Կնեխտը Հ. Հեսսեի «Ուլուքբախադ» վեպում (ոչ միայն այս, այլև մյուս ստեղծագործություններում) դառնում է մի ֆիգուր, ձև, անոթ, որի մեջ «լցվում» է *բովանդակություն*, զրդվում մի ամբողջ ստեղծագործություն: «Յոզեֆ Կնեխտի ծագման (Herkunf, կերպարի կենսաբանական-ծագումնաբանական ոլորտը.- հավելումը մերն է՝ Տ.Ա.) մասին,- գրում է Կնեխտի կենսագիրը,- *մեզ ոչինչ հայտնի չէ*» (GPS, 44), այսինքն՝ «ոչնչից» ստեղծվում է մի վեպ:

⁹ Այստեղ հարկ է մշել, որ այլ է խնդիր «Տափաստանի գայլը» վեպում. Հադի Հալլերը տիպականացված (ժամանակաշրջանը նկատի ունենալով) կերպար է, սակայն ճա մույնպես կերպար-բնավորություն չէ, այլ ավելի ճիշտ՝ տիպականացված ֆիգուր:

¹⁰ «Ֆիգուրը» (ֆիգուրներ) կարելի է դիտարկել իբրև անգիտակցականի ինքնավար անհատ(ներ) (Աճիմա// Աճիմուս, Սովեր, ինքնություն և այլն): Այս մասին մանրամասն տե՛ս Каралатекли Р. Г., Функция персонажа как «фигура» в произведениях в творчестве Германа Гессе // Бессознательное: Преподл. Функции, Методы исследования. В 4-х т. Т. 2. Соп. Критика. Творчество. Тбилиси, 1978. С. 529-536.

¹¹ «Ակտանտ» ասելով հասկանում ենք անձ կամ առարկա, որը կատարում է որոշակի գործողություն: Ըստ I. Տենյերի, «ակտանտներն այն էակները կամ առարկաներն են, որոնք մասնակցում են գործընթացին ցանկացած ձևի և դերի մեջ, մինչև անգամ սովորական ֆիգուրանտների կամ էլ ամենապասիվ կերպով» (А. Ж. Грей-мас. Ж. Куте, Сетиотика. Общественные науки, теория языка. В книге Семантика, Москва, изд. "Радуга", 1983, с. 483-485): Այնպիսի ձավայային սահմանափակումից՝ «ակտանտ» այստեղ չի դիտարկվելու:

Այստեղ «ոչիճչ» ամեն ինչ է:

«Ֆիզիզուրների» բովանդակային պլանի հարստացման գործընթացն իրականացվում է *ռեկորդսպեկցիայի միջոցով*: Հեղինակը ներկան (բուն պատումը, հեղինակային խոսքի կառուցումը) լցնում է անցյալով (Կնեխտի մասին պատկերաված Ռիշոդությունները)¹⁰ հարևանացնելով ժամանակային տարրերով: Փաստորեն, Հ. Հեսսեն իր կերպարի (ֆիզուր, ֆիզուրամո) ընտրության կառուցելով, ինքնամպատակ մոտեցում չի ցուցաբերում, այլ նրա մոտ ամեն ինչ մտածված է, բխում է վեպի մտահղացման, կառուցման սկզբունքներից:

Կերպարային համակարգի ֆիզուրատիվության մասին հեղինակն ինքն իր «Երեկոյան աշխատելիս» հոդվածում նշում է. որ նոր ստեղծագործական մտահղացումների ժամանակ նա «տեսնում է ֆիզուր, որը կարող է ժամանակավորապես վերածվել *սիմվոլի*՝ դառնալով իմ (նրա- հավելումը մերն է՝ Տ.Ս) ապրումների, մտքերի, պորբլեմների կրողը»: Այս ֆիզուր-սիմվոլն այն «եզակի-անկրկնելի դեմքն է, հենց այն *միստիկական ֆիզուրը*՝ սեփական «Ես»-ի և աշխարհի հարաբերության մեջ»¹⁰:

Փաստորեն, եթե պայմանականորեն բաժանելու լինեք ասվածը, ապա կարող ենք առանձնացնել հետյալ դրույթները. առաջին, «ֆիզուր», «միստիկական ֆիզուր»՝ որպես կառուցվածք, ձևային ցուցիչ, որի մասին վերն արդեն նշել ենք, և երկրորդը՝ «սիմվոլ» (նշան)¹¹՝ որպես իմաստակիր միավոր (բովանդակային պլան), որպես հեղինակային «մեծախոսություններ» կրող¹¹:

Այսպիսով, սիմվոլ-նշան¹² Յ. Կնեխտը դառնում է ընթերցող-տեքստ հարաբերության մեջ հեղինակային ասելիքի կամ իմֆորմացիոն հոսքի (վեպում) նույնաձև (многообразный) արտահայտման և հաղորդման միջոցը, որի արդյունքում խորհրդանշան-նշան Յ. Կնեխտը դառնում է իմֆորմացիայի (տեքստում) *նշանակողը* և քանի որ դա իրականացվում է գեղարվեստական տեքստի մակարդակում, ապա նա կատարում է նաև «կերպարի» (образ) դեր: Այստեղից մի հետևություն ևս կարելի է անել, որ «սիմվոլը» հաստատված տեքստում դառնում է կոմունիկատիվ միավոր, որն անփոխարինելի գործիք է ճանաչողական գործընթացի համար:

Յ. Կնեխտ-կերպարի բովանդակային պլանի հիմնարար դրսևորումներից կարող ենք համարել նրա պարտավորվածությունը-դատապարտվածությունը՝ «ճակատագրի» (Schicksal, որի իմաստաբանական շարքը լրացնում են «Begabung» (շնորհ), «Bestimmung» (կոչում)) հանդեպ (GPS, 44), որովհետև պարտավորվածությունը կերպարի բովանդակու-

¹⁰ Герман Гессе. Вечер за рулем, с. 204: и ж.: Вопросы литературы, 1978, № 9.

• Պարզաբանման համար նշենք, որ սիմվոլ և նշան քառերը համարժեք են համարվում, սակայն սիմվոլն ավելի բազմաճյուղյալ և բովանդակալից է իր կիրառմամբ: Նշանը, ի տարբերություն սիմվոլի, ունի *բացասականություն* (մեզատիվ) մրբերաձև, հատկապես ձևաորամաքանական համակարգերում, ինչպես նաև կարող է միանշանակ-կոմստրուկտիվ մեկնաբանվել: Նկատենք, որ հայերեն «խորհրդանշան» եզրույթը չի եմթաղում «սիմվոլ» և «նշան» հասկացությունների միասնականությունը, ուստի այս առանձնահատկությունից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում կիրառել «սիմվոլ» տարբերակը հայերեն «խորհրդանշան»-ի փոխարեն: Ուստիություն են կազմում միայն այն դեպքերը, երբ «սիմվոլը» չի դիտարկվում իբրև եզրույթ (մեղ իմաստով):

¹¹ Նույն տեղում, էջ 204:

¹² Այս առանձնահատկությունը մասին տե՛ս А. Ф. Лосев, Проблемы символа и реалистическое искусство, М., 1976.

թյունն է կազմում, Յ. Կնեխտին առաջադրված որոշակի ծրագիրը դառնում է նրա, և ոչ միայն նրա, այլև ամբողջ վեպի կառուցման շարժիչ գալաքակը, որն ունի ոչ թե «արտաքին» («ճակատագիր», որը իմաստաբանորեն «դրսի» հետ է կապված), այլ՝ «ներքին» պատճառաբանվածություն: Սա ևս իր հերթին միանշանակ դրսևորումը չունի: Փաստորեն, եթե չլինի դիալեկտիկ այս «խաղը», չի կարող իրացվել կերպարակերտումը հետսեական կոնտեքստում:

Վիպական մակարդակում «սիմվոլ» և «ճշան» եզրույթների նույնացումը բացատրվում է նրանով, որ «ճշանը», բացի իր «բացասական» նրբերանգից, երբ մարդը վերանում, օտարանում է, «սիմվոլը» բազմաճշանակ է, ունի մի կամ մի քանի ճշանակություններ¹³: Ուստի, հատկապես «Ուլունջախաղ» վեպում, ամենարե և նրա միայնակ գործածությունը, հետևաբար «սիմվոլ-ճշան» եզրույթն ավելի ճիշտ է և բնութագրական՝ ելնելով նաև այն առանձնահատկությունից, որ «սիմվոլն» ունի նաև «իմաստաբանական (սեմանտիկ) հոսունություն անընդհատություն»¹⁴, որը վեպում նուրբ անցումներով է իրացվում, օրինակ՝ Յ. Կնեխտի կյանքի ամբողջ ընթացքը, «խաղ» սիմվոլի զարգացումը՝ դառնալով շատ հաճախ անորսալի, գոյությունից չգոյություն պացող: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ցանկացած ճշան (Կնեխտ), ստանալով անսահման ճշանակություններ, կարող է ստանալ և դառնալ *սիմվոլ*:

Մի առանձնահատկություն ևս. ինչու է Հ. Հեսսեի կերպարակերտումը *ճշանային* բնույթ կրում: Բանն այն է, որ հետսեական ստեղծագործությունները խիստ սուրբեկտիվ են, իմաստաբանորեն գերհագեցած, և բնական է, որ նման մթնոլորտը պիտի ծնի ճշան-սիմվոլներ: Նշանը գոյություն ունի միայն գիտակցության մեջ, այն սուրբեկտիվ է իր կեցության պլանում, կրում է հեղինակային անհատականության կցիքը, որով «ապրեցնում» է Յ. Կնեխտին կամ ընդհանրապես հեղինակային մտքերը:

«Ֆիգուրը» հետսեական տեքստում գործառական դեր է կատարում այն ժամանակ, երբ հարաբերակից է դառնում սիմվոլի հետ, որովհետև սիմվոլում հնարավոր է *գաղափարի* (բովանդակային պլան) և «մատերիայի» (կառուցվածքային, ձևային պլան) մեկը մյուսի մեջ ներթափանցումը (взаимопропускность)¹⁵: Սիմվոլը, որն արվեստում պետք է դիտարկել որպես գեղագիտական ճշան, ունի երկակի բնույթ. մի դեպքում կարող է այն հարաբերակից լինել *ռացիոնալ-իրականին*, մյուս դեպքում՝ *իրացիոնալ-անիրականին*: «Դեմիանը և նրա մայրը.....- գրում է Հ. Հեսսեն իր հոդվածներից մեկում,- ներառում և ճշանակում են իրենց սահմաններում ավելի, ինչը հնարավոր չէ ռացիոնալ դատողությամբ...», հեղինակի սիմվոլները «ռացիոնալ ընթերցման» համար չեն ստեղծված¹⁶:

«Սիմվոլը,- գրում է Ա. Ն. Լոսևը,- այնպիսի պատկերավոր կառույց է, որը կարող է մատնանշել այլակեցության ցանկացած ոլորտներ, այդ թվում նաև անսահմանության ոլորտներ»¹⁷: Այս անցումները՝ իրականից անիրականին և հակառակը, բնորոշ է Հ. Հես-

¹³ А. Ф. Лосев. Эпик, символ, миф, М., 1982, с. 62.

¹⁴ Նույն գիրքը, էջ 63:

¹⁵ А. Ф. Лосев. История византийской эстетики (византизм и эстетика), Москва, изд. "Искусство", 1974, с. 257.

¹⁶ Герман Гессе. Вечер за работой, с. 208 // Вопросы литературы, 1978, № 9.

¹⁷ А. Ф. Лосев. Эпик, символ, миф, с. 443.

սեփ աշխարհայացքին, որով նա վարպետորեն միահյուսում է և կառուցում իր «Ուլունքախաղ» վեպը: Այստեղ բավարարվեց միայն մշտնջող, որ երբ հեղինակն իրական պատումից (I-պայմանականություն) անցում է կատարում անհրաժեշտ (միֆական, II-պայմանականություն), Յ. Կենխտը վերածվում է *ճշմանի* կամ պարզապես ճշմանին տարրերը նրանում շատանում են և կերպարը (դասական ընկալմամբ) գնում է դեպի «քայքայում»՝ դուրս գալով իրական ոլորտից: Երբ Յ. Կենխտի մեջ ճշմանային տարրերը «շատանում» են, վեպում «պատմության» փոքր վառ գույներ է ստանում (գրույցներ Հայր Յակովի հետ), իսկ երբ նվազում է՝ մթազգում, միֆականացվում է:

Այս անցումները պայմանավորված են մի շարք առանձնահատկություններով: Առաջինը՝ անցումը երկրորդ պայմանականությանը, ազատ հնարավորություն է տալիս հեղինակին խաղային սկզբունքի իրագործմանը, պատումի փոփոխականությանը (варьируемость): Երկրորդ՝ անսահման հնարավորություններ է տալիս ցանկացած հարցադրումների առաջ քաշելուն՝ վիպական հյուսվածքում նոր հորիզոններ բացելուն, որով հարստացնում է բովանդակային պլանը, կապը մյուս ոլորտների՝ միստիցիզմի, փիլիսոփայության՝ արևելյան և արևմտյան դրսևորումներով և նրանց համադրվածությանը, զանազան կրոնական ուսմունքների հետ:

Յ. Կենխտի կերպարի քայքայման պատճառներից մեկն էլ այն է, որ նա վեպում չի ստանում գեղագիտական ուրվագիծ, որը պիտի որոշակիացվի մի տեսանկյունով. այս երևույթն ամբողջությամբ բացակայում է վեպում: Յ. Կենխտի կերպարակերտումն իրականացվում է նրա կայացման ժամանակահատվածում՝ երեխայություն, հասունություն, կյանքի գործունեություն: Սակայն այս ամենը բեկվում է տարբեր կողմերից և «անկյուններից», որն աստիճանաբար, հենց տեսանկյունների ներսում, կերպարին հաղորդում է ակնարկի (заметка) որակ: Պատահական չէ նաև այն փաստը, որ կենսագիրն իր գրածն անվանում է «մանրամասն ակնարկ» (GPS, 44): «Տեսչություն» հանդիպող «Betrachtung» բառն ունի նաև «մտորում» իմաստը, որը ոչ միայն իրադարձությունների *նկարագրություն* է եմթադրում, այլև որոշակի *վերլուծական* մտտեցում:

«Ուլունքախաղ» վեպում Ֆիգուրի կամ ֆիգուրանտի ի հայտ գալը պայմանավորված է նաև նրանով, որ Յ. Կենխտն իր էությանը «երաշտտական կերպար» է, նա կարողանում է նվազել ջութակ, վին (GPS, 47): Հեղինակը նրան օժտել է երաշտականությամբ՝ մերքին պլանում կերպարի մեջ միակցել ճշմանային և «կենսական» տարրեր: Մենք արդեն տեսանք, որ ֆիգուրը, հեղինակի ընկալմամբ, դառնում է «ժամանակավորապես» իմաստակիր միավոր՝ սիմվոլ: Այստեղ նման մի հարցադրում կարելի է անել. *ի՞նչպես է հեղինակը ճշմանյանցած կերպարը դարձնում դինամիկ: Բանն այն է, որ կերպարի բովանդակային պլանը հարստանում է լսողությամբ*: Յ. Կենխտը օժտված է *երաշտական լսողությամբ* (умение слышать, слыть), *պատահական չէ*, որ վեպում երաշտությունն է դառնում կաստալիական աշխարհ մտնելու միջոց (GPS, 46-47): Սակայն երաշտական լսողությունը ստանում է փիլիսոփայական երանգավորում և այստեղ *երաշտական՝ արտաքին* (զգայական) *լսողությունը* դառնում է *մերքին լսողություն* (հայեցողական, слышат), որը կատարում է ճանաչողական գործառնություն. «(նա) ...որիչ ժամանակ կարող էր ամեն ինչ

մոռացալ և իրեն հատուկ մեղմությամբ և նվիրվածությամբ* *ունկնդրել* քամու կամ անձրևի ձայնին, *մայել* ծաղկին կամ գետի հոսող ջրին...» (GPS, 56):

Կերպարը բովանդակային լիցքավորում է ստանում ոչ միայն *լսողությամբ*, այլև *տեսողությամբ*: Եվ պատահական չէ, որ վեպում հեղինակն անընդհատ ֆիքսում է ման կերպարի *տեսողական* (ճերքին և արտաքին) ունակությունը (GPS, 48, 52, 56): Այսպիսով, հեղինակն իր «ֆիգուրներին» օժտելով *լսելու* և *տեսնելու* կարողությամբ (բովանդակային պլան), *կենդանացնում* և *դիմամիկ* է դարձնում, որով հեշտացնում է «ֆիգուրի» անցումը «սիմվոլին»: Անցումը դառնում է հնարավոր միայն այն ժամանակ, երբ «ֆիգուրը» *հասկացական* տեսք է ստանում՝ իբրև իմաստակիր միավոր: Եթե այս դրույթը փորձենք բացատրել, ապա մեզ համար պարզ կդառնա Հեսսեի կերպարակերտումը *մտածական* պլանում իբրև գործընթաց, կզգամք, թե ինչպես է կատարվում անցումը «չոր» գիտական հասկացությունից (ноотичес) պատկերավոր հասկացությամբ՝ կերպարին:

Գիտական բառերը եթե հասկացական տեսանկյունով դիտարկելու լինենք, ապա իրենց և՛ զենետիկական, և՛ իրերի էության մեջ մերթափանցելու խորությամբ հաջորդում են կերպարներին՝ իբրև բարձրագույն աստիճան: Սակայն լեզվական հասկացությունը կարծես անշարժորեն մերկա է լեզվական կերպարում՝ որպես նրա ընդհանուր տրամաբանական հիմք, և որի արդյունքում հասկացությունը կառուցվում է երկրորդ անգամ՝ վեր բարձրանալով հասկացություն լինելու մակարդակից: Կերպարը, միջնորդավորված հասկացությամբ, ստանում է հեղինակային նոր լուսավորում, մոր պայծառացում՝ հակադրվելով չոր և մութ հասկացությամբ: Փաստորեն, Հ. Հեսսեն «մոգական» (իր համար շատ ընդունելի) գործողությամբ է (акт魔法) կառուցում իր կերպարները:

Ընդհանրապես երաժշտության դերը մեծ է վեպում, ավելին՝ վեպը կառուցված է երաժշտական ստեղծագործության մոդելով: Եվ մնամ մոդելի մեջ դրված «երաժշտական կերպար» անպայմանորեն պիտի քայքայվի, որովհետև երաժշտությունը, լինելով կամայական կամ արհեստական օրենքներով ձևափոխվող տարրերի ամբողջականություն (նշանակող-նշանակյալ կապի ոչնչացում երժշտական մակարդակում), դառնում է լավագույն միջոցներից մեկը՝ բնականաբար «խաղ»-ի (Spiel) հետ մեկտեղ, Հավերժի, Անփոփոխի, պատմությունից դուրս գոյություն ունեցող օրենքների, օրինաչափությունների, բանաձևերի որոնման համար: Երաժշտությունը «Ուլունքախաղ» վեպում եղանակավորիչ դեր է կատարում՝ վերածվելով մի տեսակ *ինքնակառավարվող, ինքնավար* կառուցվածքի, որի համար կարևոր է ոչ թե նշանակությունը, այլ ինքնին երաժշտական կառույցը (конструкция), որի մասին վկայում է ինքը հեղինակը՝ այն կառուցելով որպես մի «ֆուգա», որին բնորոշ է բազմաձայն ոճը, այսինքն՝ ժանրային առատություն՝ ակնարկ, կենսագրություն, ամենկոտ, բանաստեղծություն և այլն:

* Հեղինակը կիրառել է տեքստում «I linguae» բառը, որը կարելի է թարգմանել և՛ իբրև «նվիրվածություն», և՛ իբրև «ոգևորություն»: Մենք մախըմորում ենք առաջին տարբերակը, որովհետև ելնելով կերպարի այն առանձնահատկությունից, որ մա «ժառա» է, իսկ սա պահանջում է թարգմանել «նվիրվածություն» (զադափարական մտահղացման տեսակյուն), միջնորդ ողուսերեն տեքստում (Ա. Ապտ) թարգմանիչը մախըմորել է «ոգևորություն» տարբերակը (հոգեբանական տեսանկյուն) (Герман Гессе, Игры в сонце, Силки-Петербург, изд. "Азбука", 2002, с. 61):

Ֆուգան, Ա. Վերերնի թնորոշմամբ. «տանում է դեպի կատարյալ վերացարկվածություն»¹⁸։ Այն «թագմաձայնությամբ» (պոլիֆոնիզմ, իմաստային պլանի հարստություն) քարձրագույն ձևերից է՝ կառուցված մասնակի մանրամասն (իմիտացիա) սկզբունքով. օրինակ՝ Յ. Կնեխտի գրած երեք կենսագրությունները՝ ռեալիզմի տարրեր մշակութային համակարգերում։ Ինքնին կառույցը երեք դիտարկելու լինենք ստրուկտուրալիզմի տեսանկյունից. ապա կարող ենք մշել, որ այն գոյություն ունի միայն ներկայում (այստեղ ներկան ընթերցման պահն է՝ հեղինակ-ընթերցող, «կոմունիկատիվ» ներկան է), պատմական ընկալումից դուրս և կարող են մասնատվել զանազան կառուցվածքային տարրերի՝ բաղկացած լինելով պայմանականորեն միմյանց հետ կապված մշակներով (տեքստ) և մշակություններով (ներածական մաս ↔ բուն Յ. Կնեխտի կենսագրությունը ↔ Յ. Կնեխտի ստեղծագործությունները)՝ բանաստեղծություններ, կենսագրություններ)։

«Տեքստում» բաղադրիչ տարրերը գտնվում են միմյանց նկատմամբ պասիվ հաջորդականության մեջ, սակայն վնասում սրանք փոխադարձաբար ներքաշում և միաժամանակ հեռացնում են իրարից՝ առաջացնելով գերակայության և ստորադասության հարաբերություն, որն իր հերթին ապահովում է վնասի «ներքին լարվածությունը»։ Իսկ վնասի զարգացման (ներքին պլանում) ժամանակ այս բաղադրիչները միավորվում են՝ կառուցելով համադրված-համակցված, անփոխակերպելի հաջորդականություն։ Այս հաջորդականությունը հնարավոր է միայն *գործառական* մակարդակում, որը և ձևավորում է բարդ մշակման համակարգեր։ Նման համակարգը մեծ դեր է խաղում վնասի կոմպոզիցիոն առանձնահատկությունների առումով։

«Ուլունքայնադ» վնասում «տեքստը ծնում է տեքստ», որի ժամանակ հեղինակն աննկատելիորեն (զաղափար-իմաստաբանական, մեկնողական մակարդակում, օր.՝ ներածական մաս↔Յ. Կնեխտի կենսագրություն) փոխկապակցում է (монтаж) իրար։ Տեքստի մասնատվածությունն ավելի ցածր մակարդակներում մուծված առկա է։ Ընդհանուր պատումն «արգելակվում» է մեջքերումներով՝ հուշեր, վկայություններ, մասնակներ։ Այստեղից կարելի է հետևյալ եզրակացությունն անել, որ մասնատված (разрыв) ընթացքում ավանդական պատկերացմամբ չեն կարող գոյություն ունենալ սյուժե, կերպարային համակարգ, կերպար, անգամ հեղինակ, որը մեր պարագայում հանդես է գալիս իբրև հրատարակող, մույն կերպ է «Տափաստանի գայլը» վնասում։ Այսպիսի դեպքերում գոյություն ունի միայն «Տեքստը»՝ որպես լեզվական մշակների միահյուսվածք¹⁹։

Քանի որ խոսք եղավ «ֆուգայի» մասին, հարկ ենք համարում մշել, որ պատահական չէ հեղինակի մասնատվածությունը. ֆուգայի էությունն է սուբյեկտի (Յ. Կնեխտ) օրյեկտիվ զարգացումը, պատմության ընթացքը, նրա պատմությունը։ «Ֆուգայում»՝ կարելի է տեսնել պատմական կտրվածքում զարգացող մարդուն, որը հասնելով մեծ բարձունքների, ինչպես Յ. Կնեխտը արեց՝ դառնալով «խաղի» մեծ վարպետ, երբեք չի հասնում բացարձակ ճանաչողությանը, վերջնական «ինքն իր մեջ վերադարձին»։

Կերպարակերտման մակարդակում հեղինակը «ֆիգուր» կատեգորիայի ընտրությամբ

¹⁸ Д. Житомирский. Герман Гессе и некоторые парадоксы, с. 129 // Советская музыка, 1980, № 2.

¹⁹ Այս մասին Михаил Сабалня. Видоизменение эпика в современном западноевропейском пейзажном романе, в кн.: Семиотика и художественное творчество, изд. "Наука", Москва, 1977, с. 59-74.

իրացնում է իր նպատակադրումը, այն է՝ «ֆիզուրը» դարձնել մի «խաղաքար», որն ամենամպատակահարմարն է խաղային կոնցեպցիայի իրագործման համար՝ նլցելով վեպի կանոնցվածքային, կոմպոզիցիոն և այլ սկզբունքներից:

Այստեղ հարկ ենք համարում դիտարկել *ֆիզուր* և *ֆոն* հարաբերությունը («ֆոն» ասելով նկատի ունենք մշակութաբանական առանձնահատկությունները), որովհետև այս երկու երևույթները (ֆիզուր-հետևանք և ֆոն-պատճառ) պատճառահետևանքային կապի դրսևորումներն են:

Եթե Հ. Հեսսեի «խաղը» (Spiel) դիտարկելու լինենք կերպարային (լայն իմաստով) համակարգում, ապա կարող ենք մշել, որ այն դառնում է «տոպոս»-կերպար (մշ. ընդհանուր տեղ)»²⁰, այսինքն՝ այն դառնում է իր ժամանակաշրջանի փիլիսոփայական և գեղարվեստական, գեղագիտական և մշակութաբանական գիտակցության արտահայտիչ:

Գրեթե անհնար է 20-րդ դ. որևէ գեղարվեստական երկ ընթերցելիս ուղղակի կամ անուղղակի չհանդիպել «խաղային» մոտիվի: Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ մարդը դարավերջի պատմության թատերաբեմում գիտակցեց իր անգորությունը, անօգնականությունը, կյանքի անկանխատեսելիությունը, որին, ամշուշտ, չկարողացավ դիմադրել: Հիշենք է. Հեմինգուեյի «Ֆինետա» վեպը, որտեղ պատկերված է պատերազմից հետո «կորուսյալ սերնդի» (Հերթոուդա Սթայն) ծանր վիճակը (հոգեբանական և ֆիզիկական պլան). նրանց անիմաստ գոյացները (իմաստաբանական պլանում նրանց արդեն գոյություն չունեն, կերպարների ֆիզուրատիվություն)²¹ կամ «Հրաժեշտ գեռքին» վեպը:

Այստեղ կյանքի և մահվան սահմանագծին գտնվող հերոսներն իրենց կյանքը և մարդկային հարաբերությունները համարում են պարզապես մի «խաղ». «Ես գիտեի, - մտորում է Հենրիմ, - որ չեմ սիրում Քեթրին Բարքլին, և չէի պատրաստվում նրան սիրել: Ռախաղ էր, ինչպես բրիջ, միայն խաղաթղթերի փոխարեն բառերն էին: Ինչպես բրիջի ժամանակ, պետք էր այնպիսի տեսք ընդունել, որ կարծես խաղում ես փողի կամ մի այլ բանի համար: Այն բանի մասին, թե ուր էր տանում խաղը, ոչինչ չառվեց: Բայց ինձ համար միևնույն էր»²²:

Պոստմոդեռնիզմի ժամանակ «խաղային սկզբունքը» դառնում է է՛լ ավելի անկհայտ, այս փուլի գրական ստեղծագործություններում այն ոչ միայն բառային - իմաստային մակարդակում է, այլև մշակութային, «տեքստային»: Պոստմոդեռնիզմի փուլում ի հայտ է գալիս «իմտերտեքստուալությունը», որը պոստմոդեռնիզմի սկզբունքային հասկացություններից է: Այն նախ և առաջ ենթադրում է պատումի «հատուկտորայնություն» (фразеотопность), որը առաջացնում է ընդհանուր տեքստում՝ «Ուլունքախաղ»-ում, տեքստերի

• Այստեղ «ֆուզա» և «Ուլունքախաղ» թառերը համարժեք են:

²⁰ Տե՛ս Литературный энциклопедический словарь, Москва, изд. "Советская энциклопедия", 1987, с. 254.

²¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Հողդան, Մարդու «անհետացման» իմաստաբանական գիծը վերածննդից մինչև XX դարի առկվածում // Համատեքստ (հոգվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 5-16:

²² Э. Хемингуэй, Прощай оружие! (Рассказы), Москва, изд. "Права", 1982, с. 31-32.

• 26-րդ կարող չհիշատակել Պ. Ի. Չայկովսկու լիբրետոյից Հերմանի արիայի տողերը. Что наша жизнь??? Игра // Добро и зло - оном мечтает / Труд, честности! Скажи мне давай! // Кто прав, кто счастлив здесь, дружба? // Сегодня ты, а завтра?... (П. И. Чайковский, "Пиковая дама" (оперные либретто в 3-х действиях), Москва, 1979, с.76)

աստիճանակարգում. «թազմաշափ տարածություն» (Ռ. Բարտ), որը միաժամանակ կազմում է միասնականություն, մեկ ամբողջականություն՝ դարձնելով այն ինքնին բաց մի համակարգ: «Բաց» ասելով հասկանում ենք մշակութային արժեքների հետ իմաստաբանական «խաղը» (Բորխես, Կորտասար, Բեքքեթ, Ֆաուլզ և այլն): Եվ այս «խաղերում» չի տրվում ոչ մի միանշանակ պատասխան, քանի որ «տեքստերը» բաղկացած են բազմաթիվ մեջքերումներից (направления), որոնք հարում են տարբեր մշակութային աղբյուրների, օրինակ, որպես այս երևույթի դրսևորում կարող ենք համարել «Ուլունդախաղ» վեպում տեղ գտած Յ. Կնեխտի երեք կենսագրությունները: Փաստորեն, կարող ենք ասել, որ Հ. Հեսսեի «Ուլունդախաղ» վեպն այն կարևորագույն ստեղծագործություններից է, առանց որի հմարավոր չէ պատկերացնել տվյալ ժամանակաշրջանի՝ պոստմոդերնիզմի, պատմամշակութային, գրական և փիլիսոփայական առանձնահատկությունները:

Եթե այս կոնտեքստում քննելու լինենք Յ. Կնեխտի կերպարը, ապա նա դառնում է տիրող ժամանակաշրջանի դրսևորում, պատմամշակութային գիտակցության արտահայտիչ, որը դառնում է տրամաբանական *ընդհանրացված վերացականություն* (абстрактность), ընդհանուր մի մոդել կամ «մոդելային աճիատ» (Ռ. Հոնիման, Ա. Ինկելես)²³, որը *ֆորմալիզացիայի* արդյունք է: Այն պետք է դիտարկել իբրև հեղինակային *աշխարհայացքի* կարևորագույն տարրերից մեկը²⁴: Ֆորմալիզացիան, որպես հեղինակային մտածողության ձև, անցումն է հասկացական կիրարկություններից նշանայինին, որը երկու փուլ է ենթադրում. առաջին՝ ֆորմալիզացվում է հեղինակի դատողական ապարատը, երկրորդ՝ նա սկսում է նշաններն օգտագործել որպես «կիրարկվող խորհրդանշաններ»:

Եթե ֆորմալիզացիան դիտարկենք նշանային տեսության գեղագիտական համակարգում, ապա «ինքնանշանակող» նշանները ձեռք են բերում «վերմշակութային» իմաստ, դառնում ինքնարժեք «գեղագիտական օբյեկտներ»՝ մոտենալով երևութաբանական (феноменологический) գեղագիտությանը²⁵: Ֆորմալիզացիան, որպես մտածողության ձև, անցումն է հասկացական կիրարկություններից նշանայինին:

Ֆորմալիզացիոն մեթոդը լայն հմարավորություն է ընձեռում բովանդակային պլանի խորը ընկալման և ուսումնասիրության համար, որը հիմնվում է կառուցվածքի (структура) և նրա՝ վերացարկված, ընդհանրացված բաղադրիչ տարրերի, նշանների հարաբերակցության հիման վրա: Հեղինակն այս ամենն օգտագործելով գեղարվեստական մակարդակում՝ «Ուլունդախաղ» վեպում, կառուցում է *մոդելներ*, որոնք առարկաների, երևույթների հմարավորինս առավել էական հատկանիշներն են արտացոլում՝ առանց նրանց ընդօրինակման: Այս մոդելները հեղինակային տեքստում ավելի շատ ոչ թե *պատկերավոր*, այլ նշանագիտական դրսևորում են ստանում և դառնում կարծես մի «պատրաստի ստորոգյալ աճիայտ ենթակաների համար»²⁶: Այլ կերպ ասած՝ «ստորոգյալ» Կնեխտ-մոդելը դառնալով հեղինակի մտային փոխակերպում-ձևափոխությունները (ենթակա, Կնեխտի կյանքի կայացում, նրա գոյաբանական անցումներն ու զանազան դրսևորումները) *մերկայացնելու*

²³ Современная западная социология: Словарь. - М.: Политиздат, 1990, с. 321.

²⁴ Այս մասին փմրաման տե՛ս Эстетика (словарь) (под ред. А. А. Бейсова и др.), М., 1989, с.377.

²⁵ Նույն տեղում, էջ 377:

²⁶ А. А. Потебня. Из лекций по теории словесности, Харьков, 1894, с. 68.

(ռեպրեզենտանտ) միջոց, որը իրականացվում է *արտացոլմամբ*²⁷, որն էլ իր հերթին հնարավոր է դարձնում ռեպրեզենտացիան: Ասկայն ճշգրտենք նաև այն փաստը, որ «Ուլում-քախադ» վեպում Կնեխտ-մոդելը ոչ թե արտացոլում է, այլ նրանով *արտացոլվում է*։ Ուսկասիվ, կրավորական վիճակում է, որովհետև տեքստում ներկայացված է իբրև «ծառա» («Knecht», «Fehul» (լատ.), «Dase» (սանսկրիտ.) թրգմ. մշամակում է «ծառա») (GPS, 496, 530):

Ռեպրեզենտացիան այն ժամանակ է ամբողջական, երբ մոդելը՝ Կնեխտը, իսկապես դառնում է նոր գիտելիքի քաջահայտման աղբյուր: «Նոր գիտելիք» ասելով պետք է հասկանալ մարդու եզակի-անկրկնելիության փաստը: Ընդհանուր առմամբ, ռեպրեզենտատիվ ֆունկցիաները թմորոշ են իդեալական օբյեկտ//սուբյեկտին և վերացարկված առարկային: Իդեալական սուբյեկտ//օբյեկտը վերացարկվող *գործունեության* (այստեղ արդեն իբրև *գործողության* վերացարկում) պատու է, որը երկու կարևոր կողմ է ենթադրում. առաջինը՝ կապ «իրականությանը», Յ. Կնեխտը՝ իբրև *արտացոլման օբյեկտ*, և երկրորդը՝ իբրև *ճանաչողական* (гносциологический) *սուբյեկտ*:²⁸ Փաստորեն, այս երևույթը մուլնպես այն պատճառներից մեկն է դառնում, որ Կնեխտը չի կերտվում իբրև ամբողջական «քնավորություն»:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, կարող ենք ասել, որ յուրաքանչյուր եզրույթ ունի իր առանձնահատկությունները, որոնք լայն հմարավորություն են տալիս տարբեր խնդիրների հարցադրման և նրանց հետագա լուծման համար:

²⁷ Ռեպրեզենտանտի և արտացոլման մասին մանրամասն տե՛ս Շ. Р. Вартазарян, От знания к образу, Ереван, 1973, с. 128.

²⁸ Նույն տեղում, էջ 111-112:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՊԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

«ՎԱՍՆ ԱՒՈՒՐՆ ԿԻՐԱԿԷԻ» ՃԱՌԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՎՐԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՆՉԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Եվսեբիոս եպս. Աղեքսանդրացու աճուճով պահպանված «Վասն ատուրն Կիրակէի պատուելոյ» ճառը վաղմիջնադարյան հունական թարգմատաւական այն հուշարձանների թվին է պատկանում, որոնց մեջ փորձ է արվում հավատացյալներին ետ պահել Կիրակի օրը երգ ու պարի, զվարճանքի տրվելու հեթանոսական կենցաղավարությունից: Նման հանդիսությունները, որ շարունակում էին զբաղեցնել ամսիկ թատրոնի մորթոյա երկըրպագուներին, հայտնի են նաև եկեղեցական մատենագրության այլ ժանրերի ու հեղինակների երկերից (Ս. Թեկղի վարդ, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու և Հովհան Մանդակունու ճառեր և այլն):

Եվսեբիոսի ճառը շարադրված է հարցուպատասխանի մատչելի սկսվածքով՝ միմյանց հակադրելով թատրոնի և եկեղեցու կոչվածությունը: Խնդիրը, ինչպես երևում է, հավասարապես մտահոգել է հելլենիզմի ոլորտ ընդգրկված Այսրկովկասի հասարակություններին, Քրիստոնյա Արևելքի հյուսիս-արևելյան բազուկը ներկայացնող Հայքին ու Վիրքին (հարկավ նաև Աղվանքին), ուստի և վաղմիջնադարում այդ ճառը թարգմանվել է հայերեն և վրացերեն: Երեք տասնամյակ առաջ «Վասն ատուրն Կիրակէի» ճառի հունարեն բնագրի (PG, 86, 1, col. 297-309) և նրա վերոհիշյալ երկու թարգմանությունների համեմատական ուսումնասիրությամբ և նրանց լատիներեն թարգմանությամբ զբաղվեց Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների մեդիում մասնագետ, Ագաթանգեղոսի Պատմության հունարեն թարգմանության գիտական բնագրի կազմող ու քննարկող, այժմ հանգուցյալ Գի Լաֆոնտենը¹:

Գիտնականը ճառի հայերեն բնագիրը հրապարակելիս ձեռքի տակ ունեցել է Վենետիկի Մխիթարյան հավաքածուի N 265 գրչագիրը և տեղյակ եղել Երևանի Մատենադարանի N 639 ձեռագրի ընդօրինակությանը: Եթե զանց առնենք մի քանի անհաջող բառաձևատումներն ու իմաստափոխումները (կազմիկայ զմի, մեղմեչ, լալոյխաղալոյ, ինքնականիցնական, այլ ոքլայալք, շան եղեալլջանեղեալ, գի ոչլգիոչ և այլն), ընդհանուր առմամբ պատշաճ հրատարակություն է: Վրացերեն բնագիրը վերարտադրված չէ, քանի որ այն արդեն հրատարակվել էր Թ. Ժողովայի կողմից², սակայն հայկական և վրացական

¹ G. Lafontaine, "Sur le Dimanche" d' "Eusèbe d' Alexandrie" version arménienne et version géorgienne, "Le Muséon", - Revue d'études Orientales, t. LXXXVII, fasc. 1-2 (1974), pp. 23-44.

² «Եղեղ Եսեբիոս և նեղ, հրաձեղ», Թ. II, տձ., 1960.

տարբերակների համեմատական ուսումնասիրությունը լիարժեք դարձնելու համար Գ. Լաֆոնտենը կատարել է մաս վրացերենի լատիներեն թարգմանությունը:

Ներածական ուսումնասիրության մեջ հրատարակիչը մկատելի ամփոփությամբ անդրադարձել է հայերեն և վրացերեն թարգմանությունների առնչությանը: Հարադրավոր բայերի առկայությունը հայերենում (կաց և մնա, կայ և մնայ, կաց և մնամ, մատիր և հադորդիր ևն) և նրանց մասնատիպ փոխանցումը վրացերենում, մի քանի ռեական պատճենումները (ի վեր հայիլ և տեսել, ի վեր հայիլ և համգչել) և «արեզակն»-ի դիմաց «մգիսթուալի» (արևի ակ) ունենալը բավարար թիմք են ծառայել եզրակացնելու, թե բնագրական բավականաչափ տարբերություններ ունեցող վրացական խմբագրությունը, այնուամենայնիվ, թարգմանված է հայերենից: Գ. Լաֆոնտենը միաժամանակ հանգամանալի բնագրագիտական ու աղբյուրագիտական ըմբռնության է ենթարկում մաս հունարեն բնագիրը:

Գ. Լաֆոնտենի հրապարակումից մեկ տարի անց, վրացական միջնադարյան ճառըմտիրների մեծագրական ուսումնասիրության առիթով Եվսեբիոս Աղեքսանդրացու «Վասն ատուրն կիրակեի» ճառի առկա խմբագրությունների փոխառնչության խնդրին անդրադարձավ այժմ հանգուցյալ Մ. վան Էսբրոեքը: Նա չի առարկում մախորդի եզրակացությանը, ասել է թե՛ ընդունում է վրացական «Կղարջյան ճառըմտրի» (Վ. Կեկելիձեի անվ. Ջեռագրերի իմստ. Ա - 144, 78բ - 81բ) օրինակի հայերենից թարգմանված լինելը և զետեղում այն ճառըմտրի ոչ ստույգ թարգմանությունների խմբում³:

1985 թ. Գ. Լաֆոնտենի՝ վրացերենը հայերենից թարգմանած լինելու եզրակացության հերքման փորձ կատարեց և ի նորո արծարծման ձեռնամուխ եղավ վրացի բնագրագետ Թամիլա Մզալոբիշվիլին: Նա ենթադրում է, որ վրացերենում հայկաբանություններ դիտված հարադրավոր ձևերը հավանաբար հատուկ են եղել հունական չափանդված այն բնագրին, որից անկախաբար թարգմանվել են հայերենն ու վրացերենը: Ինչ վերաբերում է «արեզակ» բառի Ն. Մառի ժամանակներից դիտված վրացերեն «մգիսթուալի»-ի հայերենի մեմնությամբ կազմված լինելուն, ապա այդպիսիք կան մաս պահլավերենում, մոր պարսկերենում, արաբերենում և լատիներենում, ինչպես ցույց են տվել Գ. Կլիմովն ու Բ. Գիգի-Նեիշվիլին, հետևաբար այն իբրև հայկաբանություն դիտվել չի կարող⁴: Ինչ վերաբերում է թարգմանության ժամանակին ու պարագաներին, Թ. Մզալոբիշվիլին վկայակոչում է հեթանոսական սովորությունների դեմ պայքարելու անհրաժեշտությունը (որպիսիք են կիրակնօրյա զվարճությունները և հատկապես կանացի պարերը), տիեզերական ժողովների որոշումները, կանոնագրքերի սահմանումները, և եզրակացում, որ Ա-144 ճառըմտրի բովանդակած տարբերակը «խիստ վաղ ժամանակի է և խիստ մոտ է կանգնած իր հունարեն բնագրին, համեմայն դեպս՝ այս թարգմանությունը կատարված պիտի լինի մինչև VII դար»⁵:

Հետազոտողը, ինչպես երևում է, իր եզրակացությունները համարում է ավարտական, ուստի «Կղարջյան ճառըմտրի» ամբողջական հրատարակություն կատարելիս մույնոթ-

³ M. van Esbroeck, *Les plus anciens homiliaires géorgiens*, Louvain, 1975, p. 252.

⁴ Թամիլա Մզալոբիշվիլի, *ვესტეა ადგილობრივი ზახვლით ცნობილი ერთი თხზულების წყაროს საკითხი*, «შრომთა», ტ. XI, თბ., 1985, გვ. 13-23.

⁵ Նույն տեղում, էջ 19:

⁹ Պարույր Մուրադյան, Ազատագրողների Ռիմ վրացեբեմ խմբագրություններ, Երևան, 1982, էջ 54 / 55:

մական է, ինչ խորեհանգու «փանդոտմբ երգէին», մամաւանդ՝ «երգէր ձեռամբ»-ը (Բ. 63): վերջին արտահայտության «մվագում էր ձեռքերով» աշխարհաբար թարգմանությունը ստույգ է, այն պարել է նշանակում, ինչ վերաբերում է «շուշպարի» առաջին բաղադրիչին՝ «շուշ», այն հայերեն «շուշ»-ի հնչյունափոխված տեսքն է, ուստի «շուշպարի»-ն մույն հայ. «շուշպար»-ն է, երբ պարում են շրջան կազմելով և սովորաբար իրենք էլ երգում են: Վրա-ցերեցում այն կոչվում է «փերխուլի»: Ուրեմն՝ վրացերեն թարգմանության մեջ այն հիրավի հայկաբանություն է:

Չպիտի զարմանալ, որ հին վրացերենում գործածված ենք գտնում մույն շրջանի հայ-կական գրավոր աղբյուրներում չարձանագրված «շուրջպար» տերմինը: Այդ մույնը կատարվել է հայերեն «քարտում» (անձավային բնակարան) տերմինի հետ, որ գործածված ենք գտնում XIII դարի վրացերեն տեքստում¹⁰: Հայերենն իր հերթին գրավոր ավանդույթում պահպանել է վրացերենից փոխառյալ «ձեղում» (մցեղցանո) բառը, ինչը չի պահպանել գրական վրացերենը¹¹:

Մեր վկայակոչած հայկաբանությունները, կարծում ենք, էապես լրացնում են Գ. Լաֆոնտեյի բերած կովանները և հավաստում մրա եզրակացության պատճառաբանվածությունը՝ հայերենը թարգմանված է հունարենից (PG. 86, I, col. 297-309), իսկ վրացերենը՝ այսօրվա մեզ ծանոթ բնագրից մասամբ տարբերվող հայերեն խմբագրությունից:

Նորից հիշենք, որ Կիրակի օրվա խնդիրը իր մեջ ներառում էր արարչագործության օրվանից մինչև Քրիստոսի ծնունդն ու հարությունը շարունակվող բազմաթիվ պայմանական ստուգադրումներ, հետևաբար այն միայն ծիսական չէ, այլ մաս ճրիստոսաբանական: Պատահական չէ, որ այդ օրվան է մվիրված մաս Հովհան Ոսկերեքացի անունով հայտնի մի ճառ, որի հայերեն թարգմանությունը կատարված պիտի լինի Կիլիկյան շրջանի մատենագիրների միջավայրում¹²:

Այստեղ մույնպես հակադրվում են անտիկ շրջանից եկող թատրոնն ու մրա արարողական ձևի մեջ սիանգամայն մոր թվանդակությունը դրած նկեղեցին: Ահա մի վկայակոչում ժողովրդական այդ մույն տոնախմբությունը ներկայացնող դրվագից «... զի չէ հրամայել Աստուած ... կամ շատ արքեմալ յաւուր կիրակէի, կամ երթալ ի տուն քարեկամի, կամ յազգականի, այլ ի յեկեղեցի, կամ երթայ ի տուն գուսանի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, զի դիւսաց տուն կոչի գուսանն, զի մեղքն յաշխարհս ուտելով և ըմբելով և ուրախանալովն եմուտ...» (տե՛ս Մատ. ձեռ. 639, էջ 316ա - 317ա):

Հովհ. Ոսկերեքացի անունով պահպանված այս ճառը չգտնվեց մրա գործերի հայերեն թարգմանությունների հատորներում, ուստի անհրաժեշտ նկատեցինք, հրատարակել այն իբրև հավելված (Ձեռագրական ընթերցումները ներկայացվում են մույնությամբ):

¹⁰ «ქართლის ცხოვრება», ს. ევსიმოშვილის გამოცემა, ტ. II, თბ., 1959, გვ. 100, 101, 610.

¹¹ Տերմինի մասին տե՛ս Ծ. Զեյնալով, «ქართულიდან სუბსტანციური სომხური სიტყვები: მცდელობა», საქ. საზოგადო. მეცნიერების მოამბე, ტ. XIX-A - XXI-B, თბ., 1957, გვ. 165-168.

¹² Մատենադարանի ձեռ. N 639, էջ 314բ - 319ա: Դատելով սկզբնատողերից, մույնական չէ Գ. Զարեհա-մայանի հիշատակած «Նաաա» վասն կեցուցիչ կիրակէին տալիս, և լեկելոց բազմություն և թե ամենեին չէ պարտ. եղիմուր՝ ճառի հետ (Գ. Զարեհամայան, Հայկական թարգմանությունը մալմեայ, Վենետիկ, 1849, էջ 603-604):

Ձեռ. Մ. 639

**ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԻԲԵՐԱՆԻՆ ԱՍԱՅԵԱԼ
ՎԱՍՆ ԿԻՐԱԿԷ[Ի]**

Զգուշութեամբ պահելով զար կիրակէի, աստուածասէր ժողովուրդք, երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք, յուսով և հաւատով պատուեցէք և սիրեցէք զաղքատն ողորմածութեամբ վասն Քրիստոսի սիրոյն և ձեր հոգւոյտ փրկութեան յաւոր անկաշառ դատաստանին, զի Աստուծոյ ամուսն Կիրակի է, և որ զկիրակ(315ա)էն արհամարհէ կամ փոքր կարծէ՝ զԱստուած արհամարհէ, զի կիրակէ համբարծաւ Ամմահն յերկինս յառաջ քան զյաւիտեանս: Դարձեալ վասն սիրոյ սկիզբն եղև վասն արարչութեան Աստուծոյ:

Կիրակէ Նոյ զտապանն շինեաց և եկն ջրհեղեղն: Ի կիրակէ ելաւ Նոյ ի տապանէն, ի կիրակէ մատուցին զընծայս ի սուրբ և յանարատ անասնիցն: Ի կիրակէի խաւեցաւ Աստուած ընդ Աբրահամու, ի կիրակէ կործանեաց զՍոդոմ և զԳոմոր վասն մեղաց իրեանց: Ի կիրակէի Յովնան մարգարէն քարոզեաց Նիմուացոցն և անցոյց զբարկութիւն Աստուծոյ ի ձեռն ապաշխարութեան: Ի կիրակէի եղև թողութիւն մեղաց Դաւիթ մարգարէին ի ձեռն ապաշխարութեան, ելաւ Յովնան ի փորոց կենին: Ի կիրակէի ազատեցաւ Յոն քրանելին ի բերանոյ որդանցն, ի կիրակէի ապրեցաւ Դանիէլ մարգարէն ի քերանոյ առնւծոյն, ի կիրակէի ապրեցան Սրեք մանկուցքն ի հոնցին, ի կիրակէի ելաւ սուրբ Գրիգոր ի խոր վիրապէն և ազատեաց զթագաւորն ի խոզացելոյն զՏրդատ: Ի կիրակէի պապանձեցաւ Զաքարի(315բ)այ ի հրշտակէն, ի կիրակէի խաւեցաւ հրշտակն և եքեր զաւետիս կուսին: Ի կիրակէի յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ի կիրակէի աւերեաց զգժոխքն և կապեաց զսատանալ[ի] ի յայն լուծ կապանս և ազատեաց զհինգ հազար տարու զմեռեալսն հոգիքն, որ բռնել էր և կու չարչարէր սատանայ: Ի կիրակէի գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս, ի կիրակէին լինելոց է անել դատաստան: Ի կիրակէի հանգեաւ Աստուած յամենայն գործոց իւրոց և մեզ հանգիստ շնորհեաց և ասաց իւր սուրբ քերանովն, թէ Որ զկիրակէն արհամարհէ՝ զԱստուած արհամարհէ, զի գրեալ է յԱռաքելական կանոնքն, թէ անհիծեալ է այն մարդն, որ ի կիրակէի բան առնէ*:

Ծերք և երիտասարդք, մեծ և փոքր ի շաբաթ աւոր ի յիններորդ ժամու հանգիստ է, որ բան չառնեն մարդոյ և անասնոյ, ծառալ[ի]ի և մշակի: Ի եկեղեցի երթան, և որ ոչ երթալ[ի] յեկեղեցի՝ չէ կատարեալ քրիստոնեայ և չունի մասն ընդ Քրիստոսի և ոչ յարութեան ակն ունի, զի Քրիստոս ասաց, թէ Ունիք ձեզ վեց արշ շաբաթու գործել և կիրակ(316բ)էն հանգչել, և որ ի կիրակի ողորմի և աղքատին բան տա՝ զեզն կամ զէշ և այլ զինչ և իցէ, չունի վարձ յԱստուծոյ և արհամարհէ զԱռաքելական կանոնքն և պատառէ զցանկ արիմացն հայրենականն սուրբ հայրապետացն և սուրբ առաքելոցն, զի գրեալ է Աստուած մի՛ դնել լուծ եզիցն և մի՛ համէտ իշոյ, և մի՛ սանձս ձիոյ, և մի՛ ճանապարհ երթալ, զի չէ քարի: Մի յարտ երթալ ի տես, զի պարաքայն վերանալ[ի], և մի՛ յայգի, զի պտուղն չորանալ[ի] և մի՛ այլ

* Հմմտ. Կանոնք Լատոկիկեայ, Իթ:

իմչ քամ առնեմ, այլ միայն աղաթել, զի չէ հրամանել (sic) Աստուած գատել յեկեղեցւոյն յատուր կիրակէի կամ շատ ուտել, կամ շատ արքեմալ յատուր կիրակէի, կամ երթալ ի տուն քարեկամի, կամ յազգականի, այլ ի յեկեղեցի, կամ երթալ ի տուն գոսամի, կամ ի տուն խաղոյ վասն ուրախութեան, զի դիւաց տուն կոչի գոսամն, զի մեղքն յաշխարհս ուտելով և ըմբելով և ուրախամաղովն եմուտ:

Եւ ամենայն ցասումն՝ սովն, մահտարածամն, ջրհեղեղն, կրակն, մորեխն, թրթուրն, կարկուտն և այլ զիմչ և իցէ ցասումն և պատահար ի (316բ) վերա[յ] աշխարհի որ կուգայ ի կիրակէից քանէն է, և յուտելոյն և խմելոյն շնութիւն բուսաւ և վաշխն և ամենայն տոկոսիւք և այլ զամենայն իմչ և իցէ որ մարդ իմանալ[՝] ուտելն և շմալն, զրկելն և ատելն զընկերն և զամենայն ցասումն բերէ սատամա[յ], և մարդոս առնելիցն որ և վերացաւ ամենայն իրաց պարաքայն աշխարհէս վասն մարդոյ անհնազանդութեան, զի Յոհանն կու հրամանէ (sic) Աստուծոյ բերամովն, զի սատամա[յ] և ամենայն դէք կալով զամ ի շուրջ զգոսամն խնդրեն և տուն և քնակարան շինեն իրեանցն և ուրախանան և շատաման և հանգչին ի մարմին և ի հոգիս մարդկան և ժողովն զհողածնեալքս ի յԱղամա[յ] միւսչ և ի վերջին մարդն և հանեն յԱստուծոյ: Եւ դարձեալ ասեն, թէ ողբա[յ] մեծ սգով ամենայն եկեղեցի կորստեալ ժողովրդեանն, զի սատամալ տանի ի խաւարն արտաքին, զի ամդ եղիցի լալ և կրճել ատամանց, զի կինն և գոսամն և զինն խաղալիք են և մեծ զէմ դիւաց և աղիք սատամայի:

Աղաչեմ զամենեւեան փախերութիւնս սատամա[յ]է, երկերութիւնս Աստուծոյ և յամենայն սրբոց (317ա) նորա և մի երթայք ի հետ չարից, այլ զցացէք յեկեղեցին, ուր Քրիստոս և իւր սուրբքն են և անդ աղաթեցէք և զմեղքն թողէք խոստովանութեամբ, հաղորդեցէք, զմիմեանս սիրեցէք, և զսուտն և զյիշոցքն թողէք, որ զլուխ է ամենայն մեղաց: Զի Քրիստոս կու հրամանել, թէ Ամենայն մեղք թողցի մարդկան, քայց որ զՀոգին սուրբ հայրոյն՝ մի թողցի մի՝ յայսմ աշխարհիս, մի՝ հանդերձեալ արքն*: Աղաչեմ ձեզ, ով եղբարք, զի կիրակէն սուր է երկու բերանի՝ մեծ ի յաջոյ հարկանէ և ի ձախոյ կտրէ և ի խաւարն արտաքին տանի: Եւ որ զկիրակէն սիրէ և պատվէ (sic)՝ ի դժոխս ոչ իջանէ և ի սպառնալեանցն ոչ երկնչի, այլ ի գոգն Աբրահամու հանգչի և յամենայն մեղաց ազատի և որ զգիրս կարդա[յ] կամ այլոց ուսուցանէ՝ զփառս ի Քրիստոսէ առցէ, ամեն:

Ընդ նմին և զիս՝ զանպիտան և զմեղաւք լցեալս և ի բարի գործոցս ապիկարս աղաչեմ յիշել զձեզ, յորժամ կարդայք կամ արիմակէք թողութիւն խնդրեցէք և ինձ մեղապարտիս Յովհաննէս սուտանուն քահանայի, և Տէրն և արարիչն ամենայնի յորժամ գայցէ ի յիւր միւս անգամ զալուստն և զձեր անցեալսն ոչ յիշէ, ամեն: Գրեցաւ ի թվ. ՊԾԸ [1409] ի փառս Աստուծոյ:



ԲՈՒՆԱԿԱՆ ԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ
 ԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԵՐԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ





ՄԱՅՐ ԱՔՈՒՌԻՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՕԾՎԵՑ ՉՔՆԱՂ ԳՅՈՒՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Հունիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Արագածոտնի թեմ՝ օծելու Չքնաղ գյուղի նորակառույց Ս. Ստեփաննոս եկեղեցին։ Վեհափառ Հայրապետին ողջեցում էին Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանը, Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը, Արարաբյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Աղամյանը, Արապածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ արևդա Տոնիկյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ։

Սասունիկ գյուղի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին ու իր շքախմբին դիմավորեցին Արագածոտնի մարզպետ Գագիկ Գյոզալյանը և մարզային իշխանության ներկայացուցիչներ։

Չքնաղ գյուղում եկեղեցի կառուցելու որոշումը կայացվել էր Վեհափառ Հայրապետի անմիջական մասնակցությամբ։ Երկու փարի առաջ Նորին Սրբությունն այցելելով հնամենի այս գյուղ, այցելեց նաև գյուղի խոնարհված եկեղեցու ավերակներ, եղավ գյուղացիների համար սրբափրկի դարձած այն վայրում, որ համագյուղացիների բարեպաշտական զգացումներին գոհություն փալու համար կառուցել էր Գառնիկ Հովսեփյանը։ Վերականգնել պարսկական եկեղեցին, որի հիմքերը հասնում են մինչև 7-րդ դար, այլևս անհնար էր։ Որոշվեց կառուցել նորը՝ խոնարհված եկեղեցու հարևանությամբ։

Եկեղեցու կառուցման բարերարը դարձավ քեր և քիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյանների բարեպաշտ ընտանիքը։

Երկու փարի անց ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ողբեկից Սրբազան Հայրերի սրբազործվեց նորակառույց եկեղեցին։

«Մեր կյանքը որպես ազգ, որպես ժողովուրդ խարսխված է Քրիստոսի սուրբ հավատքի վրա, և մեր հարապրելությունը պայմանավորված է մեր այս լուսեղեն հավատքով։ Այսօր մենք գոհություն և փառք ենք փալիս, որ նա մեկ եկեղեցի է վեր հառնում իր դռները լայն բացելով մեր հավատացյալ զավակների առջև, որպեսզի այս եկեղեցիների կամարների ներքո մեր հավատացյալ հայորդիներն իրենց աղոթքը բարձրացնեն և իրենց հավատարմության ուխտը կապարեն մեր հայրերի սուրբ հավատքին ու մեր ազգային նվիրական սրբություններին, որպեսզի մենք շարունակենք դարեր ձգվող անհապնում մեր ընթացքը որ-

պես ազգ. որպես ժողովուրդ. որպես պետություն և եկեղեցի»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում հավարտ օծման սրբազան արարողության:

Վերջում Վեհափառ Հայրապետը, ի գնահատություն տեր և տիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյանների նվիրական այս ձեռնարկի, նրանց պարգևատրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տես էջ 29):

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորակառույց եկեղեցուն նվիրեց նաև երկու տերունական պատկերներ, ապա օծված եկեղեցում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Ի ՊԱՏԻ Տ. ԱՐՄԱՇ ՎՐԴ. ՆԱԿՊԱՆՏԵԱՆԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Դամասկոսի հայոց թեմի Ազգային Իշխանությունը, Չորեքշաբթի 9 Յունիս 2004-ին, երևելոյնս, կազմակերպած էր մասնաւոր ընդունելութիւն մը, ի պատիւ Դամասկոսի հայոց նորընտրելի առաջնորդ Հոգ2. Տ. Արմաշ վարդապետ Նալպանտեանի: Ընդունելութիւնը, զոր կազմակերպուած էր Հայր Սուրբի իբրեւ Դամասկոսի թեմի առաջնորդ ընտրութեան ուրախ առթիւ, արդի ունեցաւ Դամասկոսի նշանաւոր Շամ Պանդոկի գեղազարդ Ումայաթ սրահին մէջ:

Բարձր մակարդակի այս ընդունելութեան ներկայ գտնուեցան Սուրիոյ Արար Հանրապետութեան պետական անձինք, նախարարներ, Դամասկոսի մէջ գործող դիւանագիտական եւրկայացուցիչներ եւ Գանապոյի, Ասորիայի, Յունաստանի, Ռումանիայի, Սուրիանի, Վենեզուելայի, Հունգարիայի եւ այլ պետութիւններու դեսպաններ, ինչպէս նաեւ իսլամ հոգևոր պետներ եւ քրիստոնեայ թոյր Եկեղեցիներու յարձրաստիճան հոգեւորականներ եւ Ասորի Ուղղափառ, Ասորի Կաթողիկէ, Յոյն Ուղղափառ, Յոյն Կաթողիկէ, Եկեղեցիներու առաջնորդներ:

Ընդունելութեան յաջորդ պատիւ բերին Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութիւնը՝ գլխաւորութեամբ Սուրիոյ մէջ հաւաքարմատար փխար Եւրի Բարախանեանի, Դամասկոսի Հայ Կաթողիկէ՝ առաջնորդ Արհ. Տ. Յովսէփ եպս. Անուարեանը եւ Սուրիոյ Հայ Անուարեանական Համայնքի Համայնքապետ՝ Վերապատուիչ Յարութիւն Սլիմեանը: Այլեւ ներկայ էին Դամասկոսի Հայկական Միութիւններու վարիչ մարմիններ ու ներկայացուցիչներ եւ այլ ազգայիններ:

Ընդունելութեան ընթացքին պարտաւորման հիւրերուն ընդունեցին Հոգ2. Տ. Արմաշ վրդ. Նալպանտեան՝ առաջնորդ հայոց Դամասկոսի թեմի, փխար Վարդգէս Պողոսեան՝ արեւնապետ Ազգային Գաւառական ժողովի, փխար Արմենակ Օհանեան՝ արեւնապետ Ազգային Գաւառական ժողովի, փխար Արա Ճիւսեան՝ փխարապետապետ Ազգային Զաղաքական ժողովի, եւ փխար Շաւարշ Ալիսեան՝ արեւնապետ Ազգային Զաղաքական ժողովի:

Ընդունելութեան ընթացքին հրաւիրեալները Հայր Սուրբին եւ Ազգային Իշխանութեան յայրենցին իրենց շնորհաւորութիւններն ու քաջայնքանքը, մաղթելով առաջնորդ Հօր քաջառողջութիւն, բնդուն գործունէութիւն եւ արդիւնաբեր ծառայութիւն:

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

ԿԱՆԱԴԱԿՅՈՒ ՎԱՅՈՅ ԹԵՄՈՒՄ

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԽԱՉ ԱՄԷՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԸ ԿԱՆԱԴԱԿՅՈՒՅ ԹԵՄԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՅ

23 Յունիս 2004 թուականը պարմական օր պիտի մնայ Կանադահայոց արեւելա-թեան մէջ: Երկար ամիսներու խորհրդակցութիւններէն ետք Կանադահայոց Թեմական Խորհուրդի և Թորոնթոյի Ս. Խաչ ամենօրեայ դպրոցի Հոգաբարձութեան միջև կայացուած փոխադարձ համաձայնութեամբ այսուհետ Թորոնթոյի Ս. Խաչ ամենօրեայ դպրոցը պիտի գործէ Թեմի հովանու ներքոյ: Մտորագրուած համաձայնագիրը հնարեալն է.

«Կանադահայոց Թեմական Խորհուրդը և Թորոնթոյի Ս. Խաչ Ազգային տմնօրեայ վարժարանի Հոգաբարձութիւնը ուրախութեամբ կու գան յայտարարելու, որ քանի մը ամիսներ շարունակ տեւած խորհրդակցութիւններէ վերջ փոխադարձ համաձայնութեամբ որոշում կայացուած է, որ Թորոնթոյի Ս. Խաչ ամենօրեայ վարժարանը այսուհետ անցնի Կանադահայոց Առաջնորդարանի հովանու ներքոյ:

Սոյն որոշումը իր վերջնական ձևին մէջ պիտի մտնէ համապատասխան համաձայնագրի երկու կողմերու ստորագրութեամբ մինչև 31 Օգոստոս 2004 թ.

Կանադահայոց Թեմական Խորհուրդ
Ս. Խաչ ամենօրեայ վարժարանի Հոգաբարձութիւն:
23 Յունիս 2004»

Հայաստանի Հանրապետութեան, Քանադայի և ապա Ս. Խաչ վարժարանի քայլերգներով սկսուեց դպրոցի ամսվերջի հանդէսը: Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցին այս գեղեցիկ առիթին համար սիրով տրամադրած էր եկեղեցոյս Մականտս Արթինեան սրահը, ուր և նաւաբուցեան շուրջ 300-է աւելի Թորոնթոյահայեր:

Հանդիսին կը նախագահէր Քանադահայոց Թեմի Բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ եպս. Քալստանեանը, իր կողքին ունենալով Ս. Երրորդութիւն Հայց. եկեղեցոյ Հովիւ Արք. Տ. Զարէի ա. քնյ. Զարգարեանը, եկեղեցոյս Ծխական Խորհուրդի արեւնապետ Տիար Հրաչ Շիշմանեանը, ինչպէս նաև գաղութիս Ամենօրեայ, Շաբաթօրեայ և Կիրակնօրեայ վարժարաններու Տնօրինութիւնները և զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Շուրջ 3 ժամ տեւած հանդեսը կը պարունակէր ասմունքներով, երգերով և պարերով հարուստ յայտագիր, որն ներկայացուեցաւ դպրոցիս աշակերտութեան կողմէ: Այս խօսք առնելով իր և Հոգաբարձութեան անունէ աշակերտներուն բարեմաղթանքներ յղեց դպրոցի Հոգաբարձութեան արեւնապետ Տիար Ժիրայր Զարտուղլուն, որմէ ետք բեմ բարձրացաւ Թեմական Խորհուրդի անդամներէն Բրշ. Հրանդ սրկ. Չիթակը և ընթերցեց Քանադահայոց Առաջնորդարանի և Ս. Խաչ ազգային ամենօրեայ վարժարանի միասնական համաձայ-

նագիրը՝ վարժարանը Գանապահայոց Առաջնորդարանի անմիջական հովանաւորութեան տակ անցնելու մասին, որն ընդունուեցաւ մեծ խանդավառութեամբ և բուռն ծափահարութիւններով:

Այնուհետև աւարտական դասարաններուն տրուեցան Վարժարանի վկայականները: 9 հոգիներ դարձան աւարտական 6-րդ դասարանի և 11 հոգիներ՝ Ծաղիկ դասարանի շրջան-աւարտներ:

Այս Բարենաղթանքի խօսք ըսաւ եկեղեցւոյս հովիւ Արք. Տ. Զարեհ ա. քինյ. Զարգարեան:

Հանդիսի աւարտին իր սրտի օրհնարքը խօսքը աշակերտներուն և ներկաներուն ուղղեց թեմիս Բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Բագրուտ եպս. Գալստեանեանը: Առաջնորդ Սրբազան Հայրը շեշտեց, որ Գանապահայոց Առաջնորդարանը նոր առաքելութեան մէջ մտած է ուղղակի կերպով ստանձնելով նոր սերունդի կրթութեան գործը այս ափերի վրայ, որը միշտ եղած է Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը: Իր խօսքի մէջ Սրբազան Հայրը նշեց, որ Ս. Խաչ վարժարանի Կանաղայի հայոց թեմի տնօրինութեան ներքո անցնելու մասին տեղեակ պահած է ազգիս Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութիւնը իր Հայրական ուրախութիւնը յայտնած է և օրհնութիւնը տուած է այս առիթով: Սրբազան Հայրը բարձր գնահատեց թեմական խորհուրդը և Ս. Խաչ վարժարանի հոգաբարձութեանը այս ընդհանրական շահի գիտակցութեամբ գործելու բարի կամքի դրսևորման համար. «Այս պիտի օրինակ ըլլայ մեր բոլոր միութիւններու և կազմակերպութիւններու համար՝ միապէս գործելու նուիրական գաղափարով առաջնորդուելով ստեղծելու խաղաղ և ստեղծագործ միջավայր մեր նոր սերունդի համար»:

Ուրախութեան և յուզումի արցունքներով պարտուած մթնոլորտ մը կը տիրէր ամբողջ սրահին մէջ այս գեղեցիկ իրադարձութեան առիթով: Ուսուցիչներ, ծնողներ, հիմնադիրներ, համակիրներ և աշակերտներ մեծ ուրախութեամբ և քաջատրուութիւններով մեկնեցան այս յիշարակելի օրով գորացած նոր յաջողութիւններ արձանագրելու քրամադրութեամբ:

Հանդիսը աւարտուեց Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով:

ԴԻԻՄԱ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԱՄՆ Արեւմտեան թեմէն ներս

ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. եկեղեցին իր Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արշակ առաջինը, հաջապտութեան զխառնութեամբ եւ յարակից կազմակերպութիւններու համագործակցութեամբ, երկար փարիներէ ի վեր օգտակար ծառայութիւն կը մատուցանէ իր Ծովսի հաւաքացեալներուն եւ նիւթական օժանդակութեամբ կը նպաստէ նաեւ Առաջնորդարանի կենսական կարգ մը ծրագիրներու իրագործման:

Գնահատելի է, որ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ ղեկավարութիւնը փարիներ առաջ գաղափարը յղացած է Ծովսի մահացած անդամներուն յիշատակը վառ պահելու նպատակով հիմնադրամ մը ստեղծելու, որ կը կոչուի «Յիշատակութեան Վիմուսդրամ» (Memorial Fund): Այս հիմնադրամի միջոցաւ օգտակար կը հանդիսանան իրենց Ծովսին, բարեմալարակ ալ ծրագիրներու եւ թեմիս Առաջնորդարանին:

Ուրախութեամբ կը յայտնենք, թէ Սուրբ Յակոբ Հայց. եկեղեցւոյ «Յիշատակութեան Վիմուսդրամ»ը Հոգեւոր Հովիւի նախագահութեամբ իր գումարած ժողովին մէջ որոշելով, 10,000 փոլարի նուիրատւութիւն մը կատարեց թեմիս Ամառեային Ճամբարին եւ 5,000 փոլարի նուիրատւութիւն մըն ալ Առաջնորդարանին, որու շնորհիւ բարերարը պիտի հանդիսանան Բրշ. Յակոբ սրկ. Ներսոյեանի Անգլերէնով հեղինակած "The Faith of the Armenian Church-Student's Manual" օգտակար եւ պահանջքը զգացուած գիրքին:

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿՐԷԿՐԻ ԶՐԶՈՅԵԱՆ 15,000 ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒՐԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Ինչպէս թեմիս հոգեւորականները, կազմակերպութիւնները եւ հաւաքացեալները փնդեակ են, Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրփոքեանի առաջնորդ ընտրութենէն ետք, Առաջնորդարանի կողմէ հրապարակութիւնները նոր թափ մը ստացան: Մէկ փարտան մէջ արդէն իսկ բաւական թիւով գիրքեր եւ գրքոյկներ փառած են: Ծրագրած ենք նոյնպէս նոր հրապարակութիւններ կատարել այս փարտան ընթացքին: Արդէն իսկ նախապատրաստական աշխատանքներ կը փարտին այս ուղղութեամբ եւ նուիրատուներ իրենց հովանաւորութիւնը կը յայտնեն մեզի:

Ուրախ ենք հաղորդելու, թէ Օգլոնքի Սուրբ Վարդան Հայց. եկեղեցւոյ երկարամեայ նուիրեալ հաւաքացեալներէն Տէր եւ Տիկին Կրէկ եւ Սեդա Զրքոյեան, 15,000 Տոլարի նուիրատւութիւն մը կատարեցին Արեւմտեան թեմի Առաջնորդարանին՝ ի նպաստ Բրշ. Յակոբ սրկ. Ներսոյեանի "The Faith of the Armenian Church-Teacher's Manual" գիրքի հրապարակութեան:

Ի սրբի կը գնահատենք Տեր եւ Տիկին Կրկերոյ եւ Սնդա Ջրոյեաններուն սրբաբնիկ այս նուիրապտութիւնը, որո՞ւ միջոցաւ կարելի պիտի դառնայ առաջնորդ Սրբազան Հօր կողմէ որոշուած գիրքի մը հրապարակութիւնը: Կը յուսանք այս նուիրապտութիւնը պատճառ կը դառնայ, որ գրասէր եւ ազգանուէր այլ հաւաքացեալներ եւս իրենց կարողութեան չափով օգտակար հանդիսանան Առաջնորդարանին հովանաւորը եւ կամ բարեբարը դառնալով գիրքի մը հրապարակութեան:

ՆՈՒԻՐԱՏՈՒՌՔԻՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՂՄԷ

Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցւոյ Ծովաբ եւ իր հաւաքացեալները Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Քահանայ Փնթոյեանի գլխաւորութեամբ, անցնող տարիներու ընթացքին նխթական մեծ օժանդակութիւն կատարած են Հայաստանի մեր թեմերուն եւ բարեսիրական այլ նպատակներու համար:

Հոգեկան ցնծութեամբ կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել, թէ Արժ. Տ. Սարգիս քինյ. Փնթոյեան, հակառակ անոր որ Ամերիկա ծնած ու մեծցած է, խոր հայրենասէր եւ բարեգործ հոգեւորական մըն է, որ լոյսեան կը գործէ եւ շնորհիւ իր հեզահամբոյր բնաւորութեան եւ հաւաքացեալներուն կողմէ իրեն նկատմամբ ունեցած վստահութեան, անցնող տարիներու ընթացքին ուխտագնացութիւններ կը կազմակերպէ դէպի Մայր Հայրենիք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ այլ սրբավայրեր, ուր հաւաքացեալները իրենց աչքերով կը տեսնեն մեր պապենական թանկագին Հայաստանն ու Սուրբ Էջմիածինը: Անոնք միշտ ալ կ'արժանանան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Օրհնութեան եւ բարձր ուշադրութեան:

Ուրախ ենք հաղորդելու, որ ներկայիս Տեր Հայրը խումբ մը ուխտաւորներով արդէն իսկ Հայաստան կը գտնուի:

Կը փափաքինք յայտնել, թէ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցւոյ եւ հաւաքացեալներուն կողմէ հետեւեալ նուիրապտութիւնները կատարուած են.

2,000 Տոլար՝ ի նպաստ Հայաստանի որբերուն, Երեսնի Արարարութեան Հայրապետական թեմի միջոցաւ:

2,000 Տոլար՝ ի նպաստ Սիսիանի Ծովաբի, որ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցւոյ «*Զոյր եկեղեցի*»ն է:

5,000 Տոլար՝ ի նպաստ «*հապիթաթ*»ի, կարօտեայ ընտանիքներու բնակութեան համար:

7.500 Տոլար՝ ի նպաստ Սիւնեաց թեմի մեր որբերուն:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս

Ս. ՆԵՐՍԷՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ «Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ»Ի ՀՈՂԸ ՕՐՀՆՈՒԵՑԱԲ ԵՒ Ս. ՅԱԿՈԲ ՄԱՏՈՒՌԻ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԸ ՕԾՈՒԵՑԱՆ

ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ՏԻՏԻՋԵԱՆ ԸՆԴԱՆԻՔԸ 2,400,000 ՏՈՒՄԸ ՆՈՒԻՐԵՑ

Ս. Ներսէս Ընծայարանին համար պարմական օր մըն էր Յունիս 12-ը, երբ «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ի հողի օրհնութիւնը կատարուեցաւ եւ Ս. Յակոբ Մարութի եիմնաքարերը օծուեցան:

Այս յիշատակելի արարողութեանց ներկայ գտնուեցան Տէր եւ Տիկին Հայկ եւ Էդա Տիփիգեանները՝ որոնք Կեդրոնին համար նուիրեցին 1,600,000 փոլար, Տիփիգեան ընտանիքի անդամներ՝ որոնք Մարութին համար նուիրեցին 800,000 փոլար, եւ մօտ 150 անձեր:

Հողօրհնէրը եւ եիմնաքարերու օծումը կատարեց Հայք. Եկեղեցւոյ Հիսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գեղշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան:

Ս. Ներսէս Ընծայարանը հիմնաւծ է 1961 թուականին՝ հոգեւոյս Տ. Տիրան արքեպս. Ներսիսեանի կողմէ՝ Իլլինոյզ նահանգի Էվընսթըն քաղաքին մէջ: 1971 թուականին այսօրուան կայտաւճի գնուեցաւ եւ ընծայարանը տեղափոխուեցաւ Նիւ Էորքի Նիւ Բոշէլ շրջանը:

Ս. Ներսէս Ընծայարանը ցարդ փութած է 35 շրջանաւարտներ, որոնցմէ 30 եկեղեցական ասպարէզ ընդգրկած են: Ընծայարանը մօտիկ յարաբերութեան մէջ եղած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ճեմարանին եւ այլ դպրեմանքերու հետ:

Թեմակալ առաջնորդ Գեղշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի նախագահութեամբ՝ մասնաւոր հանամակալութիւն մը կը հոգատարէ Ս. Ներսէս Ընծայարանի վարչական եւ կրթական գործերը: Այժմ, ընծայարանին մէջ կը պաշտօնավարեն մասնագէտ կրթական մշակներ: Վարիչն է Հոգշ. Տոքթ. Տ. Դանիէլ վրդ. Ֆրնկըքեան, իսկ ուսումնաւարտ՝ Տոքթ. Աբրահամ Տէրեան, եւ Հայերէն լեզուի ու պարմութեան մասնագէտ Տոքթ. Ռապըրթաւ Ըրուայն:

Քանի մը փարի առաջ Ընծայարանի ուսման ծրագիրը վերադաստիւթեան ենթարկուեցաւ եւ որոշուեցաւ յաւելեալ դասընթացքներ աւելցնել՝ Հայերէն գրաբար եւ աշխարհաբարի լեզուի, Հայ Եկեղեցւոյ պարմութեան, Հայրաբանութեան, Հայ Եկեղեցւոյ ծիսագիտութեան եւ Հովուական Աստուածաբանութեան: Որոշուեցաւ շրջանաւարտութեան պայման դնել նաեւ Հայերէն լեզուի սահուն գիտութիւնը:

Ի յիշատակ նըջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ լոնտոնաբնակ Տէր եւ Տիկին Հայկ եւ Էդա Տիփիգեաններ խոստացած էին Ս. Ներսէս Ընծայարանի

հողափարածքին վրայ «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոնի» եւ Մատուոի կառուցման ծախքերը հոգայ:

Յարգելով իրենց խոսքումը՝ ՏԼԴ եւ ՏԻԿԻՆ Տիգրանները մէկ միջիտն վեց հարիւր հազար տոլարի նուիրատուութիւն մը կատարեցին Աստուածաբանական Կեդրոնի կառուցման համար, իսկ անոնց հարազատները՝ ութ հարիւր հազար տոլարով մասնակցեցան Ա. Յակոբ Մատուոի կառուցման ծախքերուն:

Ֆիլադելֆիայէն, Նիւ Ղեմըրէն, Անգլիայէն, Գալիֆորնիայէն եւ Գանատայէն, առիւթ բան 150 հոգի հաւաքուած էին Ս. Ներսէս Ընծայարանի շրջափակը՝ ներկայ գտնուելու համար «Տ. Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ի հողի օրհնութեան եւ Ս. Յակոբ Մատուոի հիմնաքարերու օծման արարողութեանց:

Արման Աւագեան ճարտարապետն է այս նոր կեդրոնին եւ մատուոին: Կեդրոնը կազմուած պիտի ըլլայ մասնաշաղկապով: Այս պիտի ամփոփուին հոգեւոյն Տիրան արքեպս. Ներսիսեանի ճոխ գրադարանի գիւղերը, ինչպէս նաեւ դասախօսութեան սրահ մը, ընծայարանի սենեկաներ եւ գրասենեակներ: Իսկ մատուոն պիտի կոչուի Ս. Յակոբ, ի յիշատակ Տիար Հայկ Տիգրանի հօր:

Այս արարողութեանց ընթացքին ելոյթ ունեւորով առաջնորդ Սրբազան Հայրը ի մասնաւորի ըստ. «Հայաստանեայց Եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ այս օրը նշանակալից թուական մը սահմանուած է ըլլալու: Նոր անկիւնադարձ մըն է այս եւ երազներու իրականացման օրը: Մեր հայեացքը դէպի վեր՝ գեղեցիկ ապագայի մը խոսքով մնալից տեսլականը սեւեռելու օրն է:

Այս առիթով ամենայն համեստութեամբ կրնանք ըսել միայն՝ «Փառք բեզ, Տէր», որ առաջնորդեցիր մեզ՝ հասնելու այս օրը: Փառք բեզ, Տէր, որ ներշնչեցիր սրբերը Զու ծառաներուդ, Հայկ եւ Էլզա Տիգրաններուն, ստանձնելու համար այս բարեպաշտ բարեգործութիւնը: Փառք բեզ, Տէր, որ մեր նախորդներուն պարգեւեցիր տեսլականը՝ հաստատելու համար ընծայարան մը Ամերիկայի մէջ, եւ քուիր մեզի այս առիթը՝ իրականացնելու համար այդ ընծայարանի կարեւորութիւնները՝ նորահաստատ «Տ.Տ. Գարեգին Ա. Աստուածաբանական Կեդրոն»ին միջոցաւ:

Անփարակոյս, այս հսկայ նոր կեդրոնը սեմը պիտի հանդիսանայ փայլուն եւ փառաւոր ապագայի մը: Բայց եւ կ'ուզեմ վայրկեան մը վերակոչել անցեալը: Ս. Ներսէս Ընծայարանը սկսաւ իր կեանքը բառաստուներէլու տարի առաջ՝ շնորհիւ Տ. Տիրան արքեպս. Ներսիսեանի տեսլականին եւ մի քանի խիզախ անձերու վճռականութեան:

